

1<sup>o</sup> Supplementum 1848.  
Omnis theologia Christi est postea  
scriptorum omnium etiam de scriptis  
etiam Laurentius Brugensis go-  
zatus ex Brugge.

1<sup>o</sup> supplementum 1848. 2<sup>o</sup>



ԱՅ Բ Ք

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՏՄԱՆ

ՄԵՐ ԵՍՈՒ

ԵՍՈՒԾՈՒ

Ա հ  
մ ւ

2004



105  
JIP-2009



# ՍՈՒՐԲ ԿԱՅԱ ՌՈՒՆՈՒՆԵԱԼ.

Եթե զվարեալիս Երանեապատրաց առաւարձ իւն-  
ցարոց պարագաւում է Ընակուն իսկ օրինաց՝ առ-  
նաւոց պահել է այլապատճի, և գոհութեալ իւս սար-  
դանիւշամբ ժամ, և շնորհապարփ պանյինս ճանա-  
չել հանապակ. և այս առ պայպն առ օրեայ  
բարեւարութեանց. ապա քանի՞ գոհութեալ, քանի՞  
շնորհակալութեալ, և քանի՞ խնիաւոր խոսքութանութեալ  
պարզին ճապաւցանել առաջ անբաւ Երանեալաց՝  
Անյօ գիւստեալ, և սպարմութեալ Ածածին՝ համօ-  
րէն Ըստականաց սեաս Երինաւորաց և Երինաւ-  
որաց, յանչափ և յանապատ Երանեալիս ու զայելու-  
ամենեցուն. պղը յանհնարիցն է պապմէլ ըստ

արժանիւոց աշ միայն Երիտասարդ հիւթանիւթեա  
 նիւթե բանաւորաց բանիւ բարեացաց, այլև աշ  
 երիւթանաւոր հրանուն անունու հաջեզնաց գերա-  
 հրան քառացն շնոշչառնի պօրութեց: Իսկ զի՞նչ  
 ապա զիուրի աւելիս անապատան սպակեցրեցա քեզ  
 Անյը սաւրէ: ոչ աշ միայն չըստաղինդ յաջեցաք է  
 հասաւրանիաց իրիւթեան առ Երանութեաց, այլև յա-  
 սունային յանուագուա իւ յանուացու կոնքավագուա-  
 սիւս յայրութեց մոյելցացա անջուց, և վայելցա  
 է սիդանե մինչև յայծ: Վանակ գու արդարան  
 Անյը շնորհաց գերացեալ է վլւայ պատասխան  
 ապէն ապացուց կատարիու մերու պէրիւթեան խոր-  
 հութ միաբանութեց մերու է հշախութեց հաջեու  
 անդապանի Տն, և խոսքացաւ ընթել նմա պօրա-  
 ւիդի և ուսցապան յամենայի: Իսու զի՞րիդ և պա-  
 նուագու շնորհու իրիւթեան խորուցուաց ապէն  
 հաջեացեալ նոյնու հրաբուցէն, և անսպակիւր ճա-  
 նացագուն բացեալ աստղուրտեցէն ժաղալութեան  
 քամ անարդէլ և անմաւը ժամանել է նաև հան-  
 գիսա կրիստութեց: Իսու իրիւցէն զնա ընդ փառին  
 հօպէն իսրաւէ է բազմաբին և յափէն ապէն հաւա-

Ճանապ, և 'ի պատճեանուաց Երեւել և անելիութեան  
լըշտամբուց: 'Ես- հովանէ Եղել գլուխ հօգի նարա-  
ծուու, և առաջնորդեցի նմա մշտ ՚ի շատիու ար-  
դարութեան և ճշարպութեան, և հոնել ՚ի նաւահան-  
գիւու կառապութեան. չենել ժամանքանիւ անաւանդ-  
աս սեց, և մշտի անարարութեան յայգուազ մատնի սո-  
ւ Այս Այ, առաջ Երեւեանուաց կառապութեանիւ  
զեմ, և պահ մայրուն գործադրութեան ինաւու և  
պատշաճութեան յայգի ՚ի վեց պատճեանուաց և անար-  
ծու որդեգրոց առ գոհութեան արրողիւ հանարաց  
'Ամեն իրեւ և պայս դոյցին վաստակ պարագանեան  
պարմութեան ամենանեւ վարուց առ ժեղ նամերելք իւն  
զւըւեւուցիւ նարանիւրու պարագանեան ամենի որդե-  
գրոց առ սահնակնեւու ինաւութեան մայրութեան մետա-  
սուգում հիմնեալ և հասրադութեան յայցարակ և յար-  
ացարակներու մայրութեան օգոստավիւս և քառակը  
կայսեր:

Ե- արտ' Այս սուրբ, յերեսու ամիեալ ար-  
աւագիւմ, ընկու գլուխ որդեգրութեան ժամանակ առ ՚ի  
ժեղ մայց առաւանելուց, և ժեղ չի իւրու յայց արիութիւ  
Երեւել և անելիութեան լըշտամբուց. հովանէ և արհա-

պատմես զսո ընդ հովանեսու ամենազօր խնամոց և  
 ողաշողականութե չո յայսմհնարե մինչե յուշեպետե :  
 Տնու ամ պահշարժ չո պատղղութե և պաքութե ,  
 ծալել էբու զշտույ հուստրուին յայբուջ Տն  
 մերոյ , և մոսենի Որդուոյ չո , ահրու զստրուիւ  
 յաստիս ՚ի ժըիտեհո քառողութե աւելարանական  
 ճշարդութե ըստ անոտերիւր և ըստ ողջոնի վար-  
 դարձեպութե աստելական սուրբ Եկեղեցոյ , և  
 պէհագոյն գլուխ նորս , ըստ գաւառութե մերու .  
 ՚ի շահ և ՚ի շնորհե նորին Տօր մերոյ սուրբ Եկե-  
 ղեցոյ , և ՚ի ժըիտեհո հոգուց մերոյ , և ընիերոց .  
 և ՚ի գովեստ ժամաց անուշուր քում սի , և մի-  
 ածենի Որդուոյ չո . որում վայելւ ժամաս և ողարիւ ,  
 և հշտնջեասոր գոհիութեան , և շնորհախու-  
 թիւն , այժմ և աշխա և յանդրեան յանձնանիւց .



Վ. Ե. Ր. Ք  
ԵՄԵՆԵՈՒՐԻ ԿՈՒՍԻԿ  
Մ. Ե. Ր. Դ. Ա. Մ. Ա. Ի  
ԵՍՈՒԵՇԵՆԵՐԻ



Ծ. Ե. Մ. Ա. Յ

ԲՈՒԹԵԵՆԵ ԵՐ-  
ԺԱՆԱՊԱՏՈԾՈՒՅԻ, յոր

բարձրացաւ ամենասը կոյսն Անրիամ, և այնչափ  
գերազանց, գերմարդկային, և ածային, և բար-  
ձեալ բերէ լը իւր զբովանդակութի ինչ այնչափ  
մեծամեծ ձրից, և այնպիսի գերազայն տրտօնու-  
թեց, այլև զկուտակութի ինչ երկնային պար-  
զեաց և անզուգական առաքինութեց տնբաւից,

Ա

մինչեւ

մինչև վակել զանսահմանութիւնը ինչ, որպ առէ  
 սբն քառվաս : “Ամին իրի չեք ինչ միտք մարդ-  
 կային, որ կարօղ իցէ հասու լինել գեթ փոքրիկ  
 ինչ մասին նր . և առաւել չեք ինչ լեզու, որ  
 բաւական իցէ ըստ արժանեաց խօսել զնմանէ,  
 Աս այսորիկ և որ եկեղեցին խէ յայտ առնէ,  
 թէ ոչ դիտէ՝ ո՞սպիսի արժանի գովութիւնը դրու-  
 տել զնա : Եւ սբն Շեռնարդոս վկայէ, թէ ոչ  
 ինչ գործ երկեր նմա այնպէս դժուարահաս, որ  
 հիւսել զնուագ ներբողի ամենօրհնեալ մօրն Ա.Յ.,  
 և լնուլ յայսմ մասին զշերմեռանդութիւն համօ-  
 րէն հաւատացելոց : Ասէ (՚ի բանն 4. ՚ի վերա-  
 փոխ + կուս .) „Չիք ինձ զուարձագոյն ինչ, քան  
 „խօսիլ զամենանը կուսէն Ածածնէ . բայց չ նմին  
 „օրինակի ոչինչ առաւել քան զայն զարհուրե-  
 „ցուցանէ զիս : Իբրզի յասելն ինչ զարդեանց  
 „նր՝ որք են անձառելի, և զարտօնութեց նր՝  
 „որք բոլորովին են հրաշափառագոյն, այնչափ  
 „է զերմեռանդութիւն, և այնպէս մեծեռանդն է  
 „սէրն, որովք համօրէն հաւատացեալք յարդեն  
 „և պատուեն զնա, կարդան առ նա, և յանձն  
 „առնեն նմա զանձինս, մինչ զի թէպէտ և ամ  
 „ոք հանդիսանայ խօսիլ զնմանէ . ՚ի վը այսր ամի  
 „ամ բանիք նց ոչ համեմատին ակնկալութեց նց,  
 „և ոչ լինին չ բաւականին հաճցական . վնդի  
 „միշտ է ճշմարիտ, թէ ձեռնամուխ եղեն բա-

”ցատրել զայն՝ որ է անձառելի, և խելամուտ  
,, առնել զայն՝ որ է անհասանելի“ : ”Ա վր այսր  
ամի առ ընդունելոյ ը իրաց ինչ զնպաստ ’ի յօւ  
րինել զգաղափար, որ ոչ ամենեին անհամեմատ  
ամա, որ ’ի մէջ ամենեցուն է ընտրեալ և շնաշ-  
խարհիկ արտօնացեալ, մինչև իցեմք խօսեցեալ  
զբործոց վարուց նր, զշետ երթիցուք շաւղաց  
սիյն Շեռնարդոսի (բան ’ի կիւր, որ յութօրէս  
վերափոխ.) որ ը նր զրոց մասնէ զնսն էնին  
խոսքացեալ նորուահարց մերոց, էնին էնդուրուանեալ  
ապէն ապէն էնորհը բական օրինակօք, և էնին նորու-  
ապ-շահեալ ’ի մորդուրէան պատրիարք :

Եժնառը Արյան խոսքացեալ ’ի սինդունի անդի աշ-  
խարհի խոստացեալ եղեւ նախահօր մերում Եղա-  
մաց, և յանձին նր համօրէն զաւակաց նորա :

”Քանզի այն ինչ բարձրամիտ խորհրդով գտեալ  
նորա պատուիրանաշանց ածային հրամանացն՝ ոչ  
ուտելոյ ’ի պտղոյ ծառոյն զիտութե բարւոյ և  
չարի, ձգեաց յանձն իւր և յամ սերունդս իւր  
զմահ հոգւոյ, և զայլ համօրէն անհամար չարիս,  
ընդ որովք ը արդարակորով զատաստանին Եյ-  
քնկձեալ հեծէ ազգ մարդկան, ահա Տին մեր

ծանուցեալ նմա զարժանին պատիժ , և միտնեղու-  
մայն ծանուցեալ 'ի նմին ժամու զդարձանն պատ-  
րաստեալ նմա յանսահման գթութէ իւրմէ , առե-  
ցօձն , նա թէ՝ ցսատանայ , որ 'ի դործ էած զօձն  
իրրե դործի ձդել զլրւտ 'ի ովատութրանազան-  
ցութէ , (Օմնդ . կ . 15 .) \* Երես Աշուածութէ  
'ի մէջ չո , և 'ի մէջ ինովո , և 'ի մէջ պատովի , չո , և  
'ի մէջ պատովի պահուած . նու սպասեացն չուած գլխոյ , (լո-  
լատ . նու ըստիջակի սույն պահուած չո , ) և պա-  
հացն ան գոտուշառութէ || . այս է՝ ինզրեսցես զաղու-  
նի խածանել զգարշապտր նրի : Զօրմէ տաէ նրն  
Շնունարդոս , (Ճառ 2 . 'ի մը բանին Արագակեցու .)  
,, Երդ՝ ո՛րք է կինն այն , զրմէ խօսի աստ Տին  
,, մեր , բայց եթէ ամենանը Կրյսն : Եւ եթէ դռ  
,, տակաւին տարակուսիս , թէ նա ոչ խօսի զնմա-  
,, նէ , միտ դիր բանիցն այնոցիկ . \* Ես ջակար-  
,, էնեսցն պահուած չո : Ում ումիք այլում կնոջ պա-  
,, հեցաւ այս յաղթանակ , բայց եթէ Արիամայ :  
,, Եա անտարակոյս ջախչախեաց զթիւնալի դլուսիս  
,, նրի , ընդունայն և անպիտան կացուցեալ դամ ,  
,, և իրը չքացուցեալ զչամօրէն հրապոյրս չա-  
,, րին , դորս սաղրեր՝ եթէ հաճոյիւք մարմնոյ , և  
,, եթէ սարարտաւանութեամբ և գոռողութեամբ  
,, մտաց “ :

Ե՞ : Այսո , տաէ այլուր նոյն ինքն նըն Շնու-  
նարդոս , (բան 'ի կիւր . որ յութօր . վերապիտիս .)

„Ապրիամ՝ Ե կինն այն խոստացեալն կանկառւ  
 „Ճ. որ զօրուէ ոտից իւրոց ունէր ջախջախնել  
 „զգլուխ հին օճին, և դարշապարի նր բաղում  
 „և ազգի ազգի խորամանկութիւնը դարանս գործեւ  
 „լոց եր նա, բայց միշտ վայրապար “. վնդի միշտ  
 նորդութիւն Ածորդւոյն իւրոյ նկուն լինէին դժու-  
 խային իշխանութիւն : Օզրօրինակ ’ի խօսին զշաղ-  
 թանակէն, զոր ունէր յաղթանակել ’ի վո՞ դիւն  
 ամենօրչնեալ կոյսն Ապրիամ, քաջ մեկնե մեծ  
 քահանայապետն արն Խէռն (բան 2 + ’ի վերայ  
 “Օմնեդ.) ’ի բանս յայսոսիկ : „Խոստացաւ ամեն-  
 „նակալ և ամենողորմն Ած ’ի սկզբանե անտի աշ-  
 „խարհի, առ ’ի նորոգութիւն և ’ի դարման մեա-  
 „սուցն, զորս հասցյ մեզ նախանձարեկն սա-  
 „տանայ, եթէ եկեսցէ կինն այն, որոյ սերմն,  
 „այս Ե որդին խորտակեսցէ զօրուէ իւրով զամ-  
 „բարտաւան գլուխ թունաւոր օճին : Աս Ե Քառ  
 „Պ. արն մեր, Ած միանդամայն և մարդ + որ  
 „ծնանելովն ’ի Կուսէն, (որ Ե կինն այն խոստա-  
 „ցեալն Ճ. ,) անարտ և անապական ծնըն-  
 „դեամին իւրով դատապարտէ զատանայ զբոնա-  
 „ւոր ապականիչն ծննդոց մարդկան “ :

Դ: Ամենողորմն Ած խոստմամբս այս-  
 ուիկ, որով խոստացաւ զամենանը կոյսն, և զիմը-  
 կիչն աշխարհի՝ որ ծնանելոցն եր ’ի նմանէ ’ի  
 ցըմնն ժամանակաց, հաճեցաւ դարման մնառու-

ցանել մեծամեծ չարեացն , զորս պատճառեցին  
աղղի մարդկան նախնի ծնօղք մեր Աղամ և Եւա :  
Եւ վն այսորիկ ուղ ուսուցանէ նրն Փօղոս , զոր-  
օրինակ Յն Քս է երկրորդ Աղամ , և արդեամբը  
նր ընդունիմք ղկեանս հոգւոյ , յորմէ ղրկեաց  
զմեղ առաջինն Աղամ . ըստ նմին օրինակի նր  
հարք ձանաչեն դամենանր կոյսն Անրիամ Երկ-  
րորդ Եւա , նա թէ ճշմարիտ Եւա , այս է  
մայր կենդանեաց . որ հաւատով իւրով և հնա-  
զանդութիւ յշացեալ զօրութիւ ողոգւոյն սրի ,  
ծնաւ աշխարհի զիրղին Ա.Յ , և երարձ զվեասսն ,  
զորս առաջինն Եւա վն իւրոյ անհաւատարմունն ,  
և վն անհնազանդութիւ ածային պատուիրանին  
հասոյց համօրէն աղղի մարդկան : Ասէ նրն Երա-  
նոս . „Եւա անհնազանդն՝ եղեւ անձին , և հա-  
„մօրէն աղղի մարդկան պատճառ մահու . իսկ  
„ամենասր կոյսն հնազանդեալ Ա.Յ եղեւ անձին , և  
„բոլոնդակ աշխարհի պատճառ փրկուն : Օոր-  
„օրինակ Եւա հաւատալով բանից օձին՝ խա-  
„քեցաւ , և պատուիրանազանցութիւն եթող Ա.Յ .  
„և ապստամբեցաւ ՚ի նմանէ . նոյնպէս Անրիամ  
„հաւատալով բանից հրեշտակին , որ աւետեաց  
„նմա , թէ կրելոց է յարգանդի իւրում ղբանն  
„Ա.Յ , հնազանդեցաւ բանիցն Ա.Յ . և վնայսորիկ  
„նր կոյսն Անրիամ եղեւ բարեկաս Եւայի , և  
„համօրէն դաւակաց նր . մինչեւ աղղի մարդկան ,

ողոր Եւայի արկեալ էր 'ի ներքոյ մահու, աղա~  
,,տիլ միջնորդութիւն Անրիամու, և կապանաց  
,,անհնազանդութիւն Եւայի՝ լուծանիլ հնազան~  
,,գութիւն Անրիամու: Օխ զոր Եւա կապեաց  
,,անհաւատութիւնով, Անրիամ նը կոյսն ելոյն  
,,հաւատով իւրով“:

Է: Անրդապետութիւն հօրս մեծի, որ Եղե  
յերկրորդ դարուն եկեղեցւոյ, համաձայն համա~  
շունչ դտանի և սբն Եպիփան (Հերետիկ. 78. հմբ.  
18.) յասել անդ իւրում. „Անհնորդութիւն Եւայի  
,,եմուտ մահ յաշխարհ. և միջնորդութիւն Անրիամու  
,,ծնաւ մեղ կեանք, զի ծնաւ 'ի նմանէ Որդին  
,,լոյ. և ուր առաւելան մեղքն, առաւել ևս  
,,եղեն շնորհքն. և ուստի եկն 'ի մեղ մահ, նոյն~  
,,պէս անտի ևս եկն 'ի մեղ կեանք. քանզի նա  
,,ինքն, որ միջնորդութիւն կնոջ միոյ (այս է Ան~  
,,րիամու) Եղե կեանք մեր, աւերեաց զմահ, որ  
,,առնաւ մեղ 'ի կնոջէ միոյ (այս է յԵւայէ)“:  
Օսոյն զայս 'ի խորհուրդ բանի յածեալ և սբյն  
(Օգոստինոսի (բան 51. հմբ. 3. և բան 232.  
հմբ. 2.) ասէ. „Ավն մի ջամբեաց մարդոյ զթոյն  
,,'ի կործանումն իւր. և կին մի լիցի նա, որ ջամ~  
,,բեսցէ մարդոյ զփրկութիւն 'ի նորոգութիւն իւր:  
„Հատուսցէ կին մի ծնանելով զբան վա մեղաց  
,,մարդոյն, որ խաբեցաւ 'ի կնոջէ: Անկաւ մարդն  
,,միջնորդութիւն կնոջ միոյ. և միջնորդութիւն կնոջ

„միոյ վերստին նորոգեցաւ մարդն . լիզի Առյսն  
 „ծնաւ դշք : ՚Ի կնոջէ միոյէ ևկն մահ , և ՚ի կնոջէ  
 „միոյէ կեանիք“ : Եւ ՚ի շարականին (իժժ .) ասի .  
 „Անապական ծննդեամբդ . քո լուծեր ղերկունս  
 „նախամօրն Անրիամ մայր Է.Շ“ : Եւ դարձէ առ  
 անդ . (ՃՇ .) „Լուսին նախնւոյ մօրն Եւայի , յորմէ  
 „Աղամմն հին պարտի , բարձան անէծքն տրտմա .  
 „կան՝ քո սը ծննդեամբ կոյս Անրիամ“ :

Օրէնքուն , ուստի օրէնքուն ամենանը Առյան ՚ի  
 ՚ի գիշա :

։ Ախս առաջին՝ օրինակ ամենանը Առուին  
 եղւ երիւն երիւնադոր պըտիադին , որ չւ ևս անկեալ  
 ը անիծիւք վա մեղաց մարդոյն՝ եր բոլորովին զեւ  
 զեցիկ . և առանց աշխատութեն երկրագործութեն  
 մարդոյ , և առանց անձրեաց եր պտղաբեր , ոռու  
 գեալ միայն ՚ի ջուրց աղբերն , որ ելաներ ՚ի  
 դրախտէ անտի . (Օննդ . Է . 5 . և 6 .) „Արդ“  
 „այսու Երկրաւ , ասէ սըն Օդոստինոս (՚ի վի  
 „Օննդ . Ընդդէմ Վանիք . զիրք 2 . հիրք 2 .)  
 որ բոլորովին գեղեցիկ և զարդարեալ , ամ  
 „իրաւամբ իմանսամբ զամենանը կոյսն Անրիւ  
 ու ամ զմայրն Է.Շ , որ ոռողեցաւ , այս է՝ եղն  
 ու պտղաբեր ՚ի Հոգւոյն սկզ , որ յանուն աղբեր  
 ու կ ջրոյ նշանակեցաւ յաւետարանիւ : Հայտ

Հայր

Հայի և այն բան շարականին (ա. ա.) „, ի անաւոր  
„երիիր տիրուհի, և անդաստան մաքուր ՚ի փշոց  
„մեղաց, որ զըսյան երկնային առանց սերման  
„ծնար. որով զկենացն ետուք դժաց սովորալ  
„ընտթես“:

Ե: “Այնպէս օրինակ ամենասր կուսին Ան-  
րիամու՝ յարմաքագոյնա յերեան ածելոյ զանձա-  
ռելի դերազանցութի կուսութե և մայրութե նր,  
է նորենին, յորում Ա՛Ճ երեւցաւ Անվանսի, որ  
վառեր, և ոչ այրեր: Ենդ որ սքանչացեալ Անվ-  
սեսի կամեր մերձենալ առ մորենին, և տեսանել,  
թէ զի՞ է զի վառեսցի մորենին, և ոչ այրեսցի:  
Այլ Ա՛Ճ ասէ ցնաւ. \* Ն Խըշենաբ այսր. ընծ (նախ)  
պէօջէս քո յորից բաց. պէ առեղջո՞ յորում իսոս գրու ՚ի  
դժո՞ երիլը նը է ॥. (Ելլց. դ. 2. և որ զկնի:) Արդ՝ այս սքանչելահրաշ տեսիլ կամեր նշանա-  
կել, թէ զորօրինակ մորենին այն վառեր, և ոչ  
այրիւր, նոյնպէս ամենասր կշյան Անդիսամ հրա-  
շամառադոյն սքանչելեօք լինելոց էր մայր, և  
ծնանելոց էր զորդի, անարատ մնալով ամենելին  
կուսութե նր: Ասէ սըն Գրիգոր նիւսացին. (Ներբող. յօր ծննդ. Տն.) „Ա վ յիրաւի սքան-  
„չելեացս մեծի: Կշյան լինի մայր, և մնայ կշյո.  
„ոչ կուսուին խափանէ զծնունդն, և ոչ ծնունդն  
„բառնայ զկուսութին: Այս այն է, զոր ետես  
„Անվսէս ՚ի տեսլեան անդ, զոր եցոյց նման Ա՛Ճ  
„՚ի

„ի մորենւոցն, որ քոլոդովին վառէր, և ոչ այ-  
 ս, բեւր: Ենցեալ տեսից՝ ասէ Անվսէս՝ զտեսիլն  
 „զայն մեծ: Բայց գուցէ կամեր նա անցանել՝ ոչ  
 „տեղւոցէ՝ ի տեղի, այլ՝ ի ժամանակէ յայլ ժամա-  
 „նակ, այս է՝ յորժամ այն, զոր ը օրինակաւ յան-  
 „դիման պունէր մորենին, երևելոց էր անպատրուճակ  
 „և ակներև ճշմարտեալ՝ ի նը Կոյսն. զի զորօրի-  
 „նակ մորենին այն ամենուստեք արձակէր զշուր,  
 „և ոչ այրիւր. նոյնպէս ամենանը Կոյսն պարա-  
 „էր ծնանիլ զըսմն աշխարհի, (այս է՝ զբանն  
 „ԱՌ եղեալ մարդ) առանց ինչ վեասու կու-  
 „սուն իւրոյ “: Եւ վայսորիկ նը եկաղեցին ծա-  
 նուցեալ յայսմ օրինակի զերկոսին զերաշրաշ  
 գերազանցութիւն կուսութիւն և մայրութիւն միան-  
 գտնայն միաւորեալս՝ ի Վարիամ, երդէ՝ ի սպա-  
 տիւնի. „Ի մորենին, զոր ետես Անվսէս վա-  
 „ռեալ, և ոչ կիզեալ, ճանաչեմք մէք՝ ով զե-  
 ռուազոյն մայր ԱՌ՝ զկուսութիւն քո սքանչելա-  
 „հրաշ սպահեալ. վայ արժանի ես համօրէն զու-  
 „վուն “: Եւ Հայաստանեայցս եկեղեցի երդէ՝  
 „ի ծննդեան Կուսին. (շարակ, ա.) ԱՌ յաօրբու-  
 „սաւ ՋԵՆՆԱՅԷ մորենին Վարիամ, յոր վառե-  
 „ցաւ հուրն ածային, զոր ետես Անվսէս զօրի-  
 „նակ կուսին՝ ի Աինա լցեալ լուսովն անմատոյց “:  
 Եւ դարձեալ (դ.) „Ենապական տաճար, և  
 „մորենի անկիզելի, որ զանշէջ հուր ածութեն

„՚ի քեզ տարեալ կըեցեր . . . վյ ամենեքւան  
„զքեզ միշտ մշացուցանեմք“ :

Հ : Ասպէս և հաւառագուն առհայտութ Ահա-  
բանիանդիման առներ զանչամեմատ գերազանցուի  
ամենամը կուսին : Ա այսր զաւաղանի զրի ՚ի նը  
զիրս (Ձառէ, ԺԷ. 2.) եթէ պատուիրեաց ԱՇ, զի  
իւրաքանչիւր յերկոտասան ցեղիցն Խորայելի տա-  
ցեն զգաւաղան մի Վավեսի . և զիւրաքանչիւր ա-  
նուն իշխանի ցեղի իւրեանց զրեսցէ նա՚ի վը զա-  
ւաղանի իւրեանց, և ՚ի վը զաւաղանի ցեղին Վեսց  
զրեսցէ զանուն Ահարովի, և զիցէ զնա ՚ի Խո-  
րանին վկայութե առաջի տապանակին . ուղ զի  
տեսցէ ամ ժողովուրդն Խորայելի, թէ նա, որ յ  
զաւաղանն ծաղկեսցի, և ընտրեալ ԱՇ առ ՚ի  
վարել զպաշտօն քահանայութե : Արդ՝ զաւա-  
ղանն Ահարովի, որ եղաւ ՚ի Խորանին վկայուե,  
՚ի վաղիւ անդր զալարացաւ, և ծաղկեաց վծա-  
ղիկ, և երեւցոց ընկոյզ հասունացեալ, և տե-  
րեալիտ : Եւ յիրաւի եղեն ամենամեծ սքանչելիք .  
զի ցուսպ ինչ առանց տնկելոյ յերկրի, առանց  
ինչ արմատոյ ամենելին, և առանց ինչ հիւթոց՝  
ըրովդք բնապէս պտղաբերեսցէ, յանկազարծակի ալ-  
ձակեաց զառաւիղս, ծաղկեցաւ, և ետ զպտուղ :  
Այս է խկապէս օրինակ ինչ այնորիկ, որ  
եղեւ յամենասթ կըսն Վարիամ . որոյ եղեալ ՚ի  
Խորանի, այս է զոլով նա ինքն կենդանի խորան

Հոգւցին սից, առանց ինչ մարդկային գործակացութեն, և առանց երկրաւոր կրից, յղացաւ և ծնաւ զամբնօքհնեալ պտուղն, որ տայ և պահէ զկեանս հոգւոց ամ մարդկան։ Այսովէս ասէ այն Ինեանարդու։ (բան ՚ի կիւր որ յութօր վերափոխ։) „Օրինակ եղել Անրիամու քահանայաւ, կան դաւազանն Ահարովի, որ առանց արձակեւ լոյ զարմատս՝ ծաղկեցաւ“։ Եւ այլուր (Ճառ. 2. ՚ի վը բանին Աստուճյուն) ասէ։ „Օինչ այլ այնչ նշանակեր դաւազանն Ահարովի ծաղկեալ, առանց ձգելոյ յերկրէ զհիւթ ինչ, բայց եթէ ո զամբնանը կոյսն, որ յղացաւ, և եղել պտղարեր՝ առանց գիտելոյ զայր։ Եւ զորօրինակ ծաղիկն ելեալ ՚ի դաւազանէն ոչինչ իւկր վեասեաց ո դալարութեն նր. սոյնպէս և ծնունդ ամենանը կուսին ոչ իւկր իրօք երեր վեաս ամենամաքուր, կուսութեն նր։“։ Եւ Հայստանեայցս եկեղեցի երգէ։ (շարակ. Ճիա. 37.) „Գաւազան ծաղկեալ ո յարմատոյն Քեսսեայ՝ տաճար լուսոյ մայր“։

Է։ Բայց առաւել քան զնախագրեալ օրինակս գեղեցիկ և քաջաղէալ ցուցանէ զխորհուրդս ամենանը կուսին՝ պահնչելի գլուխն ասուն կանոն։ Պատմի ՚ի սը գիրս, (Պատմաւ. կ. 37.) եթէ եդ Կեղեռվեն ՚ի զիշերի գլաթ միասուն ՚ի կալ, յդ զբուրդ ոչխարի միոջ. և ՚ի վաղին անդը գտաւ այն լի ցողով երկնից, դոր քամեալ Վեդեռվեն։

Եջ ցող՝ ի գղաթէ անտի լի կոնքիւ չըոյ, և չ  
 հակառակն ի վը ամ երկրի շուրջ զգզաթուն էի  
 ցամաքութի: ՚Ի դիշերին միւսում եղ Գեղեովն  
 զնոյն զզաթ ասունին ՚ի նմին տեղւոց, և ՚ի վաղին  
 անդը եղե ցամաքութի ՚ի վը զզաթուն միայնոյ,  
 և ՚ի վը ամ երկրի շուրջ զզզաթուն եղե անձրւ:  
 Օայս սքանչելիս արար Ա. առ ՚ի ստուգել Գե-  
 ղեովնի, թէ ձեռամք նր փրկելոց է զխայել ՚ի  
 թշնամեաց իւրեանց, որք յեօթն ամաց հետէ  
 ընկճէին զնն: Արդ՝ զզաթս այս եղե օրինակ ա-  
 մենանը կուսին. վազի ոնդ ասէ նրն Բնեռնարդոս,  
 (ճառ 2. ՚ի վը բանին Ա. առաջեցաւ.) զզաթն յա-  
 ռաջագոյն քան զկալն լցաւ ցողով, առ ՚ի նշա-  
 նակել, թէ ամենանը կոյսն լինելոց էր առաջինն  
 յընդունել յանձին զնա, որ յետ այնորիկ ունէր  
 սփոփիլ լը ամ աշխարհ, այս է՛ զըթ. չՅա, և  
 զընորհս նյի: „Աքանչացիր ովլ սարդ, ասէ նր՞ն  
 „Բնեռնարդոս, (բան ՚ի կիւր. որ յութօր. վե-  
 րափոխ.) „ընդ խորհուրդս Ա. ծանիր զիսորւ  
 „հուրդս իմաստութեն նր, զիսորհուրդս զթութեն  
 „նր: Կամեցեալ ոռոգանել զըովանդակ կալն  
 „երկնային ցողով, ոռոգեաց զըովանդակ զզաթն  
 „նշանակեալ նովաւ, թէ ՚ի փրկել զազգ մարդ-  
 „կան, ունէր զնել ՚ի Անրիամ զըովանդակ դին  
 „փրկութես այսորիկ“: ՚Ի վը այսր ամին թէ-  
 պէտ և կալն բովանդակ ոռոգեցաւ ՚ի ցողոյ, սա-  
 կայն

կացն ոչինչ մասն նր քնկալաւ զբովանդակ ցօղն  
 իշեալ յերկնից, ոնդ ընկալաւ գղաթն ասուի:  
 “Ամի՞ն իրի գղաթն եղե իբրև զաղբիւր, որ ’ի  
 ցամաքեալ երկիր հեղու զառատացեալ ջուրսիւր:  
 Ըստ նմին օրինակի ամենասբ կոյսն Արքիամ՝ մինքն  
 չնկալաւ բովանդակ զաղբիւրն շնորհաց, որ է  
 Ք. և այնպիսի ճոկութիւն եղե լիապատար,  
 մինչեւ միշնորդութիւն նր հաղորդի ևս այլոց, և  
 նա միայն չնկալաւ զշնորհս առաւել քան դոր  
 քնկալան համօրէն արդարը ’ի միասին: Օսյս  
 ամ գեղեցիկ բացատրէ նախայիշտակեալ սրն  
 ինեռնարդու, (քան ’ի ծնունդ կուսին.) յասել  
 անդ իւրում ’ի խօսելն ընդ սըյ կուսին. „Իրա  
 „, ամիք պլուղն՝ զոր բերեր՝ է առածինն քո,  
 „ թէպէտ և միշնորդութիւն կոլ և հաս յամենեսեան:  
 „ Երդարև զայսօրինակ Երբեմն բովանդակ ցօղն էջ  
 „ ’ի վն գղաթուն, և բովանդակ էջ ’ի կալն. սա  
 „, կայն յոշինչ մասն կալցյն էջ բովանդակ ցօղն, զոր  
 „ օրինակ էջ բովանդակն ’ի վն գղաթուն: ” Ի քեզ  
 „ միայն ովԱրքիամ, արքայն ամենահարուստ եղե  
 „, առըստ, բարձրեալն խնարհեցաւ, անշափին չա  
 „, փաւորեցաւ, և դտաւ փոքր քան դիրեշտակս:  
 „ Օչուսին ասացից, ’ի քեզ ճշմարիսն ԱՇ,  
 „ Արդին ԱՇ մարմնացաւ: Բայց որպիսի ար  
 „ դեամիք: Ազդի մեք ամենեքեան յաղքատուէ  
 „, նր հարստասցուք, ’ի խնարհուէ նր բարձրաս

„ցուք, ՚ի փորբութե՞նը մեծասոցուք, և զի միջ-  
 „նորդութե՞նը մարդեղութե՞նը միաւորեալ լը Ա.Յ,  
 „սկիզբն արասցուք լինել մի միայն հոգի լը նմա ||:  
 Եւ վնայսորիկ սը եկեղեցին ճանաչէ յայս գղաթ  
 ասուի Գեղեռվին նկարագրեալ զնորհուրդ մար-  
 դեղութե՞ն և ծննդեան բանին Ա.Յ յամենանը կու-  
 սէն, երգելով ՚ի պաշտաման ժամերգութե՞ն.  
 „Տէր, ՚ի քում անձառելի ծննդեան ՚ի կուսէն  
 „կատարեցան գիրք. իջեր դու իրրե զանձրե ՚ի  
 „վը գեղման՝ առ ՚ի փրկել զաղդս մարդկան“:  
 Եւ Հայաստանեայցս եկեղեցի երգէ (՚ի ծննդ.  
 կուս. շարակ. ա.՝) „Ա.Յսօր դառինքն օրինաւ  
 „կանք Հովակիմ և Աննա ետուն մեղ զգեղմն  
 „ընդունիչ զցօղն երկնային, յորմէ հոսեաց անձ  
 „ըւն կենաց . և բղխեաց աշխարհի աղբիւրն  
 „իմաստից“: Եւ (յաւետմ. շարակ. դ.՝) „Ու  
 „բախ լեր ամպ թեթե՝ գեղմն իմանալի, որ ՚ի  
 „բանական երկիր հեղեր զանձրե կենաց, ար-  
 „դիւնս լը գործոց հաւատոյ պտղաբերեալ ||: Եւ  
 „դարձեալ (՚ի ծրագալուց. շարակ. դ.՝) „Գեղմն  
 „իմանալի, զոր ետես Գեղեռվին, յառաջ քան  
 „զայս հաւատացեալ, իմանակը զանձառելի  
 „զծնունդ. և երկրպագեմք որ ՚ի կուսէդ մարմա-  
 „նացաւ Ա.Ծ“:

Ճ: ՚Ի վերջոյ օրինակը ամենանը կուսին,  
 թողեալ զայլսն, եղեն պահարի Առաջնորդ, և պա-

ողանակն ունիպէջ . զոր պահէին , և պատուէին 'ի  
նմին տաճարի : Աչ ստացաւ ժողովուրդն Խորայ-  
ելի առաւել հյակապ ինչ , առաւել բարեպաշ-  
տական , և առաւել սրբազն ինչ քան զտաճարն ,  
և քան զարկըն կտակարանաց : Եւ այն հրաշա-  
կերտ շնուռած , յորում ամ ինչ էր մեծագին ,  
և ոսկիապատ յօրինեալ , էր կարդեալ՝ ըստ գրելոյ  
նը զբոց , (ա . Անաց . իթ . 1.) վստակութե՛  
ու մարդոյ , այլ ոն Այ : Եւ յիրաւի 'ի նուի-  
քեն զայն Տն , կմ'ի կատարելն զնաւակատիս նյը ,  
լցաւ տունն ամպով փառաց Տեառն , ուզ տաւն  
նը զիրք . տունեալ Այ զգդալի նշան ներկայ-  
ութե՛ 'ի տեղով անդ : Արդ՝ ով ոք ու տե-  
սանէ , եթէ զիա՞րդ տիրապէս ճանաչի նկարա-  
գրեալ 'ի տաճարի անդ ամենանք Կյոսն : Աա  
զարդարեցաւ համօրէն չնաշխարհիկ , և զիւցաղ-  
նական առաքինութելք , լինել նոքօք արժանի  
բնակարան ան Այ : Աա եղեալ մայր բանին Այ  
մարդացելոյ , եկեալ 'ի նա Հոդուոյն սըյ , և զօրուի  
բարձրելոյն հովանի եղեալ 'ի վը նյը , լցաւ փա-  
ռօք մեծվացելութենն Այ , կարի իմն գերահրաշ-  
եղանակաւ քան զտաճարն Աողոմնի : Աա 'ի վլր-  
ջոյ եղեւ խկական և սեփական բնակարան բանին  
Այ : Այ յայս հայեցեալ սը եկեղեցին , 'ի գո-  
մբստու զոր տայ Աարիստմու , կոչէ զնա , դամոք  
Տն , իուր հոգուուոյ խորոնի առնեայն սըյ : « Աոյնօրիւ-  
նալ »

նակ իրաւամբք ՚ի կարդալ եկեղեցւոյ զամենանք  
 կըսն, սեփականէ նմա զանունդ պապանոտի ուն-  
 տէ: Եւ Հայաստանեայց եկեղեցի (շարակ ։  
 ը.) երգէ . „Անհագոյն սերովլքէից, և բազմա-  
 չ չեաց քերովլքէից տիրամայր Ածածին, տապա-  
 նակ կտակի, սափոր ոսկի, խորհրդաւոր խո-  
 րան Շանին Հօր բարձրելց “: (Անդ. դ.)  
 „Անդանի տապանակ կտակարանաց նորոյ ուխ-  
 տիս, որով ելք յերկիր աւետեաց հորդեալ,  
 „Հոգւով ՚ի քեզ տապաւորեալ Շանին “:  
 (Անդ. Ճիա) „Փափկութեաց զբախտին բացող  
 „բանալի, Վանի բարձօղ՝ նմանօղ երկնից, սա-  
 կ մոր ոսկեղէն լի մանանային, դաւազան ծաղ-  
 օ, կեալ յարմատոյն Յեսսեայ տաճար լուսոյ  
 „մայր “: Անզի ուղ արկզն կմ տապանակն ալա-  
 տեալ ՚ի ներքոյ և արտաքոյ ոսկւով սրբվ, փա-  
 կէր զերկուս տախտակս օրինաց, զոր ետ Ած  
 Անվեսի ՚ի լեառն Աինա, և զսափորն ոսկի լի  
 մանանային իջեալ հրաշխք յերկնից ՚ի կերակ-  
 րել յանապատին զժողովուրդն Խորայելի. ոյն-  
 պէս և ամենանք կըսն Ամրիամ գոլով բոլորո-  
 վին սր հոգւով և մարմնով, փակեաց յարգան-  
 դի իւրում զէ՞ս Վան գտունօղն օրինաց շնորհաց,  
 և զպատճառն և զկատարիչն նորոյ յաւիտենա-  
 կան ուխտի լը մէջ Այդ և մարգեան, զէ՞ս Վան,  
 որ՝ ուղ նա ինքն առ յաւետարանի Քաղաքացիութեան մաս-  
 նակ իրաւամբք ՚ի կարդալ եկեղեցւոյ զամենանք

Բ

7/11 1922

ԱՊՈՒԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆ

ԱՊՈՒԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆ

մանանաց և հաց կենդանի իջեալ յերկնից՝ ՚ի  
տալ զյաւիտենական կեանս նոցա, որք կացեալ  
յանապատի աղցաւոր կենցաղցյա՝ կերակրին նու-  
վաւ արժանապէս : Այս և երգէ եկեղեցի Հայ-  
աստանեաց, (՚ի շարս մկ, ՚Ախկող, Հայրապ, )  
» Արբուհի Անրիամ սափոր ոսկի, և տապանակ  
» կտակարանաց, որ զ՚ի վերուստ զշացն կենաց  
պարղեցեր քաղցեալ Շնութենս« :

Երեւէլ և գելուսպանց իտոյց հին իրավաբանց՝ Են  
օլինուի ամենանը իտուին Անրիամու :

Ճ՛՛ : Այս միայն անշունչ օրինակօքս այսոքիւք  
կամեցաւ ցուցանել Հոգին նը զանձառ գերա-  
զանցութիւ ամենանը կուսին, այլ հաճեցաւ ևս  
ցուցանել մեղ զայս հրաշափառ թագուհի տի-  
եղերաց՝ ընդ քօղով երեւէլի և մեծաշուք կա-  
նանց, որք եղեն ՚ի ժամանակս հին կտակարա-  
նաց, զորոց և ունիմք զգութեստս ՚ի նը զիրս,  
թէպէտ և նախատիալ գաղափարն անհամեմատ  
առաւելու աղնունականութիւ և կատարելութիւ  
քան զամբ օրինակս : Եւ արդ՝ յիրաւի ամենանը  
կուսին Անրիամու օրինակ էր Ատու, զի զորո-  
րինակ նա սքանչելապէս, (այս է՝ ՚ի ժամանա-  
կին, յորում անընդունակ էր յղութեն, ) և զո-  
րութիւ խոստմանն՝ զոր խոստացաւ նմա Ած,  
եղեւ

Եղեւ անպատմելի խնդութիւ մայր Խսահակայ՝ որ  
 է մի 'ի քաջայայտ օրինակաց փրկչին . սոյնպէս  
 և սա զլսովին իմն գերահրաշ եղանակաւ եղեւ  
 մայր Ա'նսիային, որ խոստացեալ էր 'ի սկզբանէ  
 անտի ռշխարհի, և օրինակեալ Խսահակաւ, 'ի  
 ցնծութիւ և յուրախութիւ ոչ միայն իւր՝ որ  
 ծնաւն զնա, այլև համօրէն աղգի մարդկան :  
 Նմին իրի իրաւամք կոչեցաւ ամենասք Այսն,  
 Պատրիարքական մեջոյ խոնդրութեն : Անրթ է բերել յօ-  
 րինակ սից կուսին զառաքել, որոյ առանձին  
 իմն գեղեցիութիւ եղեւ օրինակ անպատմելի գե-  
 ղեցկութիւն հոգւոյ նը կուսին, որում վա այն  
 տիրապէս պատշաճին այն բանք երգոց երգոյն :  
 \* Ամենանին գեղեցիութ 'ի կոնայս || : Այրեաց ևս  
 Հակոբ զառաքել 'ի վեր քան զամ կանայս իւր :  
 ուղ և 'ի վեր քան զայլ ամ արարածս սիրեաց  
 Ա՛ջ զլյարիամ : Եղեւ օրինակ Անրիամու և  
 քոյրն Ահարոնին, որ կոչեր ևս Անրիամ, և  
 Եղեւ մարդարէուհի, և էր կոյս՝ ըստ կարծեաց սրց  
 հարց, յորիժամ եղեւ առաջնորդ կանանցն եր-  
 բոյեցւոց յանցանելն լը ծով կարմիր, և առա-  
 ջնն յերգել 'ի գոհութիւ Տեառն զհամբաւա-  
 սորն զայն երգ . \* Երդեսոյնու Տեառն || : Բատ  
 նմին օրինակի և նը կոյսն Անրիամ լցեալ իս-  
 կապէս պարզեօք մարգարէութիւն, առաջնորդ և  
 զլուխ համօրէն կուսանաց, ուսոյց ամենեցուն եր-

դեւ, և ինքն իսկ յառաջ քան զամենեսեան երաց զերպն . \* ԱՌԵՊԱԳՈՒՄԱՅՆ անյն իմ պՏՐ . ՚ի գոհութի Տեառն՝ վա փրկելոյ միջնորդութիւ մարդեղութեն Շանին զազդ մարդկան ՚ի գերռաէ դիւին, և ՚ի մեղաց . ոնդ նշանակեն սրն Ամբրոս սիոս, և սրն Պիետրոս ուկիաբան :

**ՃՐ :** Շայց զանց արարեալ զ՛ԽԵԲՈՐԱՆ, որ յաղթանակեալ և ՚ի մահ մատնեալ զԼԽԻՍԱՐԱ զԹՀՆԱՄԻՆ ժողովրդեան Խորայելի, յանդիման առներ զյաղթութին, որով պարտեաց ամենօրհնեալ Կոյսն զԹՀՆԱՄԻՆ ազգի մարդկան, ըստ որում եղե մայր ՎԻՆԻ, որ եղե մի միայն յաղթանակօղ դժոխային իշխանութեն : Անրթ է ըստյն Ամբրոսիոսի, ընդ սըյն Շեռնարդոսի, և ըստյն Շոնավիշնդուրայի ճանաչել իրք պատկեր ամենանը Կուսին՝ զառաւել հանձարեղն և զիմսստունն ՚ի համօրէն կանայս՝ զԼԱԲԻԴԵԱ . որոյ հանձարն և իմաստութին մեծապէս գովի ՚ի սրդիրս : Ահա բանք նախայիշատակեալ սըյն Շոնավիշնդուրայի, ( Հայելի Կուսին . ընթերց . 14.)

”ՕԱԲԻԴԵԱյ ասի , եթէ սրտմտեալ Պատթի ,  
”և կամեցեալ սպանանել զժանտն Աարաղ ,  
”հանձարեղս այս կինե ել ը առաջ նր , և ցաւ  
”ծոյց զնա . մինչեւ ասել ցնա Պատթի . \* (ՕՌՀ  
”նէտու Էտու ժո . և օբննետու լցիւ դու , ”ը  
”արէնէլէր ուս այսօք ասո՞ւ չէրնետու յարնեա , և

„պահել պլետոն ի՞մ առա իս ॥ . (ա . Առագ . ի՞ն .  
 „33:) Արդ՝ ժանտն Կաբաղ յանդիման առնէ  
 „զմեղաւորն , որ յանտն ժանտի կոչի ՚ի Նոր-  
 „ւոյն սըլ ՚ի նը գիրս . (Աղջմ . ա . 1.) \* Երա-  
 „նեալ ե այլ , . . . ով յանտու ժանտից ոչ նը-  
 „առա ॥ : Դաւիթ ցասուցեալ յանդիման առնէ  
 „զԱ՛ բարկացեալ ՚ի վը մեղաւորի . և Արիգեա  
 „է օրինակ ամենանը Կուսին , որ ընդունի ՅԱ՛  
 „զթողութի մեղաւորին հայցուածովք և ար-  
 „դեամբը իւրովք . . որք առնուն զգործունէունի  
 յանսահման արդեանց ՀՅի ՎՅի որդւոյ իւրոյ ,  
 որ արեամբ իւրով և մահու , ոնդ ասէ Առա-  
 գեան , հաշտեցոյց զմարդն մեղաւոր ընդ ՅԱ՛ ,  
 և ջնջեաց զձեռագիր վճռոյ դատապարտուն նը ,  
 զոր ետ նմա ՅԱ՛ , բեկուեալ զայն ընդ խաչին :  
 Հիշատակի ևս գեղեցիկ իմն օրինակ ամենօրհ-  
 նեալ Կուսին՝ Աննա մայր Ամանելի . (ա .  
 Առագ . ա . 2 : ) Աա բաղում աղօթիւք և ուխ-  
 տիւք եղեալ մայր որդւոյ միոյ , զոր ընծայեաց  
 ՚ի սպասաւորութի տաճարին , որ և եղեւ յետոյ  
 քահանայ , յանդիման առնէ զամենանը կոյսն  
 Ապրիամ . որ եղեւ մայր այնորիկ , որում պաղա-  
 տանօք և հեծութիւք եռանդագինս փափագեին  
 համօրէն արդարը հին կտակարանաց . որ եղեւ  
 առ գերազանցութեն՝ (Օծեալ Տետրուն , և Վա-  
 հանայ յաւիպէան : Անելն Աննայի ծննդական զինի

ընդերկար ամըութեն՝ օրինակէ զհրաշալի ծնընդականութիւնի ամենասբ կուսին։ 'Ի վերջոյ ցուցանէ նա զիսորհուրդ սի՛յ կուսին 'ի գերահրաշե 'ի գերազանց մարգարէտկան երդս իւր . յուրում ըստ ամի՞ ոող և յերգս ամենօրհնեալ կուսին՝ ակներեւ ցուցանէ զեռանդն չնորհակալուեն վսառ յլոյ ընկալեալ չնաշխարհիկ բարերարուեցն։

Ճ՛ք։ 'Ի թիւս երեւելի և գերազանց կանանց, ողբ առանձին իմն պատիւ ընկալան յանդիման առնել զամենասբ Այսն, զասել պարտէ ամ իրաւամիւ զհնուղիթ և զլութեր։ Յուղիթ (դլ. ը. և որ զկնի. ) ունէր զանհամեմատ զեղեցկուի, և Տը յաւել 'ի նոյն զնորոգ շուր . և գտաւ այնպէս գեղասպանծ վայելըուի, մինչև երեխիւ յաչս ամենեցուն դիւցազնական իմն շքեղուի։ Առղոփէռնէս, և ամ պաշտօնեայք և ծառայք նր, յորժամ տեսին դնաւ, և լուան զրպիս բերանոյ նր, զարմացեալ ասէին . \* Ու գուտնի ին գեղեցկուի համեմատ ամս 'ի ծագոց երիրի մնալու 'ի ծագու, ինուսուուն բանիւ, և գեղեցկուլը երեսոց իւրաց։ Անրիամ է նա, զրոմէ իրաւամի ասի յերգս երգոց . \* Անենակն գեղեցկուին էս . և արարո ին ու գոյ 'ի շեպ. . գեղեցիկ՝ ոչ այնպիսի գեղեցկութիւ, որ 'ի կերպարանա և յերեսոյմս երեսաց է, (վաղի այն գեղեցկութիւ զօրէն ծաղկանց փութով թառամի և թօթարի, յոյր սակաւ

որ դիրք կոչեն զայն ունայն և պատիր .) այլ  
յառաքինութիս , որք զարդարեն զհողին , և գե-  
ղապանծ յօրինեն յաչ Տեառն : Յայս գեղեց-  
կութի յաւել Ած միշտ նորոդ շքեղութիս՝ յա-  
ւելով հանապազ զառաքինութիսն Անրիամու ,  
նորոդ կատարելուք հանգերձ . մինչեւ յամ արա-  
բածս ոչ եղեւ և ոչ մի , և ոչ ևս լիցի , որ զու-  
գահաւասար գտանիցի նման արքութիւ : Ա ասէ  
նրն Իսոնավէնորուրա . (Հայե . կուս . ընթերց .  
6 .) „Գեղեցիկ իմն օրինակի շնորհք և ներքին  
„գեղեցկութի ամենանք Կուսին ՚ի Հուղիթ .  
„զօրմէ ասի ՚ի որ դիրս . \* Աչ Գոբանի ինն ԳԵՂԵ-  
„ցի համեմատ ամո ՚ի ծագոց երիշի մինչեւ ՚ի ծագու ,  
„իմաստութեն բանեւ , և ԳԵՂԵՑԻԿՈՒԹԵ երեսոց  
„եւրոց : Հիրաւի ոչ գտանի , ոչ գտաւ , և  
„ոչ գտցի երբէք ՚ի վը երկրի կին՝ նման Անրի-  
„ամու տեսլեամբ ամենապայծառ վարուցն , գե-  
„զեցկութիւ ամենամաքուր խղճիւն մասց , հան-  
„ճարով , և իմաստութիւ բանից գեղապանծ բար-  
„բառոյն “ : Քանզի Հուղիթ գեղեցկութիւ իւ-  
րով եզիտ հնարս հատանելոյ զղլուխն Հողո-  
փեռնեայ . վայ և ասէ նա ինքն յերգս իւր . (զԼ.  
ժԸ . հմք 8 .) \* Յուղիւ ԳԵՂԵՑԻԿՈՒԹԵ երեսոց  
յոյժ իտեւաց պնտ : Մողովինունէս : Խսկ Ան-  
րիամ պայծառութիւ առաքինութիւնց իւրոց հա-  
ճոյ Եղեւ բարձրելոյն , և կարգեցաւ լնել մայր

Այ, և նկուն առնել զանդնդային զթշնամին ։  
 Յուղիթ հատեալ զգլուխ Հողոփեռնեայ, ա-  
 զատեաց զի՞նետիղը քաղաք 'ի պաշարմանէ, և  
 զիսրայէլ 'ի սրտմտութե՛ բարկութե՛ Կարուդո-  
 դոնոսորայ : \* Արտք ամօլն նախաբանաց, (ասեն  
 ոք զիրք զի՞նուդութեռնոսորայ . անդ՝ ժդ. 16.) ին մի հետ-  
 ըայէցի պահն արային Կաբուդութեռնոսորայ . զի  
 ահասասի հաղովէանէս յէլիլ իործանէալ, և  
 գլուխ է-ը չը առ նմա : Ահա և ամէնօրհնեալ  
 կոյսն Արիամ յղանալով և ծնանելով զմար-  
 դացեալ բանն Ած, եհատ զգլուխ ճշմարտին  
 Հողոփեռնեայ, այս է զդժոխային թշնամւոյն  
 յաւիտենական փրկութե՛ մարդկան . եհար և  
 խորտակեաց զզօրութիս դժոխաց, որ այն իսկ է,  
 թէ նա ըտիջտիւեաց, ըստ խոստմանն Այ, (զորո-  
 բինակ վերադոյնդ ցուցաւ,) պահան օյին, որ է  
 սկզբնապատճառ կործանման մարդկային բնուե՛ :  
 Յուղիթ զկնի մեծի և հրաշափառ յաղթութե՞ն  
 դովեցաւ, և օրհնեցաւ յամենեցուն 'ի մի ձայն  
 աղաղակի . (Յուղ. ժե. 10.) \* Դա- բազ-  
 րուի Եւստասովէն . դա- ցնծուլի Խարայէլք . դա-  
 պարծան ապէնս մելոյ . զի արարէր զայս ամ բա-  
 րուլիս յէտու առ Խարայէլք, և հածեցաւ ընդ նո  
 Ած, և օրհնեալ եղիլի դա- յամենափալքն Այ մի-  
 ւ ՚ի յառեպէան . (ըստ յէտոն Տեսան զը-  
 շոյց պէտք . և զի այսորի օրհնեալ եղիլի ՚ի յա-

Նկատեան) || : Եւ ամենասբ Այսոն եղեալ մայր  
ԱՇ, ասէք զանձնէ իւրմէ յերգս իւր . \* Ահա  
յայսմէնեակ Երանեացէն նոյ ամ ապէտ . զէ արտը ընտ  
իս մշտամշտա հաջըն, և առ է անուն նը || : Եւ ար-  
դարև \* օբհնեալ 'ի կանայս ||, կոչեաց զնա սրի  
Եղիսաբէթ . (Պուկ . առ . 48 .) և անդադար  
ամ ազինք յամ ժամանակի օրհնեն, գովեն, և  
փառաւորեն զամէնօրհնեալ Այսոն, և մեծացու-  
ցանեն զնա, ուղ պարծանք Եկեղեցւոյ, ցնծութի  
հաւատացելոց, և փառք ժողովրդեան քրիստոնե-  
ից . զորօրինակ երգէ Եկեղեցին Հայաստանեայց :  
„Օքեզ ոչ միայն որդիք մարդկան, այլև վերին  
„զօրութիք, դասք անմարմնոց . . . զոհաբանեն և  
„վերօրհնեն, և փառաւորեն զմայր և զաղախին  
„փրկչին մերոյ“ . (շարակ . ը : )

ԺՌ : Եւ արդ՝ 'ի վախճանի, այլև Եսթեր,  
ուղ վերագոյնդ նշանակեցաք, կին նշանաւոր, Եղե-  
օրինակ ամենասբ կուսին Սարիամու : Այն սա  
անապատմելի գեղեցկութիւ իւրով \* հաճոյ Եսմէ-  
ցաւ աբույն (Երտաշեսի) յոյժ . և Եհիս շնորհա-  
ւոն զնմ կանայսն, և Ետ 'ի վերաց Գլուխ նորա  
պլատ կանանցն || . (Եսթեր . ը . 16 : ) Իսկ 'ի  
շնորհաց աստիք զոր Եղիտ սա առաջի արքային,  
այս արգասիք բղխեցին, զի ամբարիշտն և ամ-  
բարտաւանն Համան' թշնամին ժողովրդեան Իս-  
րայելի Խայտառակ ամօթով 'ի մահ մատնեցաւ,

և ւրեայք փրկեցան ՚ի դատապարտութե՛ մանախ  
 մահու . (անդ՝ գլւ ըլ : ) „ Այսօրինակ ամենաըր  
 „ կոյսն Արքամ , առև սրն Բռնավենդուրա ,  
 „ (Հայե + ընթերց + 5 + ՚ի վախճ .) չնաշխարհիկ  
 „ առարքինութերք իւրովք այնշաբ շնորհս եղիտ  
 „ առաջի Տեառն , ըստ բանից հրեշտակին . մինչև  
 „ ոչ միայն արժանաւոր գտաւ ընդունել դթագն  
 „ արքունի ՚ի յաւիտենից արքայէն , և լինել երկա  
 „ նի և երկրի թագուհի , այլև ՚ի ձեռն Որդւոյն  
 „ իւրոյ միածնի փրկեաց ղազզս մարդկան՝ զառ  
 „ ՚ի մահ դատապարտեալն ՚ի յաւիտեան վա մէ ~  
 „ դաց առաջին մարդոյն , յայպն կատականայ ,  
 „ և յանկանդնելի կործանուն ճշմարտին Հա ~  
 „ մանայ , այս է՝ բելիարայ՝ բարեատեաց և նեն ~  
 „ դաւոր թշնամույն մարդկան “ : Անյ դարձեալ  
 նոյն ինքն սրն Բռնավենդուրա յաւելու ասել , ՚ի  
 մէջ բերեալ զջերմեռանդ բանս սովոյն Անսելմոսի .  
 „ Զիազդ առա հնար իցէ ինձ շնորհս ունել  
 „ զմօրէ Այ իմոյ և ան , որոյ արդասաւորութին  
 „ աղատեցայ ևս ՚ի գերութե՛ , որոյ ծննդեռամբն  
 „ փրկեցայ ՚ի յաւիտենիցն մահուանէ , որոյ զա ~  
 „ ռւակաւն գտի զօր կորուսեալն եի , և զերծեալ  
 „ յաղետալից արտօրանաց՝ մաի վերստին ՚ի հայ ~  
 „ ըրենիս յաւիտենական երանութե՛ “ :

Եւհովաբ իսյան Սարիամ նախաշուշութեալ 'ի ժողովարկութեալ հին իդակառակաց :

ՃԵ: **Ա**յսորիւք, և այլ բազում խորհրդական օրինակօք, և կերպարանօք ցուցաւ մեղ ամենօրհնեալ Աղյան, խոստացեալն՝ ուղ ասացաք՝ նախահարցն մերոց, և նախազըրեալն՝ 'ի գուշակութամարդարէից, ուղ արդ ունիմք ասել: «Եսիսազուշակեաց զլյարիամ արքայն Դաւիթ (Շի Ասղմէկը. 7.) յասելն. \* Երեք եռ պղուած իւս ||:

«Էյս երկիր, ասէ սըն Հերոնիմոս (բան 2. 'ի տօն պենտէկոս.) է ամենաաթ կըյօն Անրիամ:

«Երկիր մեր է. քանզի կազմեցաւ յերկրէս մեր «մէ, 'ի սերմաննէ մերմէ, 'ի նմին կաւոյ, և 'ի նմին տղմոյ. ըս որում էր ծնունդ Աղամայ, որում ասացաւ. \* Հող ելլ. և 'ի հող ռաբոյ «ցէս ||: Երկիրս այս ետ զպտուղ իւք: «Եակ» «ծաղկեցաւ, ուղ ասի յերգւ երգոց. \* Ես եմ «ծաղկէ ռաշուաց, և շուշան վայրաց ||: «Օաւլիկն ապողարերեաց, զի մեք 'ի պտղոյ անտի ճաշակեսցուք, և այն 'ի սնունդ մեղ եղիցի, զմար «մին նյի ճաշակելով «: 'ի սոյն տեսութիւ բանի և Հայաստանեայց Եկեղեցի երգէ. (շարակ. առ.) «Օաւ կենադ անկետլ յաղին սը Այս, ո որ զհայրածինն բղիսեցեր զծաղիկ, և ետուք 'ի մամաւ զլյաղին պտուղ մարդկան, զորոյ զմար «մինն.

„մինն ճաշակեալ սնմահացաք յուսով“ : Եւ ևս  
 ՚ի Ապղմասն (Հ. 12.) առաց Դատիթ . \* Եֆ  
 Եսահանուն մեր յահանով քան պատկանաս , “ո՞ւ արա-  
 քեր պէտքաւնեն ՚ի մըջ Երիշն : Երդ՝ ասէ որն  
 Բեռնարդոս , (բան 2 . ՚ի աօն պէնտէկ . )  
 „Աքանչելահրաշ իմն օրինակաւ կոչի մըջ Երիշն  
 „արգանտն սր կուսին Անդիամու : Քանդի առ  
 „նա՝ իրը ՚ի մէջ , իրը ՚ի տապան Ա.յ , իրը ՚ի  
 „պատճառ ամ իրաց , իրը ՚ի գործ ամ յաւի-  
 „տեանց , հային որք բնակեալքն են յերկինս ,  
 „և որք լը երկրաւո են . որք եղենն յառաջ քան  
 „զմեղ , և մէք՝ որք եմքս , և որ գալոցն են զկնի  
 „մէր , և որդիք որդւոց , և որք առյապայն ծնաւ-  
 „նիցին ՚ի նոցանե : Բնակեալքն յերկինս , առ  
 „՚ի լինել իրը վերատին աղարչագործեալ և միսի-  
 „թարեալ . և որք լնդ երկրաւո են . (յդ ՚ի Եհմ-  
 „պոսն կամ ՚ի գոգն Երթահամու , ) առ ՚ի ա-  
 „զատիլ անտի . որք եղենն յառաջ քան զմեղ ,  
 „՚ի գտանին հաւատարիմ և ճշմարտապատում  
 „՚ի մարգարեուիս իւրեանց . և որք զչետ զնա-  
 „ցին նց , առ ՚ի փառաւորիլ : ՚Ի քեզ ով ամեն-  
 „օրհնեալ Այս՝ գտանեն հրեշտակը զցնծութի ,  
 „արդարք զշեորհս , և մեղաւորք զթողուի : Առ  
 „քեզ իրաւամբ ամբարձեալ են զաշս իւրեանց  
 „ամ արարածք . քանդի ՚ի քեզ , և քե , և ՚ի  
 „քէն , (այս ի՛ միջնորդութի Եժորդւոյդ , )

„նորոգ իմն և հոգեորական եղանակաւ վերստին  
„արարչագործեաց մարդասէր աջ ամենակալին  
„զամ զառ ՚ի սկզբանէ արարչագործեալսն“:

ԺՇ: Անրդարէացաւ վս ամենօրհնեալ կու-  
սին Անրիամու (ըս սիյն Բեռնարդոսի) և Առ-  
զոմն յառակսն իւր, ուր ասէ. (Առակ. թ. 1.)  
\* Խմասպառթէ շնեաց իւր դուռ, և կանգնեաց  
սկսած եալնի: Արդ՝ ասէ նոյն սր հայրն. (բան  
52. ՚ի վը պեսպ.) „Քա Պա, որ է զօրութի  
„բարձրելոյն, իմաստութի Նօր, և նոյն ինքն  
„Ա՛, իջեալ ՚ի ծոցոյ Նօր առ մեղ, շնեաց  
„իւր տուն, ց զամենանր Այստն, և կանգնեաց  
„՚ի նմա սիւնս Եօթն: Իսկ զի՞նչ այն իցէ, Եթէ  
» կանգնեաց ՚ի նմա սիւնս Եօթն. բայց Եթէ զի  
„արար զնա հաւատովլք և բարի գործովլք ար-  
„ժանի բնակարան իւր: Ոմիւն երրեակ նշանա-  
„կեալ ցուցանէ զի՞ն ածաբանատիւն, ածաբան-  
„թէս, պատուաթ, պայս, և պան: Իսկ Ծիւն քա-  
„ռեակ զբարեբարոյութիւն՝ ըս չորից զի՞նաւոր  
„առարինութեցն արիութե, բարեխառնութե,  
„խոհեմութե, և արդարութե, որովլք սքան-  
„չելահրաշ գեղազարդեցաւ հոգին ամենօրհնեալ  
„սր կուսին“: Եւ կիմ մարթ է իմանալ զեօթն  
սիւնսն ըստ սիյն Բանավէնդուրայի (հայե. ըն-  
թերց. 6.) զեօթն պարզեան Նոդւոյն սիյ. ըս  
որում և ՚ի շարակնոցին (թ) մերում կոչչէ  
„Եօթն:

„Եօմնարփեան շնորհաց Հոգոյն քնոդունա-  
րան“։ Եւ դարձեալ այլուր ՚ի նյն առակեան  
(լա. 10.) հիացեալ և սքանչացեալ Առղօմննի՝  
դոչէ ասելով։ \* Այն ծրագլուխ ելեւ ու գոտոնի-  
ցէ, պատրաստածութոյն է ոյնողիսին բան պահան-  
ուսութեանն ։ ։ „Էջո՞ ասէ նըն Բեռնարդոս,  
ա (քան 52. ՚ի վե պէսպ.) զԱնարիամայ խօսե-  
ցաւ յայսնապէս Առղօմնն հոգւով մարդարէ-  
յութե, յանուն ժրագլուխ կնոջ, և պատուա-  
կանադունի քան զականս պատուականս։ Քան-  
ով այնալէս ժրագլուխ և հզօր գտաւ, մինչեւ  
ո չախցակեաց զգլուխ օձին, որում առացեալ էր  
ու Ած։ \* Եւ ՚ի լեշտամունի՞ ՚ի մէջ ժո, և ՚ի մէջ  
ո ինութ. և ՚ի մէջ զատովի ժո, և ՚ի մէջ զատովի  
ու պահան. նու սոլուսնոցի ժում գլուխ։ (ըստ Լատ.  
ո նու շախցակեացի պարուած ժո)“։

ԺԷ։ Բազում և այլ օրինակական բանիւք  
մարդարէացաւ նյն ինքն Առղօմնն զամենանք  
կուսէն յերգսն երգոց, մանաւանդ թէ զայն ամ-  
մարթ է նկատել իւրեւ մարդարէութի ինչ զայն  
կուսէն, որ է ՚ի վեր քան զամ արտածու սի-  
րեկի և ընդունելի Էջ։ Վանզի սա է մեջտարէն  
(կամ բարեկամն) ոմենանին գեղեցիկ, վե կարդու-  
համօրէն գեղագանծ առաքինութեց, և ոչ գոյ  
՚ի հմտ արտադ ինչ մեջաց։ ։ Ու է պարուելու այն  
ո դուիթու, այս է պարուել հրճուանաց։ ասէ նըն

ո Ռանեալվէնդուրա, (Հայե + Ընթերց + 2+) յու  
 ո ըում տնկեալ են ծաղիկք բիւրաղցի, և ամ  
 „անուշահոտութե լցւալ“ : Պարտիկ կամեալ  
 քանդի ոչ կարաց երբէք հնարինք մերձենալ ’ի  
 նա օձն հին, առ ’ի թափել ’ի նա զմոյն իւր:  
 Աս է առջեւն այն ինժեալ, որոյ ջուրքն եղեն  
 հանապազ վշիտք և յստակախայլ, և յորմէ,  
 ուղ ասէ նրն Հովհանն դամասկացին (’ի վը հան-  
 գլստ, կուս, ճառ. 2+) „բղիւէ աղբիւր կենաց,  
 որ է ՚Ի՞ս, անքակ մնալով կնքոյ կուսութե  
 „նորա“ : Ազ և Հայաստանեայցս Եկեղեցի  
 երգէ . (շարակ, Խան.) „Պարտիկ փակեալ  
 „ածատունկ եղեմ, որ և ծառն կենաց ’ի մէջ  
 „դրախտի քո ’ի Հոգբոյն տնկեալ՝ անմահական  
 „պտղովի ելից զտիւզերս + որովքական ձայնից  
 „զքեզ բարեբանեմք“ : Եւ դարձեալ . (անդ  
 դ. ) „Ուրախ լեր աղբիւր կնքեալ ջրոյն կեն-  
 „դամնութե, զոր ծարաւելոյ բնութես ետուր ’ի  
 „յարբումն“ : Աս է ՚նա, վա որոյ ասաց Աողու-  
 մն՝ յափշտակեալ հոգւով . (Երգ. դ. 9+)  
 \* Ո՞ւ է սո, ո՞ւ ելեւեալ է ինըն պահանջանակ ք  
 ժեղեցին ո՞ւ պատահն, ընդիր ինըն պարեդանին ք  
 ինըն պահանջանին իսրաժեալ . (ը լատ. ինըն պահ-  
 անին ճակատ պարաց իսրաժեալ ’ի պահելուամ) ||:  
 ՚Ի՞սնդի ամենասբ կոյսն Անրիսմ, ասէ նրն Ռո-  
 նավէնդուրա, (Հայե + Ընթերց + 11+) արգարե-  
 իրիւ

իրեւ զառաւօտ մերժեաց յինքենէ զիսաւար  
 մըութե մեղաց , լինելովն սրբեալ անդստին  
 յարդանտէ անտի մօրն . իրեւ զառաւօտ յառա-  
 ջադէմ գտաւ միշտ 'ի լոյս շնորհաց . իրեւ զա-  
 ռաւօտ ծագեաց յիւրմէ զարդարութե արեգակն ,  
 յորմէ և լուսաղարդեալ պայծառացաւ՝ մինչեւ  
 եր նը լը տիեզերս ամ երևեալ : Գեղշցին է Ան-  
 քիամ ող պատենին , առէ նոյն ինքն որն , (անդ՝  
 ընթերց . 7 .) և իրեւ զլուսին լրացեալ . վաղի  
 լիով լուսաւորեցաւ 'ի յաւիտենական լուսոյ ի-  
 մաստութե , և ճշմարտութե , և զի նա զայսօրի-  
 նակ լուսաւորեալ ճառագայթէ ընդ ամ աշ-  
 խարհ : Ինո՞ւն է , կամ ճառագայթարձակ է՞ր ն-  
 պարեժանին . վաղի ոչոք յարարածոցս ըս հանդի-  
 տութեան նը հրաշտեսակ իմն կերպարան՝  
 դշմարիտ արեգակն արդարուե , և զի 'ի մէջ  
 ամ սըց , որք իրեւ զլուսաւոր աստեղս շուրջ  
 պատեալ զամուռովն Այ շքեղազարդեն զնա ,  
 սա առաւել ևս և գերագոյն իմն գեղապանծ  
 փառօք լուսափայլէ . ուղ և արեգակն լուսովն  
 իւրով գերազանցէ քան զաստեղս ամ : Օսոյն  
 բարձրաձայն երդէ Հայաստանեայց Եկեղեցի .  
 (շարակ . թ .) „Առաւօտ խաղաղութե , և ա-  
 ռ բուսեակ զուարթարար , այսօք Անքիամ սրբու-  
 „հին 'ի փառս քո Քա ծագեաց մեղ լոյս որդւոց  
 ո օրինաց “ : Աս 'ի վախճանի է՞ր ն-պահովիու ճառ-

իսու պըլաց ինքնիւտու ՚ի արտարկերնալ : զի զազդի  
 մարդկան պարտեալ կործանեաց զթշնամին . և  
 զի ինքնին առառնյին ջակալանիւտոց պէլուի համօրեն  
 հեղեղիւունութեց յաշխառնին երեւոց , ոնդ երգէ  
 Եկեղեցի ՚ի պատիւ նր : Դարձեալ՝ Անրիամ է  
 շուշաննայն ՚ի մէջ հշոց , ոնդ ասի յերգս անոդ  
 երգոց . սպիտակափայլ վա անարատ մաքրութեն  
 իւրոյ . հոտաւէտ վա անուշահոտուն առաքինունց  
 իւրոյ . եղեալ ՚ի մէջ հշոց , զի մի ոք մերձեսցի  
 մատչիլ առ նա , ոնդ զի մնասցէ միշտ անմատոյց  
 և բնաւ իսկ անմինաս : Աա ՚ի վախճան բանիս ,  
 զի զայլսն ՚ի բաց թողցուք՝ որք յերգս երգոց  
 զրին , և ըստին Ներմնիմոսի և ըստին Շեռւ  
 նարդոսի , դաշտն այն երանելի , յորում բղխեաց  
 ծառընին ջուշաց , և շուշանն հովաց , դրա ՚ի համար  
 „Քամեզի , ասէ վերոզրեալ նրն Շեռնարդոս  
 „(՚ի դալստ + Տեաւն . բան 2.) զորօրինակ  
 „դաշտն այլազգ քան զպարտէզն՝ բղխէ ծաղիկս  
 „առանց գործակցութեն մարդոյ , առանց լինեւ  
 „լոյ սերմաննեալ , կամ հերկեալ , և կամ պա-  
 „բարտեալ յումեքէ . ըստին քաջադէպ օրի-  
 „նակի ծաղկեաց և արգանտ ամենանը Առւսին .  
 „անապական , անարատ , և ողջախոչ որովայնն  
 „Անրիամու ծաղկեցաւ զծաղիկն մշտադալար ,  
 „զծաղիկն որոյ զեղեցկուին է անթառամ , և  
 „փառքն անապական ՚ի յաւիտեան “ : Բատ որոյ

և Հայաստանեայցս եկեղեցի երգէ . (շարակ .  
Ք .) „Հիմանալի վտակաց տանն ԵՇ հոսմանց  
„վիճակեալ՝ տեսանողացն ձայնիւ՞ արբմամբ  
„դմայլեցար , այսօք զանթառամն ծաղկեցար  
„դժաղիկ , ’ի ժամու տալով զպտուղ“ :

ԺՇ : Անրգարէացաւ զամենանք Կուսէն և  
մարդարէն Եսայի ’ի բազում տեղիս մարդա-  
րէութե իւրոյ : “Եախ առաջին յորժամ կան-  
խաձայնեաց , (զԼ . թ . հՅը 2 .) եթէ \* Եղեցի յա-  
ռուլս յեփէնս , դր ’ի ժամանակի գալստեան ԱՆ-  
սիային , յայտնի լւառան Տեռուն , և գուն ԵՇ ’ի  
ձևաց գլուց լւառաց , և բարձրացի ’ի ձեռ ԲԸՆՈՒ :  
Երդ՝ ասէ նրն Գրիգոր մեծն . (’ի զիրս . ա .  
ինագ . զԼ . ա .) „Խնդ անուամբս լեառն՝ մարթ  
„է իմանալ զամենօրհնեալ զմիշտ կոյսն Ան-  
„րիամ ածամայր . քանդի յիրաւի եղե նա իրբե  
„զեառն . իւրդի վաեմութ արժանապատուելն՝  
„յոր նախասահմանեցաւ , գերազանցեաց քան  
„զբարձրութի ամ արարածոց ընտրելոց : Եւ  
„զիարդ չեցէ Անրիամ լեառն բարձրացեալ .  
„որ առ ’ի ժամանել ’ի յղութի յաւիտենական  
„Բանին , գերազանցեալ վսեմութը արդեանց  
„իւրոց քան զամ դասս հրեշտակաց , Եհաս մին-  
„չե յաթոռս ածուեն : “Եախապատմեաց Եսայ-  
„իամ՝ աղդեալ հոգւով մարդարէութի զանհա-  
„մեմատ արժանապատութի լերինս այսորիկ”

„ յասել անդ իւրում . \* Եղէցի յտուրուն յերկնա  
 „ յայդնի ըլտուն Տետուն , և պուն Այ ՚ե վէրոյ  
 „ գլուխ ըլտոնց : Իրրդի բարձրացաւ զլուխ լեւ  
 „ ըինս այսօրիկ քան զամ զլուխս լերանց . զի՞ի վեր  
 „ քան զամ սիս լուսափայլեալ գերազանցէ բարձ  
 „ բութի Վարիամու : Եւ զորօրինակ լեառն նշա  
 „ նակէ զբարձրութի , նոյնպէս և տունն նշանա  
 „ կէ զբնակուին : 'Ի սոյն պատճառի սակս ամեւ  
 „ նանք կոյսն Վարիամ անուանեալ կոչէ տիրա  
 „ պէս լեառն , և տուն : քանզի ճոխացեալ նր  
 „ արդեամիք ՚ի վեր քան զսբն ամ , հանդեր  
 „ ձեալ պատրաստեաց ՚ի ծոց իւր զբնակութի  
 „ միածնի Արդւոյն Այ : Եւ չէր իսկ հնար Վա  
 „ բիամու լինել լեառն այն եղեալ ՚ի վը զլեսոց  
 „ լերանց , եթէ չէր ածային արդասաւորութի  
 „ նր բարձրացուցեալ զնա ՚ի վեր քան զամ բարձ  
 „ բագոյն դասս հրեշտակաց : Վակ և Հայաւ  
 „ տանեայցս եկեղեցի երգէ . ( շարակ . լը . )  
 „ Ածածին գերագոյն քերովքէից , Շանին բար  
 „ ձօղ՝ որ զամ կրէ զօրութիք ... մայր սրբութի  
 „ բարձրագոյն սերովքէից , զանհասն յինքեանց  
 „ ՚ի քեզ կրելով ծագեցեր զըյս աշխարհի :  
 „ Դարձեալ ( անդ՝ ը . ) Ակհագոյն սերովքէից , և  
 „ բազմաչեայ քերովքէից , տիրամայր Ածածին :

ՃԸ : Հայտնագոյն ևս մարդարէացաւ նոյն  
 ինքն մարդարէն Եսայի զամենասը կուսէն Վա

ըիամայ, յասել անդ իւրում. ( զԼ. Է. Հմբ 14.)  
 \* Ահա իոյս յղացի, և ծնցի որդի, և իոշեցեն  
 պահուան նորո Խամահուել ||, որ թարգմանի՛ ընդ  
 մեկ Աստվածած: Քանզի նոյն ինքն Հոգին որ  
 բերանով սըյն Անտթէի աւետարանչին (ա. 22.)  
 յետ պատմելոյ զսքանչելահրաշ յղութի Բանին  
 ԱՇ յարդանդի ամենասբ կուսին զօրութի՛ Հոգ-  
 ւոյն սըյ, ծանուցանէ մեզ ասելով. \* Այլ այս  
 ու Եղիս, ու լոցի՝ որ տառցան ՚ի Տեսանէ ՚ի յեռն  
 Եսայէայ հորդառէն: ահա իոյս յղացի ||, ևայլն:  
 Եւ յիրաւի՛ ուղ յուշ ածէ սըն Հերոնիմոս, (՚ի  
 զԼ. Է. Եսայ.) կոյսն, զորմէ խօսի մարգարէն,  
 ոչ նշանակէ պարզապէս զկոյս ոք, որոյ մնա-  
 ցեալ իցէ կոյս մինչև ՚ի ժամանակ ամուսնութե՛  
 իւրոյ. այլ զկոյս ոք թագուն, առանձնացեալ,  
 և զլիսովին հեռացեալ մեկուսացեալ յաշաց  
 մարդկան. և զի ՚ի մի քան ասացից, զկոյս ոք  
 ամեննին եղական, զկոյս ոք գերազանցութի իմն.  
 որ միայն տիրապէս պատշաճի ամենասբ կուսին  
 Արիամու: Ահայն ամենասբ կոյսն Արիամ է  
 նա, որ ծնաւ զորդի, զայն՝ որ ճշմարտութի՛ էր  
 ընդ մեկ Աստվածած: Քանզի էր նա Բանին՝ որ  
 հորմին Եղիս, և բնութեաց ՚ի մեջ հորդիան: Այն  
 այս է, զօր և Հոյաստանեայցս Եկեղեցի երգէ.  
 (շարակ. Կ.) „ Այսօր ՚ի քեզ լցեալ ամուլ-  
 սածնին (ը Եսայեայ որդւոյն Ամուլսայ) բար-

„բառ, որ ՚ի վրկութի՛ հասարակաց տուեալ  
„նշան բնութեան աղջի մարդկան. ահա կոյս  
„յշաացի, և ծնցի զօրդի՞ զընդ մեղ յայտնեալն  
„Աստուճած“ :

Է: Ամին նման է և այն բան մարգարե-  
ռուեն Եսայեայ, (Ժա. 1.) զոր ասէ. \* Բաղնեա-  
ցի Գաղապահն յազմապայն ՀՅԵսսեայ, և Եղի Ճաղնի  
յարմապայ անոտի ։ Օզրմէ ասէ Տերտուղիանոս  
(՚ի վի մարմ. Ք. գլ. 21.) „Արմատն  
„ՀՅԵսսեայ նշանակէ զսերունդ Դաւթայ. գա-  
„ւաղանն, որ բղխէ յարմատոյ աստի, է Ան-  
„րիամ, որ իջանէ ՚ի զարմէն Դաւթի. և ծա-  
„ղիկն՝ որ ելանէ ՚ի գաւաղանէ անտի, է Ք. ։  
„ՀՅԵ որդին Արիամու“ : Օսոյն մարգարեռութի՛  
նոյնօրինակ մեկնեալ և սիյն Ներոնիմոսի, (՚ի  
գլ. Ժա. Եսայ.) ասէ. „Պարտ է մեղ գա-  
„ւաղանաւս արմատոյն ՀՅԵսսեայ իմանալ զկոյսն  
„Արիամ. յայս գաւաղան ոչինչ թուփ կայր  
„կցեալ, (առ ՚ի նշանակէլ զընդմնաւորու-  
„թիւն Կուսին, որ ոչ ՚ի մարդկային ինչ,  
„այլ յանային գործողութէ յառաջ Եկեալ:) ։  
„Աս ինքն է Կոյսն, զորմէ փոքր մի ՚ի վերոյ  
„ասացեալ էր մարգարէն. \* Ահա իոյս յուսոցի,  
„և ծնցի սրբի ։ Դակ ծաղկաւն իմանամք ղորին  
„մեր և զիբոկիչն Ք. ։ որ ասէ յերգս երգոց.  
„\* Ես ծաղնի պաշտոց, և շոշան հովոցոց ։“ :

Առյնօրինակ մեկնէ և սբն Տեղոնարդոս դայս  
 մարդարէութէ. (՚ի դալստ. Տետոն. բան. 2.)  
 „Քաջայայտ է ամենեւին, ասէ, եթէ ո՛ր իցէ  
 „գաւաղանս այս բղխեալ յարմատոյն Հեսսեայ,  
 „և ո՛ր իցէ ծաղիկն ելեալ յարմատոյ անտի:  
 „Ո՞նձապատիք տիրամայր նը Կոյսն է գաւաղան,  
 „և Ա՞նձորդին նը՝ ծաղիկն. արդարեւ ծաղիկ սպի-  
 „տակափառ, և կարմիափայլ. ընտրեալ ’ի բիւրուց.  
 „ծաղիկ, յոր ցանկան հրեշտակը սկեռել զհայ-  
 „եցուածս իւրեանց, ծաղիկ, որոյ հոտն բու-  
 „րեալ ’ի ննջեցեալն կենդանանան. և ծաղիկ  
 „գաշտաց՝ ուղ նա իւրն վկայէ, և ոչ պարտի-  
 „զաց: Այլ դու՝ ով ամենանը Կոյս, ո՞րպիսի  
 „վսեմական գաւաղան ես. և յորպիսի բարձրութի  
 „ամբառնաս զկատար սրբութէ քո: Դու հասա-  
 „նես առ նա՝ որ յաժոռն է բաղմեալ, մինչեւ  
 „առ Տէրն փառաց մեծվայելութէ: Ով տունկ  
 „արդարեւ երկնաւոր, քան զամ տունկս պատ-  
 „ուական, և յաւէտ նը: Ով արդարեւ փայտ  
 „կենաց, որ միայն եղեւ արժանի զպտուղ փրո-  
 „կութէ պտղարերել“: Եւ Հայաստանեայցս  
 եկեղեցի. (շարակ. ան.) „Այսօր ծնաւ մայրն  
 „ամուլ զքեզ յարմատոյն Հեսսեայ ծաղիեալ  
 „տիրուհի. որ ետուր մարդկան ’ի ժամու պտուղ  
 „զհացն կենաց զիջեալն ’ի յերկնից“: Դար-  
 ձեալ. (անդ. Լդ.) „Օանապական բողբոշն  
 „յամծ-

„ յածային դրախտէն յորովայն քո տնկեալ  
„բղխեցեր յարմատոյն Յեսսեայ ծաղիկ վայ~  
„ելուչ կուսական ծննդեամբ“ :

Է՞՞ : Եւ արդ՝ 'ի վախճանի զամենանը կու~  
սէն Անրիամայ խօսի նոյն մարգարէն, ուր բա~  
ցատրեալ դիմակագ իւր, միանգամայն և դշան~  
դերձեալն, ասէ . (Խե . 8.) \* Բաղկեացէ Երիշ  
պողոբութի . (ը Լատ . Էտցցէ Երիշ, և Բողեացէ  
պէրիշն) : Արդ՝ երկիրս այս, որ ունի բղխել  
զայսպիսի աղնիւ, և զպատուական պտուղ, ո՞  
այլ ոք է, բայց եթէ ամենանը Արյոն, կարի  
իսկ տիրապէս նմանեալ երկրի . ասէ նբն Բո~  
նավէնդուրա, (Հայե . ընթերց . 7.) „Վանդի՝  
„ասէ, զի՞նչ իցէ խոնարհագոյն, և միանգամայն  
„զի՞նչ օդտակարագոյն քան զերկիր : Ամենե~  
„քեան դնա առ ուն կոխեն, և ամենեքեան  
„զկեանս առ 'ի նմանէ ունին : «Վանդի ուստի՝  
„քաղի կենդանութեն կերակուր, և հանդերձ,  
„և այլ ամ կարեռը պէտք պահպանուե կենաց .  
„բայց եթէ յերկրէ, և 'ի լիութէ նորուի :  
„Ապէս ևս զի՞նչ իցէ խոնարհագոյն, և օդ~  
„տակարագոյն քան զԱնարիամ : Աս վա խո~  
„նարհութե իւրոյ է նուաստագոյն քան զամ  
„արարածո . և սա վա լիութեն քան զամենե~  
„սեան է օդտակարագոյն : Օի ուստի՝ ընդու~  
„նիմք մէք զամ զկարեռը պէտս հոգեռը կե~

„նաց մերոց, բայց եթէ ՚ի Անրիամայ“ . որ  
բեղմնաւորեալ ՚ի Հոգւոյն սլոյ, ևտ մեղ զչչա  
Վ.՛, յորմէ և որով ընդունիմք զամ չնորհս,  
որք առաջնորդեն մեզ ՚ի յաւիտենիցն փրկու-  
թիւն : Այս և կրկին անգամ ասէ նոյն ինքն  
նր վարդապետն , եթէ քաջ մարդարեացաւ  
Խսայի զամենասք կուսէն Անրիամայ, յորժամ  
ասաց . \* Բաղնեսցէ երկը պղղութիւն (ը լուտ .  
Էացցէ երկը, և բաղնեսցէ պղղութիւն) || : Այս և  
Հայաստանեացցս եկեղեցի երդէ . (շարակ . ծլա .)  
”Բաղնեսցէ երկիր զողորմութիւն, և նորացուսցէ  
”զօրհնութիւն . քանզի Ա.Ծ ծննդեամբն ՚ի միշտ  
”կուսէն ՚ի փրկութիւն մեղ յայտնեցաւ“ :

Է. Ապա ովթէ զիարդ մեծ, զիարդ գեր-  
ամբարձ , սքանչելի , հիանալի , և գերահրաշ  
պարս է լինել արժանապատութեալ , և արդեանց  
ամենասք կուսին Անրիամու , զոր խոստացաւ  
Ա.Ծ ՚ի սկզբանէ անտի աշխարհի առ նախա-  
հարսն մեր , ստուերագրեաց լնոդ խորհրդական  
Քօղով բազմազդի օրինակաց , բացատրեաց բիւր-  
օրինակ նմանութեք , և նախապատմեաց բազմա-  
պատիկ մարդարեական պատգամօք :

Օհնուշ ամենանըն իւտավն Անգլիայու և յունինաս  
նոցն :

ԷՌ : **Ա**րդ՝ պարտ էր մեծի այսմ Առւսի՛ ըստ  
մարդարէիցն բանի՝ ծնանել 'ի ցեղէն Յուղայ ,  
և յաղգէն Դաւթի . այս է յաղգէ անտի , որ  
յայնչափ զարս ետես 'ի զաւակաց իւրոց նստիլ  
յարքունի աթոռ , նախ 'ի գլուխ համօրէն աղը-  
դին Խորայելի , և ապա ցեղին Յուղայ . յորոց  
ոմանիք նշանաւոր հանդիսացան ոչ միայն զիւց-  
աղնական գործողութիւք , և մեծանշան յաղ-  
թութիւք , որովք յաղթական դտան ընդդեմ  
թշնամեաց , այլև սրբութիւ վարուց իւրեանց :  
**Ա**յլ յորժամ մերձեցաւ ժամանակ , յորում՝  
զալոց էր յաշխարհ կինն այն , որ լինելոց էր  
յաչս Այ , և հրեշտակաց , և սրց , և համօրէն  
հաւատացելոց , ամենեին գեղեցիկ , և ամենեին  
գերապանծ զարդ արքունի աղջիս , էր աղջս այս  
յամ մարդկային շքոյ խրթնացեալ , և հաւա-  
սարէր ընդ աղջաց սոսկական հովուաց , և ար-  
հեստաւորաց : Եւ թէ այսմ այսպէս պարտ էր  
լինել , ապաքէն ըստ բաւականին ցուցեալ էր  
Եսայի 'ի համբաւաւոր մարդարէութե անդ իւ-  
րում , զոր մէք 'ի վեր անդոր յառաջ բերաք  
և մէկնեցաք . \* Բայսեսցի Գուտապան յարօմագոյն  
Հետաեայ || , և որ 'ի կարդին : Վանշի բառ

արմատ, որ լը եւրայականին զնի բուռ, ուղ յուշ  
 տանէ սըն Ներոնիմաս, (՚ի վերոյիշ. տեղ.)  
 նշանակէ պահան անպահոյմ' ի ճշողոց, և 'ի պե-  
 չեոց. զի ցուցցի, ասէ սը վարդապետն՝, Եթէ  
 ամենասը կոյսն Անրիամ, և 'ի նմանէ Յա-  
 ք, Քա՞ ծնանելոց էր յազգէն Պատմի, յորժամ  
 սա ազաքէն 'ի բաղմաց հետէ զկնի դերութնն  
 Բարելացւոց կորուսեալ էր զփառս և զըուք  
 արքունական աթոռոց և ոլսակին։ Եւ այս  
 երեի լինել ըստ ամենայնի համաձայն մե-  
 ծահքաշ տնտեսութե՛ մարդեղութե՛ Բանին Այ։  
 Ոի զորօրինակ Քա զալոց էր յաշխարհս իր  
 զամենակարօղ բժիշկ, առ 'ի բժշկել զվերսն առ  
 'ի մահ, զոր ընկալաւ մարդու վա մեղաց, յորս  
 յաւէտ վտանգաւորն, և յոյժ կարեվէրն, և  
 դժուարագոյնն 'ի բժշկիշ է վերքն հպարտութե՛.  
 Կոյնպէս կամեցաւ նա ծնանիլ ոչ 'ի մեծահա-  
 րուստ, և 'ի զօրաւոր, և 'ի մեծապատիւ ծնողաց,  
 և ձրիցն անոցիկ որք զմարդկան տածեն զշպար-  
 առութիւ, այլ յաղքատութե՛, 'ի մթութե՛, և յար-  
 համարհութե՛։ Աս այնորիկ և ամենասը կուսին  
 Անրիամու, որ առ 'ի յաւիտեանց կարգեալ էր  
 լինել մայր փրկչին, և նմանիլ նմա առաւել  
 քան զամ արարածս, անկ եղեւ ծնանիլ 'ի ժամա-  
 ռակի, յորում արքայաղուն զարմի նորա անշքա-  
 ցեալ յամ մարդկային փառաց և 'ի պատուսյ,

Նույաստացեալ դնէր և խաժամուժ ամբոխս իւր  
մոռացեալ և ընկեցեալ յաչաց :

ԷՌ : Եւ յիրաւի առաւել շահաւետ է մեզ  
զսոյն զայս զիտել, (առ ՚ի ուսանել աստի արհա-  
մարհել զերկրաւոր մեծութիւն, և մեկնել զսիրտ  
մեր յիրաց անտի, զորս կուրացեալն աշխարհ մեծ  
իմն համարէ, և այնչափ կաթողին ըղձանօք  
խնդրէ, այս է՛ զշարստութիւն, և զպատիւն . )  
քան թէ ընդվայրաքննութիւն հետազօտել մեզ  
զանունանս, և զշայրենիս, և զայլ սոյնպիսի պա-  
րագայս վերաբերեալս յազգաբանուի ամենանդ  
կուսին : «Քանզի ուղ ասէ մեծանուն ոմն նը  
հայրապետ և կարդինար, (Պետր . Պամիան,  
ներբող . Յ. ՚ի վլ̄ ծննդ . կուսին .) , , են ոմակը ;  
,, որոց կամելով զիտել առաւել քան զոր պարտն  
,, է զիտել, չտիազանց իմն և ընդունայն հեւ  
,, տաքննութիւն խոյլ և խնդիր առնեն, թէ ով  
,, էր հայր, և ով էր մայր սէյ կուսին Անրի -  
,, ամու : Եւյլ ՚ի զուր է խնդրել զայն ինչ, զոր  
,, աւետարանիչն աւելորդ դատեցաւ պատմել մեզ :  
,, օքի եթէ այսպիսի ծանօթութիւն կարևոր ինչ  
,, լեալ էր մեզ, չէր արդեօք այնպիսի ընտիր  
,, պատմչին զանց արարեալ զնովաւ լուռը չափ :  
,, «Քանզի այս սովորուի է սրբազան մտանա-  
,, զրաց, զի զորօրինակ ոչ երբէք ասեն ինչ որ  
,, կարօղ իցէ վնասել մեզ, նոյնպէս ևս զանց

, առնեն պատմել դայն ամ, զորս զիտելն չէ  
ո, ինչ մեղ օգուտ": Ապա շատ լիցի մեղ զի-  
տել, եթե 'ի վաղ ժամանակաց հետեւ հաւա-  
տացեալ եղեւ, եթե ամեները նիկ և ամեն-  
երանեալ ծնօղք ամենանը Առուին՝ եղեն սրի  
Յովակիմ, և սրն Աննա, որք և անուամբն իւ-  
րեանց նշանակեն զվիճակն սահմանեալ նց առ  
ԺՆՇ. Քանզի Յովակիմ նշանակէ պատրիարք-  
Տետան, և Աննա՝ շնորհ Տետան: Առքա էին  
ծնեալք 'ի Տեթղեհեմ. բայց թուի, թէ հաս-  
տատեալ էին զընակունի իւրեանց 'ի Կաղաքէթ  
կոչեցեալ փոքրիկ քաղաքին Պալիլեայ, որ էր  
տեղի կարի պատշաճական նուազուն ընչից նց,  
և համեմատեալ Խոնարհութեն՝ որ փայլէր յամ  
պարագայս վարուց նց. թէպէտ և անարդ յաչ-  
մարմնասէր և աշխարհասէր մարդկան, այլ առա-  
ւել 'ի յարդի և 'ի համարի ըստ անվուէալ սկզբանց  
հաւատոյ:

Է՛: Արդ՝ 'ի Կաղաքէթ սրն Յովակիմ և  
սըն Աննա եղեն միջնորդք, զորս 'ի գործ էած  
ամենակալն Ա՛ ի ծնանիլ զամենանը Այսն, 'ի  
թաղաւորութեն Հեքովի մեծի 'ի Հրէաստանի,  
և յինքնակալութեն Հոռվմայեցւոց՝ (Օդոստոսի  
կայսեր: Վնդ այս երջանիկ յղութի սըյ կուսին  
Անրիամու, զորմէ բաղումք ասեն, թէ հրաշխէք  
քղե, իրով ըստ բաղում ամս սրն Յովակիմ և

սին Աննա կը էին զնախատինս ամլութե՛ք . լսու  
որում և Հայաստաննեացս եկեղեցի հաստատէ՛  
յերդելն անդ . (շարակ , առ .) „ Ուրախութիւն աշ-  
„խարհի ծնաւ զԱնարիամ ամուլն Աննա աւետեօք  
„զուարթմնոյն “ զարձեալ՝ (անդ՝ թ .) „ ՚ յա-  
„մուլ երկրէ սյօր բուսաւ մեզ բարերեք բոյն  
„բարի . . . միամայրն Անարիամ , արմատ տնկոյն  
„անմահութե՞ : Անդ այս ասեմք երջանիկ յղութիւն  
սիյ կուսին Անարիամու՝ ուրախացեալ ցնծայ նը  
եկեղեցի , որ ՚ի նմաւ տեսանեւ զլինելութիւն արա-  
րածոյն՝ որ ամենանը քան զամ արարածս , որք  
եղեն ՚ի վլ երկրի , և զառաւել մերձաւոր իմն  
արամաղբութիւն մարդեղութե՞ն Բանին . որ զոր-  
օրինակ եղեւ նպատակ ուխտից և անձկալի փա-  
փաղանաց համօրէն արդարոց հնոյ կոտակին ,  
սոյնապէս և այժմ է նպատակ օրհնութեց , և  
փառաբանութեց , և ցնծութե՞ն համօրէն քրիս-  
տոնէից , յորոց շինեցաւ եկեղեցի : Անայսորիկ  
սկիզբն եղեւ անդստին յերկոտասաներորդ դա-  
րէ անտի յեկեղեցիս ինչ , մանաւանդ Գաղղիյ ո-  
կատարել զտօն մասնաւոր ՚ի պատիւ յղութե՞ն  
ամենանը կուսին Անարիամու , զայն յետ այնորիկ  
՚ի հնգետասաներորդ դարուն հաստատեաց և  
նը եկեղեցին Հռովմայ , ուղ յայտ է ՚ի սահմա-  
նաղբութե՞ն , զոր ՚ի սոյն սակս հրատարակիաց  
Ֆայրազոյն քահանայապետն Քանեստոս չորրորդ

յամին 1477. յորում դ' լուսաւ ածեալ զձիրս  
ամենանը կուսին Անրիամու, դիտէ զարթուցա-  
նել զջերմեռանդութի՛ հաւատացելոց առ նա:  
Ըստ՝ ահա այս են բանք քահանայագետին մե-  
ծի: „Յուշ ածեալ մեր չերմեռանդն մոռք դդէ-  
„րապահծ և զդերամբարձ արդիւնս հրաշափաւ-  
„ուաղոյն կուսի Ածամօր, որ իրբե դշխոյ երկնից  
„վերամբարձաւ դեր ՚ի վերոյ քան զհրեշտա-  
„կացն դասս. և ուշի ուշով միտ եղեալ, եթէ  
„է նա մայր շնորհաց, և ողորմութի՛, սիրող  
„աղջի մարդկան, մսիթարիչ հաւատացելոց. որ  
„վն փրկութի՛ նց, մանաւանդ յորժամ մեղօք  
„են ծանրաբեռնեալ, պաշտանօք իւրովք և  
„մեծաղօք բարեխօսութի՛ իւրով միշնորդէ առ  
„ամենաղօք արքայն երկնից, զոր նա ինքն ծնաւ  
„յամենամաքուր արդանտի իւրում. պարտ և  
„պատշաճ դատիմք, զի ամ հաւատացեալք վն  
„յղութի՛ նորին անարատ Կուսին շնորհս և գու  
„հութիս մատուցեն ամենակալին Այց, որ նաւ  
„խախնամութի՛ իւրով ընտրեաց ՚ի յաւիտենից  
„զիսնարհ զայս Կոյս, և առատութի՛ պարզեաց  
„Հողւոյն սլյ հանդերձեալ պատրաստեաց զնա,  
„առնուլ ՚ի նմանէ Որդւոյն իւրոյ միածնի զմար-  
„մին մահկանացու, առ ՚ի փրկել զժողովուրդ  
„իւր, և հաշտեցուցանել ընդ սկզբան և ընդ  
„ա արշին իւրում զմարդկայինս ընութի՛ զան-

, կեալն ըւ սկարտաւոքութիւն յաւիտենական մահա ,  
,,ուան վա մեղաց առաջին մարդոյն“ :

ԷՇ : Հաստատեաց նոյն ինքն ծայրագոյն  
քահանայապետն զպաշտօն ժամերգութե , և զյա-  
տուկ պատարադի կարդ տօնիս . և շնորհեաց  
զներողութիւն ամենեցուն նց , որք առաջիկայ լի-  
ցին , և բարեպաշտութիւն կատարեսցեն : Եւ ՚ի  
ժամանակէ անտի և այսր առաւելաւ յոյժ առ-  
հասարակ բարեպաշտութիւն հաւատացելոց առ  
անարատ նը Կոյսն . յոր յաւելին նորանոր չեր-  
մեռանդուխ և այլ ծայրագոյն քահանայապետք :  
Աղեմէս ութերորդ արար զպաշտօն ժամերգութիւն  
կրկին մեծագոյն : Աղեմէս իններորդ յաւել և  
զութօրէսն : Խոկ ՚ի վերջոյ Աղեմէս մետասանեւ-  
րորդ սահմանեալ զօր տօնի նը յութերորդ ա-  
ռուր ՚ինկտեմբերի , հրատարակեաց զայն լինել  
տօն հրամայեալ : ՚ի պաշտամանց առափի , զօր  
եկեղեցին ընծայէ ամենանը Կուսին յառաջին  
վայրկենէ անտի , յորում երեխ յարդանդի մօքն  
իւրոյ , քաջայայտ ցուցանի , եթէ քանի՞ երկ-  
նաւոր պարզեօք , և քանի՞ առանձինն շնորհօք  
ճանաչէ զնա եկեղեցի անդտտին ՚ի սկզբանէ  
անտի լցեալ : „Երդարե ում ումեք արդեօք , ասէ  
,,նըն (Օգոստինոս , ՚ի վա բնու . և շնոր . դէ .  
,,36.) պարտիմք հաւատալ մէք , եթէ առէնալ  
ուիցէ Եժ զառաւելագոյն շնորհս . բայց եթէ  
,,նմա ,

„Նմա, որ արդիւնաւորեցաւ յշանեալ և ծնանել  
 „զսկզբնապատճառն շնորհաց, որ ոչ ունէր, և ոչ  
 „կարաց երբէք ունել զմեղսինչ : Եւ նույն պարտ  
 „եր լինել, ուղ յուշ առնէ աբն Ամբոսիոս, (՚ի  
 „վն սահմա, կուս, գլ. 6.) յաւէտ իմն առան-  
 „ձինն նպաստաւորեալ, և արտօնայեալ յլոյ,  
 „ըսցց եթե ամենաամը Անդն իւրում “: ’Ի ժամէ  
 անտի, յորում Անրիամնը կոյսն ընկալաւ զգոյ-  
 ւուի յարդանտի մօրն իւրոյ, պարտիսք համարել  
 զնա իրը երկինք նոր, ուղ բանիցս կարդ է ասել,  
 յորում ունէր Ա՞ թագուցեալ ընդ ծածկութիւն  
 մարդկայինս բնութեալ հաստատել զաթոռ իւր。  
 իբր զերկրաւոր իմն ղրախտ, յոր ունէր մտանել  
 Աղամն նոր, իբր զտաճար ինչ, որում պարտ եր  
 ընդունել զլոհն անպատ, որ լինելոց եր քա-  
 ռութիւն մեղաց ամ աշխարհի, վն սյսորիկ ըս մե-  
 ծահրաշ և ըս անսահման իմաստութեալ և նախա-  
 նսամութենն Այ, որ զամ ինչ կարդէ և պատ-  
 շաճէ առ իւր վախճան՝ որոյ վս արարեալ է,  
 ’ի ժամէ իսկ անտի անկ եր Անրիամու լութիւն  
 շնորհաց համեմատեալ վիճակին, յորում զտա-  
 նէր յայնժամ, առ ՚ի հանդերձել զնա յանհա-  
 սանելի արժանապատութիւն ածամայրուե, յար-  
 ժանապատութիւն ասեմ, որով ուղ նա առաւել  
 քան զայլ ամ արարածս մերձենայ առ սկզբնա-  
 պատճառն շնորհաց և սրբութե, նշնութե պատ-

շաճ էր նմա լիութի ինչ շնորհաց վերադոյն  
քան զլիուի այլ ամ սթց . ըստ որում և իմաս-  
տասիրէ նրն ինովմաս . ( գ . մասն . խնդ . 27 .  
պր . 5 . 6 . ) „ Խւրաքանչիւրումեք , ասէ , տայ  
„ Ած զնորհս , համեմատեալ վախճանին , որոյ  
„ վս ընտրեալ է . ասկա ամենասբ կոյսն Վարիամ  
„ գոլով ընտրեալ առ ՚ի ընդունել յինքն զնա ,  
„ որ լին էր ամ շնորհօք , յորոյ և ՚ի լրութէ  
„ անտի ամենեքեան ընդունին զամ շնորհս՝ զոր  
„ ունին , պարտ էր նմա զայնչափ լիութի ըն-  
„ դունել , մինչև առաւելադոյնս մերձենալ առ  
„ նոյն ինքն սկզբնապատճառն շնորհաց “ :

ԷՇ : Օպյուչափ եղակի ձիրս արտօնութեցն  
յղութէ Վարիամու տեսեալ , որ միշտ անարատ  
և միշտ նր , և մեք ցնծասցուք ընդ նմա , և սրտի  
մտօք շնորհս մատուսցուք պարդեատուին ամ  
բարութէ , որ առատաձեռնեաց ՚ի նա զգանձս  
բարերարութեց իւրոց : Եւ ընդ նմին խոնար-  
հեսցուք զանձինս մեր , հայեցեալ միանգամ յոր  
ինչ մեքն էաք ՚ի մերումն յղութէ : Ասացէ ամ  
մարդ անձամբ անձին լը սրբյն Դաւթի . ( Աաղմ .  
Ճ . 8 . ) \* Ահօրնութեալ յոլոցայ , և ՚ի մուլ ծնու-  
պէս մոյլ էմ : Այլ Ած ընդ անսահման մարդա-  
սիրութէ իւրոց եհան զմեզ յեղկելի վիճակէ աս-  
տի . և ծնաւ զմեզ վերստին ՚ի ձեռն նր մկրտու-  
թեան ՚ի կենդանուի շնորհաց , և սրբեաց զմեզ :

Իսկարդ՝ զ՞րապիսի երախտիս պարտ իցէ մեզ մատուցանել ԱՇ վ՛ս այսպիսի բարերարութենս մեծի, զոր շնորհեաց մեզ եղիելեացս, և անարժանիցս : Զ՞րապիսի փոյթ պարտ է մեզ յանձին զգենուլ, առ ՚ի պահել և առ ՚ի յաւելուլ զշնորհն զայն, զոր յայնժամ ընկալաք, ուղ միշտ պահեաց, և յաւել սոմենանը կոյսն Անրիամ զշնորհսն, որ տունաւնմատ ՚ի յղուննիւրում : Իարեխօս լիցի վ՛ս մեր սր Կոյսն անարատ, առ ՚ի ընդունել վասն մեր յԱՇ արդեամիք Որդւոյն իւրոյ միածնի զշնորհ նախապահէլոյ յամ արատոյ մեղաց, որ տայ մեզ կորուսանել զմլրտունն անմեղութի : Իսկ եթէ այնչափի դժբաղդ դտաք, զի արդէն կորուսաք զայսպիսի անդին դանձ պատուական, ունիմիք ապաքէն զմուտ դիմելոյ առ նա ինքն ամենանը Կոյսն, զի ընկալցի վ՛ս մեր զճշմարիտ և զանկեղծ ապաշխարութի, որ ՚ի բաց բարձցէ զանսահման վեասս պատճառեալ ՚ի մեղաց ՚ի հոգիս մեր :

“Օ հոռոհոր ամենահետք էստավին Անդիանու :

ԷՇ : **Ը**նի ինն ամսոց յղութեն իւրոյ ծնաւ Կոյսս այս մեծ, ըս հասարակագոյն կարծեաց՝ ՚ի Եաղարէթ քաղաքի : Իայց չեղւ և ոչ մի ինչ, որ զծնունդ նորին մեծապատիւ արասցէ յաշամարդկան : Աղքատուին, խոնարհուին, անար-

դութին, ընդհամուր լուռթին, և անհոգութին  
ամ մարդկան՝ զուղընթաց եղեն ծննդեան նր, և  
նոքին եղեն մեծափառութին նր: Եւ զի՞նչ այլ  
ինչ եղանակաւ պատշաճ էր ծնանիլ նմա, որ  
ծնանելոց էր յառուր միում զթագաւորն երկնի  
և երկրի ՚ի գոմն ինչ, և պատրաստելոց էր Ած-  
որդւոյն իւրում զդոյզն ինչ խոտ առ ՚ի հան-  
գիստ նր ՚ի մորի: Այլ եթէ ծնունդ կուսին  
այսպէս է յաջ մարդկան, սակայն ընդ հակա-  
ռակս է ուրախարար և սքանչելապայծառ տեսա-  
րան առաջի աչաց հաւատոյ, առաջի հրեշտա-  
կաց, և առաջի համօրէն արքայութեն երկնից:  
Երեմի նա յորդիս մարդէան իբր շուշան ՚ի մէջ  
փշոց. զի ՛ է նա յուսուվ ժան պժնոնիլն, ասէ  
նրն ինեռնարդոս, որով և ծնունդ նորուն տար-  
քերի ՚ի հասարակաց ծննդենէ համօրէն մարդ-  
կան, որը ծնանին թշնամի Այ, և որդիք բար-  
կութեն նր: «Օնանի նա շքեղազարդեալ ընտիր  
ընտիր առաքինութիք. և ընդ առերեւոյթ կեր-  
պարանաւ թշուառութեց, և մարմնաւոր տկա-  
րութեց, որը համօրէն ազգի մարդկան ևն հա-  
սարակ, թագուցեալ ծածկէ նա զպատուական  
դանձա երկնաձիր օրհնութեց. և ՚ի սկզբանէ  
անտի կենաց իւրոց լի է շնորհոք, և Հոգութ  
արթ: Եկեղեցին ՚Փափի նկատէ յամենանր Կըսն՝  
որ ծնաւ, զամէնօրհնեալ արշալոյսն այն օրհնուե՛,

որ աւետէ զմբքածնալ ցանկացնալ արեգականն  
արդարունք, հայի ՚ի նա իրը ՚ի նախկին ցոլմունս  
ճառագայթից յուսոյ մեղաւորաց, և իրը ՚ի նա-  
խամարտունի յաղթանակին մեծի, զոր ուներ յաշ-  
թանակել Ածորդին նը յետ աւուրց ՚ի վը հա-  
մօրէն դժոխային պետութեց, ողք բռնակալուք  
ընկճեին զեղկելի որդիսն Աղամայ: Եւ վա այսո-  
րիկ նոյն ինքն սուրբ եկեղեցի, և մանաւանդ  
եկեղեցին Հռովմայ, ՚ի վաղ ժամանակաց՝ և  
միրակի ՚ի տասն և աւելի ևս դարուց հետէ և  
այսօ՞ սահմանաղբեալ կարգեաց զաօն ՚ի պատիւ  
ծննդեան որ Կուսին յութերորդ աւուր ամսեանն  
Աեպտերիների: Յայս տօն յետ սյնորիկ Եննով  
կենտիոս չուրորդ Ճընդհանուր ժողովն, որ եղև ՚ի  
Լիոն քաղաքի յամին 1244, յաւել և զութօրէսն,  
և զայն յերախտազիտունի շնորհացինչ մեծի, զոր  
ամենասր Կոյսն արար ընդհանուր եկեղեցւոյ:  
Յայս հանդիսի քարոզէ բարձրածային որ եկեղեցի  
զցնծունի խնդունն իւրոյ, և զպատճառսն, որոց  
վա ուրախացեալ բերկրի. Երդելով զբազում  
երդս վառարանականս ՚ի պատիւ մեծի մօրն ԱՇ,  
ընդ որս և զայս. „Օհունդ քո ովկ Կոյս ածա-  
„մայր Ելից զտիեղերս ամ խնդութեք. քանդի ՚ի  
„քէն ծնաւ արեգակն արդարութե Վա Ած մեր.  
ո որոյ լուծեալ զկապանս անիծից աղջի մարդկան,  
ո ընդ որով անկեալն եր, լցոյց զնա օրհնութեք,

„և զմահու խորտակեալ զջօրութի՛, պարգևեաց  
 „մեզ զկեանսն յաւիտենից“ : Եւ Հայաստան-  
 եայցս եկեղեցի . (շարակ, ա .) „Ուրախութի՛  
 „աշխարհի ծնաւ զԱնարիամ ամուլն Աննա աւե-  
 „տեօք զուարթնոյն : .... Այսօր լցաւ խոստումն  
 „ԱՅ առ նահապետսն՝ ի զաւակե նոցին օրհնիլ  
 „ամ աւզանց . զի յարմատոյ նոցին բղխեաց Կոյսն  
 „նր , որ ծնաւ զԲանն բարձօղ մեղաց նախա-  
 „հօրն . փառս տացուք տուողին մեզ զօրհնեալն  
 „՚ի կանայս“ : Եւ յիրաւի եթէ նաև յաշխարհի  
 սովորութի է մեծահանդէս և ցնծալից բերկրանօք  
 կատարել զօր ծննդոց իշխանաց երկրի , տալով  
 հպատակացն այսուիկ զնշան ինչ յարգութե՛ և  
 մեծարանադ առ իշխանս իւրեանց . քանի՞ առա-  
 ւել իրաւամբք պարտ և պատշաճ էր նր եկե-  
 ղեցւոյ կատարել զտօն աւուք ծննդեան թագուհ-  
 ոյն երկնի և երկրի , և ընծայել նմա զառաւել  
 անկեղծ և զՃշմարտաքարող վկայութիս ջերմե-  
 ռանդութենն իւրոյ առ այս անհամեմատ բարե-  
 բար աշուի մարդկան , և առ ամենաղօր բարեխօս  
 ընտիր ընտիր շնորհաց վ՛ հաւատացելոց :

Է՛ : Եւ արդ՝ պատուեսցուք զամենանք  
 կոյսն Անարիամ , որ ծնաւ խոնարհ , աղքատ , և  
 անծանօթ , վայ և արհամարհեալ յաչս մարմ-  
 նաւորաց . այլ առաջի ԱՅ յարդի և զերաղան-  
 ցեալ յաշագոս առանձինն երկնաւոր ձրիցն ճո-  
 խութե ,

խութեն, և յաղագս բարձրապատիւ սղբութենն  
զարդու։ Համօթ լիցի առ սովաւ ամբարտաւա-  
նութի մարդկան, որ խորշի յոյժ, և մեծ նա-  
խատինս համարի զծնունդն աղքատին և զխոտան ։  
և մեծապէս պանծայ ը մնոտի և ընդունայն չքե-  
ղուիս, և ը փառս որ զուգընթանայ ՚ի ծննդեան  
մեծամեծաց և աղնունականաց աշխարհի։ Այն որ  
յիրաւի առնէ եղկելի և արհամարհ զհասարակաց  
ծնունդ մարդկան՝ յինչ լիճակի և իցեն, ե  
մեղքն, յոր ծնանին նոքա, զոր չէ հնար բառ-  
նալ համօրէն մեծութիւք և փառք աշխարհի։  
Խակ զսորուն հակառակն ծնունդ սիյ Կուսին գե-  
րազանցէ զամենեքումիք ըստ վսեմութեն, և ըստ  
աղնունականութեն, զի ՚ի նուաստութեն անդ իւ-  
րում անմասն է ՚ի մեղաց, և լցեալ զեղեալ  
ածաղարդ առաքինութիւք։

Ե։ Ապա գոհուիս ՚ի սերտ սրտէ մատուս-  
ցուք բարութենն Այ, որոյ տունեալ աշխարհի  
զլոյսն նր, խնամ կալաւ, ասէ նրն Շեռնար-  
դոս ՚ի բանն զոր ասաց մասնաւորապէս ՚ի ծնն-  
դեան Ածամօրն մեծի, „խնամ կալաւ, ասեմ  
ոյ յամի և ըստ ամի մեզ ողորմելեացս. ՚ի բաց  
„բառնայ զերկիւղ մեր, զարթուցանէ զհաւատս  
„մեր, հաստատէ զյոյս, փարատէ զանյուսուի,  
„և քաջալերէ զվհատութիս մեր։ Գուցէ զան-  
„զիտէիր, ասէ նրն, մերձենալ առ Հայրն երկ-

„նաւոր, և ’ի ճայնէն ևեթ պակուցեալ փախ  
 „չեիր իգրե զլողամ, ’ի թաղչիլ, բայց ահա  
 „ետ քեզ միջնորդ զէն: Օինչ ինչ ոչ ըն-  
 կալցի յայնպիսի Նօրէ այսպիսի Արդի: Խսելի  
 „լինի նա անտարակոյս առ իւրոյ խոնարհական  
 „յարգութեն: Օի Նայր սիրէ զնիրդի: Եւ  
 „զի՞նչ գուցէ զանգիտե՞ս և առ սա մերձենալ:  
 „Օանիր, զի սա է եղբայր քո, է մարմին քո,  
 „զամ փորձուեն էառ սա զփորձ, բաց ’ի մեղաց,  
 „զի ողորմած լինիցի: Վարիամ ետ քեզ զեղ-  
 „բայրս զայս: Այլ գուցէ երկնչիս և ’ի նորուն  
 „ածպետական մեծվայելըութեն: զի թէպէտ և  
 „մարդ եղե, սյլ զլոն լինել ոչ եթող: Եւ  
 „արդ՝ կամի՞ս արդեօք զոք և առ սմա բարեխօս  
 „ունել: Փութասջիր զիմել առ Վարիամ:  
 „Քանզի ’ի Վարիամ է մարդկութի մաքուր,  
 „մաքուր ոչ միայն յամ ասպականութե, սյլ  
 „մաքուր վա՞նշանաւոր ծննդեանն: Աչ եթէ  
 „երկմտութք ինչ ասեմ քեզ, այս՝ լսելի լինի  
 „նա առ իւրոյ խոնարհական յարգութեն: Խէ  
 „անվուեպ Արդին մօրն իւրաւմ, և Արդին լսելի  
 „լինի Նօրն: Աս է սանդուղք մեղաւորաց. սա  
 „է յոյս իմ մեծ. (ասէ նըն:): . . . Ապս զինչ  
 „որ ինչ հանդերձեալ ես դու նուէր մատուցու-  
 „նել Տեառն, յուշ լիցի քեզ յանձն առնել  
 ո զայն Վարիամու: . . . Իլրզի գուցէ ձեռն քո  
 „արիւ-

„արիւնաթաթաւ իցէ , կամ յայլ ինչ չարիս  
 „շաղախեալ : Ա նյ և զդուզնաքեայ նուերդ , զոր  
 „փափաքիս մատուցանել Ա.Յ , արա ապաստան  
 „՚ի ձեռս Անրիամու , ձեռք նր են յոյժ հաճոյ-  
 „ական և մեծապէս արժանաւոր ընդունելի լի-  
 „նելոյ . եթէ ոչ կամիս լինել այնմ հերքելի :  
 „Զեռքն այն են իրր շուշան սպիտակափայլ .  
 „որոյ վա և փեսայն երկնաւոր , որ սիրէ օթա-  
 „գայիլ ՚ի մէջ շուշանաց , չէ կարօղ ասել՝ ոչ  
 „գտի ՚ի մէջ շուշանաց , զօր միանգամ գտանել  
 „յամենամաքուր ձեռան Անրիամու “ :

Եպաւ անուն ամենաբնի Արտակն Անդրեաս :

Ա. Ճային տեսչութ եղաւ սրյ Աթւսին ծնե-  
 լոյ անունս Անդրեամ , որ ըստ սրյն Պետրոսի ու-  
 կիաբանի՛ նշանակէ Տէլին , կամ Տէրուհի , և ըս-  
 տրյն Ներոնիմոսի և սրյն Բեռնարդոսի՛ նշանա-  
 կէ Աստու ծովու : „Եւ կարի յիրաւունս , ասէ  
 „նախայիշատակեալ նրն Պետրոս ուկիաբան .  
 „(բան ՚ի վր աւետմ .) կոչեցաւ նա Տէլին , կմ-  
 „Տէրուհի . որովհետեւ պարտ էր նմա լինել մայր  
 „Ա.Յ և Տեառն տիեղերաց , պարտ էր աղաս  
 „լինել յամ ծառայութէ , և քան դամ արա-  
 „բածս լինել գերագոյն “ : Օսոյն զայս իմաստ  
 ընդարձակագոյնս մեկնէ նրն Բառնավենդուրա .

(Հայեւ .

(Հայեր . ընթերց . 3.) 'ի բանս յայսոսիկ :  
 „Անունդ Վարիամ նշանակէ Տէլուհի , և սքան-  
 „չելապէս իմն պատշաճի սից Կուսին , որ է տի-  
 „րուհի հրեշտակաց , մարդկան , և ղիւաց “ :  
 “Ես է տիրուհի հրեշտակաց , ասէ նբն , զի յեր-  
 կինս է բարձրացեալ գեր 'ի վերոյ քան զըրեշ-  
 տակացն դասս , և երանելի անմարմին հողիքն  
 այնոքիկ պատուեն , և մեծարեն զնա : “Ես է  
 տիրուհի մարդկան . քանզի ամ ջերմեռանգն  
 և հաւատացեալ անձանց պատշաճի այն բան  
 սաղմոսին . (Ճիշ . 2.) \* Ո՞ղ աշւ աղախնոյ ՞է  
 յետն աշխաջ իւրոյ : Ապա ամ ոք համբարձեալ  
 զաւս իւր՝ հայեսցի 'ի ձեռոս Վարիամու , զի բա-  
 րեխօսութք նր ընկալցի զընորհսն՝ } որոց պէտս  
 ունի : Լաւ է մեզ , ասէ նբն , զի ունիմք զտիկին  
 և զտիրուհի զոմն զայսպիսի , որոյ են այսչսփ  
 առատաբաշն և բարերար ձեռք , և պաշտպա-  
 նութի նր այնպէս մեծազօր է առ Ածորդւոյ իւ-  
 րում , մինչև ամենեքեան առհասարակ կարօղ  
 եմք աներկեան առ նա ղիմել : Առ նա ղիմեն  
 արդարք , առ 'ի ընդունիլ զիսպառ համբերուի ,  
 և զյաւելումն արդարութի . առ նա ղառնան  
 մեղաւորք , առ 'ի ընդունիլ զընորհ ճշմարիտ  
 ապաշխարութի , և զիժողութի մեղաց իւրեանց :  
 “Ես է ես տիրուհի ղիւաց , զի իշխէ նոցաւ  
 առ ընկճելոյ զկատալուինց , և առ նկուն առնելոյ  
 զտու”

կամբարտաւանութիւնց, առ լնդունայն առնեւ  
լոյ զամ ճիգն նց, և առ ՚ի դերեւ հանելոյ զամ  
դաւաճանութիւն և զդարանս նց, դորս նիւթեն  
մարդկան։ Եւ վնայսորիկ ՚ի վը ածէ որ վար-  
դապետն։ «Արդ՝ զայս ամենամեծ տիրուհի, և  
» զայս ամենազօր տիկին ըս արժանեաց սիրեմք,  
» արժանապէս գովեմք, և արժանապէս առ նա  
» պաշտիմք, զի զմեղ ՚ի դժոխային թշնամեաց  
» աստի պատսպարեսցէ»։

Է Ծստ նմին օրինակի քաջ պատշաճի  
ամենասր կուսին անունս Անարիամ, ըս որում  
նշանակէ Աստղ ծոչու։ Երբ զի է արդարեւ  
աստղ ամենամաքուր, ըս որում ծանուցանէ վե-  
րայիշատակեալ նին Ծոնավէնդուրա, յաղողա  
մեծի վարուցն մաքրութե, զոր միշտ յանձին  
երեր, անմատն գոլով բնաւին յամ արատոյ  
յանցուածոց։ Աստղ՝ որ արձակեաց յերկիր զգե-  
բապանծ և զամենապայծառ ճառագայթ լուսոյ,  
ծնանելով զիրդին Այ։ Աստղ օգտակարագոյն  
առ ՚ի ուղղել զմեղ յերկնային հայրենիսն, առ  
՚ի առաջնորդել մեղ ը ծով կենցաղոյս ՚ի շնորհս  
Արդւոյն իւրոյ՝ իրը ՚ի նաւահանդիստ երկնից  
արքայութեն։ Աստղ լուսապայծառ վն օրինա-  
կաց վարուց իւրոց, և վն դերափայլ առութինու-  
թեց իւրոց, լուսապայծառ է ևս վն բարերա-  
բութեց զիւութեց իւրոյ, որովք լուսաւորեւոց

զբազումն հօգեորապէս ՚ի խաւարի մթութեն  
 կենցաղոյս, զորօրինակ և սիւնն հրեղէն լուսա-  
 ւորեաց մարմնաւորապէս զորդիսն Խարայելի յա-  
 նտաղատին : Բարերարութիւնը ՚եր են պատաղարել  
 զմեղ ՚ի պատուհասից ցասմանն Ա.Յ., և ՚ի հրոյ  
 զիւական փորձութենց : «Օի՞նչ առնեաք մեք  
 „Եղկելիքո, աղաղակէ նբն, զի՞նչ առնեաք մեք  
 „ընկղմեալքո ՚ի խաւարի կենցաղոյս, եթէ չու-  
 „նէաք զայսպիսի լուսապայծառ աստղ : Օի՞նչ  
 „առներ աշխարհ, եթէ ոչ եր արեգակն : Անկ,  
 „ասէ նբն Բնեռնարդոս, բարձ զմարմինս զայս  
 „արեգակնայինն, որ լուսաւորէ զաշխարհ, և ուր  
 „գտանիցի յայնմշետէ տի՛ : Բարձ զլյարիամ՝  
 «զայս գերադոյն լուսապայծառ տարդ ծովու,  
 «զի՞նչ ինչ մնայ, բայց եթէ մութն մառախլապատ  
 „խափան անիլ, ստուեր մահու, և խաւար շօշաւ  
 „փելի» : ՚Ի վախճանի Անդրիամ, ասէ վերոյիւ-  
 շեալ նբն Բնեռնավենդուրա՝ կնքելով դբանս իւր  
 է աստղ լուսապայծառ վն լիութեն շնորհացն,  
 զորս ուներ ՚ի կեանս յայս, և վն անհասանելի  
 փառացն՝ զոր վայելէ յերկինս, որ է անհամե-  
 մատ գեր ՚ի վերոյ քան զփառս սյլ ամ սրց,  
 որք իրը զաստեղս փայլակնացայտ լուսափայլեն,  
 և լուսափայլեսցեն տռաջի Ա.Յ ընդ ամ յափ-  
 տեանս : «Անց ո՛ ոք և իցես գու, ասէ նբն Բնեռ-  
 նարդոս, (Ճառ 2 : ՚ի վն բանին Առաջակացու : )»

„որ յընթացս կենցաղոյս կարծեսդ ընթանալ  
 ո՞ի վը հաստատուն երկրի, ՚ի միտ առ յաւէա  
 ոտատանիլ յալեաց՝ և ՚ի մրրկաց. մի ՚ի բաց  
 ո դարձուցաներ զաւս քո ՚ի լուսապայծաւ առ  
 ոտեղէս, եթէ ոչ կամիս ընկղմիլ ՚ի մրրկաց:  
 ո Եթէ շնչեն հողմունք փորձութեց, եթէ ընդ-  
 ո հարկանիս ՚ի քարաժայուս վշտաց, հայեաց  
 ո յաստղս յայս, կարդա զԱրիամ: Եթէ ալէ-  
 ո կոծիս, և այսր անդր տարաբերիս յալեաց  
 ո հպարտութե՛, կամ փառասիրութե՛, կմբ բամ-  
 ո բասանաց, և կմնախանձու, հայեաց յաստղս  
 ո յայս, կարդա զԱրիամ: Եթէ ագահութին,  
 ո կամ բարկութին, և կամ գրդիո մարմնոյդ  
 ո հարկանէ զնաւակ մոացդ, դարձն զաւս քո ՚ի  
 ո Արիամ: Եթէ ՚ի ծանրութէ մեղացդ ամբու-  
 ո խեալ, և վս գարշութե՛ խղճի մոացդ շիո-  
 ո թեալ, և յերկիւղէ դատաստանին Այ պա-  
 ո կուցեալ, սկսանիս անդնդասոյզ լինել ՚ի վիհս  
 ո տրտմութե՛, և ՚ի խորս յուսահատութե՛, յուշ-  
 ո լիցի քեզ Արիամ: ՚Ի վտանգս, յանձկուիս,  
 ո և ՚ի կասկածանս խոկա զԱրիամ, կարդա  
 ո զԱրիամ: . . . Եթէ զչետ նի ընթանաս, ոչ  
 ո խոտորիս յուղեղ շաւղէն. զիմելով առ նա  
 ո պաղատանօք, ոչ յուսահատիս. և խոկալով  
 ո զնա, ոչ մոլորիս: Եթէ նա ուղղէ զքեզ, ոչ  
 ո անկանիս, եթէ պաշտպանէ զքեզ, ոչ երկի-  
 ո ցես

„ցես յումերէ՞ և եթէ նա առաջնորդէ քեղ, ոչ  
,,վաստակիս . և նպաստիւք նր՝ ժամանես երջան-  
,,կաբար ՚ի նաւահանգիստն յաւիտենական երա-  
,,նութե՞ . և լս այսմ օրինակի դու քեզէն զփորձ  
,,առցես, եթէ քանի՞ իրաւամբ եղաւ մեծի կու-  
,,սին անունս Վարիամ “ :

ԱՌ : ’Ի պատիւ գերյարգոյ և ամենասր ան-  
ուանս, սովորութի՞ եղև յեկեղեցիս ինչ Սպա-  
նիոյ կատարել զտօն մասնաւոր ՚ի 22. ‘Եսեմ-  
քերի, զոր և հաստատեաց վս եկեղեցեացն այնո-  
ցիկ քահանայապետական կոնդակաւ ծայրագոյն  
քահանայապետն Ակոն տասներորդ՝ յտմին 1513 Հ  
ԱՅԼ յետ այնորիկ տարածեցաւ այս տօնախմ-  
բութի՞ և յայլ եկեղեցիս արտաքոյ Վագնիոյ .  
մինչ զի մեծարու ծառայն ԱՅ Աննովկենտիոս  
մետասաներորդ՝ ՚ի շնորհակալութի՞ սըյ կուսին  
Վարիամու վս յաղթութեն՝ որով ՚ի պարտութի՞  
մատնեալ էին Հագարացիք, որք պաշարեալ  
կանխաւ զԱննա քաղաք Աւստոից, սպառ-  
նային ՚ի վը համօրէն քրիստոնէից հասուցանել  
զաւերումն, և զկոտորած . հրամայեաց յամին  
1683. Ընդ աշխարհ ամ ուղղափառաց՝ ՚ի կիւ-  
րակէին, որ ՚ի մէջ ութօրէից ծննդեան նորին  
ամենասր կուսին՝ կատարել զտօն ժամերդութի՞  
և պատարագաւ՝ ՚ի պատիւ անուանն Վարիամու +  
զայսօրինակ զարթուցեալ զամ հաւատացեալս Կ

'ի ցույցանել զերսիստագիտութիւն իւրեանց առ  
մայրս ողորմութեն, վե մասնաւոր բարերարությն,  
զգոս ոչ երբէք դադարեցաւ ընդունել յԱՅ յօ-  
կուտ համօրէն եկեղեցւոյ, և իւրաքանչիւր ան-  
դամոց նորին, և յառաւել ևս բորբոքիւ ջերմե-  
ռանդութիւն առ նա :

Անծայսանուն ամենասկզ Աստուին 'ի պատճեն :

Ե՞ւ : Ամենասկզ Արյուն (ոոկ բարեմտութիւն հա-  
ւատացեալ լինի,) անդստին 'ի տիս մանկուեն իւ-  
րում ընծայեցաւ 'ի տաճարին, առ 'ի լինել նուի-  
րեալ ԱՅ . և հաւանականաբար՝ առ 'ի կատարել  
զուխտն, զոր ուխտեցին ծնօղք նր + այն է՝ նուի-  
րել Տեառն զայտուղն՝ որ ճնանիցի յամուսնուէնց,  
'ի բառնալ Տեառն յետ բաղում ամաց 'ի նոցանէ-  
վնախտինս ամիութեն : Ահա այս ընծայումն է,  
զորոյ զտօնն կատարէ եկեղեցի 'ի 21. Արյեմշ  
բերի . տօն, որոյ զտանին յիշատակը յարեւ-  
լեան եկեղեցին 'ի սկզբանէ անտի երկոտասանե-  
րորդ դարուն, և զոր յարեւմնեան եկեղեցին  
հաստատեաց ծայրագոյն քահանայապետն Գրի-  
գոր մետաստաներորդ, յորժամ էր յԱՎինեօն,  
յամին 1374 . և Փիլիպոս հինգերորդ արքայ  
Գրադլեոյ մեծաւ նախանձու յառաջացոյց զայն 'ի  
թագաւորութեն իւրում :

Ե՞ւ :

ԱՅ: Բաւղումք համարին, եթէ ամենանը կըսն ոչ միայն ընծայեցաւ 'ի տաճարն, իրեւ ամենամաքուր նուէր Տեառն, այլև առ 'ի մնալ անդէն 'ի տաճարին, այս է 'ի բնակարանս՝ որ առ տաճարին էին, առ 'ի կըթիլ անդ ընդ այլոց կուսանաց 'ի ծառայութեն Տեառն. ըստ որում կարի վայելուչ իսկ էր, ուղ ասէ նըն Յովչան դամասկացի, ( 'ի վը ուղղափ. հաւ. դլ. 14.) „զի տնկեալ 'ի տան Տեառն, և պարարտացեալ, „ը օրինակի պտղաբեր ձիթենւոյ, եղիցի բնաւ „կարան համօրէն առաքինութեց, նա՝ որ ունէր „յղանալ յարգանտի իւրում զլուծ, որ դոլու „նր, 'ի նըս հանդչի:

ԱՅ: Այլ զիարդ և իցեն կարծիք և համարումն մարդկան, 'ի վը ժամանակին, Եղինակի, Խիրլութեն ամենառն Աստանին 'ի գոտնութիւն, յոր ընծանյեցաւ, զորոց չեւ ինչ սպոտեռութեն մորություն, (զորօրինակ ասէ արդի գերահամբաւ մատենադիք ոմն. դթ Անեղիկ. ժկ. ծանօթ. 'ի վը ընծայ, ամենանը կուս.) չեք ինչ տեղի տարակուսանաց, եթէ ինքն իսկ ամենանը կըսն նուիրեաց զանձն իւր Տեառն, վարելով զամենանը և դաւենենեին առաքինական կեանս. զոր ահա նկարագրէ նըն Ամբրոսիոս, ( 'ի վը կուս. դիրք 2. դլ. 2.) առ 'ի յորդոր ամենայն կուսանաց, զի Կմանակից լիցին նմա: „Ե՞ր, ասէ, Անդիսամ”

„կոյտ

„ կոյս ամենասր ոչ միայն մարմնով , այլև մնոք .  
 „ իրք զի ոչինչ անկարգ կամ ախտաւոր յօժաւ  
 „ բութի մթագնէր զանկեղծ սէր նորին որ առ  
 „ Ե՞՞ : Եց նա խոնարհ սրտիւ , ծանր ՚ի խօսս ,  
 „ խոհեմ , սակաւ ՚ի զըսցո , եռանդագին յընթեր  
 „ ցումն . և ապաւինէր ոչ ՚ի մնոտի և յանհաս  
 „ տատ իրս աշխարհի , այլ յաղօթս աղքատաց :  
 „ Եց նա անձանձիր յաշխատութե , համեստ ՚ի  
 „ խօսս . և սովոր էր ընտրել դատաւոր խորհը  
 „ դոց իւրոց՝ ոչ զմարդ ոք , այլ զԵ՞՞ : Ոչ զոք  
 „ զայրացուցանէր երբէք . զամենեսեան սիրէր ,  
 „ զվերնադոյնս պատունէր , ոչ նախանձէր ընդ  
 „ հաւասարս իւր , խորշէր ՚ի մնապարծութե ,  
 „ կանոնաւորէր ըստ բանականութե , սիրէր զառա  
 „ քինութիւն : Ոչ երբէք եղեւ նմա և ոչ իսկ մի  
 „ միայն հայեցիւք տհաճել զծնօղսն իւր . ոչ  
 „ երբէք եղեւ նմա տարածայնութիւն ունել ընդ  
 „ աղդականաց իւրոց . ոչ երբէք խորշեցաւ ՚ի  
 „ ուամիկ մարդկանէ , ոչ երբէք ծաղը արար  
 „ զտկարս . ոչ երբէք խորշեցաւ յաղքատաց :  
 „ նա մանաւանդ՝ ոչ երբէք տեսանէր նա զմար  
 „ դիկ , բայց եթէ յորժամ հսնդիպէր առնել  
 „ առ նա զգործ ինչ ողորմութե , ըստ պատշաճի  
 „ կուսական պարկեշտութե իւրոյ : Ոչինչ էր  
 „ յաչս նր հայեցուած դժնեսյ , ոչինչ խիստ ՚ի  
 „ բանա նր , ոչինչ անվայելուչ ՚ի գործս նր .

„վարք նր էին վայելուչ, ընթացք նորին հանա  
 „դարտաքայլ, ձայն նորին դաշն, մինչև ար-  
 „տաքին վարք նր ցուցանէին ղբարեվայելչութի  
 „հոգւոյ նր, և էր խակական դաղափար ընտիր  
 „վարուց: Օի զորօրինակ գեղեցիկ ինչ տուն  
 „ճանաչի ՚ի դաւթի անդ իւրում, և յառաջին  
 „մուտս անդ ցուցանէ, եթէ չիք ՚ի ներքս տեղի  
 „ինչ խաւարային, ըստ նմին օրինակի պարտ է և  
 „հոգւոց մերոց այնպէս լուսափայլել արտա-  
 „քուստ, ոող թէ անդամք մարմնոյս ոչ ծած-  
 „կեին զնա: Օի նչ կայ ինձ խօսել զՃշդութէ  
 „նորին ՚ի կերակուրս, և զառատութէ յարգու-  
 „թեան և մեծարանաց իւրոց առ ամեննսեան,  
 „և զանթերի կատարմանէ ամ պարտաւորութեց  
 „իւրոց: Ըստ պարտաւորութեցն մասին մարթ-  
 „է ասել, եթէ զանցանէր նա զպարտուք ընու-  
 „թեան, իսկ ըստ կերակրոցն, եթէ ՚ի բաց բառ-  
 „նայր և զկարեորն: Հաճախ էին ծոմապահու-  
 „թիք նորին, և յորժամ կերակրէր, կերակուր  
 „նր իրը ՚ի բացումն էր աղքատին, բաւական  
 „միայն ՚ի պահել զկեանս ՚ի մահուանէ, և ոչ  
 „առ ՚ի տածել զիափկակեցութի: Հանդիսա-  
 „նորին էր կարգաւորեալ ըստ հարկին. թէպէտ և  
 „յորժամ ննջէր մարմինն, մարթ է ասել, եթէ  
 „արթուն էր միտքն, որ կամ զընթերցեալսն  
 „միւսանգամ կրկնէր, և կմ շարունակէր մտօք

„ խոկալ զգործմն ընդհատեալս ՚ի քնոյ , և կամ  
 „ մտածէր կատարել դայն՝ զոր արդէն կարգեալ  
 „ էր առնել , և կամ կարգել զոր առնելոց էր :  
 „ Ոչ դիտէր նա ելանել ՚ի բնակութէ իւրմէ ,  
 „ բայց եթէ առ ՚ի գնալ ՚ի տաճարն , և այն՝ միշտ  
 „ ՚ի միասին լը ծնօղմն իւր : Ըստ այսմ օրինակի՝  
 „ յորժամ նա առանձինն նստէր ՚ի տան իւրում ,  
 „ պարապէր ՚ի գործո . և յորժամ ելանէր ՚ի  
 „ տանէ , ունէր միշտ զպահապան . թէպէտ և  
 „ ոչոք էր նմա այնպէս քաջ պահապան , ոոզ  
 „ ինքն էր անձամբ անձին : . . . . Ա ն եղիցի ,  
 „ ( ասէ նոյն նր Ա պարապետն , ) վարք ամենանը  
 „ կուսին Ա պրիամու առ ամ կուսանս , իրր լու ~  
 „ սապայծառ հայելի ողջախոչութէ , և իրր գառ  
 „ զափար առաքինութէց : Ուսցին առ ՚ի նմանէ  
 „ զտարադ կենաց . և առ ամենակատար օրինա ~  
 „ կաւս առ աքինութէց՝ ուսցին , եթէ զի՞նչ ինչ  
 „ ունին ուղղել յանձինս , և զի՞նչ իրաց զշետ  
 „ դնալ , և գործովք կատարել : Ուսցին զայս  
 կուսանք մտածութը վարուցն , զոր յանձին կա ~  
 լաւ ամենանը Ա ոյսն անդստին ՚ի մանկութէ  
 իւրմէ , և մասնաւորապէս օրիորդքն այնոքիկ ,  
 որոց վիճակեալ է գեղեցիկ վիճակն կրթելոյ ՚ի  
 տիս անդ մանկութէ ՚ի նր մենաստանս , և կա ~  
 րօղ լինելոյ ըս այսմ օրինակի դիւրագոյնս զշետ  
 երթալ գերապանծ առաքինութէց ամենանը

Կուսին, զորս գործեաց՝ մինչդեռ մանուկն էր :  
 Այլ ամ ոք յընծայմանէ անտի, որով երա-  
 նեալ նը կըսն ընծայեցաւ Այ 'ի տաճարին,  
 առցէ զարիթ յուշ ածելոյ, եթէ և ինքն նուի-  
 րեցաւ Այ 'ի նը մկրտութե՛ն. վայ և պարտաւո-  
 րեալ է դատել զմարմին և զհողի իւր՝ իբր կար-  
 գեալս 'ի ծառայուի Այ. և յայն սակս է գար-  
 շատեսիլ ինչ պղծութի՛, եթէ ծառայեցուսցէ  
 զնոսին մեղաց :

Հարսնականութե՛ն մենակը իւրական Անդիամու ընդ-  
 հեջին Հովհաննեաց :

Ե՞ւ Այ 'ի նշանաւոր շնորհաց անտի, զոր-  
 ետ Աստուծած ամենանը կուսին, մինչւ էր  
 եղեալ մայր Բանին Աստուծոյ, անտարակոյս  
 եղեւ այն, զի ետ նմա ընդդրկել զամենայն  
 ժամանակս կենաց իւրոց զկուսութիւն, վասն  
 ուխտին՝ զոր ուխտեաց, ոոկ ուսուցանեն հաստ-  
 րակօրէն նը հարք՝ հաստատեալք 'ի բանս աւեւ-  
 տարանին: Ըստ այսմ օրինակի յամենանը կու-  
 սէն Անդրիամայ, ասէ սբն Օգոստինոս, ('ի  
 Յով. ձառ. 10. հմք 2.) սկիզբն էառ արժա-  
 նապատութին կուսանաց, իբրզի նա ինքն եղեւ  
 առաջինն 'ի կանայս, որ՝ ըս բանից սբեյն Ամբրո-  
 սիոսի, ('ի վը սահման, կուս, դլ. 5.) „կանդ-  
 աւ նեաց

„նեաց զդրօշակ նը կուսութեն, և կատարեալ  
 „մաքրուեն. զորոյ (ասէ նոյն նըն) չէր գտեալ  
 „նա դգաղափար, բայց եթէ յերկինս “: Ան  
 այսորիկ աղաղակէ նըն Բառնարդոս. (Ճառ 3.  
 ’ի վը բանին Առաջայած.) „Ո՞վ Կոյս իմաս  
 „տուն, ով Կոյս բարեպարիշտ. և ո՞ւ ուսոյց  
 „քեզ, եթէ հաճոյ էր Տն կուսութի: Ո՞ր  
 „օրէնք երբէք, ո՞ր թուղթ հին կտակարանաց  
 „հրամայէ, կամ խորհուրդ տայ, և կամ յոր  
 „դորէ ’ի պահել զկուսութի, և յերկրի զհրեշ  
 „տակացն վարս յանձին բերել: Չունէիր դու  
 „առ այս, չասեմ զհրաման ինչ, այլև ոչ զխոր  
 „հուրդ, և ոչ զօրինակ ինչ. բայց եթէ Բանն  
 „Այ կենդանի և աղբու, (այս է Բանն յաւին  
 ո տենական,) եղեւ քեզ նախ ուսուցիչ, և ապա  
 „որդի քո. և հրահանգեաց զմիաս քո, մինչեւ  
 „էր նորա առեալ զմարմին մարդոյ ’ի կուսական  
 „արդանդի քում “: Այլ այսմ դաւանութեն,  
 որոյ յառաջ քան զամենանք կոյսն Անրիամ  
 չկայր ինչ օրինակ, քանի՛ հետեօղք եղեն յետ  
 ՚որ: „Ընդ աշխարհ ամ (ասէ նըն Ամբրոսիոս ’ի  
 „տեղին վերոյիշեալ,) տարածեցաւ սովորութի  
 „վարելոյ զայն զայս վարս երկնաւորս ’ի մարդ  
 „կային մարմի: . . . Եւ ով թէ քանի՛ կուսա  
 „նաց Ընդ առաջ ելանէ առաջննն ’ի կուսանս  
 „ամենանք կոյսն Անրիամ: Գիրկս արկանէ

„զնոքօք, և մատուցեալ զնս առաջի Տն, ասէ .  
 „սա անապական պահեաց զառագաստ Որդւոյն  
 „իմոյ, սոքա նախապատիւ համարեցան զկուսա-  
 „կան պարկեշտութիւն իւրեանց քան զառա-  
 „դաստո հարսանեաց : Եւ նոյն ինքն արն մեր  
 „Հն Քն ընդունի զնս խնդութիւն, և յանձն  
 „առնէ զնս աօրն իւրում յաւիտենականի,  
 „ասելով միւսանգամ ղբանսն, զոր կանխաւ  
 „ասաց երբեմն . այցր սբ, սոքա են, զորս ես  
 „պահեցի յանուն քո . խնդրեմ 'ի քէն, զի ուր  
 „եսն եմ, և նոքա իցեն ընդ իս: . . . Յայնժամ  
 „Արիամ, ըստ օրինակի քեռն Առվանեսի, առեալ  
 „'ի ձեռս զթմբուկ իւր, յարուցանէ զամ դասս  
 „կուսանաց, երգել Տն զօրհնութիւն, զի անցին  
 „ընդ ծով կենցաղոյս, անմիաս մնացեալ յա-  
 „լեաց կենցաղոյս“ : Ահա տես, թէ քանի՞ են  
 փառք սիյ կուսին Արիամու մը լինելոյ նո-  
 րա առաջինն 'ի նուիրել Տեառն ուխտիւ զկու-  
 սութիւն իւր :

Ե՛ւ : „Եւ արդ՝ ուխտեաց Տն Արիամ  
 „զուստ կուսութիւն, մինչեւ եր նր ծանուցեալ,  
 „(ո՞ղ ծանուցանէ արն Օգոստինոս, 'ի վը սրբ.  
 „կուս. գլ. 4.) զնա, զոր պարտ եր յաւուր  
 „միում յղանալ յարգանդի իւրում, ո՞ղի կա-  
 „րօղ եղիցի լինել օրինակ այլոց կուսանաց . և  
 „մի համարեսցի, եթէ նմա միայն պարտ եր  
 „լիւ-

„լինել կոյս, որ արժանի լիներ ծնանել դպաւակ  
 „առանց գործակցութե՛ առն։ Եւ հա՞ք ծնա-  
 „նելով՝ի կուսէ, որ հաստատեալ էր՝ի մտի  
 „մնալ կոյս, մինչը էր նր գիտացեալ թէ ո՞  
 „ծնանելոց իցէ՝ի նմանէ, կամեցաւ ցուցանել,  
 „եթէ յաւէտ հաստատէ, քան թէ հրամայէ  
 „զսք կուսութի՛, և ըստ այսմ օրինակի կամեցաւ,  
 „զի կուսութի՛ն մնասցէ ազատ, ևս և՝ի նմա-  
 „յորմէ ունէր նա առնուլ զկերպարան ծառայի։  
 „Այլ ոչինչ խափան եղեալ այսմ ուխտի, (յա-  
 „ւելու ասել նոյն ոք Ապրդապետն, ) քանզի  
 „սովորութիւնն Խարայելացւոց ոչ տայր թոյլ  
 „յայնժամ մնալ օրիորդի ումեք առանց ամսւս-  
 „նոյ, յայնսակս հարսնացաւ նա սըյն Հովսե-  
 „վայ, որ կոչի յաւետարանին այր արդար, և  
 „որ ոչ էր բառնալոց ՚ի հարսնէն իւրմէ զձիրս  
 „կուսութե՛նր, զոր նա կանխաւ ուխտեալ էր,  
 „այլ յաւէտ լինելոց էր նմա պահապան, և  
 „պաշտպան ։ Օայսմ հանգամանաց սըյն  
 Հովսեփայ ՚ի պահել զկատարեալ ժուժկալութի՛,  
 համարի սքն թովմաս, (՚ի 4. վճռ. զան. 30.  
 ին. 2. սղո. 1. առ. 2.) եթէ ամենանը Այսոն  
 ընկալաւ առ ՚ի յերկնից զապահովութի՛, յառաջ  
 քան զհարսնանալն. և կամ ըստ նմին սըյ Ապր-  
 դապետին, (3. մասն. ՚ի վղ փրկ. ին. 29.  
 սղո. 1. առ. 1.) „ասել պարտ է, եթէ ամեն-  
 „, երա-

„երանեալ նը Կոյսն աղղեցութիւն ։ ոգւոյն սիյ,  
 „որ յաճախ լինէր ՚ի նմա, հաւանեցաւ հարս-  
 նանալ, ապաւինեալ յօգնականութիւն Ա.Յ,  
 „եթէ ոչինչ վտանգ հասանի կուսութեն իւրում,  
 „և թողեալ յայսմ մասին զանձն իւր ՚ի նախա-  
 նամութիւն Ա.Յ, աներկեան գոլով, թէ ան-  
 իսախտ պահէ նա դուխտն իւր “ : Խոկ նըն Հով-  
 սէփ, թէպէտ և եր յաղնուական զարմէն Պատ-  
 թի, բայց անշքացեալ յամ մարդկային պատ-  
 ռուց, եղեւ յայնպիսի վիճակի, մինչեւ անձամբ  
 անձին շահիւ դպէտս պահպանութեան կենաց՝  
 աշխատութիւն ծեռաց իւրոց, վարելով զարհեստ  
 հիւսնութեն ՚ի փոքրիկ քաղաքն Ապարէթ. և  
 այս լը պամնչելահրաշ տեսչութեն խնամոցն Ա.Յ,  
 որ կամեցաւ, զի յերկոսին ՚ի սոսա, որք առաւել  
 քան զամենեսեան պատկանէին առ ՀՅ ՀՅ, մի  
 ինչ այլ գտանիցի, բայց միայն ճշմարիտ և հան-  
 տատուն մեծուի, որ ծագի ՚ի գերահրաշ առա-  
 քինութենց. և ոչ ընդունայն և ստապատիր մե-  
 ծափառութիւն աշխարհային, որ հաստատեալն է  
 ՚ի խարէական և ՚ի սնոտի մեծուիս : „Վկ դեղա-  
 „հրաշ միաւորութենս, աղաղակէ ըստ բանիս  
 „առաջաղբութեն նըն Ինոնարդոս, (Ճառ 1. ՚ի  
 „վկ բանին Ա.Յ. կուսութեն, և խոնար-  
 „հութեն : Եւ յիրաւի յոյժ հաճոյ է Ա.Յ հոգին  
 „այն, յորում խոնարհութիւն յարգի առնէ

„դկու-

„ ղկուսութին , և կուսութին լինի զարդ խոնարհուե :  
 „ Ա հա զայսօրինակ հանդիսանայ ամենասբ կոյսն  
 „ Վարիամ ՚ի հարսնանալն ընդ հիւսան ումեմն :  
 „ Խոնարհ է նա , կոյս է նա : Եթե չէ տունեալ  
 „ քեզ (յաւելու ասել սրն) քերել զնմանութի  
 „ կուսութին խոնարհիս այսորիկ , լեր նմանօղ  
 „ խոնարհութին կուսիս : Կուսութին է առաքի ~  
 „ նութի գովելի , բայց խոնարհութին է հար ~  
 „ կաւոր : Կուսութին է ՚ի խրատուէ , իսկ խո ~  
 „ նարհութին ՚ի պատուիրանէ : Ոկուսութի զրի  
 „ յաւետարանին , \* Որ խորոշն է պահել բարդունք || .  
 „ իսկ զնոնարհութի զրի . \* Եւեւ ոչ բալջնէ ,  
 „ և եղջնէ (խոնարհ) իբրա պահեփի , ոչ մատնեցնէ ~  
 „ յարժայունք երինից || : Ապա հնար է քեզ փրկիլ  
 „ առանց կուսութին , բայց չէ քեզ հնար առանց  
 „ խոնարհութին : Հնար է , ասեմ , հաճիլ Այ  
 „ ընդ խոնարհութին , որ ողբայ ընդ կորուստ  
 „ կուսութին . բայց առանց խոնարհութին , հա ~  
 „ մարձակիմ ասել , և ոչ կուսութին Վարիամու ~  
 „ հաճոյ լինէր առաջի աչաց իւրոց ածայնոց “ :

ԱՅ : Եւ չէ իսկ մարթ յերկունանալ , եթե  
 այս ամենողախոչ միաւորութի երկուց կուսու ~  
 թից , այս է Վարիամու , և Քովսեփայ , չեղե  
 ճշմարիտ և օրինաւոր ամուսնութին : Քանզի  
 տեսանեմք , զի՞ սր աւետարանին Քովսեփ  
 կոչի այլ Վարիամու , և Վարիամ կոչի կին

Յովսեփիայ : Յաւետարանն սկըն Անտթէի ( ա .  
 16 . 19 . և 20 . ) ասի . \* Յակովը ծնուա պէտք  
 պայրն Անդեմայ || . և փոքր մի զկնի . \* Յովսեէի այլ  
 նը ( ք Արիամու ) տանգէ արդար եր || : Եւ հրեշտակն  
 այսպէս խօսի առ սըն Յովսեփ . \* Յովսեէի  
 մի երնէլ տանուլ առ շեղ պԱնդամ ին բա || :  
 „ Ա այսորիկ , ասէ սըն Օգոստինոս , ( 'ի վը  
 „ հարս . և ցանկ . գիրք 1 . գլ . 11 . և 13 . )  
 „ քանզի Յովսեփ և Արիամ կոչին յաւետա-  
 „ բանին ամուսինք , ասել պարտ է , եթէ եղել 'ի  
 „ մէջ նց ճշմարիտ և օրինաւոր ամուսնութի ,  
 „ թէպէտ և պահեցին հանապաղ զանկախտ  
 „ կուսութի “ : Ա ամուսնութիս այս՝ որ 'ի մէջ  
 ամենանը կուսին , և սկըն Յովսեփիայ , եղեւ ամե-  
 նամաքուր , ամենողախոհ , ամենանը , և ամենա-  
 պանչ , քան զոր առաւել չէ հնար լինել 'ի վը  
 երկրի : Եւ միանգամայն է զարմանահրաշ օրի-  
 նակ ժուժկալութե՞ , որում քազումք 'ի սըց  
 հետեօղ եղեն , ընդ որս և սրբուհին Պողքէր  
 ընդ Անրիանոսի առն խրում , և սրբուհին  
 կունէգոնդա ընդ սկըն Ճենրիկոսի . որք թէպէտ  
 և նստան յաթոռ կայսերութե՞ , 'ի վը այսր ամի  
 օժանդակեալք առանձին իմն շնորհօք ՏՆ , կա-  
 մեցան յաւետ ընդունել Ճ՛Յ զպսակ կատարեալ  
 ժուժկալութե՞ , քան թողուլ զկնի խրեանց որ-

զիս առ ՚ի ժառանգութիւն մարդկային մշտութեն  
իւրեանց :

Է։ Օայս ամ ըստ այսմ օրինակիւ տնօրինեալ  
կարգեաց խորին խորհրդով խմաստութիւն Ա.Յ։  
,, Քանզի (ուղ ասէ սըն (Օգոստինոս . ՚ի վլ  
,, հարս . և ցանկ . գիրք 1. դԼ. 12. հմբ 13.)  
,, կամելովիւ գալ յաշխարհ նա՝ որ լինելոց էր  
,, առանց ինչ մեղաց , այս է Յա Քա Քա , պատ  
,, շաճ էր նմա ծնանիլ ՚ի կուսէ առանց դոր  
,, ծակցութեն առն . ուղ զի յղութիւն որին լինիցի  
,, առանց ցանկութեն , որ յառաջ գայ ՚ի մեղաց :  
,, Եւ (ուղ ասէ սըն Տեռնարդոս , Ճառ 2. ՚ի վլ  
,, բանին Ա.Յ.Յ.Ե.Յ.Ա. .) կամելովիւ առնուլ զմար  
,, մին մարդոյ նա , որ մաքրելոց էր զարատս մե  
,, դաց ամ մարդկան , չէր նմա արժան ունել  
,, մոյր , բայց եթէ զլոյս զոք անարատ , յորմէ  
,, և ծնանիցի անարատ “ : Բայց կամեցաւ նա  
միանգամայն , զի կոյսս այս ամուսնացի , վա  
պատճառացն , զորս յառաջ բերեն սը հարք :  
,, Եւ նախ առաջին , ասէ սըն Ներոնիմոս , (՚ի  
,, դԼ. ա . Ա.Յ.Յ.Գ. .) կամեցաւ Բանն Ա.Յ. առնուլ  
,, զմարմին ոչ ՚ի սոսկ կուսէ , այլ ՚ի կուսէ  
,, հարսնացելոյ , ուղ զի յազդաբանութեն անտի  
,, սըն Հովսեփայ ծանիցուք մեք և զազդաբա-

, նու-

„նութին ամենասր կուսին Անրիամու (1) : Երկ-  
 „րորդ՝ զի մի իբրև զշնացեալ քարկոծ լինիցէ  
 „նա ՚ի Արէից : Երրորդ՝ զի ՚ի փախչին նր՝  
 „յեղիպտոս, (զնոյն մարթ է ասել և զայլոց  
 „վշտաց և տառապանաց, զորս կրեաց,) գտցէ  
 „զմարդկային և ղջասարակ նպաստ ինչ, և զօդ-  
 „նութի : ՚Ի վախճանի սրն Խգնատիոս վկայ  
 „յաւելու և զօրըրորդ պատճառ այսր ածային  
 „խնամոց՝ որ առ նր Կոյսն . այս է՝ զի ծնունդն  
 „նորին թագուն մնալոցէ ՚ի սատանայէ . մոտա-  
 „ծեալ նր, եթէ ոչ ՚ի Աֆ ոչ ծնաւ նա, այլ ՚ի  
 „կնոջէ ամուսնացելոյ “: Եւ արդարեւ սոյն ինքն  
 „մեծ հայրապետ և վկայ, աշակերտ առաքելոց,  
 և երրորդ ՚ի յաջորդս սէյն Պետրոսի յաթոռն  
 Վնտիոքայ, պաէ ՚ի թուղթն իւր՝ որ առ Եփե-  
 սացիս . „Օածկեցաւ յիշխանէ աշխարհիս այ-  
 „սորիկ (ց ’ի սատանայէ ) կուսութին Անրիա  
 „մու, ծնունդ նր, նոյնալէս և մահ Տ՛ն : Խոր-  
 „հուրդք երեք մեծամեծք . այլ գործեալք ՚ի  
 „գաղտնիս Լոյ “: Օսոսին այլովք պատճառօք  
 Հան-

(1) ԱՅՆ ՀՅՈՒՆԻՔ ԷՐ ԹԵՐՅԱԿԱՐ ակնական, և  
 ող բակաւար ասեն, Տօրեղբօրորդի Անրիամու-  
 թոյ յառաջաբանութեն սբյան ՀՅՈՒՆԻՔոյ, պահ-  
 գընէն առեւպարանից, Տարբե էր գուլ ՚ի ծա-  
 նօվութեն ակնաբանութեն Անրիամու :

Հանդերձ գտանեմք յառաջ բերեալ և 'ի սոյն  
Ամբողոսիոսէ, ('ի Պուկ, դլ, ա.) որ զայս ևս  
յուշ առնէ, զի յամենիմաստ խնամոց անտի,  
զոր կալաւ Ած առ 'ի պահել անարատ յամ  
ստուներէ ձախողակ կարծեաց զմաքրութին ամե-  
նասբ կուսին Վարիամու, պարտի ամ ոք ուսա-  
նիլ, զի մի ինչ վեասեսցէ իւրումն համբաւոյ 'ի  
բարիսն, զոր դործէ . և յաւէտ իմն պարտ է  
կուսանաց ուսանիլ, զի պահպանեսցեն ամ նա-  
խանձու զհամբաւ պարկեշտութեն իւրեանց, խոր-  
շեալք յինչ և իցէ անզգոյշ գնացից, որում  
հնար իցէ նսեմացուցանել զայն դիարդ և իցէ  
եղանակաւ :

Խոռո՞ : „Այլ գուցէ չէ՞ր կարօղ Ած տալ  
„զնշան ինչ քաջայայտ, ասէ սրն Շեռնարդոս,  
„(Ճառ 2. 'ի վը բանին Առաջեցաւ .) մինչև ոչ  
„ծննդեան իւրում լինել վատահամբաւ, և  
„ոչ մօրն վն յանցանաց ինչ ամբաստանիլ :  
„Այլ՝ քաջ կարօղ էր առնել : Այլ չէր հնար  
„թագուցանել 'ի դիւց զայն, որ լինէր ծա-  
„նուցեալ մարդկան : Արդ՝ անկ էր տնօրէնուն  
„ածային խորհրդոյս թագուն մնալ ընդ ժամա-  
„նակս ինչ յիշխանէ աշխարհիս այսորիկ . ոչ  
„եթէ 'ի կամելն Այ զգործս զայս մեծ յայտյան-  
„դիման դործել, երկնչէր՝ թէ խափանեսցի 'ի  
„սատանայէ . այլ զի նա, որ ոչ միայն կարո-  
„ղութիւ ,

„ղութիւն, այլև իմաստութիւն արար զամ դոր ինչ  
 „և կամեցաւ, զըրօրինակ յայլ ամ դործս իւր  
 „սուլոր եղև վայելուչ կարգի պահել զպատ-  
 „շաճաւորութիւն ինչ իրաց, և կամ ժամանա-  
 „կաց, նոյնպէս և յայս մեծահրաշ գործ նորո-  
 „դութենս մերոյ՝ ոչ միայն զկարողութիւն իւր կա-  
 „մեցաւ ցուցանել, այլև զիմաստութիւն իւր։ Եւ  
 „թէպէտ հնար էր նմա առնել զայս զիարդ և  
 „իցէ այլով եղանակաւ ըստ հաճոյ թուելոյ նմա։  
 „՚ի վր այսր ամի հաճեցաւ հաշտեցուցանել  
 „զմարդն, ըստ նմին կարգի, և ըստ նմին եղանակի։  
 „ըստ որոյ անկեալ էր նա։ Արդ՝ ոնդ սատանայ  
 „յառաջադոյն խաբեաց զկինն, և ապա միջնոր-  
 „դութիւն նոր պարտեաց զայրն։ նոյնպէս պարտ  
 „էր սատանայի յառաջադոյն խարիւլ ՚ի կնոջէ  
 „կուսէ, և ապա յայտյանդիման պարտիւլ ՚ի  
 „մարդոյն, այս է՛ ՚ի ՚Քնէ՛։

Ե՛Յ Հարսնախօսութենս այսորիկ ամենանը  
 կուսին Վարիամու լնդ սրյն Յովսեփայ, զոր  
 Ա՛ սոյնօրինակ գերահրաշ նախախնամութիւն  
 կարգեաց, որ կարի քաջ յանդիման առնէ մեզ  
 զմիաւորութիւն Յնի ՚Քնի լնդ եկեղեցւոյ, որ  
 կոյս դոլով ունի փեսայ իւր զնոյն ինքն զ՞Քն  
 Յն։ որ և տիրապէս իմն խրատէ զամուսնացեալու  
 ՚ի սէր ժութկալութեն, և առաւել ևս ՚ի հաւա-  
 տարմութիւն ամուսնական, հարսնախօսութենս այ-

օորիկ, ասեմ, սկիզբն Եղե՛ ՚ի հնդետասաներորդ  
դարուն կատարել զպաշտօն ժամերգութե՛ն և  
դասն ՚ի մասնաւոր Եկեղեցիս ինչ Վաղղիոյ:  
Ըստ ՚ի յաջորդ դարուն հաստատութե՛ք ծայրա-  
գցն քահանայապետին Պօղոսի երրորդի՝ տա-  
րածեցաւ այս պաշտօն և յայլ Եկեղեցիս . և  
յամէ անտի 1725. Ը Հնորհելոյ բարեյիշատակ  
եպապին Բանեղիկոսի երեքտասաներորդի կա-  
տարի և ՚ի Առովմ, և ՚ի բովանդակ նահանգս  
տերութե՛ն Եկեղեցւոյ ՚ի 22. Հունվարի:

Առաջարկ ամենառու կուսակն Ուղղեամու:

♦  
Է՛տ: Արմանախօսութին ամէներանեալ կուսին  
Եղե՛ մերձաւոր ինչ պատրաստութի ՚ի կատա-  
րումն անձառելի այնր Խորհրդոյ, որ յամենասը  
կոյսն Անրիամ Եղե՛ սկիզբն և հիմն այլ ամ  
շնորհաց, որովք նա լիալիր ճոխացաւ. և նովաւ  
անհամեմատ գերազանցեալ բարձրացաւ քան  
զայլ ամ արարածս . այն ինքն է Խորհուրդն  
մարդեղութե՛ն Բանին Այ յամենողականոչ և յա-  
մենամաքուր արգանդի խրում: Աւ արդ՝ հարս-  
նացեալ նոյ լնդ սըյն Հովսեփիայ, և բնակեալ ՚ի  
քաղաքն Ամարեթ, առաքեցաւ առ նա Այ հրեշտակն Վարքիել, (որ նշանակէ պօրութի  
Այ,) որ Եղիտ զնա՝ ասէ նըն Ամերոսիոս, (Կի

վլր կուս . զիրք 2 . զԼ . 2 .) 'ի սենեկի տանն իւա  
րոյ փոքու՝ (1) առանձինն , և չէր ոք առ նմա ,  
բայց միայն որ զիրք , զորս ընթեռնոյր և խու  
կայր , և այնպէս խօսակից լիներ նա ընդ հրեշտ  
տակաց , և լը մարգարէից : Արդ՝ մտեալ հրեշտ  
տակին յայս առանձնուե սենեակ , ուր եր Անա  
րիամ , ասէ ցնա . \* Ուրանի լեռ բերիշեալը , Տեր  
ընդ ժեղ . (ը Լատ . Ողջոյն ընդ ժեղ , լ' շնոր  
հօս , Տեր ընդ ժեղ . օրհնեալ ես ուս ՚ի խո  
նայս : ) Եւ նո ընդ բանակ խռովվեցու , ես խոր  
հէր ընդ միտ , լե արտիստ ինչ իցե ողջոյնս այս ||  
” Ուսիր , ասէ աստանօր սրբն Ամբրոսիոս , (զիրք  
,, 2 . 'ի Պուկ .) եթէ որպիսի ոք է որ Կյան բա  
” բուք , և որպիսի ամօխթածութէ : ... Հատուկ  
,, է կուսանաց երկնչիլ և խռովիլ ընդ մուտս  
,, արանց , և մտայց լինել վա ամբանից նց : Ուս  
,, ցին կանաք հետեւող լինել գեղեցիկ այսմ օրի-  
,, նակի պարկեշտութէ : Կյան առանձինն կայ 'ի  
,, սէւ .

(1) Փանակը բուլե պահա այսորին ՚ի Լաւր Շառու  
ժողուա նահանջին Անգոնայշ , խարարի պօնն  
է 10 . ՚ի եկտեմբերի . պորմէ պէս ՚ի ծառու-  
լունելի ՚ի ենեպիկոսի շորեւուսանելուրդի ,  
ես առ թատօմովելուայ ՚ի վլր վարուայ և գործոց  
Անընամու իւսս . մասն 2 . վլճ . 24 : (Եւ 'ի  
Բէ՛լ Գէրս հրաշկա Աժածնի . հքուշ . ժէ : )

„սենեկի իւրում՝ թագուցեալ յաչաց ամ  
 „մարդկան, և տեսանելի միայն հրեշտակի միում.  
 „առանձին է նա առանց ընկերաց, և առանց  
 „վկայից. և զի մի անվայելուչ ինչ խօսք արատ  
 „դիցէ նմա, հրեշտակ է՝ որ ողջոյն տայ նմա:  
 „Ուսարուք, (ասէ նր Վարդպան,) ովկ կուսանք,  
 „խորշել յանհամեստ զրուցաց, տեսեալ զՎա-  
 „րիամ, զի 'ի հրեշտակին իսկ ողջունելոյ երկն-  
 „չի “: ’Ա նոյն միտս զբեաց և նըն Ներոնիմոս  
 առ. Ետա. „Դուստրն քո հետեւ լիցի Վա-  
 „րիամու, զոր առանձինն եղիտ հրեշտակին 'ի  
 „սենեկին իւրում, որ և խոռվեցաւ՝ գուցէ զի  
 „ընդ հակառակս սովորունն իւրոյ ետես զմարդ,  
 „(այս է՝ զհրեշտակ 'ի կերպարանս մարդոյ:)  
 „Եւ յիրաւի, ասէ նըն Շեռնարդոս, (Ճառ 4.  
 „'ի Վատթ.) յատուկ է կուսանաց, որք են  
 „Ճմարտապէս կուսանք, (այս է՝ ոչ միայն  
 „մարմնով, այլև մտօք և սրաիւ, ) լինել միշտ  
 „երկչոտ, և ոչ երբէք զանձինս համարել գոլ  
 „յապահովի. և առ խորշելոյ յամէ, յորմէ  
 „արժան և իրաւ է երկնչիլ, զանդիտել ևս և  
 „ուր չերևի առիթ ինչ երկիւղի. զիտելով,  
 „եթէ բարձեալ տանին զգանձ պատուական  
 „յատինս խեցելէնս, և թէ դժուարին է յոյժ 'ի  
 „մէջ մարդկան կեանս վարել իրեւ զհրեշտա-  
 „կի, և քաշաքալարիլ յերկրին ըստ նմանութէ  
 „երա-

„Երամնելեացն բնակելոց յերկինս , և շուրջ  
 „պատեալք մսեղէն մարմնով կեալ անամուսին :  
 „Եւ վա այսորիկ զի՞նչ և իցէ նորութի , և կամ  
 „զի՞նչ և իցէ անակնկալ դիպուած պատճառէ  
 „՚ի նա զերկիւղ վա դարանակալութեն ինչ , և  
 „կմ՞ վա մեքենայի ինչ նիւթելոյ ընդդէմ նց “ :

ԵՌ : Ոչ միայն ընդ տեսութի հրեշտակին  
 ՚ի կերպարանս մարդոյ խոռվեցաւ ոք Կոյսն , այլ  
 նաև ընդ բանս նոր խոռվեցաւ , որ փակէր զներ-  
 բողեան գովեստի , քան զոր հրաշափառադոյն և  
 վսեմագոյն չէ հնար լինել , և որում նման ինչ  
 չէր երրէք լունեալ ՚ի համօրէն նախընթաց  
 դարսն : Արդ՝ ոք Կոյսն , ըստ որում իսկապէս էր  
 խոնարհ , և ճշմարտապէս ճանաչէր զչափ  
 ոչնչութեն իւրոյ , չեղե կարօղ առանց խոռ-  
 վութի ինչ լսել զբանն , որ այնչափ բարձրա-  
 ցուցանէր զնա , և ՚ի վեր ամբառնայր քան զամ  
 խորհուրդս իւր : Այս ՚ի դիպուածի աստ , ասէ  
 ոքն Հովհան ոսկեբերան , (Ճառ 4. ՚ի Անաթթ .)  
 „Եցոյց նա զմեծուի առաքինութի իւրոյ , ունկն  
 „դնելու երկիւղածութի , և խոռվութի՝ դու-  
 ովեստիցն լնծայելոց նմա , փոխանակ բերելոյ ՚ի  
 „սնուտի ցնծութի . ոոկ առնէր ոք , որ չէր իրեւ  
 „զնա խոնարհ “ : Եւ միրաւի զի՞նչ ինչ մեծա-  
 գոյն մարթ էր ասել ՚ի գովեստ Անրիամու ,  
 քան զոր ասաց հրեշտակն յայս դիպուած : ԱԾ ,

որ է պատճառ և բաշխող ամ շնորհաց, միջնորդության հրեշտակին կոչէ զնա և շնորհօք. լիութի շնորհաց, որ բարձեալ բերեր ընդ իւր ոչ միայն զանմասն լինել յամ աղքէ մեղաց, այլև յայնցանէ՝ որք կոչին լուցկիք, և խայթ մեղաց, այս է՝ ՚ի տղիտութէ, և ՚ի ցանկութէ, լիութի շնորհաց, որ բերեր ընդ իւր զառատ յորդութի համօրէն առաքինութեց, և ամ պարգևաց, որովք Արքամ ընդունելի էր յոյժ առ Ած. և լիութի շնորհաց գեր ՚ի վերոց քան զայլ ամ սրց: Ունէ պէտ և ճշմարիտ է, զի և զայլոց սրց ասի, ոող յուշ առնէ նբն Շեռնարդոս, (Ճառ Յ. ՚ի վերանին Առաքեցաւ.) եթէ լի եղեն շնորհօք. բայց լիութի նց յոյժ աննման դտաւ լիութեն Արքամու. իառի ին ասէ անհնան Անընանու: Եւ արդարեւ այս լիութիք շնորհաց են համեմատեալ անձանցն, զորոց խօսիմք, և համաչափ արժանապատութեն և պաշտօնի, առ որ կարգեալ են յԱ.Յ: Արդ՝ զորօրինակ ածամայրութիւն, յետ անձնաւորական միաւորութեն՝ որ եղեւ ՚ի Քան Հան, է գերագոյն աստիճան արժանապատութեն, յոր հնար է մարդկայինս բնութեանաւորական մարդկայինս լիութին շնորհաց պարգևեալ ամենանը կուսին Արքամու՝ պարտի լինել գերագոյն, քան որչափ ինչ հնար է երբեք շնորհել ումեք յարաքածոց: Ամին իրի թէպէտ

և զսրին Ատեփաննոսէ նախավիայէ, և զառաքելոց, և զեօթանց սարկաւագացն ասի յածաշունչ դիրս, թէ էն լըետու շնորհօք. չ շնորհօք կոչէ և յայսմ տեղւոց սբ Կոյսն. չ շնորհօք ասի և Հայք, \* Գեւառ, ասէ զնմանէ սբն Հովհաննէս, (Հովհ. ա. 14.) չ շնորհօք և ճշտրութեամբ. ՚ի վը այսր ամի լիութիքս այսոքիկ չեն հաւասար միմեանց, այլ մանաւանդ են յոյժ տարրեր: Քանզի լիութին շնորհաց Հայք ՚ի մեջ է իրրե զլիութի լայնածաւալ ծովուն ովկիանոսի, յորմէ իրրե յանսպառ առատազեղ աղբերէ բղխեն այլ ամ շնորհք. \* Օչ ՚ը լըութի անորի նորս մէս անհետին առառք շնորհն: Լիութին շնորհաց Անրիամու է իրրե զլիութի մեծի և յորդահոս գետոյ. իսկ զլիութի շնորհաց այլոց սրբ մարթ է համեմատել լիութի վտակաց, որք նուազ են յոյժ քան զգետ: Եւ ովկիանոսն, և զետն, և վտակն առհասարակ լի են ջրով, այլ ոչ նովին յորդութիք և առատութիք: Անյ առ ՚ի ցուցանել զայս անբովանդակելի առատութիւն շնորհացն Անրիամու, կոչէ վնա հրեշտակն զերամբարձ իմն վսեմութեամբ, և գերազանցութիք չ շնորհօք:

Կե: „Եւ զի՞նչ զարմանք են, յաւելու „ասել սբն Շեռնարդոս, (Ճառ Յ. ՚ի վը բանին և Շառաւեցու: ) Եթէ լի իցէ շնորհք նա, ընդ Է 2 ու ուռմ

„որում է Տէր, ուզ ասաց նմա հրեշտակն ըաւ  
 „նիւքն այնոքիւք. \*Տէր ընդ ժեղի ։ Ոչ արդեօք  
 „լս այնմ օրինակի, լս որում է նա անչափու-  
 „թեն իւրով յամ արարածս իւր, և որով լինի  
 „ներկայ յամ տեղիս ։ . . . Այլ ուղ է նա ընդ  
 „բարիս, և ընդ սբս, ընդ որս միաւորեալ է սի-  
 „րով, և համաձայնութեն կամաց նց ընդ կամաց  
 „նորին Ա.Յ. ։ Եւ թէպէտ նա ըստ այսմ օրի-  
 „նակի է ընդ ամ սբս իւր, այլ առաւել իմն  
 „մասնաւոր եղանակաւ է ընդ Անրիամու, ընդ  
 „որում ունի զայնչափ համաձայնութեն, մինչեւ  
 „ոչ միայն մինքն ձգէ, և միաւորէ ընդ իւր  
 „զկամն նր, այլև միաւորէ ընդ իւր զմարմինն նր,  
 „կազմելով ՚ի գոյացութեն նր զմարմինն զայն,  
 „որ միաւորեալ ընդ անձին Բանին՝ կացուցանէ  
 „զմի միայն Յա Վ.՛ ։ Եւ արդ՝ Տէր է ընդ  
 Անրիամու, իբրև ՚ի տաճարի իւրում, և յաթոռ  
 իւր ։ Բնակի ՚ի նմա, լցեալ զբովանդակ միտս,  
 և զբովանդակ կամն նր, գոլով սկիզբն ամ խոր-  
 հրդոց նր, և ամ շարժմանց սրտի նր, և ամ  
 գործոց նր ։ Ա.Ֆ. է ընդ Անրիամու՝ առ ՚ի պահ-  
 պանել զնա, առ ՚ի պաշտպանել զնա, և առ ՚ի  
 տալ նմա զբարեյաջող ելս յամ գործողութիս  
 նր, և առ ՚ի ամբանալ զնա ՚ի վսեմագոյն աս-  
 տիճան առաքինութեն, պատուց, սրբութեն, և  
 փառաց ։ Եւ վա այսորիկ հրեշտակն յետ բանիցն

\* Տէր

\* Տեր ընկը ժեղ ||, ասէ յլոյսն . \* Օքհնեալ էն  
գու - 'ի խոնայս ||, այս է՝ 'ի վեր քան զամ կա-  
նայս . քանեզի ոչ ումեք այլում բաշխեաց Ած,  
ուղ Անրիամու , զայսպիսի գերազանց պարգևս ,  
զառանձին իմն արտօնութիւնս , և զամենառատ  
օրհնութիս :

Է՞լ : Արդ՝ 'ի գովեստից աստի խորվեցաւ  
Կոյսն խոնարհ . այլ հրեշտակն անդէն վաղվաղա-  
կի աներկեան արար զնա յասելն . \* Ան երինչէր  
Անրիամ , զէ գուեր շնորհն յԱյ : Եւ ահա յառաջէր ,  
և ծնցէս որդի , և իոչեսցէս պահուան նորո չին :  
‘Ես եղեց մեծ , և որդի բարյբելոյ իոչեսցէ (քը  
եղիցի ճշմարտապէս) . և պացէ նմա գեր Ած  
պահուան ‘Պատմէն հօր նորո , և լուստառքեսցէ 'ի  
մշրայ պահուան չնախմէայ 'ի յատիպեանս , և լուստ-  
առքան նորո վահճան մէ չկցէ || : Ո՛վ զիարդ  
մեծամեծ աւետիք աւետարանին Անրիամու : Ոչ  
ումեք յարարածոց տուան , և ոչ երբէք տացին  
այսպիսի նոր աւետիք . և ոչոք երբէք ամբարձաւ  
յայսչափի արժանապատութիւնը լինելոյ ածամայր :  
Խակ առ այսպիսի աւետիս զի՞նչ ասէ Կոյսն մեծ :  
‘Ես , որ յառաջագոյն խոչեմարար լոեալ  
կայր , ասէ նրն Շեռնարգոս , (Ճառ. 4. 'ի վը  
‘բանին Առաքեցաւ .) մինչդեռ 'ի միտս իւր  
‘խոկայր , թէ որպիսի ինչ իցէ ողջոյնն , զոր ըն-  
կալաւն , կամելով յաւետ խոնարհաբար չտալ

„պատասխանի, քան անխոչեմութք ասել զայն  
 „զոր չղիտէր, քաշալերեալ արդ՝ ՚ի հրեշտա-  
 „կէն, որ խօսէր առ նա արտաքուստ, համոզե-  
 „լով զնա Ա.Յ ՚ի ներքուստ, ասաց ցհրեշտակն.  
 „\*Օ է ըստ լինեցէ ինչ այլ, ժանովէ պայլ ոչ գիտեմ ||:  
 „Ոչ արդեօք երկբայի նա զգործոյն. (այսպէս  
 „յաւելու ասել սբն Տնեռնարդոս՝ համաձայն  
 „կարծեաց այլոց սբց հարց.) այլ միայն տեղե-  
 „կանայ զեղանակէն, և զկարգէն. ող եթէ  
 „ասէր. գիտէ Տէր, որ է վկայ խղճի մտաց  
 „իմոց, եթէ ես աշխախն նոր արարի զուխտ չգի-  
 „տելոյ երբէք զայր, (այս է զուխտ մշտնջենա-  
 „ւոր կուսուն), զիարդ, և ըստ զի՞նչ օրինաց, և  
 „կարգի հաճոյ իցէ նմա կատարիլ բանին՝ զոր  
 \*, ասեսդ ինձ “:

Ե՞ն: Հաւել հրեշտակն պատասխանի տալ  
 հարցման կուսին, և ասէ. \* Հոգի ուն էլեւոցէ ՚ի  
 ժեպ, և զըստուն բույյըն հովանէ լոյն ՚ի վերաց  
 տո. ժանովէ և ու ծնոտն լոցն է ՚ի ժեն ուն է, և  
 Որդի Այ իւշեցէ ||. այս է եղիցի խկապէս և  
 ճշմարտապէս Որդի Ա.Յ, և այնպէս ամենեքեան  
 ծանկցեն, և կոչեսցեն զնա Որդի Ա.Յ: Յետ  
 այն րիկ առ ՚ի յաւելուլ զհրաշ ՚ի վը հրաշից,  
 և առաւելուլ զայսօրինակ զուրախութի յուրա-  
 խութեն վը, և առ ՚ի տալ կուսին զառիթ կատա-  
 քելոյ զգործ սիրոյ տո աղքական ոմն իւր, և

ոչ եթէ առ ՚ի բառնալ ՚ի պրտէ նք զտարակոյս  
 ինչ, ուղ նկատէ սրն Բնեռնարդոս, յաւել ասել  
 հրեշտակն . \* Եւ ահա Եղիսաբետ ապէտէոն քո՞  
 նո նո յուն ե ՚ի ծերութե՛ն էրուայ, և այս ձեցելուրը  
 ամիս է (յղութե՛ն) նորո, ով ամուշը խչեցէու է .  
 (այս է՝ որոյ ամլութին ամենեցուն է ծանու-  
 ցեալ .) պէ ոչ գիտասցի առ յլոյ ամ բանի ։  
 „ Առաջ ովլ Արիամ, ասէ աստանօր սրն  
 ո Բնեռնարդոս, (Ճառ 4. ՚ի վը բանին Եղիսաբե-  
 տ, յառա .) թէ յղասցիս, և ծնցիս որդի . և թէ  
 „ այս կատարի՝ ոչ գործողութիւն մարդոյ, այլ  
 „ զօրութիւն Հոգւոյն սըյ : Ապասէ սրդ հրեշ-  
 „ տակն պատասխանեց քում, և մէք ևս սպա-  
 „ սեմք բանի միում ողորմութե՛ն, և կարէ կցութէ,  
 „ մէք՝ որ հեծեմքս ընդ վճռով դատապարտութիւն  
 „ մէրոյ : Ինծայի քեզ զին փրկութիւն մերոյ . և  
 „ եթէ դու հաւանիս, մէք աղատիմք : . . . Օքա-  
 „ նից բերանոյ քո կախեալ կայ միսիթարութիւն  
 „ ողորմելեաց, փրկանիք գերելոց, աղատութիւն  
 „ դատապարտելոց առ ՚ի մահ յաւետենից, և  
 „ փրկութիւն համօրէն որդւոց Եղիսամայ ։ Պա-  
 տասխանէ կոյսն . \* Եղիսաբետի կայ աղատին Տի .  
 Եղիսի ենց սսո բանի քում ։ , Ուշ զիր, ասէ սրն  
 „ Եմրը բոսիոս, (՚ի Պուկ. զիրք 2. հմը 16.)  
 „ խոնարհութիւն, և ջերմեռանդութիւն կուսին :  
 „ Ես, որ ընտրի մայր Եօյ, կոչէ զանձն աղատին  
     ,, նը,

„Նր. և ոչինչ բարձրամտի ընդ այս վսեմական և  
անակնեկալ խոստումն , որ խոստացեալ լինի  
„նմա : . . . Այլ քաջ իսկ պարտ էր նմա զխու-  
„նարհութի իւր յայտնի առնել , որ ծնանելոց  
„էր զնա , որ ունէր զանձն իւր առաջի զնել  
„ամենեցուն յօրինակ հեղութե , և ճշմարիտ և  
„անկեղծ խոնարհութեան կուսին , աղաղակէ սրն  
„Բնեռնարդոս , (Ճառ 4. 'ի վր բանին Առա-  
„ժեցաւ .) որոյ վերացեալ ամբարձեալ 'ի գե-  
„բապանծ արժանապատութի ածամայրութե ,  
„ոչ գիտէ զանձն յայլ անուն կոչել , բայց եթէ  
„աղակին Տէ : Չէ ինչ մեծ լինել խոնարհ 'ի  
„նուաստութե . այլ է առաքինութի յոյժ մեծ  
„և դժուարագիւտ՝ խոնարհութին 'ի պատուի “ :

ԵՅ : Առվին խոնարհական բանիւք ետ կցյսն  
զհաւանութի իւր առ 'ի լինել մայր Այլ : Այլ  
Ած զայս հաւանութի պահանջեաց , ուղղի խոր-  
հուրդ փրկութե մարդկան կատարեսցի ճանա-  
պարհաւ իմն՝ հակառակ այնմ , որով եղեւ կոր-  
ծանումն համօրէն ազգի մարդկան : Լնհնաղան-  
դութին Խւայի մօր մերոյ լը մարմնոյ , անհաւա-  
տութի նր առ Ած , և տարաբաղդ հաւատը նր  
բանից խարեբայ հրեշտակին , այս է՝ սատանայի ,  
զուղընթաց եղեն կործանմանս մերում . և Ած  
սբանչելահրաշ իմն հակաղրութք կամեցաւ , զի

Հնաղանդութին Անրիամու , և խոնարհական հաւատք նր բանից հրեշտակին , կամ մանաւանդ նորին իսկ Այ որ խօսեցաւ ը նմա միջնորդութիւ հրեշտակին , զուզընթաց լիցին 'ի գործ փրկութե մերոյ . ոպղի ը որում 'ի վերոյ ասացաք , նորո գեսցի բնութիս մեր նորօք ամենեին , որք զուզ ընթաց եղեն 'ի կորուստ նր , և ը այսմ եղիցի մեզ 'ի Անրիամ նոր Խւա , ոպ ունիմէ 'ի Վա զնոր Ադամ :

Էլ : Այն ինչ ասաց նր Կոյսն զբանս զայս , \* Խաղեցի ինչ ըստ Բանի ժում || , ահա Հողին նր կաղմեաց յամենամաքուր արենէ Կուսին զմար մինն , որ ընդ բանական հոգւոյն միաւորեցաւ յանձն խանին . և այսպէս \* Բանին հորմին Ելլ || , այս է եղեւ մարդ , և Անրիամ եղեւ մայր Այ : „Ո՞ի կամիր , ասէ նրն Յովհան ոսկերերան , „(Ճառ 4. 'ի Անտթ.) և ևս յառաջ ընթա նալ , և խնդրել հետաքննութիւ առաւել քան , զայն , զոր ասէ առետարանին : Ո՞ի հետազօ տեր , եթէ զիարդ դործեաց զայս 'ի Կոյսն Հո գին նր : Վանդի եթէ չէ հնար ը բաւականին , մեկնել զեղանակ բնական կազմութե մարդոյ , զիարդ հնար իցէ հասու լինել և բացատրել „զքանչելի գործողութիւ Հոգւոյն սըյ 'ի Ան րիամ : Արեշտակին Գարբիէլ , և առետարա նիչքն ոչ այլ ինչ ասեն , բայց եթէ զի Յա Վա

„Վ. Եղացաւ ’ի Առուսէն զօրութք Հոդւոյն  
 „սրբ: . . . Շատ լիցի մեզ դոր ինչ յայտնեաց  
 „մեզ Ա՛Ճ, և մի ’ի խնդիր լիցուք այնմ, զոր Ա՛Ճ  
 „լուեաց“: Արդ՝ այս անգին վայրկեան մարդեւ-  
 ղութեն Խանին եղեւ, և եղիցի ընդ ամ դարս  
 պատուեալ յեկեղեցւոյ, իրեւ աղբիւր համօրէն  
 չնորհաց, և իրիւ սկիզբն համօրէն այլոց խոր-  
 հրդոց: Առ ’ի կատարել հանդիսիւծ զբարեացա-  
 պարտ յիշատակ սորա՝ կարդեցաւ ’ի վաղ ժամա-  
 նակաց անտի օրն 25. Անրտի, յորում համարի  
 հանդիպեալ բարերջանիկ դիպուածս այս: Ա. Ու-  
 ոչ շատացեալ եկեղեցւոյ սովին աւուրը միայն,  
 առ ’ի կատարել զյիշատակ անձառելի այսր  
 խորհրդոց, ունի զսովորութիւն յիշեցուցանել մեզ  
 զայն երիցս անգամ յաւուին, այս է՝ յառաւօ-  
 տու, ’ի հասարակ աւուր, և յերեկոյի: Արդ՝  
 պարտք են հաւատացելոց համաձայն դժանիլ  
 զիտաւորութեց, և փափագանաց եկեղեցւոյ,  
 չնորհս մատուցանելով Ա. Եռանդագին ըղձանօք  
 երախտագիտութեց վա անհամեմատ բարերարու-  
 թենս, և զիմելով ’ի բարեխօսութիւն ամենասր  
 կուսին. և պատուելով զեա հրեշտակացին ող-  
 ջունիւն. Ողջոյն ժեղ Անդրէամ, ևն. որ գոլով  
 յօրինեալ ըս մասին ’ի բանից անտի հրեշտակին  
 առ ’ի յերկնուստ, և ըս մասին ’ի բանից անտի  
 զոր նա ինքն ոք կոյսն ասաց առ Եղիսաբեթ,

և ըստ մասին ՚ի բանից անտի՝ զոր յաւել եկեղեցին. Ե գերազանցագոյն աշօթք, զոր մարթ է ասել ՚ի պատիւ ամենասր կուսին Արքիամու:

Եացելուն ամենասր իւսունեն Առաջամու առ սրբուն հին Եղիսաբետն:

Ճ: Ամենասր կոյսն Արքիամ, լուեալ ՚ի հրեշտակէն, ուղ ասացաք, եթէ սրբուհին Եղիսաբեթ աղքական իւր՝ այն վեցերորդ տմիս էր, զեյլացեալ էր, չուեաց ՚ի Ապարեթէ, և \* Ճնոց ՚ի Հոգունակողն ժուլուտուն ՚ի շառապան Յուրաց ||, այս է՝ (ը հասարակագոյն կարծեաց) յԵփրոն, որ էր քաղաք քահանացից ՚ի լեռնակողմանն Յուղայ, ուր բնակէր Օքքարիաս այբն սրբուհոյն Եղիսաբեթի: Յանձն էառ սուրբ Կոյսն զայս ճանապարհորդութի, ասէ նբն Ամբրոսիոս, (՚ի Պուկ. գիրք 2. հմք 19. և որ զկնի.) „ոչ ՚իրը թէ ոչ ընծայեաց գլխովին հաւատու պատ, զամաց հրեշտակին, որ եցոյց նմա զՀրաշական յղութին Եղիսաբեթի. այլ առ ինդութեն՝ ՚ի տեսանել զկատարումն փափագանաց իւրոց, և աղքականին իւրոյ. և առ լինելոյ փոյթ ՚ի կատարել զպաշտօն յարգութեն իւրոյ առ մեր, ճաւոր աղքականն իւր. և առաւել ես ՚ի կատարել զաղքեցութիւն Հոգւոյն ակց, որ շարժէք ողնաւ:

„ ղնա առ սյս ներդործութի ածային սիրոյ .  
 „ քանզի շնորհը Հոգւցին սի՛յ ոչ գիտէ զհեղ .  
 „ դութի և դյուլութի ՚ի գործս : Աւսալուկը  
 „ արդ , (ասէ նր վարդապետն ,) ովլ նր կանայք ,  
 „ եթէ զիարդ մտաղիւր փութով պարտէ և ձեզ  
 „ նպաստել ազգականաց ձերոց ՚ի յղութենց :  
 „ Անրիամ , որ յառաջն կայր առանձինն յան .  
 „ քոյթ տանն իւրում , ոչ կասեցաւ՝ ոչ ՚ի կու .  
 „ սական համեստութէ իւրմէ , ոչ ՚ի դժնդա .  
 „ կութէ Երանցն , և ոչ յերկարութէ ճանա .  
 „ պարհին , յորժամ դէպ եղե ՚ի գործ դնել  
 „ զներգործութի վայելչութեն , և սիրոյ : Այսնէ  
 „ նա ՚ի հրապարակ , և թողու զտունն իւր յա .  
 „ տուկ , ուշ եղեալ յաւէտ ներգործութենց սիրոյ  
 „ իւրոյ , քան կանացի հանդամանաց իւրոց “ :  
 Եւ եթէ երկար և վշտագին ճանապարհորդութին  
 ամենօրհնեալ Կուսին տայ համօրէն կանանց  
 զայսակիսի դեղեցիկ օրինակ սիրոյ , հանդամանքն՝  
 որով արար նա զայն , առաջի դնէ՝ ըս նմին սլեյն  
 Վմբուսիսի՝ զկարևոր հրահանգ առ կուսանս :  
 \* Գնաց կութառին || , և ուղղակի ՚ի դէմ եղեալ  
 տեղին իւր , ասէ աւետարանն : „ Վպա ուսարուկը  
 „ կուսանք , (ասէ վերցիշեալ նր վարդապետն ,)  
 „ մի շըջիլ ընդ տունս օտարաց , մի յամել ՚ի  
 „ հրապարակս , և ՚ի հասարակաց պողոտայս , և  
 „ մի զկայ առնուլ ՚ի հրապարակի ՚ի շաղակրա .  
 „ առել :

,, տել : Անրիամ , որ մնայր միշտ 'ի տան իւ-  
,, ըում , փութայ 'ի հրապարակի , քանզի ծանր  
,, է նմա երևիլ արտաքոյ “ :

Ճ՛ռ : Կրրե եհաս ամենասբ կոյսն յլավոն ,  
\* Եմուս ՚ի գոռան Օտտարնեայ , և ես ողջոյն Եղե-  
սաբելին || . ,, տուեալ կուսանաց ըստ այսմ օրի-  
,, նակի , (ասէ նրն Ամբոսիոս ,) զազնիւ օրինակ  
,, խոնարհութե , ոող յառաջն ետ զօրինակ պար-  
,, կեշտութե , և համեստութե : Գրայ աղգական  
,, առ աղգական իւր , և օրիորդ առ կին բազմա-  
,, մեայ . և ոչ միայն դայ , այլև յառաջէ յողջու-  
,, նատրութի . քանզի վայել է , զի որչափ առա-  
,, ւել ողջախոչ է կոյս ոք , այնչափ առաւել և  
,, խոնարհ լիցի , և զիտասցէ մատուցանել զպարտ-  
,, ուպատշաճ մեծարանս առ երիցագոյնս “ . զոր-  
օրինակ ահա արար ամենասբ կոյսն Անրիամ ը-  
սրբուհւոյն Եղիսաբեթի , թէպէտ և ինքն ըստ  
որում մայր Այ յոյժ վերագոյն էր քան զնա :  
\* Եւ Եղե իբրև լուսա , ասէ աւետարանին ,  
պղջոյնն Անրիամու Եղեսաբելի , խողուց մանուկն  
յորովայնի նորս , և լուս Եղեսաբել Հոգուն  
\* Քա Վա թագուցեալ 'ի ծոց ամենասբ  
մօրն իւրոյ՝ տայ ծանօթս սլէյն Քովշաննու , որ ը-  
նմին օրինակի փակեալ էր յորովայնի սլէյն Եղի-  
սաբեթի , կանխաւ շնորհէ նմա՝ արտաքոյ կարդե-  
հրաշիւք՝ զգործածութի բանին , և լնու զնա ան-

անդէն Հոգւով սրվլ, որ զեղու և 'ի մայրն, և  
յայտնէ նմա զխորհուրդ մարդեղութեն Շանին  
արդէն կատարեալ յարդանդի ամենասբ կուսին  
Պարիամու : „Եղիսաբեթ, (ասէ աստանօր ոքն  
„Ամբոսիս,) եղե առաջին 'ի լսել զձայնն, այլ  
„Ծովաննէս եղե առաջինն 'ի զբալ զշնորհս.  
„Նա լուաւ ըս կարդի բնութեն, սա ցնծացաւ վս  
„բամի խորհրդոյն . նա ծանեաւ զգալուստ Պա-  
րիամու, և սա զշասանիլ Տն իւրոյ : ... Ու-  
„ծապէս շահեցան երկոքին ևս մարդս վս որդւոց  
„իւրեանց, զոր իւրաքանչիւր 'ի նոցանէ կրեր  
„յարդանդի իւրում . և կրինակի հրաշիւր մար-  
„դապէանան երկոքին ևս՝ շարժեալք 'ի հոգւոյն  
„որդեկաց իւրեանց չեւ ևս ծնելոց : Ծնծացաւ  
„Ծովաննէս, և Եղիսաբեթ լցաւ Հոգւով  
„սրվլ : Ոչ արդեօք մայրն յառաջ քան զորդին  
„լցաւ . այլ լցեալ որդւոյն Հոգւով սրվլ, ելից  
„և զմայրն “ : Պստ այսմ օրինակի կարապետն  
Վահի սրբեցաւ յարդանդի մօրն . և եղե առա-  
ջինն, զորմէ խօսի աւետարանն, յընդունել  
զշնորհս Շանին մարմնացելոյ, զոր հաճեցաւ հա-  
ղորդել նմա միշնորդութեր ամենասբ մօրն իւրոյ  
Պարիամու :

ՃԵ : Արդ՝ լցեալ սրյն Եղիսաբեթի Հոգ-  
ւով սրվլ, ասէ ոքն Պուկաս աւետարանիչ, \* 'Ի  
յայն բարյի ողառակիւր, և առն . օրհնեալ ևս դու-

՚ի կանոյն (ովլ Արքամ), և օրհնեալ է պատու  
 որովայնի ռու: Եւ սաստի՛ է ինչ այս (շնորհ), զե  
 ելեսցէ նայը Տն իմոյ առ իս: Օք ահաւասի իբրեւ  
 եհաս յայն ողջունի ու յախանջա իմ, խողաց ցնծու-  
 թվ մահունիս յորովայնի իմում: Եւ երանի՛, ոչ  
 հաւափայցէ, ելեւ եղջի խափարուն տասցելոց նմո  
 'ի Տնէ. (Հ Լատ. Երանի՛ որ հաւափայերս, ելեւ  
 եղջի խափարուն տասցելոց ժեղ 'ի Տետրանի. ) ||:  
 „ԱՎ քանի՛ մեծ Են գովեստքն, ասէ սրն Շեռու-  
 նարդոս, (բան 'ի կիւր + որ յութօ. վերափ. )  
 „զորս լսէ Արքամ ընծայել նմա սրյն Եղիսա-  
 բեթի: Էսյլ նա գոլով խոնարհ, միանգաւ-  
 մայն և ջերմեռանդն, և ոչ զմին 'ի նոցանեն  
 „անձին իւրում ընդունի, այլ զբովանդակն առ  
 „նա վերընծայէ, որոյ գիտէ պարգևս լինել զգովե-  
 լիսն յանձին իւրում: Դու՛ ասէ, գովես զմայրն  
 „Ա. այլ անձն իմ գովէ զԾը: Առ ձայն իմ,  
 „ասես, որդին՝ զոր յարգանդի քում կրես, խա-  
 „զաց ցնծալով. այլ հոգի իմ ցնծայ ՅԱՌ փրկիչ  
 „իմ: Դու երանի՛ տաս ինձ, զի հաւատացի .  
 „այլ պատճառ հաւատոց և երջանկութես իմշյ  
 „եղեւ շնորհաձիր հայեցուած բարեգթութեն Ա. յ  
 „յիս 'ի խոնարհ աղախին Տն: Եւ ահա այս-  
 պէս պինի տայ սր Կոյմն սրյն Եղիսաբեթի :  
 \* ԱԵծացուացէ անյն իմ զԾէր, և ցնծացաւ հոգի  
 է Ա. Քրին իմ: Օք հայեցուած ՚ի խոնարհութեն

ապահով էրոյ, ով ահա յայտնի էր երանեցին ինչ  
ոմ աղջուք ։ Օք արար ինչ մշտամշտա հաջուն, և ոչ է  
անուն նորու ։ Եթ սպառմաւլի նորու աղջուց յաղջուց  
երիեղածոց էրոյ ։ Արար պօրունի բազկաւ էրով ։  
յընճետոց պամբարդաւունս մասք սրբից էրունաց ։  
Վասիետոց պհաջրու յալուսոց, և բարյըտոցոյ պահ-  
նորհու ։ Օքողունաւ քոյց բարունի ։ Ուշագրանետոց իս-  
քայելք ծառայի էրուն յիշել պաղորմունի ։ Ուղ  
խօսեցաւ առ հարս մեռ, Աբրահամու, և պատմի  
նորու յաւիրեան ։

ՃՇ ։ Այս է սքանչելի երգն ածային, զոր  
եկեղեցին (Պատինացւոց) երգէ յամ աւուր յե-  
րեկոյեան ժամուն, (և եկեղեցի Հայաստանեայց  
երկիցս յաւուրն, յառաւօտեան և 'ի հանգս-  
տեան ժամն), առ 'ի շնորհս մատուցանել Տն  
վն անձառելի բարերարութիւն մարդեղութիւն իւրոյ,  
և առ 'ի հրատարակել միանդամայն զմեծութիւն  
և զառաքինութիւն Արիամու, որք յերգս անդ  
սքանչելապէս լուսափայլեն ։ Տեսանի անդանօր  
հողի նորա յափշտակեալ՝ ոնդ թէ օտարացեալ  
յիւրմէ, և բոլորովին ընկղմեալ 'ի տեսութիւն ան-  
քաւ մեծութիւն Այ, և անհամեմատ բարերա-  
րութիւն նր՝ որ առ իւրն և առ ամ ազգ մարդկան.  
և վն այսորիկ վերընծայէ նմա զմեծարանս դերա-  
պանծ գովեստից, ասելով . \* ԱԿՆԵՄԱՐԱԿԱՌ անյն

իմ զՏեր, և յնձացու հոգի իմ յԵ՛ էրին իմ . ոք  
է անուն նորս : Յուցանէ նա անդանօր զխորին  
խոնարհութի իւր, ծանուցեալ զանձն իւր լինել  
աղախին, և աղախին խոնարհ, և ըստ ինքեան  
անարդ յաչս մեծին ԱՇ . \* Հայեցաւ ասէ 'է  
խոնարհութի տղանոյ իւրոյ : ԱՇ այս խոնար-  
հութի ոչինչ արդելու զնա ճանաչել և խոստո-  
վան լինել բարձրաձայն զառանձին շնորհսն,  
զորս ընկալաւ . սակայն զամ ոչ անձին իւրում  
գրելով, այլ անսահման կարողութեն, և ձրի  
ողորմութեն Տ՛ն իւրոյ, ողորմութեն՝ որ ձգի յազ-  
գաց աղգս : \* Յայսմհետէ ասէ Երանեացն ինչ ամ  
աղգու . չէ արար ինչ մեծամեծու : ԱՇ ո արար  
նմա զայսոսիկ : \* Հաջորդն, կամ ամենակարօղն .  
նա արար, որոյ \* ոք է անունն : Քանզի ԱՇ է  
նոյն ինքն սրբութի էութեք իւրով . իբր զի նա  
է աղբիւր, և պատճառ ամ սրբութեն, որ է յա-  
րարածս իւր . նա արար, որոյ ձգի \* ողորմութեն  
աղգուց յապատ Երիւղածաց իւրոյ :

Ճ՛ : Ա ս յափշտակեալ հոգւով սըյ Առւ-  
սին 'ի տեսանել զհանդերձեալսն, և զգործօ  
մարդեղութեն Բանին, նախադուշակէ, թէ Որ-  
դին՝ զոր ծնանելոց է, զօրութեք ամենակարօղ  
բազկին իւրոյ \* յըունէ պամբարդաւանս մաօս սրբից  
իւրեանց, առիւ զհզորս յալեռուց, և բարյացու-  
ցանէ զեռնարհն : Եւ այս կատարեցաւ, յորժամ

քարողութեա աւետարանին յամօթ արար զթա-  
գաւորս , և զմեծամեծ կայսերութիս . ուղ ասէ  
սրն Պօղոս . ( ա . Կորնթ . ա . 27 .) \* Օդիարս  
աշխարհն ընդունեաց Ա.Ժ , զե ամօթ արարոցէ զհզօրս ...  
և պաշտառ , զե պէսն ին կատանեացէ . ողջէ մէ պար-  
ծեացէ ու մարմին առաջ Ա.Ժ . մինչև ոչինչ  
մարդկային երեսեալ յայս գործ մեծ և սքանչե-  
լահրաշ , ողջըն իսկ բովանդակն ընծայեացի զօ-  
րութեա բաղկի նր : Եւ յորժամ ասաց Ք.Ա .  
( Վատթ . ժա . 25 .) \* Պատհանամ զշէն ձայն  
ուն երինի և երիբ , զե ծածկեցեր պայս յիմարդնոց ,  
և 'է գիրնոց , և յոյտնեցեր արայոց . ոչ ապա-  
քէն յամօթ արար զշպարտս , և ոչ արդեօք  
բարձրացոց զնոսա , որք խոտան էին յաչս ան-  
ձանց , և այլոց : Կախագուշակէ նոյնօրինակ սք  
Այսն , եթէ \*նոս պատրութեալ ընու բարութե , և  
պշտապուտնոս արյանին առնայնն : Օքր և տեսա-  
նեմք օրլստօրէ կատարեալ . քանզի տայ Ա.Ժ  
զնորհս իւր խոնարհաց , և հակառակ կայ ամ-  
բարտաւանից . ընու բարութե շնորհաց իւրոց  
զնս , որք ճանաչն զանձինս աղքատս և ողորմե-  
լիս , և զուրկս յամ առաքինութեց . և թողու 'ի  
ճշմարիտ աղքատութե իւրեանց զնս , որք հա-  
մարեն զանձինս մեծատունս , և անկարօտս նպաս-  
տութեան Ա.Ժ . յազեցուցանէ զնս , որք քաղցեալ և  
ֆարաւիք իցեն արդարութե . և արձակէ նօթիս

զնս, որք կալիծեն գոլ յագեալս: 'Ի վերջոյ խօսի  
նք Կոյսն յերգս իւր զփրկութե՛ ժողովոդեան իւ-  
րոյ, և ոչխարացն կորուսելոց տանն Խարայելի, առ  
որս եկեալ ասաց զմնձնէ Ածողին իւր: \* Գոշպ-  
տոնեաց, ասէ, Խորայէ լը ծառացէ իւրում: ոչ ար-  
դեօք վս արդեանցն, որովք փքայինն անձնա-  
պանծ հրեայքն, զի նա զգետնեաց մանաւանդ  
զփարիսականն փառասիրութի, և զաբարտաւան  
խորհուրդս վարդապետացն օրինաց. այլ յաւէտ  
առ ողորմութենն իւրոյ, \* յէշետ պողբյունի: ||  
իւր. և առ ՚ի կատարել զխոստմունս, \* ող խոս-  
դուցուա առ հարս մէլ, Աբրահամու, և պատին  
նորո: ||, առ այն որդիսն Աբրահամու ըս հաւա-  
տոց, որք մնալոց են \* յատիրեան: :

ՃԵ: Ապա մէք եմք, ուղ ուսուցանէ Առա-  
քեան, (Գալատ. ۴. 7.) որդիք Աբրահա-  
մու, ճշմարիտ որդիք խոստմանն. որդիք ըս հա-  
ւատոց, և ոչըս մարմնոյ. որք եղաք որդիք հաւա-  
տոյ, ոչ արդեօք վս գործոց՝ զօր արարաք, այլ  
ըս մեծի ողորմութենն Ա.Յ: Անք եմք նոքա, զո-  
րոց խօսի ամենասբ կոյսն Անդիամ յանուն զա-  
ւակին Աբրահամու, որ ոչ երեկք ունիցի վախ-  
ճան: Գործակից եղե նա փրկութե՛ մերոյ, յոր-  
ճամ ասաց առ հրեշտակն. \* Եղիցի ին ըստ  
բանին քում: || Արեաց նա զմեզ զամենեսնան ՚ի ծոց  
իւր ՚ի միասին ընդ Ծնի Քնի, յորում էաք

ամենեքեան , իրը անդամք այնր խորհրդական մարմնոյ , որոյ ինքն է զլուխ : Ապա միաձայն լիցուք ընդ սբյն Եղիսաբեթի , և ամենեքեան կոչեսցուք զնա սրտիւ և լեզուաւ օքհնեալ 'է իտնույս . և եղիցուք 'ի թուն նց , որք առյապայն ընախագուշակելոյ նորուն՝ ասելոց էին նմա երանի : Հայեսցուք 'ի նա իրբւ 'ի մայր մեր , և աղաչեսցուք զնա , զի իրը նոր Եւա ցուցցէ մեզ փոխանակ արդելեալ պտղոյն՝ որով ամենեքեան 'ի մահ մատնեցաք , զօքհնեալ որուան որովայնէ է-րոյ : ԱՅԼ 'ի վեր քան զամ կերպարանակից արասցուք զնորհուքդս մեր խորհրդոցն Անրիամու , 'ի փառաբանել , յօրհնել , և 'ի դոհանալ զջնէ , զի աղատեաց զմեզ 'ի ձեռն մարդեղութեն Ածորդւոյն իւրոյ 'ի գերութէ մեղաց և սատանայի , և 'ի յաւիտենական մահուանէ : «Օանիցուք զպարգեսն , զոր արար մեզ Տէր , ոչ արդեօք 'ի հպարտանալ իրբւ 'ի մեր ինչ , այլ առխոնարհական շնորհս մատուցանելոյ նմա , յորմէ յառաջ գայ ամ : Հուսկ ուրեմն , ողի ասէ նըն Ամբրոսիոս , ('ի Պուկ . գիրք 2 . հմը 26 .) „Եղից ցի յամենեսին անձն Անրիամու երդել Տն ոզօրհնութիս . եղիցի յամենեսին հողի նր՝ ցընծալ ուրախութը յԵ՞ծ փրկիչ մեր : Անձն Անրիամու , (ասէ նը վարդապետն , ) փառաւորէ զջէր , և հողի նր ցնծայ յԵ՞ծ , քանզի անձամբ

„և հոգւով նուիրեալ ՏԻ, ճշմարիտ և անկեղծ  
 „փափառանօք սիրէ և մեծարէ զԼՇԾ միայն,  
 „յորմէ և որով է ամ ինչ “: Եղիցուք և մեք  
 այսպէս . խոնարհեցուք ’ի խորս թշուառութեց  
 մերոց, և ոչնչութեն մերոյ . և ցնծասցուք ’ի տե-  
 սանելն զփառս աշխարհի արհամարհեալ, զար-  
 քայութին ԱՇ ևեթ բարձրացեալ, և զոր կամն  
 նոր կատարեալ :

ՃՇ: Եկաց ամենանը Արյոն ’ի տան սէջն  
 Եղիսաբեթի իրրե ամիսս երիս, ասէ նըն Կու-  
 կաս աւետարանիչ . (ա . 56:) Եր Եկաց առ նմա-  
 զայսչափ երկար ժամանակ . „Քանզի՞ ասէ նըն  
 „Ամրրոսիոս (’ի վերոյիշ . տեղ .) պատճառ  
 „այցելութենս այսորիկ ոչ եղեւ միայն ընտանու-  
 „թիւնն, և աղջականութին, որ էր լը մէջ եր-  
 „կուց նը կանանցս, այլւ օդուտն և զարդացումն  
 „’ի սրբութեն մեծի կարապետին Փափի: Օի Եթէ  
 „յառաջին մուտս անդ ընկալաւ նա զայնչափ  
 „ընորհս, մինչև խաղաց ցնծալով յարգանդի  
 „մօրն, և մայր մանկանս լցաւ Հոգւով սբիվ .  
 „Քանի՞ առաւել յաւելան այս ընորհք, և քա-  
 „նի՞ առաւել աճեցան պարգեքն երկնաւորք,  
 „Եթէ ’ի մայրն, և Եթէ յորդին, մնալովն Աւ-  
 „րիամու զայնչափ երկար ժամանակ առ նոսա .  
 „Արդ՝ ընկալաւ յայս դիպուած մեծ մարգարէն  
 և ՏԻ, մինչդեռ անդստին յարգանդի մօրն էր,

„ Ըստատապարդեւ շնորհս, որով եղեւ ընդունակ  
 „ պաշտամանն մէծի, առ որ կարգեալ էր : Եւ  
 „ զամենամաքուր և զամենեին ամրիծ վարս, զոր  
 „ նա յետ այնորիկ յանձին եքեր, (ասէ այլուր  
 „ նոյն ինքն սըն, 'ի վը սահմա . կուս . դլ . 7 .  
 „ հմբ 50.) Ընծայել պարտ է օծութեն այնմիկ,  
 „ և շնորհացն, որ զեղաւ առատապէս 'ի հոգի  
 „ նր ներկայութիւն Վարիամու, որ կրէր յամեւ  
 „ նամաքուր արդանդի իւրում զիւանն ԱՌ մար-  
 „ դացեալ“ : Եւ աստի ուսանիմք, եթէ սէրն  
 մեր՝ որ առ ընկերն՝ ոչ պարտի լինել անցողա-  
 կան ինչ, և ուզ բանիցս կարգ է ասել փախս-  
 տական . այլ հաստատուն և հանապազորդեալ,  
 վերածելով 'ի կատարելութի իւր զգործս շնոր-  
 հաց, զոր միջնորդութիւն մերով հաճեցաւ ողոր-  
 մութիւն ԱՅ սկսանիլ . ծանուցեալ միշտ, եթէ  
 ԱՌ է որ սկսանի, և որ կատարէ զգործն :

**ՃՌ :** Ոչ ասէ մեզ աւետարանն, եթէ ամեւ-  
 նանք Կոյսն եկաց առ սըյն Եղիսաբեթի մինչև  
 'ի ծնանել նր . վը ոչ հաճեցեալ Տն տալ մեզ  
 զգիտութի այսր մասնաւոր պարագայի, շատա-  
 ցուք չգիտել զայն : Ծանտ Լիցի մեզ գիտել  
 միայն, զի եթէ ամենանք Կոյսն չունեաց յառաջ-  
 քան զծնանել աղգականին իւրոյ, ստիակեաց զնա  
 յայն սէրն առանձութեն, և փոյթն խորշելոյ 'ի  
 բազմութէ մարդկան, որ յայսպիսի դիալուսած

գալոց էր առ ՚ի այց առնել սբյն Եղիսաբեթի,  
և առ ուրախակից լինելոյ ընդ նմա վս այսպիսի  
երջանիկ և պքանչելահրաշ դիպուածոյ : Իսկ  
եթէ գտաւ նա անդ առաջիկայ, եկաց արդարեա  
խոնարհ, թագուն, և ՚ի լոռութե, առանց ինչ  
տարբերելոյ զանձն յայլոց հաւասարակցաց իւ-  
րոց, եղեալ զայսօրինակ ըստ ամ հանդամանաց  
միշտ ուսուցիչ պարկեցտութե, և խոնարհութե:  
Այսր այցելութե ամենասր կուսին առ սրբուհին  
Եղիսաբեթ, որ է ճշմարիտ օրինակ այցելունցն  
քրիստոնեից, որոց պարտ է ունել սկիզբն զսէր  
ածային, և պտուղ զյաւելումն առաքինութեց,  
սկիզբն եղե յերեքտասաներորդ դարէ անտի կա-  
տարել զտօն մասնաւոր, որ և յետ այնորիկ ՚ի  
Առնիփակիոսէ իններորդէ ՚ի յաջորդ դարուն  
հրատարակեցաւ ընդ ամ արևմուտս, և սահմա-  
նեալ կարգեցաւ ՚ի Հոռլիաի 2. ըստ որում և  
ցայսօր ժամանակի պահի:

Ա. Խնանը իոյսն Անպէտ դատանոց ՚ի պուն է-ը ՚ի  
Կապահութեւ: Եւ սորուն ծննդեան :

**ՏԵ**: **Յ**ետ կալոյ իրրե ամիսս երիս ՚ի տան սբյն  
Եղիսաբեթի, դարձաւ ամենասր Այսն ՚ի Կա-  
զարէթ, ուր իրազգած եղեալ սբյն Յովսեփայ,  
առէ սուրբ աւետարանիչն (Անտթ. ա. 19.)

զշղութէն նր, և ոչ կամեցեալ առակել զնա,  
 խորհէր լուելեայն մեկնիլ 'ի նմանէ : „Քանդի,  
 „ող ասէ նըն Հերոնիմոս, (՚ի Անտիմ. ա. 19.)  
 „գիտելով սըյն Հովսեփայ զողջախոռութի հար-  
 „սին իւրոյ, և զարմացեալ ընդ այն՝ որ հանդի-  
 „պեալ էր նմա, համարեցաւ, եթէ պարտ էր  
 „նմա թագուցանել լուութք զիսրհուրդն, զոր  
 „յայնժամ ոչ գիտէր“ : Արդարէ քաջ խելա-  
 մուտ եղեւ ամենասբ Կոյսն անձկութեն, յորում  
 էր փեսայն իւր. այլ ոչ ասաց նմա, ըստ որում  
 երեկի յաւետարանին, և ոչ բան մի, որով կա-  
 րօղ էր ազատել զնա 'ի վարանմանց անտի իւ-  
 րոց . քանդի պարտաւորէր յայնժամ յայտնել  
 նմա զանձառելի խորհուրդն, զոր գործեաց 'ի  
 նմա Հողին նը : Արդ՝ ընդ այս ոչ հաւանէր  
 խոնարհութի նր խորագոյն, որ խնդրէր թագուն  
 պահել զայն ամ, յորմէ ծագէին նմա փառք . և  
 գիտէր, եթէ պարտ էր պահպանել ընդ քօղով  
 խորին գաղտնութեան զառանձին պարզեսն և  
 զշնորհսն, զորս ընկալաւ յառատարաշխ և 'ի  
 բարերար ձեռանէ Տն, ըստ այնմ բանի մար-  
 դարէին . (Եսայ. իդ. 16.) \* Խորհուրդն էմ ինչ.  
 Խորհուրդն էմ ինչ . պարտէմ էս գողպանէ պահել  
 զայն, զըր Տէր գողպանէ յայդնեաց ինչ . առ 'ի  
 յամօթ առնել այնու զնափառութի նց, որք  
 ոչ միայն պանծանօք հանդիսացուցանեն զղինչ

և իցէ պարզե՞ւ զոր ընկալան Ա.Յ., այլեւ առաւ-  
ել ևս ամբարհաւածին ցուցանել, եթէ ունին  
և զայն պարզես, զորս ոչ ունին։ Դիտէր և ևս  
ամենասր կոյսն Արքամ, թէ զիարդ սկսաւ-  
Ա.Յ.՝ ի խորին լուութե խւրում զգործ մարդե-  
ղութե, առանց վկայութե կամ հաղորդութե  
ստեղծուածոյ ումեք. ետես ևս, եթէ զիարդ նա-  
ինքն Ա.Յ. յայտնեաց սբյն Խղլաբեթի զայս  
գաղտնի խորհուրդ, յորժամ գնաց սյց առնել  
նմա. և յայսմ ամէ մակաբերեաց, եթէ Ա.Յ.  
միայն պատկանէր ծանուցանել ում, և զիարդ,  
և երբ հաճոյ թուէէր նմա։ Ապա առ ՚ի ոչ կան-  
խել քան զկարդաղբութիս Ա.Յ., յանձն արար  
զինքն բոլորովին Ա.Յ., այնպիսի յանձնարարութիւ-  
և հպատակութիւ ածային կամացն, ընդ որ յի-  
րաւի կարօղ եմք հիանալ, գովել, և մեծարել,  
այլ ոչ երբէք ըս բաւականին հասու լինել։ Խ-  
արդարե ոչ յապաշեաց Տէր յայտնել և սբյն  
Հովսենիայ զխորհուրդն մեծ, և ծանուցանել  
նմա, եթէ որպիսի անզին գանձու էր նա պա-  
հապան։ Այս առաքեաց առ նա զհրեշտակ  
մի, յորժամ ննջէր, որ ասէ ցնա. \* Յովենէ որ-  
դի Պատրիք ՚ի երինչը առանուլ առ ժեղ զլլո-  
րիում ին առ, առանչ որ ՚ի նմայն ծննդուլ է, ՚ի  
Հայույն սբյ է։ (Անտթ. ա. 20.) Հաւա-  
տաց լիով նրն Յովսեփ, և վաղվաղակի հնա-  
զան-

շանդեցաւ ձայնի հրեշտակին, կամ մանաւանդ Ա. և ամ ոք դիւրաւ կարօղ է զմտաւ ածել, եթէ որպիսի ինչ եղե միսիթարութիւնը, և սիյ Կուսին, և Շափէս շնորհս մատուցին Շարձրեցին, որ զայսօրինակ սակաւ առ սակաւ հեղեալ ծաւալէր զծանօթութիւնորհուցու, որ յետոյ պարտ էր աւետարանիլ լնդ ամ երկիր:

Ճ. : Հանապազորդեաց ամենասբ Աշխն իրրե զսմիսս վեց կալ 'ի Կաղարէթ յաղքատին տան իւրում 'ի միասին ընդ սիյն Հովսեփայ. և Վ. միայն գիտէ՝ եթէ որպիսի սնընդհատ յաւելմամբ շնորհաց, ունելով յարդանդի իւրում զսկղընապատճառն ամ շնորհաց, և ամ առաքինութեց: Արդ՝ ըստ չափուն, որով մերձենայր ժամանակ ծնանելը նի, առաւել ևս բորբոքէր 'ի նմա վասիաք ընծայելը 'ի լոյս զփրկիչն աւշարհի: Այս այս ծնունդ եղե նպատակ հեծուեց, և հառաջանաց համօրէն նահապետաց և մարդարէից: Խոկայինն նոքա հանապազ զփրկիչն, որ գալոց էր յաշխարհ, նմա ցանկային, և 'ի նա դնէին զամ զլոյս իւրեանց: Վաստորիկ եւսնդազին ուխտիք իւրեանց մաղթէին յԱ. զկատարումն այսր գործոյ ողորմութեն իւրոյ: Կմին իրի սբն Վովսէս ասէր. (Ել. դ. 13.) \* Առաջն պէտք Տէր, առ քեզ 'ի յեռն զայլ ու զուառնը պէր առաջինեն: (լու Լատ, Առաջնէու,

աղաւնի պշեռ Տէր, աստածու մասնգայ զնա՝ պշը  
 աստածու լոցն էս) || . այս է՛ զԱԵսիայն : Աւ Եսայի  
 ասեր . (Ը Լատ . ԺՂ. 1.) \* Աստածու Տէր պէրեւ  
 պահն , «ը Աստածու լոցն է՛ ՚է քէրոյ երեւ || :  
 Դարձեալ աղաղակէ նոյն ինքն մարդարէն .  
 (ՀԽ. 8.) \* Ուրանի ընցին երինս 'ի վէրուսպ , և  
 ամուս ցողլոցն պարտարութի . բղենցի երեւ պ-  
 պրմութի , և պարտարութի առհասարսի բղենցի .  
 (Բատ . Յօղենցի երինս պատ իւր , և ամուս  
 իջուցին պարտարն իբրև պանչը . բացցի երեւ ,  
 և բղենցի զնին , և ընդ ամուս բղենցի արդա-  
 րութի) || : Այսպիսի եռանդադին փափադը ծա-  
 գէին յարդարն և 'ի սրսն յայնոսիկ 'ի քաջ  
 հասու լինելոյ նց մեծամեծ թշուառութից , լնդ  
 որովք հեծէր համօրէն աղք մարդկան , և յորոց  
 չէր նմա հնար զերծանիլ , բայց եթէ զալս-  
 տեամբ ԱԵսիային յաշխարհ . ծագէին 'ի զիտելոյ  
 անտի նց հաւատով զմեծամեծ ողորմութիսն ,  
 զոր Ա. 'ի ժամանակի աստ յայսմիկ ունէր զե-  
 զուլ առատապէս 'ի վէ երկրի . հուսկ յետոյ  
 ծագէին 'ի տեսանելոյ անտի նց հոգւով զիառսն  
 անըաւ , որը ունէին վերածիլ առ Ա. 'ի յայսմ  
 անպատում զործոյ անսահման իմաստութիւն և  
 ողորմութիւն իւրոյ : Արդ՝ ով ոք առաւել քան  
 զԱԵսն խելամուտ եղեւ ճշմարտութեցս այսոցիկ .  
 քան զԱԵսն ասեմ , որում ևեթ հաղորդեաց  
Ա. Ճ

Ած զառաւել լոյս երկնաւոր, զառաւել հաւատս, և զառաւել սէր, եթէ առ Ած, և եթէ առ ընկերս, քան համօքէն նահապետաց, և մարդարէից, և արդարոց միանգամայն հնոյ կտակարանին : Ապա ո՞ առաւել եռանդագինս քան զլոյսն ցանկայր տեսանել հասեալ զժամանակ փառացն Այ, ուրախութեն հրեշտակաց, խաղաղութեան և երջանկութեան ողորմելի որդւոցն Եղամայ :

Է : Առ 'ի պատուել զեռանդագին բաղձանս սըյ Առուին 'ի մերձենալ ժամանակի ծնանելոյ նը, սկիզբն եղև յեկեղեցիս Ապանիոյ կատարել 'ի 38. Գեկտեմբերի զտօն մասնաւոր սպասելոյ ամենօր հնեալ Առուին առ 'ի ծնունդ, զոր և հաստատեաց վե եկեղեցեացն այնոցիկ ծայրագոյն քահանայապետն Կրիդոր Երեքտասաներորդ յամին 1578: Անտի էսնց այս տօն և յայլ եկեղեցիս . և բարեյիշատակ պապն Իննեղիկոսս Երեքտասաներորդ տարածեաց զայն և յեկեղեցին Հռովմայ, և յամ նահանգս տէրութեն եկեղեցւոյ: Եւ արդարե մարթ է ասել, եթէ նպատակ տօնիս է՝ ոչ միայն պատուել զամենանը փափաք մեծի Ածամօրն, այլև առ 'ի ընդունել բարեխօսութեն նը զընորհս, զի Հռովմաստեղ զարեսցէ զնոյն և 'ի սիրտս հաւատացելոց, իբրեւ Հիւ 'ի լաւագոյն պատրաստութենց 'ի կատարել

արդեամբք զտօն նր ծննդեանն : «Քանզի թէպէտ  
չ» ՚ ՚ արդէն իսկ ծնաւ յաշխարհի , ՚ի վերայ  
այսր ամի կատարեալ արդարութին , և սրբութին  
հոգւոց , որ է գործ ծննդեան նր , չև է լրացեալ  
և կատարեալ ՚ի նմա՝ որ գեռ կեանս վարէ ՚ի  
վը երկրի : Ա զ եկեղեցին լատինացւոց , որ կար-  
դէ զբովանդակ ժամանակ նր գալստեանն առ  
պատրաստութի տօնի նր ծննդեան , սկսանի յաւ-  
ռացին երեկոյեան ժամերգութե՛ ՚ի ժամերգութէ-  
սպասելոյ նը կուսանի առ ՚ի ծննդեան երգել  
զփոխս ինչ , որք են բորբոքեալ հառաջանք առ  
«Ք» ՚ ՚ , առ ՚ի երազել զգայուստ իւր ՚ի հոգիա-  
մեր . առաջի եղեալ նմա զխաւար մթուե մերոյ ,  
զտղիտութի մեր , զգերութի մեր . կարդալով  
զնա իւր լոյս մեր , իմաստութի մեր , աղատիչ  
մեր , հովիչ մեր , թագաւոր մեր , և փրկիչ մեր :

Լ: Եւ զի փոխքս այսոքիկ կարեն լինել ՚ի  
պէտս գերապանծ աղօթից առ ՚ի պատրաստութի  
տօնի ծննդեան Տ՝ . վը որոյ թուի մեզ , եթէ  
ոչինչ անհաճոյ լիցի վերծանողի զրոցս գտանել  
զնոսին աստանօր , զի դիւրին լիցի նմա վարել ՚ի  
պէտս իւր , յորժամ հաճոյ թուեսցի նմա : Եւ  
են սոքա :

,, Ով իմաստութի յաւիտենական , որ ելեբ  
,, ՚ի բերանոյ իարձրելոյն , որում ամ ինչ հպա-  
,, տակ կայ , ինամ տարեալ ամենեցուն զօրութէ ,  
,, և

„և քաղցրութիւն . Եկ ուսուցանել մեզ , Եթէ ո՞ր  
„իցէ կանոն , և ո՞ր ճանապարհ ճշմարդիտ իմաս-  
„տութե՞ :

„Վկ Աղոնայի , (այս է ԱՇ է յ , և ՏԵՐ  
„Է ,) և զլուխ տանն Խարայելի , որ երեեցար  
„Անվսեսի 'ի միջոյ բոցոյն բորբոքեալ մորենւոյն ,  
„և որ ետուր նմա զօրէնս 'ի լըբինն Այնա . Եկ  
„աղատել զմեզ զօրութիւն և կարողութիւն բազ-  
„կի քո :

„Վկ արմատ Յեսսեսյ , որ տուար յԱՇ  
„առ ժողովաւրդս 'ի նշան յաւէտ զգալի՝ սիրոյ  
„նր որ առ նն . յոր թաղաւորք երկրի հային  
„լուութիւն , իրը 'ի նպատակ սքանչացման իւ-  
„րեանց , և որում վերատաքեն աղղք զուխտս ,  
„և շաղօթս իւրեանց , Եկ աղատել զմեզ , և մի  
„ևս յամենար :

„Վկ բանալի և զօրութիւն Պատթի , ո՞վ  
„զաւաղան արքունի , և սիւն հաստատութե՞  
„տանն Խարայելի . որ յորժամ բանաս զղուոն  
„երկնից՝ ոչոք կարէ փակել , և յօրժամ փակես՝  
„ոչոք կարէ բանալ . Եկ և փրկեա զժողովուրդ  
„քո 'ի կապանաց շղթայից , և 'ի խաւարչտին  
„բանտէ մահու , յոր անկեալ դնի :

„Վկ արևելք , պայծառութիւն յաւխտենա-  
„և կան լուսոյ , ո՞վ արեգակն արդարութե՞ . Եկ և

„լուսաւորեած զնոց, որք նստին ՚ի խաւարի, և ՚ի  
ստուներս մահու:

„Ո՛վ թագաւոր աղքաց, նպատակ ըալը  
ու ձանաց, և վէմ անկեան, որ միաւորես ՚ի քեզ  
ու զերկու ժողովուրդս, առնել ՚ի նոցանէ մի միւ  
ու, այն. Եկ և փրկեած զմարդն, զոր արարեր ՚ի  
ու տղմոյ:

„Ո՛վ լշմանուել, (այս է Ա՛ջ ընդ Բ՛կ.)  
թագաւոր և օրէնսդիր մեր, ակնկալութի աղը  
ու գաց, և փրկիւնց. Եկ տէր և Ա՛ջ մեր, և  
„փրկեած զմեղ“:

Ամենօրինեալ Ալոյն Երեսոյ ՚ի Արաբութիւնն ՚ի  
Բնելովնեմ, և Ճնոնի Ա՛ճուրտին իւր:

Է:  աղձանքն, զոր ուներ ոք Ալոյն՝ ընծայեաց  
՚ի լոյս զփրկիչն աշխարհի, ու եր կատարելոց  
՚ի Արաբութ, այլ ՚ի Բնելովնեմ, ը մարդարէութեն Ակբեայ, զոր յառաջ բերէ որն Անտ-  
թէոս (ը. 6.) որ ասէ. \* Եւ Դու Բնելովնեմ  
Երիբը Յուրաց ոչնու իրաւել եւ յէշտոնս Յուրաց.  
՚ի ժեն Ելք ինչ իշխոն, որ հախունեացն զշողունութ  
էմ պարագայթլ: Առ ՚ի տալ առիթ կատարման  
մարդարէութես այսորիկ, ՚ի գործ էած Տէր  
զքաղաքական, զնուուի և զամբարտաւանական  
խորհուրդս Օգոստոսի կայսեր, յորմէ \* Եւ  
հըմազ

էրաման, ուղանէ սրբն Պուկաս (ը. 1.) աշխարհագիր  
 առանել, կմ առնուլ զհամար բնակելոց ընդ այ  
 տիւզէրս ||, այս է՛ համօրէն հպատակաց հոռիւ  
 մէական կայսերութիւն։ \* Եւ Երեսոյին ամենեւեան  
 մասնել աշխարհագիր յէւրաքանչըլը ժաղացի։ Եւ  
 և Յովէի ՚ի Գալլէի ՚ի ժաղացի Եսպարենէ ՚ի  
 Հրեաստան, ՚ի ժաղաց Գալլէի որ իոչ Բերդ-  
 հէմ, զու լինելոյ նորո ՚ի պանէ և յապէն Գալլէի,  
 մասնել աշխարհագիր Անրէմու հանդէրյ, պու  
 խօսեալու էր հմա, և էր յղէ։ Առչէր Բեթղե-  
 հէմ քաղաք Գաւթի, վազի Գաւիթ արքայ  
 անդ էր ծնեալ, և սրբն Յովսէփ ընդ ամենասր  
 հարսին իւրոյ, իրրև զաւակք աղգին Գաւթի,  
 ճանաչէին իւրեանց քաղաք՝ զքաղաքն զայն,  
 յորմէ եկեալ էր Գաւիթ զլուխ աղգին իւրեանց։  
 Զիք ինչ տարակոյս, եթէ սր ամուսինքս այսո-  
 քիկ ունէին ՚ի Բեթղեհէմ զաղգականս, և  
 զայլ անձինս, որք ճանաչէին զնս լինել յար-  
 քունի զարմէն Գաւթի։ ՚ի վր այսր ամիր քանզի  
 աղքատ էին նոքա, և անկեալ յամ մարդկային  
 չքոյ, ոչոք հայեցաւ յերեսս նց, մինչև չդտա-  
 նել նց օթևանս և ոչ ՚ի հասարակաց իջևանս։  
 վայ հարկադրեցան մտանել ՚ի գոմ ինչ անաս-  
 նոց։ (ՎՎ որպիսի միսիթարութիւն է այս նց, որք  
 զոլուլ ծնեալք ՚ի ցած վիճակի, արհամարհին  
 յաղգականաց իսկ անտի իւրեանց։) Հասեալ

անդանօր ժամանակ ծննդեանն , ծնաւ Անդիամ՝  
 զլուծորդին իւր . և պատեալ զնա 'ի իւանձարուքս և  
 եղ 'ի մարի : Այս եղեւ պալատն արքունի , ուր  
 ծնաւ արքայն երկնի և երկրի , և այս եղեւ փա-  
 փուկ և զարդարուն օրորոշն , յորում եղաւ :  
 "Վկ սքանչելեացս . թագուաչիր ովկ Անդիամ ,  
 "աղաղակէ աստանօր նըն Ռեռնարդոս , (բան 4:  
 " 'ի ճրագա . ծննդ .) զճառագայթս նոր արեգա-  
 „կանս այսորիկ . դիր 'ի մարի , պատեալ յաղքա-  
 „տին խանձարուքս զծնեալ մանուկն : Խանձա-  
 „րուքն այնոքիկ են հարստութիւք մեր . իրողի  
 „խանձարուքք փրկչին իմոյ առաւել աղնուագին  
 „, են քան զգինչ և իցէ ծիրանիս , և մսուրն այն  
 „հրաշափառագոյն է քան զգահոյս թագաւո-  
 „րաց ոսկիաղարդս , և ականակապս , և աղքա-  
 „տութին Կանի առաւել մեծահարուստ է քան  
 „զամ գանձս : Կանզի զի՞նչ հնար է գտանել  
 „առաւել մեծագին քան զիսնարհութի , և քան  
 „զաղքատութի , որով զնեմք զարքայուին երկ-  
 „նից , և ստանամք զշնորհս , և զողորմուին Այ “ :

ի՞ն :

`Օ՞նաւ երջանկութիւն նր կոյսն զլուծ-  
 որդին իւր 'ի մեջ զիշերի 'ի 25 . Պաեկանմքե-  
 րի (1) , ըստ հասարակ և ըստ անխախտ աւանդութե-  
 եկեւ .

(1) Ի վերայ ամէ Ճննդեանն Կանի , ամէնէցուն

եկեղեցւոյ : Ո՞կարէ լա բաւականին զմտաւ ածել  
զերկրապագութի , զշնորհակարութիս , զուրախութի ,  
և զցնծութի ամենանը կուսին Անրիամու , 'ի  
տեսանելն զփրկիչն մարդկան երևեալ 'ի մէջ  
մարդկան : Ո՞կարէ հասու լինել առատութի  
շնորհացն , ոլք յայնմ պահու զեղան 'ի հոգին  
Վճամօրն մեծի : Ո՞կարէ առանց հիացման խե-  
լամուտ լինել սքանչելի և հրաշալի պարագայիցն ,  
ոլք զուգընթաց եղեն այսմ ծննդեան : Զիք անդ  
չեծութի , և ոչ ցաւք երկանց մօրն . չիք ինչ  
անդ բռնութի . ելանէ որդին յարգանդէ մօրն ,  
ուղ ցոլանայ ճառագայթ լուսոյ յարեգակնէ , և  
ոչ ամենամաքուր և անապական կուսութի նր  
խախտի իշիք , մնալով մօրն կոյս 'ի ծննդեան , և  
յետ ծննդեան , ուղ և երն կոյս 'ի յղութի . նա  
թէ կուսութի նր նովին խակ ծննդեամբն իւրով  
եղեւ առաւել ևս մաքուր , առաւել անխախտելի ,  
և առաւել նը : Եսյապէս ուսուցանեն միաբան նք  
հարք , և այս է վարդապետութի և հաւատք

ուշ

առշայուղ են պահապահ իսրայէլ ժամանակաւ  
գլուց , յորս հուսանուկունագոյն ելքուն այն , ոյ  
գուէ իբր յամին 4000 . առեղջմոնն ոշխարհէ  
Օդըմ գուն պահապահ հօրն թառօմովկը լոյց աբ-  
բոյէ 'ի վր վարուց , և գործոց ամենանը  
կուսին Անրիամու . վիճ . 27 :

ուղղափառ եկեղեցւոյ : Անյ սրբն Յեռնարդոս  
միաբանեալ 'ի միասին զձիրս արտօնութեց յղու-  
թեան և ծննդեան լուսին, զշետ երթեալ այլոց  
հարցն սբց, խմատասիրէ օրինակ զայս . (բան  
յութօր, վերափ.) „ Լուսափայլէ 'ի լոյսն մեծ  
„ ձիքը ամենեին երկնային, զի բեղմնաւորեցաւ  
„ առանց ինչ վեասու կուտութեց իւրոյ . տարաւ  
„ յարդանդի իւրում զզաւակն առանց ինչ ծանւ  
„ րութեց, ծնաւ առանց ինչ ցաւոց, ինքն միայն  
„ գոլով 'ի համօրէն կանսյս ազատ 'ի հասարաւ  
„ կաց անիծից, որ զծննդականս արկանէ ընդ  
„ ծանր ցաւովք : . . . Եւ արդարէ իրաւամբք  
„ նա միայն եղեւ ազատ 'ի նեղութեց անտի, զորս  
„ կրեն այլ ամ մարք . զի նա միայն յղացաւ  
„ առանց մարմնական ինչ ցանկութե : Եւ ոչ  
„ միայն (ասէ նա ինքն սբն այլուր . բան 4. 'ի  
„ ճրագա . ծննդ.) յղանայ Անրիամ, մնալով  
„ կոյս, և ծնանի առանց ցաւոց . այլէ լինի մայր,  
„ առանց ինչ այլայլելոյ ամենեին կուտութեն իւ-  
„ րոյ : Վլ նորութես, որ յիբաւի չեղեւ երբէք  
„ լուեալ : ՞ Օնանի կոյս, և մնայ յետ ծննդեանն  
„ կոյս անապական . միաւորէ զբեղմնաւորութի  
„ զաւակին ընդ ամբողջութեց մարմնոյ իւրոյ . և  
„ ընդ պատուսոյ կուտութեն լծորդէ զինդութի  
„ մայրութե “ :

Ի՞՞ : Բաց 'ի մասնաւոր սքանչելեաց աստի,

զորոց զիտորձ էառ ամենասրբ Արյան յանձին իւրում 'ի ծնանելն զչյա, եղե միանգամայն և վկայ այլոցն, որք զչետ եկին, առ 'ի յայտնել նց, որոց հաճեցաւ Ած յայտնել զծնունդ փրկչին աշխարհի: Օտուաշինն պարզեցաւ յերկնուստ շնորհս այս աղքատ հովուաց ոմանց, որք 'ի մօտակայ տեղին Բեթղեհեմի պահեին զպահպանութիս գիշերոյ հօտից իւրեանց: Երեւցաւ նց հրեշտակ Տն, և շուրջ պատեաց զնոքօք լցո մեծ երկնաւոր: Ասաց ցնա հրեշտակն, զի գնասցեն 'ի քաղաք Դաւթի, այս է 'ի Բեթղեհեմ, տեսանել, և երկիրպագանել փրկչին աշխարհի, որ ծնեալն էր 'ի նմին աւուր. \* և այս նշանակի յեզ, յաւելու ասել հրեշտակն. Գոտոնիցեւ մանուկ պատուեալ 'ի Էտոնյառուար, և Էտեալ 'ի մասը ||: Կնացին փութանակի հովիքն 'ի Բեթղեհեմ. ուր գտին զլարիամ ընդ սրբյն Հովսեփայ, և զմանուկն եղեալ 'ի մսուր, ծանեան զծշմարտութիւ բանին՝ որ ասացաւն նց. և դարձ արարեալ 'ի հիւղս իւրեանց փառաւորէին զԱծ. և յայնմշետէ քարոզեցին զսքանչելիսն՝ զոր տեսին, և զարմանացին ամենեքեան՝ որք լսէինն: Եւ աւետարանիչն դայսօրինակ կնքէ զպատմութիւս զայս. (Պուկ. 2. 19.) \* Եւ Անուշեամ պատմուածութիւնն արդի լուսաւում է արդի լուսաւում ||: Ամենասրբ Արյան, ասէ աստանոր նըն Ամբրո-

„սիոս, (Շի Վուկ. 2. Հմբ 54.) լսէ 'ի հով  
 „ուացն՝ զոր ինչ պատմեն նմա, և ինքն լուէ:  
 „Եւ սակայն զի՞նչ ինչ չէր կարօղասել ցնա:  
 „Այլ նա, (ասէ նըն,) կամի տալ մեղ զօրի:  
 „Նակ պատրաստութե՛, որով պարտիմք պատրաստ  
 „լինել առաւել 'ի լսել, քան յուսուցանել: Եւ  
 „Է նա յայսմ մասին օրինակ մանաւանդ կուսա-  
 „նաց, եթէ զիա՞րդ պարտ է նց սիրել զլութի.  
 „և ցուցանէ համօրէն կանանց, եթէ դիւրութին  
 „'ի խօսել, և շատախօսութին չէ պակասութի  
 „բնութե՛ նոցին, այլ յաւէտ ախտ հոգւոց  
 „նոցա“:

Է՛: Ոչ յետ բազում ինչ աւուրց ետես  
 ամէնօրհնեալ Կոյսն սքանչելիս մեծագոյնս քան  
 զսոսին: Ապաքէն յաւուրն ութերորդի, ըստ  
 նախագրելոյ օրինացն, թլիատեցաւ մանուկն,   
 և եղաւ նմա անուն Հյառուս. և զայս թլիա-  
 տութի պարտ էր առնել 'ի տեղւոջ անդ՝ ուր  
 ծնաւն Հյան, և հաւանականաբար ձեռամբ սըյն  
 Ծովսեփայ: Ալ կոյսն Անրիամ առանց ինչ յերկ-  
 ուանաց եղեւ առաջինն 'ի պաշտել զայս խոր-  
 հուրդ խոնարհութե՛ Անդորդւոյն իւրոյ, և 'ի տե-  
 սանել լուսաւոր աչօք հաւատոյ զառաջին կա-  
 թիւն արեան՝ զոր նա Եհեղ, իբրև զառհա-  
 ստչեայ գնոց փրկութե՛ ազգի մարդկան, և աղա-  
 տութե՛ ժողովրդեան իւրոյ 'ի խիստ և 'ի ծանր

Ըստրակսն օրինաց : Եւ ով թէ զիա՞րդ  
 արիւնն այն առաւել ևս բեղմնաւորեաց առաքի-  
 նութեք զողին Վարիամու : Արդ՝ զկնի վեց  
 առուրց թլիատութեն եկին յարեւելից արք ոմանք  
 երեւելիք, մողք կոչեցեալք, առաջնորդեալ 'ի  
 հրաշական աստեղէ միոջէ, 'ի Շեթղեհէմ, առ  
 'ի երկիրպագանել նորածին արքային Նորէից, այս  
 է Վասիային : Վանեալ նոցա ՚ի հիւղ անդը, դտին  
 զմանուկն Վարեմաւ մարքն իւրով, և անկեալ  
 'ի վր երեսաց իւրեանց, երկիրպագին նմա, և  
 մատուցին նմա ընծայս ոսկի, կնդրուկ, և զմուռու :  
 Արդ՝ գտին մողքն զլյարիամ ընդ Հնի . այլ  
 Վարիամ յայս դիպուած ևս կայ ունկնդիր 'ի  
 խռարհական լուռթեն իւրում : „Եւ այսպէս  
 „ով քանի աննման է նա մեղ . ասէ նըն Շեռ-  
 „նարդոս, (բան 'ի կիւր, որ յութօր, վերափ.)  
 „մեղ՝ ասեմ, «ըստ առնիմք պետքիս 'ի առնգունս .  
 „մեղ, որք և ոչ մի ինչ դիտեմք պահել 'ի  
 „ներքս 'ի մեղ, այլ զամ հանեմք արտաքս “:  
 Ամենօրհնեալ Կոյմն զլիսովին զրաւեալ է 'ի տե-  
 սութի այս ամ գերամբարձ խորհրդոց . և ընդ  
 Այ միայն, և յլուծ միայն ճաշակէ զքաղցրութի  
 երկնաւոր նպաստիցն : Ոչ ումեք յայտ առնէ  
 դպրանչելահրաշ զանհասանելի շնորհսն զշաղոր-  
 դեալսն նմա 'ի Տնեն իւրմէ, զի սոքա չեն իբրեւ  
 զձիրս աշխարհայինս, որք յոչինչ պէտս արժեն,  
 եթէ

Եթէ ոչ իցեն ծանուցեալ աշխարհի, և որք ՚ի  
կարծեաց անտի մարդկան ընդունին զամ ղյարդ  
իւրեանց: Առքա մեծ են ը ինքեան, և այնչափ  
առաւել բարողք պահպանին, որչափ առաւել  
գաղտնի պահին:

• Յանաւութեան ամենասբ էտակին Անրիամու, և ըն-  
ծայուան էջուի ՚ի պահպան, այն և՛ Տեսանընդ-  
պատճեն:

Է՛ մենանը Այսն, որ՝ ըստ որում ծանուցաք՝  
ոչ այլ ինչ ինդրէր, բայց եթէ թագուն պա-  
հին առ ՚ի մարդկանեւ ղառանձին գերաղանց ձիրս  
իւր, և երեիլ իրը հասարակ մայր նման այլոց,  
կամեցաւ հպատակիլ օրինաց քաւութեն: Այս  
այն օրէնք էր, զոր ետ Ա՛ ժողովրդեանն իւ-  
րում, գրեալ ՚ի գիրս Դկատացոց, գլ. ժիր. յո-  
րում հրամայէր, զի կին՝ որ ըստ հասարակի կարգի  
յղանայցէ, և ծնանիցի ղզաւակ արու, պիղծ լիցի  
զաւուրս քաւասուն. և յայսմ ժամանակի ար-  
գելեալ էր նմա մերձենալ ՚ի նույիրեալ ինչ Տ՛ն,  
և մտանել ՚ի տաճալն: Խակ ՚ի լրանալ աւուրցն  
քառասնից պարտ էր նմա գնալ ՚ի տաճարն առ  
՚ի քաւիլ, ածելով ղդառն մի տարեօր ՚ի նույիր  
Տ՛ն յողջակէզ, և զաղաւնի մի, կամ զտատրակ  
մի, առ ՚ի զոհել զայն ը օրինի զոհին, որ կոչէր  
վու

վա մեղաց : Խոկ եթէ կինն էր աղքատ , կարօղ  
էր փոխանակ գառինն մատուցանել զմիւս ևս  
աղաւնի , կամ զտատրակ , այս է՝ զոյգս աղաւ-  
նեաց , կմ՝ տատրակաց : Բաց յօրինաց աստի՞ որ  
վն կանանց ծննդականաց , էր և այլ օրէնք ,  
Երից . ժկ . 2 . և Խոռոց . ը . 17 . որ հրամայ-  
էր , զի ամ անդրանիկք մատուցին ՚ի տաճարն ,  
և նուիրեսցին չեն , և փրկեսցին՝ վճարելով սկեղս  
հինգ . և սիկղն է դրամ ըս արժողութեն իրը միոյ  
դահեկանի : Այսմ օրինաց երկուս պատճառս  
յառաջ բերէ ԱՃ ՚ի սր գիրս . առաջինն որ և  
հասարակ ամ մարդկան , է իշխանական տէրութ-  
նը ՚ի վը ամ իրաց . \* Արբետ գու ինչ , ասէ ,  
պայմ անդրանիկն , . . . տանդէ իմ է . (ըս Լատ . տանդէ  
իմ է ամ) || . և յանձինս անդրանիկացն բովան-  
դակ մնացըրդն ազգատոհմին լինէր իմացեալ իրը  
վերաբերեալ առ ԱՃ : Երկրորդ պատճառն  
պատկանէր ժողովրդեանն Երրայեցւոց , և էր  
յիշատակն , զոր ժողովուրդն այն պարտ էր պա-  
հել վն ազատելոյ նը ՚ի գերութեն Եղիպտոսի ,  
իրրզի հրեշտակն սատակիչ սատակեաց ՚ի միում  
դիշերի զամ անդրանիկս Եղիպտացւոց , թողեալ  
կենդանի , և անվնաս զանդրանիկսն Երրայ-  
եցւոց :

ՎԵ : Չիք ինչ տարակոյս , եթէ ամենօրհ-  
նեալ Այսն ոչ էր փակեալ յօրէնս քաւութե

կանանց, որք ծնանեին. քանզի յղութի նր և  
 ծնունդ նր եղե զլխովին հրաշական, և փոխա-  
 նակ ապականելոյ զնա իւիք եղանակաւ, առաւել  
 ևս քաւեաց և սրբեաց զնա: Եւ ոչ իսկ Ածոր-  
 դին նր անկանէր ընդ օրինօք այլոց անդրանիաց,  
 զի ինքն էր տուող և իշխան օրինաց, տէր տիե-  
 զերաց, և ճշմարիտ Արդի Ա.Յ: 'Ի վ՛ այսր ամի  
 իբրև լցան աւուրք քառասուն զկնի ծնանելոյ  
 Առւսին զ.Յ.Ռ, էառ նա ընդ սլոյն Հովսեփայ  
 զմանուկն Յ.Ռ, և եկն յԵրուսաղէմ 'ի տաճարն՝  
 առ 'ի մասուցանել զնա առաջի Տ.Ն, և փրկել  
 զնա, ոոկ և արար: Հետ այնորիկ մատոյց զզոչն  
 քաւութե, ոչ արդեօք զգառն, որ էր ողջակեղ  
 փարթամաց, որ էր զոչն աղքատաց: 'Օանոց  
 սյսուիկ, եթէ զիարդ հաճոյ է նմա աղքատուին,  
 յորմէ կարի իմն զամօթի հարկանին մարդիկ աշ-  
 խարհի, և յոյժ երկնչին: Ա.Յ.Լ ընդէ՞ր իցէ ամա-  
 չել 'ի նշանազգեստէ Յ.Ռի Վ.Ռի, որ մեծատուն  
 գոլով, ասէ Առաքեալն (ը. Արմեթ. ը. 9.)  
 աղքատացաւ վն սիրոյ մերոյ, զի մէք նր աղքա-  
 տութին մեծասցուք: Ինդէ՞ր իցէ ամաչել 'ի  
 նմանելոյ ամենասբ կուսին Անրիամու, որ թէ-  
 պէտ և էր յարքունի զարմէ, բայց զնաց 'ի տա-  
 ճարն՝ ունելով 'ի ձեռին զնշանակ աղքատութի:  
 Ինդէ՞ր իցէ երկնչել յաղքատութի, որ է բա-  
 ժին

Ժին կարգեալ ՅԱՅ վեհ հոգւոց՝ որք յոյժ սիրելի  
են նմա, որպիսի է Վարիամ։ Այլ ոչ միայն  
ուսուցանէ մեղ նա ՚ի քաւութեն իւրում զսէր  
աղքատութե. այլև տայ մեղ միանդամայն զքա-  
ջայայտ օրինակ հնազանդութե, և այնպիսի հնա-  
զանդութե՝ որ վերագոյն է քան զամ մարդկային  
նկատմանս : Հնազանդի նա այնպիսի օրինաց,  
որում չէր պարտական, ոնց ասացաքն . յամօթ  
և ՚ի նախատինս նց, որք խնդրեն հանապաղ  
պատճառառես, և բաղբաղայս, առ ՚ի տնօրինիլ  
յօրինաց անտի՝ որոց ստուգիւմ են ներքոյ ան-  
կեալ : Հնազանդի նա այնպիսի օրինաց, որոյ  
պահպանութին՝ քօղարկեալ զառաւել գեղեցիկ,  
և զառանձինն ձիրս, զոր ունէր, դոլ միանդամայն  
կոյս և մայր, և լինել մայր ՅԱՅ, երևեցուցանէ  
զեա իրըև զկին հասարակ ընդ այլոց կանանց,  
որ պէտս ունիցի քաւութե։ Եւ արդ՝ արժան  
իցէ առն մեղաւորի խոյս տալ յօրինաց ապաշխա-  
րութե, առ մարդահաճութե երևելոյ անմեղ, և  
առ երկիւղի, զի մի երևեսցի մարդկան նշոյլ  
ինչ թէպէտ և երկդիմի, այնպիկ՝ որ ինչ է  
ճշմարտապէտ :

Ա՛յ : 'Ե մտանել ամենասբ կուսին Վարիա-  
մու ընդ սշըն Ծովսեփայ ՚ի տաճարն՝ վեհ վե-  
րողրեալ պատճառի, ահա ազգեցութիւն Հոդոցն  
ոլոյ եկն անդ ծերունի ոմն ոք՝ անուն Վիմեսն,

այս արդար և երկիւղած, լցեալ Հոգւովն Այ, եռանդազինս փափագեալ գալստեան հասարակաց փրկողին յաշխարհ. և 'ի վարձ այնր փափագանաց՝ խոստացեալ էր նմա Հոգին սր՝ մի՛ տեսանել զմահ, մինչև իցէ տեսեալ զկեցուցիչն և դժբկիչն աշխարհի: Արդ՝ ելեալ նր ընդ առաջ Ապրիամու և Յովսեփայ, մինչդեռ տանեին զմանուկն չա՛ ՚ի տաճարն (1), էառ զմանուկն ՚ի դիրկս իւր, օրհնեաց զլուծ, և լցեալ յնծութք, երգեաց զերգն զայն, զոր յամ աւուրս երգե Եկեղեցին (Ղատինացւոց) ՚ի հանգստեան ժամուն, (և Եկեղեցի Հայաստանեայց Երկիցս յաւուրն, յառաքօտեան և 'ի հանգստեան ժամերգութիւնն) այս է. \* Արդ՝ արյակիւս պժտառյս ու Տէր ըստ բանի քում ՚ի ետաղաղութեն. զէ ուեսին աչչէս պժուարութեն, զոր պատրաստեցն առաջը պաժողութոց. ըստ ՚ի յայտնութեն հեւանոսաց, և չառաք ժողովրդեան քում Խոխայէլք:

ի՞լ: Լուաւ ամենասր կոյսն Ապրիամ զմեծամեծան՝ զոր ասէր նըն Աիմենն, զիտաց զամենաւար:

(1) Յընդ պահանջ եւլոնելոյ ասամէ Եւլոնա Յընդ անունն ասնիս, անունունէտը զայն Հայ փափանթէ, ոոզ նո առյո տոկ Տեառնընդառաջ:

Նաևը հրճումանս ցնծութեանը . ծանեաւ զմարդարէ .  
ու իսն՝ զոր մարդարէացաւ նա վակումանն հեթա-  
նոսաց . և էր նա ըստ ուշին քովսեփիայ , ասէնք աւե-  
տարանն ( Պուկ . թ . 33 .) \* պարմացեալ 'է վահ բանիցն՝  
որ իսօսէին պնմանն ։ Օարմացումն , որ յառաջ  
գայր 'ի նմա , ոչ արդեօք 'ի տղիտանալոյ զայն՝  
զոր լսէր յայլոց , իրրզի նա առաւել քան զամե-  
նեսեան մարզեալ և ուսեալ էր . այլ 'ի ներքին  
իմն զգածմանց հոգւոյ իւրոյ , որոյ խելամուտ  
լեալ , և իրը թէ նկուն եղեալ 'ի մեծութէ , 'ի  
մեծագործութէ , և 'ի մեծվայելութէ իրացն ,  
դորս լսէր , պատուեալ մեծարէր զնոսին խորին  
իմն և յարդական լուութը : Արդարեւ գերահրաշ  
եղանակ կալոյ առաջի ածակետականն մեծվայել-  
չութէ , պաշտելոյ և խոկալոյ զանսահման ստո-  
րոգելիս նորին , և մեծարելոյ զգերապանծ և  
զիսորին խորհուրդն զայնոսիկ , որք յիրաւի սե-  
փական գոլով մեծութէն Ա.Յ . զանցանեն ան-  
պարագրելի իմն եղանակաւ քան դշասողութի  
համօրէն ստեղծական մտաց :

Հ : Իրրեւ կատարեաց սրբն Ախմէոն զերզս  
իւր , դարձաւ առ Անրիամ , և առ Քովսէփի , և  
օրհնեաց զնս , այս է մաղթեաց յԱ.Յ վանց  
զամ օրհնութի . և ապա շրջեալ զնօսս իւր առ  
Անրիամ և թ , ասէնա . \* Ահա ստ ( մանուկս )  
իսոյ 'է հուրուտն և 'է խանճնուտն բակմաց 'է մէջ

Խաղաղելք || . այս է՝ 'ի գլորումն նց , որք առ շաբութե իւրեանց ոչ հաւատասցեն 'ի նա , կամ ոչ հնազանդեսցին հրամանաց նր . և 'ի կանգանումն նց , որոց դիւրահաւան եղեալ շնորհօք նր , ընկալցին և 'ի դործ դիցեն զվարդապետութինր : Եղիցի նա , ասէ , \* 'ի նշան հակոբոսկութեան մարդկան . և ընդ ու խի անյն անցյէ սուր || : Այս բանք են , որովք սրն Աիմեռն նախագուշակեաց զհակառակուհն , որ լինելոց էին ընդդէմ վարդապետութեց , օրինակաց , հրաշից , և նցյն խոկանձին հնակ Կանի . և հակառակութեցս այսոցիկ ունէր լինել հաղորդ և ամենանք կոյսն Անրիամ , մանաւանդ 'ի տեսանելն զնա վիրօք ծածկեալ , արեամբ թաթաւեալ , թշնամանալից եղեալ և անարգեալ , աւանդել զհոգին 'ի վը խաչին 'ի մէջ երկուց աւազակաց . և ցաւն՝ զորոյ ունէր առնուլ զփորձ յայս ամ հալածանս Ածորդւոյն իւրոյ , էր սուրն՝ որ անցանելոց էր լը անձն նր : „Անուամբ սրոյ , ասէ սրն (Օգոստինոս (Թուղթ „ 149 . հմք 33 .) զորմէ խօսի Աիմեռն , իմացեալ լինի վիշտն , կամ մանաւանդ ցաւն , որ վը սիրոյն պարտ էր անցանել լը մայրենի անձն „Անրիամու : Առւրն այն՝ որ եղեւ 'ի բերանս „հալածչացն Կանի . զորոց դրի 'ի Աաղմոնն „(ծը . 9 .) \* Սուր . է 'ի շընուան նց || : Առքա՞ ” էին որդիքն մարդկան , որոց (Աաղմ . ծը . 8 .)

յ, \* ապրանքունք իւղեւոնց պլն և ներդուս լու, և ըստուա  
 նեց ողջ սուր սուսնը : «Քանզի և երկաթովն»  
 „որ էանց ընդ անձն Հովսեփիայ, (յորժամ էր  
 „բանտարկեալ առ Փարաւոնիւ յԵղիպտոս,)”  
 „թուշի ինձ, եթէ պարտ է իմանալ զկարի իմն  
 „խիստ և զբաղմաչարչար վիշտու” : Առաւ ամեւ  
 նասր կոյսն Անրիամ և այլ ևս ինչ ինչ վա Ած-  
 որդուցն իւրոյ յայրի կնոջէ միոյ սբէ և ’ի մարգա-  
 րէէ, որում անուն էր Աննա, և էր յայնժամ  
 ամաց ուժսուն և չորից : Այս նա հանապաղ ’ի  
 տաճարին, և պաշտէր Ած զցայդ և զցերեկ  
 աղօթիւք և պահովք : Արդ՝ եկն եհաս ’ի վա և  
 կինս այս ’ի տաճարին, մինչդեռ անդ էր ամեւ  
 նասր կոյսն Անրիամ ընդ մանկանն Հյոի, և լը  
 սիցն Հովսեփիայ, և լուսաւորեալ երկնաւոր լու-  
 սով ծանեաւ զմանուկն լինել փրկիւ աշխարհի,  
 և սկսաւ օրհնել զնա, և խօսել զնմանէ ընդ  
 ամենեսին՝ որ ակնունէին փրկութեն յարայելի :  
 „Օպյորինակ, ասէ սրբն Ամրբոսիոս (’ի Պուկ.  
 „զիրք 2. 62.) արք, և կանայք, և յամ վի-  
 „ճակէ անձինք հոգւով մարգարէութե վկայե-  
 „ցին Վեսիային : Անրդարէացաւ Աիմէոն, մար-  
 „զարէացաւ կանխաւ և ամուսին ոք, այս է՝ սըր-  
 „բուհին Եղիսաբեթ . պարտ էր և այրւոյ ումեք  
 „մարգարէանալ, և սա է Աննա, զոր վա սրբուն  
 „վարուցն, և վա հրաժարեալ զուցն Ժիրաց աշ-  
     ու լսար-

„խարհի, վս հանապաղորդ աղօթիցն, և այլոց  
„դործոց բարեպաշտութե՛, պատրաստեաց Տեր  
„առ ՚ի ընդունիլ զլոյսն իւր երկնաւոր, և առ  
„ժանի արար զնա աւետել այլոց զակնկալեալ  
„փրկիչն ազգի մարդկան“։ Եւ ամենասր կոյսն  
Արքիամ, ոակ ասի զնմանէ այլուր յաւետարա-  
նին, զամ զբանս զայսոսիկ պահէր, և ոչ կո-  
րուսանէր ՚ի նոցանէ և ոչ մի։

Համար ՚ի պատուել զխորհուրդս զայսոսիկ  
դալստեան Այ և փրկչին մերոյ ՚ի տաճարն, և  
զքաւութե՛ ամենասր մօր ՚նր, եկեղեցին ՚ի վաղ  
ժամանակաց հետէ, զորոյ չէ դիւրին գտանել  
զորոշեալ ժամանակ, կարգեաց զօրն երկրորդ  
Փետրվարի, յորում ելանէ ՚ի թափոր զերմե-  
ռանդական, ունելով ամենեցուն ՚ի թափորի  
անդ ՚ի ծեռին զմոմեղէնս լուցեալս + զորմէ մարդ  
է տեսանել ՚ի ծանօթութիւն բարեյիշատակ պա-  
պին ինենեղիկտոսի չորեքտասաներորդի՝ որ ՚ի վը  
տօնիս այսորիկ։ Արդ՝ պարտ է ամ քրիստոնէից  
առնուլ աստի զառիթ մատուցանելոյ զանձն Այ  
նուէր ՚ի միասին ընդ Յանի Քանի ձեռամբ ամե-  
նասր Կուսին, իբր ողջակեզ, որում պարտ է  
ծախիլ ՚ի պատիւն Տն իւրոյ, ըս որում և զիարդ  
պատշաճ դատեսցի նա, և հաճեսցի։ և ուսա-  
նիլ յամենասր Կուսէն, թէ գերաղանց պատ-  
բաստութիք առ ընդունելի լինելոյ նուիրմանտ

այսորիկ առ Ա. Են խոնարհութին, սէրն աղքատութեն, և կատարեալ հնազանդութի հրամանացն Ա. Ե, և օրինաց եկեղեցւոյ:

Վահանուագ ամենահանըն կուսակն յերեպուու ընդ Ա. Ե.  
որդուոյն իւրոյ:

Հ. Ա. Ետ բազում ինչ ժամանակաց սկսաւ  
ամենամբ Կոյսն առնուլ զփորձ ճշմարտութեն  
բանիցն, զոր ասաց նմա ովն Այսոն. այս է  
եթէ հակառակութիքն, որք հասանիցեն Ա. Եորդա-  
ւոյն իւրում, լինիցին նմա սուր, որք անցանիցեն  
ը անձն նր: Յորժամ մողքն անցեալ ը Երուա-  
սաղէմ, հարցին, եթէ ուր ծնաւ նոր թագաւորն  
Ներէց, այս է Ա. Եսխայն, զոր նոքա կամենին  
երթալ 'ի տեսանել, և երկիրպաղանել նմա.  
ասաց նց Ներովդէս արքայ, զի յետ գտանելոյ  
զնա, դարձցին անզրէն յերուսաղէմ, և ծա-  
նուայնն նմա: Խոկ մողքն ը յատուկ հրամանին  
Ա. Ե, յետ երկիրպաղանելոյ նմա 'ի Առթղեհէմ,  
ոնց ասացաքն, ը այլ ճանապարհ դարձան յաշ-  
խարհ իւրեանց, և բնաւ խոկ ոչ անցին ընդ  
Երուսաղէմ: Արդ՝ ցասուցեալ Ներովդի, իբրև  
ետես' թէ խարեցաւ 'ի մողուց անտի, հրամայ-  
եաց բարբարոսական իմն անզթութք, զորոյ չիք  
գտանել զայլ ինչ օրինակ նման, մատնել 'ի

մահ զամ մանկունս ինեթղեհեմի, և որ շուրջ  
վնովաւ տեղեացն, զծնեալս 'ի ժամանակի երկուց  
ամաց, խորհելով կորուսանել 'ի կոտորածի անդ  
և զնոր արքայն զերկրպագեալն 'ի մոգուց, յորմէ  
ինքն զարհուրէր : Կատարեցաւ հրամանն անա-  
գորում . այլ ամբարիշտն չերովգէս ոչ եհառ  
վախճանին՝ զոր դիտէր : Քանզի կամեցեալ Ա.Յ  
ընդունայն առնել զամ զնրբութիս մարդկային  
չարութեն, և միանգամայն ուսուցանել մարդկան  
զիսոնարհուի, և զհասարակ ընթաց' չ որ պար-  
տին ընթանալ առ 'ի խուսել յերեսաց սրտմտու-  
թեան հալածչաց իւրեանց, առաքեաց կանխաւ  
զհրեշտակ առ սրն հովսէփի, որ խօսեցաւ ընդ  
նմա ըստ այսմ օրինակի . (Անտթ . ք . 13.)

\* Այլ առ զմանուիդ, և զմայր էր, և քահենէ  
յեգիպտան . և անդ լենիջէ՛ր ցործամ ասացից ժեզ-  
անոնց 'ի ենդէր է աւելութես իորուսանել զմա-  
նուիդ : Զիք ինչ տարակոյս, եթէ սրն հով-  
սէփի ծանոյց ամենասր հարսին իւրում զայս պատ-  
գամ երկնաւոր . և թէ վս այն առաքինութի նր  
'ի փորձ եղաւ 'ի բանից անտի հրամանին : Խոել  
զհրամանն յառանելոյ, այս է վաղվաղակի կանգ-  
նելոյ, ոչինչ դանդաղանս 'ի մէջ արկեալ, և  
քահուշելոյ յլազիպտոս, առ 'ի պահել 'ի ցասմանէ  
տկար և մահկանացու առն միոյ զմանուկն, որ  
դոլով Ա.Յ էր տէր կենաց և մահու ամ մարդ-

կան + որպիսի հաւատոց պէտք էին առ ՚ի չթե-  
թեկիլ . և որպիսի հպատակութե հրամանաց նախա-  
խնամութեն Ա.յ , առ ՚ի չածել զմուաւ զդժուճա-  
բութիս՝ որ առ ՚ի կատարութեն հրամանիս այ-  
սորիկ :

ՀԵ : Ա.յլ ամէներանեալ նր Առյսն , և նրն  
Քովսէփի , ողք էին ՚ի գերագոյն աստիճանի առաւ-  
քինութե , անդէն վաղվաղակի հնազանդեալ  
երկնաւոր ձայնին , ելին փութանակի ՚ի Ինեթղե-  
հեմէ , և գնացին ընդ մանկանն Հանի յլշգիպ-  
տոս : 'Ի ճշմարտապատում վկայից չորրորդ և  
հինգերորդ դարուն եկեղեցւոյ դիտեմք , եթէ  
գնացին նոքա յլշրմուզօլիս ֆերաիդոյ . և թէ  
՚ի մտանել նց ՚ի քաղաք անդր , ծառ մի տարա-  
պայման մեծութիւ , ասէ Առղումենոս (պատմ .  
զիրք 5 . գլ . 21 .) որ կայր մօտ առ դրունս  
քաղաքին , խոնարհեցաւ ոստովք իւրովք մինչեւ  
ցղետին : Օայն ծառ , ասէ պատմիչն , վա իւրոյ  
շնաշխարհիկ գեղեցկութեն , և վա արտաքոյ  
կարդի բարձրութեն , պաշտէին հեթանոսք իրրեւ  
զշած . վայ չկարացեալ բանսարկութին , որ ՚ի նմին  
ընդունէր զերկրպագութի , հանդուրժել գալս-  
տեան նր , որ ունէր եղծանել զամ զանոտիա-  
պաշտութիս նորին , զդողանի հարաւ , և հար-  
կադրեցաւ մեկնիլ անտի : Փախուցեալ բանսարկ-  
ութին , մնաց ՚ի մշտնչենաւոր յիշատակ այսորիկ

ծառն այն՝ այնպիսի իմն զօրութիւն, զի դոյզն ինչ  
մասն փայտի նր, կամ տերեւյն, և կամ խուն  
ինչ կեղեւ նր մերձեցեալ 'ի հիւանդս, բժշկելը  
զնս 'ի հիւանդութեանց իւրեանց, եթէ հաւատով  
առնելին: Եւ Եղիպտացիք, և Պաղեստինացիք  
(ասէ Առղոմենոս) քաջ վկայք են բանիցս,  
հաստատելով իւրաքանչիւր 'ի նոցանէ զպան-  
չելահրաշ գործս նր, զորոց զփորձ առեալ են:  
“Եսյնպէս և Պաղլաղիոս հաստատէ, (պատմ.  
'ի վարս Ապող. արբ. գլ. 52.) եթէ յորժամ  
ամենասբ կոյսն Անրիամ, և նրն Հովսէփ տարեսով  
զմանուկն Հն, մաին յերմոպօլիս, ամ արձանք  
կորոց, որք էին 'ի տաճարի միում 'ի քաղաքի  
անդ, անկան յերկիր. և ես, ասէ Պաղլաղիոս,  
տեսի զտաճարս զայս: Եւ թէ ոչ միայն յեր-  
մոպօլիս, այլև յայլ քաղաքս Եղիպտոսի ևս  
զդողանի հարան և սասանեցան զրօշեալք դիցն  
'ի մտանելն Հնի յերկիրն յայն, վկայեն և այլք  
'ի նախնի հարանց, և ճանաչեն ճշմարտեալ 'ի  
սոյն դիպուած զմարգարէութիւն զայն Եսայեայ,  
(Ժ. 1.) որ ասէ. \* Ահաւասի Տէր... ելեսցի  
յերեպոսո, և շուժեացին յետոդոքծոն Եդիո-  
դացուց յերեսաց նորո ||:

ՀՇ: Այլ զիարդ և իցէ դատումն, զոր կա-  
միցի ոք դատել զատուգութէ սքանչելահրաշ  
դիպուածոյս, այս ինչ անտարակոյս է, եթէ նր

Հարք ծանեան իրը ներգործութիւնի ինչ գնալոյն  
 Յնի Արդիպտոս ընդ ամենասր մօրն իւրոյ, և ը  
 սըյն Հովսեփիայ, զառատ պտուղս քարոզութե  
 աւետարանին 'ի գաւառուն յայնոաիկ' առաւել  
 քան յայլ տեղիս, զանբաւ բազմութիւն միան-  
 ձանց և միայնակեցաց՝ որք լցին զանապատս, զսր  
 դասս կուսանաց՝ որք ծաղկեցան 'ի նոսին, և  
 զբազմութիւն ժողովոդոց նահատակելոց՝ որք ա-  
 րեամբն իւրեանց ոռոգեցին զն՛ : „Օդրօրինակ  
 „(Օգոստոս, ասէ նըն Հովհան ոսկեբերան (՚ի  
 „Անտթ. Ճառ 8. Հմք 5.) հրամայելով աշ-  
 „Խարհագիր առնել 'ի կայսերութեն Հռովմայ-  
 „եցւոց, եղև պատճառ, զի կատարեսցի 'ի Բեթ-  
 „Ղեհէմ երջանիկ ծնունդն կուսին. նոյնպէս և  
 „Հերովդէս ցասմամբն իւրով եղև պատճառ,  
 „զի Արդիպտոս օթևանս տացէ նմին սըյ կուսին  
 „ընդ Ածորդւոյն իւրոյ. և ներկայութիւն մեծա-  
 „մեծ հիւրոցս ընկալցի ուղ թէ զսերմն արբութեն  
 „այնորիկ, որ յետոյ ծաղկեցաւ 'ի նմա, և որով  
 „Արդիպտոս առաւել փոյթեռանդն գտաւ 'ի  
 „ծառայութեանն Այ՝ քան զնոյն իսկ զՊա-  
 „, դեստին “ :

Ամենահետք Ասյան պատճեաց 'է Գրալելւա, և հասպա-  
տի զբանակութեն իւր 'է Արականեն:

ՀԵ: **Օ**կնի ամսոց ինչ կատարելոյ Ներովդի  
զանգութ կոտորած անմեղ մանեկանցն, եհաս 'ի  
վը նր ցասութի Ա. քանզի ըմբռնեալ 'ի զար-  
հուրելի հիւանդութեն դժնդակ ցաւովք հան-  
դերձ, բարձաւ յաշխարհէ, և գլորեցաւ յան-  
շեջ հուրն դժոխոց 'ի յաւիտեան, առ 'ի հատու-  
ցանել զպարտիս պատժոց համօրէն ամրարշտու-  
թեանցն իւրոց: Յետ մահու նր բաժանեցաւ  
տերութի նր յերիս որդիս նր: Արքեղայոսի ետ  
Օգոստոս զերէաստան, զլամարիա, և զլադովմ.  
Ներովդի Անթիպոսի զԳրալիլեա, և Փիլիպպո-  
սի զԼատուրացւոց, և զՏրաքոնացւոց աշխարհ\*  
\* Եւ 'է զլուճանին Ներովդի, ասէ նրն Անտ-  
թէոս, (թ. 19.) ահա հրեշտակ ֆոն 'է պէսլետն  
երեւեր ք ամսեկայ յէրդիոպտոս, և ասեր. առի՛ աս-  
պմանուիդ և պմայը իւր, և գնու յերէիրն իսրայ-  
ելէ, զի մուռան՝ ու իննորդին զանցն մանիտոր: Եւ-  
նու յարսոցնաւ առ պմանուին, և պմայը նր, և ենին  
յերէիրն իսրայելէ: Եւ իբրև ըստա, ելեւ Արքե-  
ղայոս Աստվածաշնչաց Նըհասպատնի փոխանակ Նե-  
տուածէ հօջն իւրոյ, Երիւաւ Երևաւ անդր. և հրա-  
ման առանաւ 'է պէսլետն, գնու ի խզմանս Գրալե-  
լուացւոց, և Եիւաւ բնավիւցու 'է սուզմանին՝ ու իւ-  
ցք

ՀԵՐ ԱՍՏՎԱԿԵԼ ։ ՎԵՐ ՃՇմԱՐՄԵՋԱւ մարգարեւ  
 ութին, որ ասէր, եթէ ԱՌԵՍԻԱՅՆ ՆԱՊԱԼԵԿԵՑԻ կո-  
 չեսցի ։ յայնմ քաղաքի բնակէր նա ընդ ամե-  
 նանք Կուսին՝ ևս և յառաջ քան զգնալն 'ի  
 ԲՆԵԹՂԵՀԵՄ, ոնդ ասացաք ։ Եւ ահա նորոգ իմն  
 կրթութի առաքինութից Կուսին ։ (ասեմ Կու-  
 սին, զի զնմանէ է սկզբնական դիտաւորութի  
 մեր 'ի խօսել ։) «Բանզի ոչ միայն, ոնդ նկատէ  
 նբն Հովհան ոսկեբերան (՚ի Վատթ ։ ճառ 8.  
 հմք 2.) մեծամեծ նեղութիք վե երկար ճանա-  
 պարհորդութեցս այսոցիկ 'ի վը հասին Վարիա-  
 մու, որ սովոր էր միշտ թագուն կալ 'ի տան իւ-  
 րում, սիրօղ գոլով առանձնութե՛, և միայնու-  
 թեան ։ այլ մանաւանդ հարկադրի խնդրել, ոնդ  
 բանիցս կարգ է ասել, զտեղիս թագստեան, առ  
 չզարթուցանելոյ զցասումն մարդկան, այս է՝  
 ԱՐՔԵՂԱՅՈՍԻ, որ ձեռնամուխ լիներ արդեօք կա-  
 տարել զգործն, որ ոչ յաջողեցաւ Ներովդի  
 հօրն իւրում ։ „Եւ ընդէ՛ր արդեօք, (ասէ ըստ  
 „նմին օրինակի վերոյիշեալ նբն Հովհան ոսկե-  
 նբերան, ) կրէ Վարիամ զայս ամ նեղութիս ։  
 „Օարմանք մեծ են արդարեւ ։ Օի ծնաւ զփըր-  
 ։ կիչն աշխարհի ։ այս է՝ այնր աղագաւ, որոյ վա-  
 ։ պարտ էր ամենեցուն մեծապէս 'ի յարդի ունել  
 ։ զնա, և զամ զհնարաւոր մեծարանս ընծայել  
 ։ նմա ։ Ա որոյ պարտ է մեզ ուսանիլ մի ինչ

„Խոռովիլ, և մի ինչ վհատիլ, եթէ վշ կատաւ  
 „ըեղյ մեր լիով զպարտս մեր, և կամ վշ առաւ  
 „նելցյ մեր զգործ ինչ բարի, յորմէ պարտ էր  
 „մեղ ընդունել զգովեստս և զվարձս, գտանիմք  
 „անկեալ 'ի հալածանս, և 'ի բխւրաւոր վտանգսւ  
 „Քանզի պքանչելահրաշ օրինակս այս սբյ կուն  
 „սին ցուցանէ մեղ առ միսիթարութիւն մեր, եթէ  
 „մեծամեծ նեղութիւնն են իբր անանջատ զուն  
 „գակիցք առաքինութիւն”:

Ա. Նեհանդ կոյսն Անըիամ կոբուստնել Ա. Տոլուկն էտք,  
 և գոգանէ զիտ յետ երեց առուրց :

**Հ.** Կայսր ամ ըստ ամէ ամենանք կշսն Անը-  
 րիամ ընդ փեսային իւրում սբյն Հովսեփայ, և  
 ընդ Յոնի 'ի Կազարեթէ յիշրուսաղէմ, ոչինչ  
 խափան գոլով չորեքօրեայ և առաւել ևս երա-  
 կարութեն ճանապարհին, առ 'ի կատարել զմե-  
 ծահանդէս տօն զատկին: „Ոչ նահանջեաց զնը  
 „զամուսինսն զայնոսիկ, (ասէ սբն (Օգոստինոս  
 „'ի վր համաձայ, աւետար գիրք 2. դլ. 20.)  
 „'ի կատարելոյ զպարտս կրօնի, երկիւղն՝ որով  
 „երկնչեին յլրպեղայոսէ. քանզի յայնչափ  
 „բաղմութեն միջի, որ վշ տօնի զատկին խուռն  
 „ընթանայր յիշրուսաղէմ, յոյժ գիւրին էր  
 „թագուն պահել զանձինս”:

նորու (ցը մանեկանն) ամ, Երիսպասառն, ասե՛ որն  
Պուկաս (ա. 42.) յէլոնել նց (ցը Անրիամու  
և Հովսեփիայ ընդ Հնի) յէրուստողէմ ըստ առլու  
քուլէ տօնին (զատկի), և խառարել պատուրսն  
(տօնին), և գառանալ անդրէն (՚ի տուն իւ  
րեանց), հայ Հնանուին յէրուստողէմ, և ոչ  
գիրացին ծնուղն ենք: Ետրծելին պնմանէ, լեւ ընդ  
առղջիւցոն իցն. Եկին իբրև առուրս մոյ ճանապարհ,  
և ինդրէին պնտ ընդ գրացին և ընդ ծանօթու:  
Եւ իբրև ոչ գոյն, դարյան անդրէն յէրուստո  
ղէմ ինուրել պնտ: Եւ յէս Երիս առուրս գոյն  
պնտ 'ի գոտմարին, զի նստել ընդ վարդապետուն,  
ընէր 'ի նոցանէ, և հարցանելը պնոստ: Օդրմանային  
ամենեւեան՝ որ լսէին 'ի նմանէ՝ ընդ իմաստութին և  
ընդ պատրաստունիս նորու: Եւ իբրև գլւոյն պնտ,  
սշանձացան. և ասե ցնոս հայրն իւր. որդիւնի  
զի՞նչ գործ գործեցեր գուռ ընդ մեզ. ահաւասին  
հայր շո և իս գոտմարիաս, ինդրէաս պլէպ: Իւանքս  
այսոքիկ յայտ առնեն զտրտմութին, որով զա  
ւուրս երիս անընդհատ չարչարեցաւ սիրո ամե-  
նանք կուսին Անրիամու, և սբյն Հովսեփիայ.  
բայց միանգամայն ցուցանեն զհամեստութի և  
զանհամեմատ խոնարհութի նը՝ որ ասացն: «Քան-  
զի ոչ միայն ժուժկալեաց նը Կոյսն հարցանել  
Ածրդւոյն իւրում զպատճառն, որոյ վն մնաց  
յէրուսաղէմ, և թէ զի՞նչ արար յերիս աւուրսն»

յայնոսիկ, այլ և ևս կամելով յայտ առնել զցուն  
 հոգւոյ իւրոյ յառաջ եկեալ 'ի սիրոյ իւրմէ,  
 տայ զանուն սբյն Յովսեփոյ նախ քան զիւրն,  
 թէպէտ և զիտէր նա զտարբերութին, որ եր ը  
 մէջ որպիսութին մայրութին իւրոյ, և ընդ մէջ  
 որպիսութին հայրութին նր՝ զոր ունէր ըստ հա-  
 մարմանն նկատմամբ Վ. Յ. Պ. Ի. Յ. Շ. ի վը այսր ամի  
 'ի տրտութէ անտի, զոր ստացան յայս դիա-  
 ռած Անրիամ և Յովսէփ, տեսանեմբ, զի ներ-  
 քին անձկութիքն և տանջանքն հոգւոյ ևս են  
 կրթութի առաքինութին, վս հոգւոց ընտրելոց,  
 և սիրելեաց առ Վ. Ֆ. :

Հ. Վ. Յ. Մ. վերոգրեալ բանից մօրն՝ այսպէս  
 պատասխանի ետ Յ. Վ. \* Օ. Խ. Խնդրէիւ զէս. ՞ Հ  
 գիտէիւ, ելեւ 'ի պան Հօր իմոյ (ը Լատ. յայն-  
 որք են Հօր իմոյ) պարբ է ինչ ընելլ. Որով կա-  
 մեցաւ Վ. Պ. Փարատել 'ի սրտէ նր զամ թախ-  
 ծութի, ցուցեալ նմա, եթէ գերմարդկային իմն  
 էր պատճառն, որոյ վս հեռացաւ 'ի նմանէ. և  
 միանդամայն հրահանդեալ զամ որդիս, զի թէ-  
 պէտ և պարտին հպատակ լինել ծնողաց իւ-  
 րեանց, 'ի վը այսր ամի պարտին միշտ քան զամ  
 բաղձանս նց նախամեծար համարել զկամն Հօրն,  
 զոր ունին յերկինս: Խակ եթէ 'ի բանսն Յ. Վ.  
 տեսանի եղանակ իմն բացարձակ և իշխանական,  
 որով թուի, եթէ խստիւ իմն վարեցաւ ընդ  
 ամե-

ամենասիրելի մօրն իւրում . մարթ է ասել , եթէ  
կամեցաւ յայսմ առթի մասնակից առնել զնա  
խոնարհութեց իւրոց , տալով նմա զգենուլ զկեր-  
պարան այլոց մարց հասարակաց , որք գործեն  
ըստ մարդկային նկատմանց , թէպէտ և չէր ինչ  
ամենեին 'ի Անրիամ մարդկային նկատումն . և  
կամեցաւ տալ զայս դարման , որում ոչ արդեօք  
Անրիամ , այլ պէտս ունէին այլ մարք . ըստ  
օրինակին ըստ այնմիկ ամենեին , ըստ որոյ կա-  
մեցաւ նա բերել յանձին զկերպարան մեղաւորի ,  
թէպէտ և էր առանց ինչ մեղաց , և անսեղ գո-  
լով կամեցաւ ըմպել զդառն դեղն , զոր հարկ էր  
մեղաւորաց ըմպել : Այս զայսօրինակ խօսեցաւ  
առ ամենասր Կոյսն , ոչ իբրզի 'ի գործս կամ 'ի  
բանս նր գտանէր պակասութի ինչ . այլ զի  
յանձին նր կամեր ցուցանել , թէ քանի կշտամ-  
բութեարժանի են մարքն այնոքիկ , որք առ շա-  
հու , և առ մարմնաւոր սիրելութե կամին նա-  
հանջել զորդիս իւրեանց 'ի նուիրելոյ զանձինս  
իւրեանց ԱՅ : Խոկ Անրիամ , և Հովսեփ , յա-  
ւելու ասել նը աւետարանն , \* ոչ իմացան || զայս  
պատասխանի , զոր ետ նց ՀՅ . այս է թէպէտ  
իմացան քաջայայտ զոր ինչ ասէրն , եթէ ունէր  
հայր ՂԵԾ , զի կանխաւ խոկ լիով մարզեալ էին  
զն խորհրդոյս . այլ ոչ իմացան , եթէ զինչ  
էին այնոքիկ , յորս առաց , եթէ պարտ է նմա

՚նել : Եւ ահա աստանօր առաջի դնի մեղ միւս  
ևս ազնուագոյն օրինակ կատարեալ հպատակու-  
թեան սրբ Առաքելու ամ հրամանաց իմաստութեն  
ԱՇ, անփոյթ եղեալ նր գիտել զոր ոչ հաճեր  
ԱՇ յայտնել նմա . քանզի ոչ տեսանեմք հար-  
ցանել նմա զԱՇորդին իւր՝ առ ՚ի իմանալ զայն  
զոր ոչն գիտեր . ուսուցանելով մեղ զայսօրի-  
նակ, եթէ վսեմագոյն կատարելութին ոչ կայ-  
անայ ՚ի գիտութեն գաղտնեացն երկնաւորաց, այլ  
՚ի խոնարհ հպատակութեն կամացն ԱՇ :

Ա պըտ ամենանը իւսակն ՚ի Ասպարուն մինչեւ ՚ի ժա-  
մանակն, յուրում սիստ ՀՅ ՎՅ սաբովէլ :

ՀՅ : Այսոցիկ այսպէս եղելոյ յերուսաղէմ,  
առէ աւետարանն, էջ ՀՅ ընդ Արիամու և ը  
ՀՅովսեփայ, \* և գնաց ՚ի Ասպարուն, և եր հց  
հնապահութ . և այս է բովանդակն զոր ինչ պատ-  
մեն մեղ աւետարանիչքն զՀՅնէ և զԱրեմայ չ  
միջոց իրբ ութեատան ամաց . ցա մինչեւ ՚ի ժամա-  
նակն, յորում եղեալ ՀՅի ամաց իրբ երեսնից,  
սկիզբն արար քարոզութեն իւրոյ : Ուէ զի՞նչ  
ինչ հրահանգս ետ փրկիչն աշխարհի առ ամ  
մարդիկ, և մասնաւորապէս առ որդիս, սովորին  
հպատակութեն իւրով առ Արիամ և առ ՀՅով-  
սեփ, չեն մեղ կամք աստանօր առաջի դնել,

իբր զի սոքա վերարերին յաւետ ՚ի վարս Հնի  
 ՚Բնի: Հուշ ածցուք միայն ընդ սրբին խեղնար-  
 դոսի, (Ճառ 1. ՚ի վը բանին Ռատա, Եցաւ.) զի  
 եթէ զարմանամք ընդ խոնարհութին Հնի ՚ի  
 կամիլն հպատակիլ կնոջ միում, պարտ է մեզ  
 նոյնօրինակ սքանչանալ և ընդ արժանապատ-  
 ռհութին Անրիամու: „Էճն այն, (Են բանք սի՞յ  
 „վարդապետին,) որում հրեշտակք հպատակին,  
 „որում իշխանութիք և պետութիք հնազանդին,  
 „հպատակ էր Անրիամու. և ոչ միայն Անրի-  
 ու, ամու, այլև Հովսեփիայ ևս՝ պատճառաւ Ան-  
 րիամու: Աքսնչացիք ապա ընդ որ և առաւել  
 „հաճիս յերկուց իրաց աստի, (ասէ նր ար-  
 „բայն,) և ընտրեա զայն՝ որ առաւել հաճոյ է  
 „քեզ ՚ի նպատակ առաւելագոյն հիացման քո.  
 „այս է՝ կամ զբարեգութ հաճութին Արդւոյն,  
 „և կամ զյոյժ գերապանծ արժանապատռութի  
 „մօրն: Արկորին ևս զարմանս բերեն, և Են  
 „սքանչելիք: Է՛յ հնազանդիլն կնոջ միում, է  
 „խոնարհութի, որոյ չիք օրինակ. լինելն կնոջ  
 „միոյ իրը հրամանատար Է՛յ, է արժանապատ-  
 „ռհութի այնչափ գերամբարձ, մինչև ոչ այլ  
 „իմիք հնար է համեմատիլ այնմ: Աթէ ՚ի գո-  
 „վեստս կուսանաց առանձին իմն յիշատակի ար-  
 „տօնութին, զոր ունին, զի \* զնի էլլան գո-  
 „տինն՝ (այս է՝ ՚Բնի,) ուշ և էլլելլոյն է. (Հայտ

„ԺՂ. 4.) աղա զի՞նչ արտօնութիւն, և զի՞նչ  
„գովեստ արժան իցէ Անրիամնւ, որ իրբե մայր  
„երթայ առաջի նր՝“ :

ՀԵՒ : ՚Ի վը այսր ամի՞ ոչինչ անվայել լիցի  
առաջադրութիւն մերում խոկալ զմագուն վարս,  
զոր յանձին երեր ՀՅ ՚ի Աւազարեթ յառաջ քան  
զքարողութիւն իւր . քանզի անտի դիւրին լիցի  
մեզ իմաստասիրել, եթէ որպիսի ինչ եր և  
վարքն ամենասր մօր նր : Տունն՝ յորում բնակեր  
նա առանձինն , եր տուն աղքատ հիւսան ու-  
րումն : Խակ զի՞նչ առներ անդ ՀՅ, բայց եթէ  
գործէր և ինքն զնոյն նունաստ և զաշխատալից  
արհեստ , թագուցանելով ընդ միջոց երեսուն  
ամաց ընդ սովին կերպարանաւ աղքատ արհես-  
տաւորի զանսպառ գանձս համօրէն շնորհաց , և  
ամ իմաստութիւն , որ ՚ի նմա հսնգուցեալ Են :  
Այս յորժամ սկսաւ յետ այնորիկ քարողել զերկ-  
նաւոր վարդապետութիւն իւր , և առնել սքան-  
չելագործութիւն , մանաւանդ ՚ի Աւազարեթ ,  
քաղաքակիցքն նր ըստ մասին յապուշ կրթեալ ,  
և ըստ մասին խնդրելով զպատճառանս չհաւասա-  
լոյ նմա , ասէին ՚ի մէջ իւրեանց . (Անրկ . ղ . 3.)  
\* Ո՞ւստի ե մանուռի հիւսունն (ը Լատ . մանուռի  
հիւսուն) որդին Անդրեմայ : Հյորմէ տեսանի , զի՞  
՚ի գաւառին իւրում ոչ ճանաշէին զնա , բայց  
եթէ ըստ արհեստին զոր վարէր , իրբե զհիւսն :  
\* Վիթ

Արմին իրի յառաջին դարս Եկեղեցւոյ, և առ  
 մեծահամբաւ մատենագիրս երկրորդ դարուն, ովզ  
 է նրն Հուստինոս վկայ (տրամա. լը Տքիփ. Հմբ. 88.) դտանի յիշատակ աշխատութեց ար-  
 հեստին, զոր գործէր ՀՅ: Եւ մեծն նր Ռար-  
 սեղ, որ եղե 'ի չորրորդ դարուն, զայսօրինակ  
 առաջի դնէ մեղ զվարս ՀՅի 'ի Կաղարէթ.  
 (սահմա. միանձնա. գլ. 4.) „Գոլով նր յտ-  
 „ուաջին հասակի անդ իւրում հպատակ ծնողաց  
 „իւրոց, տարաւ լը նս ազգի ազգի մարմնաւոր  
 „աշխատութեց՝ հոգւով խոնարհութեց, և հնա-  
 „զանդութե: Քանզի դոլով նց, թէպէտ և  
 „արդար և բարեպաշտ, այլ աղքատք, և ըստ  
 „իրաց կարեորաց 'ի պէտս պահպանութեց կենաց  
 „չքաւորք, պարապէին հանապազօր, ովզ հա-  
 „ւանական թուի, 'ի մարմնաւոր աշխատութիս,  
 „առ 'ի շահիլ նոքօք զկարեոր պէտս կենաց:  
 „Արդ՝ դոլով ՀՅի հպատակ, ովզ ասեն նր գիրք,  
 „այսպիսի անձնաց, աշխատէր 'ի միասին ընդ նս,  
 „և գործէր, ևն“: Ահա այս է վարքն, զոր իրը  
 զամն երեսուն յանձին բերէ ՀՅ Քա Ուդին  
 Այ մարդացեալ: Օքաղումն նր է հնազանդիլ  
 երկուց ստեղծուածոց իւրոց յաշխատալից գործս  
 մեքենական ինչ արհեստի: Արդ՝ ուր են փառա-  
 սէրքն, և ամբարտաւանիքն, որոց թուի, թէ չեն  
 յս բաւականին մեծաշուք և մեծապատիւ երեսալ

յաշխարհի : Ուր են նոքա , որք համարին չու-  
նել երբէք զպաշտօն ինչ մեծվայելուք , և հա-  
մեմատ կարծեցեալ ընդունակուն իւրեանց :

Յ : Արդ՝ թագուցեալ վարուցն չնի նման  
եղե անտարակոյս և վարքն ամենասր կուսին , որ  
յամ արարածոց միջի քաջ նմանակից եղե  
առաքինութիւն և օրինակաց Ածորդւցն իւրոյ :  
Արդ՝ ամենասր կոյն Անրիամ կայր առանձնա-  
ցեալ յաղքատին տան իւրում , պարապեալ հա-  
ւաստեաւ յընթերցմունս ածախօս պատգամաց ,  
խոկալով զամ զփոքր և զդուղնաքեայ գործո-  
ղութիւն և զքանս որդւցն իւրոյ , զոր ունէր միշտ  
առաջի աչաց . և զմտաւ ածելով զյոյժ գերամ-  
բարձ խորհուրդս կրօնի : Այլ այս չեր ինչ նմա-  
խափան պատաղելոյ 'ի գործո՛ որք սեփական էին  
վիճակի նորին , և խնդրելոյ շահել ընդ նոսին  
զպէտս պարենի : Օզրմէ վկայէ ոչ միայն սրն  
Բարսել , որ ասէ , զորօրինակ տեսաք , թէ Ան-  
րիամ և Հովհեփի գոլով աղքատ՝ պարապէին  
հանապազօք 'ի մարմնաւոր աշխատութիւն , առ 'ի  
շահել նոքօք զկարեոր պէտս կենաց . այլև սրն  
Ներօնիմոս զկնի Տերտուղիանոսի՝ կոչէ զէ՞՛ Պա-  
որդի արհեստագործի ուրուք , և կնոջ միոյ , որ  
աշխատութիւն իւրով շահեր զապրուստ իւր .  
(Թուղթ 1. առ Նեղիոդ . 'ի վերջն .) Առ ե ուրիշ  
ուստի ոշխատուացնէ և կո ինչ շահութիւն : Եւ Ժկու-  
թիւն

զինեայ, որ ծաղկեր ՚ի սկզբան երրորդ դարուն, գիտեմք, զի թշնամիք քրիստոնէական կրօնի, ոչ եղեալ հասու յարդի խոնարհութե՛, ծաղը առնէին զքրիստոնեայս, իբրզի պարծէին լինել հետեւ առն միոյ ծնելոյ յառըտք հօրե՛, ոչ ճանելուն շահեր պարբուստ էր. (Որոդ. գիրք 2. ընդդ. Աելս. յօդ. 28.) Այլ եթէ զայսօրինակ վարքն սըյ կուսին Ածամօր՝ անարդ իմն էր և ծաղրական յաչս կուրացեալ հեթանոսաց, պարտէ այնում լինել առ համօրէն կանայս, և մանաւանդ առ կուսանս, սքանչելի իմն օրինակ, որում պարտին հետեւիլ: Աւսցին ՚ի մեծապատիւ Ածամօրէն ՚ի թագուհւոյն կուսանաց, եթէ ՚ի գերագոյն կատարելութէ չէ պարտ զատանիլ և աշխատութե՛, և պարապմանց առանին գործոց: Աւսցին փոխանակ պարապելոյ յայնպիսի գործոննէ որք տածեն միայն զսնափառութի, և զկանացի ունայնութիս, պարապիլ ՚ի գործս հասարակս, ՚ի պիտանիս, և ՚ի կարեռս, որպիսի է մանելն. զորօրինակ առնէր ամենասբ կոյսն Ամրիամ, և զորօրինակ Հոգին նը ասէ զժրագլուխ կնոջէն՝ առնել. (Առակ. լա. 13. 17. և 19.)

\* Դարեալ տոք և իդու, տըտը հանդելյա ոլըդունիս յետօք էրուծ: ... Անեաց զբանական էր ՚է գործ: ... Օքեան էր յիշ յօդուստ, և զմադունս էր անյանյբայլ պայ ՚ի լըյո: Աստ այսմ նմանակ ցռ.թէ

յութե ամենասր Առւսին՝ արարին յամ ժամանակի բազում կանայք սբք, որոց ծնեալ և աճեցեալ 'ի մէջ հարստութեց, և դիւրութեց, կամ զանձինս զըկեցին յընչից իւրեանց՝ 'ի նպաստ աղքատաց, առ 'ի կեալ աշխատութք իւրեանց. և կամ գէթ կամեցան գործել, առ 'ի զգեցուցանել զ՞ն՝ ՞ յանձինս աղքատաց։ Չայսօրինակ 'ի վերջոյ վարեցան անհամար գապք կուսանաց յամ վիճակէ, որոց կացեալ միայնուք 'ի տունս իւրեանց, և կամ 'ի մենաստանս, արարին զձեռագործ իւրեանց իրրել զի՞ 'ի զլիսաւոր զբաղմանց իւրեանց։

Ե. Հենանք Արյան Երեսոյ ընդ Ե. Տոբրկոյն իւրոյ 'է հոգուանիսն՝ որ 'է կանա, և ընդունէ 'է հմանէ պէսիորիսըն 'է ընոյն 'է գինէ։

Յ. Յետ գտանելոյ զ՞ն՝ ՞ յաճարին, զորմէ վերագոյնդ խօսեցաք, ոչ այլ ինչ պատմէ մեզ աւետարանն ղամենասր Առւսէն, բայց միայն զայս, զի յորժամ սկսաւ զ՞ն զբարողութիւնի իւրեղեալ ամաց իրրե երեսնից, գնաց նա 'ի հարսանիսն՝ որ 'ի կանա. (Հովհ. թ. 1.) Արաւիրեալ էին յայն հարսանիս ընդ Անրիամու զ՞ն, և աշակերտք նր. այս է՝ Պետրոս, Ենդրէաս, Փիլիպպոս, և Ասթանայէլ։ Իշտ մինչեւ էր կա-

տարեալ ճաշոյն, \* 'ի պահութել գիշեառյի, առէ  
 մայլն ցչի՛, Գիշնի ու ունին || : „Կոլով նր, ասէ  
 „սրն Շեռնարդոս (բան 1 + 'ի կիւր + 1 + որ զկնի  
 „ութօր. յայտն.) ողորմած և բարեգութ, կա-  
 „ըեկից եղե պատկառանաց նց: Եւ զի՞նչ այլ  
 „հնար է յառաջ գալ յաղբերէ գթութե, բայց  
 „եթէ գթութի: .... Այս է. զիարդ չէ հնար  
 „գթած լինել Անրիամու, յորոյ արդանտի զա-  
 „միսս ինն եկաց անընդհատ ՀՅ ՎԻ, նա՝ որ  
 „էութ է նոյն ինքն գթութի“: Արդ՝ շարժեալ  
 սրյ կուսին 'ի կարեկցութե աստի իւրմէ, եդ  
 առաջի որդւոյն իւրոյ՝ խոնարհ և խոհական  
 բանիւքն այնոքիւք զկարիսն, զոր ունեին հարսն  
 և փեսայն. որ նոյն էր՝ ուղ թէ ինսդրել 'ի նմանէ  
 յօդնութի ժամանել հրաշխւք իմմ: Եւ ՀՅ պա-  
 տասխանի ետ նմա 'ի բանս յայսոսիկ. \* Օվ կոյ  
 իմ եւ ք' իշն դու, չե է հոսեալ ժամանակ իմ ||:  
 „Օիարդ Տէր, (ասէ աստանօր սրն Շեռնար-  
 „դոս,) հարցանես Անրիամու, զի՞ կայ քո և  
 „նր: Եւ միթէ չիցե՞ս դու օրհնեալ պտուղն  
 „անարատ որովայնի նր: Ո՞ւ նա է, որ յղացաւն  
 „զքեղ, և ծնաւ, առանց ինչ վեասու կուսա-  
 „կան պարկեշտութե իւրոյ. որ տարաւն զքեղ  
 „զամիսս ինն յարդանտի իւրում + յորոյ 'ի ըս-  
 „տեանցն կաթնասուն եղեր, ըստ որում մինչ էիլն  
 „ամաց երկոտասանից՝ իշեր 'ի Կաղաքեթէ յիշ-

„ըուսաղէմ, կալով նմա հպատակ և հնազանդ :  
„Ապա զիարդ ասես այժմ . \* Օչ իոյ էմ և ո՞  
„ի՞ն գո՞ւ : Կայ արդարեւ, (ասէ ոքն,) 'ի բանս  
„յայսոսիկ խորհուրդ ինչ, զոր ամենասբ կոյան  
„Վարիամ քաջ իմացաւ : Եւ եթէ բանքն թուին  
„ը իրաց ինչ ծանր և խիստ, այդ յայն սակս է .  
„զի դիտէր չչա, եթէ ընդ ում խօսէր, և Վա-  
„րիամ ոչ անդիտանայր, եթէ ո՞էր նա՝ որ խօ-  
„սէրն զայն “ :

ԵՅ : Երդ՝ կամեցաւ Տը նախ առաջին ասել,  
ըստ սըյն Գրիգորի պապին մեծի (Թուղթ 42 .  
զիբք 80.) որ յայսմ զշետ երթայ սըյն (Օգոս-  
տինոսի, թէ որովհետեւ խնդրէր անդանօր առ-  
նել զսքանչելիս ինչ, ոչ առնէր նա զայս զօ-  
րութիւ մարդկային բնութեն, զոր առեալ էր  
'ի մօրէն իւրմէ . այլ զօրութիւ ածային բնութեն,  
զոր առեալն էր 'ի ձօրէն իւրմէ յաւիտենակա-  
նէ, որոյ կամացն պարտ էր նմա յամի համա-  
ձայնիլ, առանց ինչ կանխելոյ բնաւ քան զժա-  
մանակն սահմանեալ յածային իմաստութէ նր,  
առ 'ի կատարել զհայցուածս ոյր և իցէ : Այս ոչ  
մերժեաց զաղացանս խնդրուածոց ամենասբ մօրն  
իւրոյ, այլ ասելով, թէ չկ է հասեալ ժամա-  
նակն իւր, եցոյց յապաղել միայն զկատարումն՝  
մինչեւ ցհասանել ժամանակին, զոր կարգեաց  
ձայրն իւր յաւիտենական : Եւ ևս՝ կամեցաւ չչա

• ՞ ՞ պատասխանել ամենանք կուսին Անրիամու  
այնուիկ առերևոյթ խստութը , ոչ առ ՚ի նորայն ,  
այլ ՚ի մեր կրթութի : Այս է՝ կամեցաւ ուսու-  
ցանել հարց և մարց նոցա , որք մասնաւոր իմն  
եղանակաւ նուիրեալ են ՚ի ծառայութի Այ , և  
եկեղեցւոյ , եթէ չէ պարտ նց խառնիլ ՚ի գործա  
պաշտաման նոցա , յանդգնելով ունիլ զիշխա-  
նութի տնօրինելց ըստ հաճոյից իւրեանց , և ոչ  
քաղել զօգուտ , կամ զգովեստ , կամ զյար-  
դութի ՚ի հոգեսոր պարգեաց անտի , զոր ընկա-  
լեալ են որդիք նց ԱՅ : Խակ եթէ գտանիցին  
ոմանք ՚ի հարց և ՚ի մարց սակաւ բարեպարիշտք ,  
և յետնեալք յընտրողութէ , մինչև պահանջել  
նց յորդւոց իւրեանց ինչ ինչ , որք չիցեն պատ-  
շաճ ծառայութեն Այ և եկեղեցւոյ , առ որ  
պարտաւորեալ են . ուսցին նոքա ՚ի բանից Հնի  
Վնի , զոր ասաց առ ամենանք մայրն իւր , եթէ  
ոչ պարտին յայսպիսի պարագայս հայիլ ՚ի նոսա  
իրք ՚ի ծնօղս իւրեանց . և ոչ երբէք նախամեծար  
ընտրել զկամն նց քան դԱՅ : Հուսկ յետոյ կա-  
մեցաւ Հն ուսուցանել մեղ յայս դիպուած , ասէ  
նըն Ինեռնարդոս (քան 2 , ՚ի կիւր . զկնի ութօր .  
յայտ .) „ եթէ յորժամ ճշմարտապէս դառնամք  
„ , առ ԱՅ , հրաժարեալք յաշխարհէ , ոչ պար-  
„ , տիմք կարի իմն փոյթ ունել զգործոց ծնողաց  
„ , մերոց ըստ մարմնոյ , զի մի խափանեսցի կրթուի

„Հոգեղոր զբաղմանց մերոց : « Ա, անդի ցորչափ յաշ-  
 „խարհի եմք , պարտիմք մեք ծնողաց մերոց զամ  
 „զգործս մեր . այլ յորմէ հետէ լքեալ թողաք  
 „զանձինս մեր , ևս առաւել պարտիմք զերծ լի-  
 „նել յամ ժամանակաւոր զբաղմանց նկատմամք  
 „մերձաւորաց մերոց : Ապա վս մեր , և առ ՚ի մեր  
 „կրթութի , (կնքէ զբանս իւր սր վարդապետն , )  
 „պատասխանի ետ չն մօրն իւրում ՚ի բանսն  
 „յայնոսիկ . \* Ոչ իս իմ նո քո՞ ի՞ն դու . և  
 „ոչ թէ տհաճութի ինչ կամի ցուցանել նմա ,  
 „և կամ յանդիմանել զպակասութի ինչ ևս և  
 „զթեթե ՚ի նմա “ :

ՅԵ : « Եւ յիրաւի , (ասէ սր վարդապետն , )  
 „զիարդ հնար իցէ ասել , եթէ անհաճոյ եղև  
 „չնի խնդրուածն զոր հայցեաց ՚ի նմանէ ամե-  
 „նաբաղցր մայրն նը . որովհետև նց , որք կա-  
 „տարեցին զամ , զոր ինչ պատուիրեաց նց մայրն  
 „առնել , չն վաղվաղակի և առանց ինչ դժուա-  
 „րութե շնորհեաց զայն ամ , զոր խնդրեաց Ան-  
 „րիամ ” : « Ա, անդի ամէներանեալ կյսն , որ քաջ  
 ծանեաւ զիսորհրդաւոր նշանակութի բանիցն , զոր  
 ասաց նմա Ածորդին , և ճանաչէր զոր ինչ առ-  
 նելոց էր նա , ոչ կորուսեալ ինչ ՚ի վստահու-  
 թէն՝ զոր ունէր ՚ի բարութի և ՚ի կարողութի  
 նը , ասաց յայնոսիկ՝ ոլլք սպասաւորէինն . \* Այ-  
 սինչ ասիցէ յէկ , աբասօկ’ . (Են բանք աւետա-

բանին .) Են անդ Շահիոյի , իշեայք զվաց՝ ըստ ալս-  
բութե Նըեկա . գանեն մի մի 'ի նոցանե Խարս Եր-  
իսուս իտ Երկու : Ասե ցնա Քա . ըեւ պլախյուտ  
ջուղ . Ե ըեւ պնա մինչև 'ի վեր : Եւ ասե ցնա .  
արդ՝ առեւ , Ե ըեւեւ առճարապետիս , (ց Նմա՝  
որ գահազլուխ էր կոչնոցն .) Ե նուս Բերկու : Եւ  
իւրիւ ճաշակեաց առճարապետն պլուրն գինի Եղիսաւ  
և ոչ գիտեր՝ սասպի իցե . Ըայց սպասարկուն գին-  
ակին՝ որս արին պլուրն . Խօսի ընդ ժեսային առ-  
ճարապետն , Ե ասե . ու Խարդ պանոյշ գինին յա-  
ռաջադայն պաշտե . Ե յուրժամ արբենան՝ յայնքամ  
պատեն . գու պահեցեր պանոյշ գինիդ մինչև  
ցայծ : Օյս արար սիկլոն նշանաց Քա 'ի կանոն  
Գալութացաց . Ե յայտնեաց պէտու իւր . Ե հա-  
տագացին 'ի հա աշակելութեն ներ : Այսինքն է . այս  
եղե առաջին հրաշքն , զոր Յու Վա գործեաց  
յայտնապէս , ցուցեալ եթէ ինքն էր՝ որ գոր-  
ծէրն , առ 'ի հաստատել զքարողութիւն իւր , զոր  
յայնժամ սկիզբն արար : Եւ սոյն այս հրաշա-  
գործութիւն առաւել ևս հաստատեաց զհաւատս  
աշակերտաց իւրոց 'ի նա իրբե ՚ի ճշմարիտ  
Անսիա :

ՅՌ : Եւ արդ՝ յուշ ածցուք մեք 'ի պատիւ  
ամէներանեալ կուսին , և 'ի կրթութիւն մեր , զի  
Յու կամեցաւ գործել զայս առաջին սքանչելիս լը  
ինդրոյ ամենանք մօրն իւրոյ , առ 'ի ուսուցանել

Հաւատացելոց շը ամ ապագայ դարս, եթէ որով  
 վստահութիւն պարտին դիմել առ մայրս այս ողոր-  
 մութե, առ ՚ի ընդունել ԱՅՆ միջնորդութիւնը  
 բարեխօսութենք նր զշնորհս, որոց պէտս ունիցին.  
 " արդեօք առ ՚ի զկայ առնուլ անդ ՚ի նր Կոյսն  
 երախտագիտութենց, որում պարտ է հանապազ  
 վերաբերիլ առ ԱՅՆ, որ է պատճառ ամ շնորհաց,  
 զոր ընդունին մարդիկ յածային առատաձեռո-  
 նութենք նր. այլ առ ՚ի հայիլ ՚ի նա իբրև ՚ի միջ-  
 նորդ, յորոյ ձեռն հասարակօրէն հաճի ԱՅՆ տալ  
 զբարերարութիւն իւր մարդկան: Օք եթէ առ ՚ի  
 ընդունել դժամանակաւոր շնորհս, որպիսի էր  
 այն, զորմէ յայսմ տեղւոջ խօսի աւետարանն,  
 ունիմք օգտիւ դիմել յամենազօր բարեխօսութիւն  
 Անրիամու. ապա առաւելագոյն ևս վստահութիւնը  
 պարտիմք դիմել առ նա, առ ՚ի ընդունել զշնորհս  
 ջերմեռանդութենք, և եռանդեան ածային սիրոյ,  
 որոյ էր օրինակ գինին այն գերազանց, յոր ետ  
 փոխել նր Կոյսն ԱՅՆորդւոյն իւրում զջուրն զայն  
 ցուրտ և զանհամ: „ Հարսանիք մեր սրդէն  
 „ եղեն, ասէ նբն Ինեռնարդոս (բան 2. ՚ի կիւր.  
 „ 1. զկնի ութօր. յայտ.) քանզի հոգիք մեր  
 „ հարսնացան Վանի. այժմ կամք ՚ի ճաշել, ի՞ր  
 „ զի ընթրիքն պատրաստին ՚ի յափտենական  
 „ սրահին արքայութենք: Վառցէ պակասեսցի՞ ան-  
 „ դէն զինի: Ոչ երբէք բնաւ. նա թէ՝ սրբես-

„ցուք ՚ի պարարտութէ տան Տէն, և լցցուք  
 ։ զծարաւ մեր յորդահոս կոհակօք անպատմելի  
 ։ հաճութեց ։ . . . Ա.ՅԼ ՚ի ստորին վայրի աստ  
 ։ պակասի երբեմն զինին, այս է՛ շնորհքն ջերմ  
 ։ եռանդութեց, և եռանդն ածային սիրոյ ։ Ո՞վ  
 ։ թէ քանի անդամ պարտ է մեղ աղաչել զմե  
 ։ ծագութ մայրն մեր, ծանուցանել բարեգութ  
 ։ որդւոյն, եթէ ոչ ունիմք զինի ։ Ա.ՅԼ մի ինչ  
 ։ երկմտեսցուք ։ զի եթէ խնդրեսցուք ՚ի նմանէ  
 ։ ոնկ պարտն է, ոչ դադարի լնուլ զպէտս մեր  
 ։ վսղի ողորմած է նա, մանաւանդ թէ մայր  
 ։ ողորմութեց ։ Քանդի եթէ կարեկից եղեւ պատ  
 ։ կառանաց նց, յորոց հրաւիրեցաւն, քանի առ  
 ։ ուսւել կարեկից լիցի մեղ՝ ՚ի կարդալ մեր առ  
 ։ նա ։ Ապա դիմեսցուք վատահութը մեծաւ առ  
 ։ Ածամայրն, առ ՚ի ընդունել զշնորհս, որոց պէտս  
 ունիմք ։ բայց միանդամայն ՚ի գործ դիցուք զմիջ  
 նորդս, զորս ուսուցանէ մեղ լինել յոյժ գոր  
 ծունեայս առ լսելի լինելոյ Ճ.Ճորդւոյն իւրմէ,  
 այս է՛ առանել զայ զայ ինչ ասէ ԲԿ ՚ի նը առեւ  
 տարանին իւրում, և մի կասիլ ՚ի խնդրելոյ, ևս  
 և յորժամ թուի, թէ ոչ լսէ նա աղաչանաց  
 մերոց ։ զորինակ և այնուիկ առերեւոյթ մերժու  
 թութիւն ոչ վհատեցաւ նը կոյսն ընդունել  
 զշնորհսն զոր խնդրէք ։

Ամենահայտնի կոյսն հասպատակ պէտական լիւ ՚ի ռու-  
պարան կլավունունում, ՚ի ժամանակի քաղաքականութեա-  
համար ՀՅ ՚Բ.:

՚Ի քաղաքէն կանայ եկն ամենասը Կոյսն  
ընդ Եծորդւոյն իւրոյ ՚ի քաղաքն կափառնառւմ:  
Եստանօր հաճեցաւ ՀՅ ՚Բ. հաստատել զշա-  
սարակ բնակութիւն իւր ընդ ժամանակս քարո-  
զութեա իւրոյ. թէպէտ արար նա զայս՝ ոչ այն-  
չափ վա անձին իւրոյ, ողջ յուշ առնեւ սրն Հովլ-  
հան ոսկերերան (՚ի Հովլ. ճառ 22.) որչոփի  
վա ամենասը մօրն իւրոյ, ողջզի ունիցի նա զտեղի  
ինչ հաստատուն, և մի երթիցէ զշետ նր՝ ուր  
և գնացէ: Եւ արդարեւ ՚ի մէջ բարեպաշտ  
կանանցն յիշատակելոց յաւետարանին, ողք եր-  
թային զշետ ՚Բ. ընդ ժամանակս քարոզութե-  
նի, և ընչլոք իւրեանց պաշտէին զիաս յիրս կա-  
րեւորս ՚ի պէտս պահպանութեա կենաց, ոչ գաս-  
նի երբէք անունանեալ ամենասը մայրն նի: Շնդ  
որ պարտիմք շինեալ մտօք սքանչանալ՝ եթէ ընդ  
որինակն, զոր ՀՅ ՚Բ. կամեցաւ թողուլ պաշ-  
տօնէից իւրոց, հրաժարելոյ ՚ի մարմնոյ և յարե-  
նէ, որով պարտ է նց կատարել զպաշտօն իւ-  
րեանց. և եթէ ընդ անհամեմատ խոնարհութիւ-  
ուն կուսին, որոյ կացեալ առանձինն ՚ի կափառ-  
նառւմ, խորշէր ՚ի գովութեա և ՚ի փառարա-

նուեց, որը վերածէին առ նա յայնչափ սքանչելահրաշ և յածային գործոց, զորս 'ի ժամանակի քարոզութեն առնէր որդին իւր հայ: Այսպատճեթ, կամ երկիցս 'ի ժամանակի աստ քարոզութեն գտանի յիշատակեալ Անրիամ 'ի նը աւետարանին. այս է՝ յորժամ մտեալ հայի 'ի տուռ մի 'ի կափառնառում, ժողովեցաւ այնչափ խուռն բազմութի մարդկան, մինչդի հաց ևս ոչ ժամանել ուտել հայի և աշակերտաց նր: Արդ՝ իրրե լու եղեւ, եթէ հայ առ տկարութեն նուազեալ էր. ամենասր մայրն նր Անրիամ, և եղբարիք նր, այս է՝ աղդականքն ընթացան առնուլ զնա, և հանել 'ի տանէ անտի, ուր խուռն բազմութին նեղէր զնա: Այլ ոչ կարացեալ նց վե ամրոխին մտանել 'ի ներքս, ծանուցին նմա, եթէ կան արտաքոյ, և խնդրեն խօսել ընդ նմա: Պատասխանի ետ հայ նմա՝ որ ծանուցանէրն, (Անտթ. ժք. 43.) \* Ո՞վ է իմ մայր, իմ ո՞վ են իմ եղբարս: Եւ յիշեալ զիշտն իւր յաշուիւրդան, առնե. ահա մայր իմ, և եղբարս իմ. զի որ առնիցն զիամ Հօրն ինյ՝ որ յելլինան է, նա է իմ եղբայր, և քայր, և մայր ||:

յէ: Եւ աստանօր դարձեալ թուի, թէ կամեցաւ հայ Պատասխան իւր հեցուցանել զամենասր մայրն իւր, ցուցեալ թէ ոչ ծանաչէ զնա: Այլ մեքաւի կամեցաւ նա յայս դիպուած, ոոկ և յայլ դիպա-

ղիպունածս, միջնորդութիւնը խրատել զմեղ. վայ  
 ասէ սրբն Ամբրոսիոս. (՚ի Պուկ. գիրք 6. հմբ  
 36. և 37.) „Հօրինակ մեր ցուցանէ նա չձաւ-  
 նաչել զմայր իւր, և զազգականս իւր. քանդի  
 „կամի նա լինել առաջինն ՚ի կատարել դործով  
 „զայն, զոր ունէր հրամայել այլոց. այս է՛ թէ  
 „որ ոչ թողցէ զհայր իւր, և զմայր իւր, ոչ է՛  
 „նմա արժանի: Ամին իրի ոչ զլանայ մեծարել  
 „զմայրական գութն. այլ կամի ծանուցանել,  
 „եթէ քան զամ մերձաւորութիւն և քան զսէր  
 „մարմնաւոր պարտ է նախամեծար լնտրել Ա՞ծ,  
 „և զկատարումն սր կամաց նի. և թէ կապանքն  
 „հոգեւոր պնդեն առաւել քան զկապանս մարմ-  
 „նոյ“: Օոր ըստ նմին օրինակի նշանակէ և սրն  
 (Օգոստինոս, (թուղթ 243. հմբ 9.) որ յուշ  
 առնէ, եթէ յորժամ աղդ եղեւ ՚Յնի վս մօրն  
 և աղգականաց նի, մինչդեռ զբաղեալ էր ՚ի  
 քարոզութիւն բանին Ա.Յ, որ էր գործ ինչ բոլո-  
 րովին երկնաւոր, եցոյց չձանաչել ոչ զմայրն,  
 և ոչ զազգականս. առ ՚ի ուսուցանել ամենե-  
 ցուն՝ արհամարհել զսոսկ մարդկային սէր, և մի  
 վս նոցին յետո կասիլ երբէք ՚ի կատարելոյ զայն  
 զոր Ա՞ծ հրամայէ: Եր ոչ իսկ ասելով նի զայս,  
 ՚ի բաց առնու զազգակցութիւն, զոր ունէր ընդ  
 ամենասր կուսին մօրն իւրոյ. քանզի յաւելլովն  
 ՚ի վը, եթէ աղգակից էին նմ նիք, որք առնէին  
 զկամն

զկամն և օրն իւրոյ երկնաւորի, փակէր անտարակոյս 'ի թիւ նց և զամենանք մայրն իւր, որ գոլով լի շնորհօք, և և ոգւռվ սրվ 'ի վեր քան զայլ ամ արարածս, էր միշտ առաւել զգուշաւոր քան զամենեսետն, և առաւել փութաջան 'ի կատարել անթերի զամ կամն Ա.Յ, վեյ և շայսմ մասին առաւել քան զայլս ամենեսին էր անձուկ ազգական նը :

ՅԵ : Ոչ յոյժ հեռի է 'ի սմանէ իմաստ բանիցն այնոցիկ, զոր ՅԵ ասաց 'ի սոյն, կամ 'ի սմին նման դիպուածի : \* Եւ էղն Թնչուես խոսել պայս, ասէ նըն Պուկաս (ժա. 27.) յայն էբարյ ին մը 'ի ժողովրդենէ անուին, և ասէ . էբանի' որովայնին 'որ իրեացն պշեկ, և սպետնցն 'որ պիեցուցին պշեկ : Եւ նա ասէ . նա էբանի այնոցին է, որ լուն պէտին Ա.Յ, և առանեն : Օայս պատասխանի տալով ոչ կամեցաւ փրկիչն ասել, թէ չէ երանի ամենանք մօրն իւրում վս լինելոյն ընտրեալ յայսպիսի մեծ արժանապատութիւնի . այլ կամեցաւ ևեթ ծանուցանել, թէ առաւել երանի է նց, որք հաւատան բանիցն Ա.Յ, և հաւատարմութիւն դնեն զայն 'ի գործ . քանզի առանց սորա և ոչ իսկ ամէնօրհնեալ կուսին օգտէր լինելն մայր Արդւոյն Ա.Յ մարդացելոյ : Ահա այս է մեկնութիւն, որով զբանս զայսոսիկ մեկնեն առհասսղակ նը հարք . որոց վս շատ լիցի յառաջ

բերել զբանս սկըյն Օգոստինոսի : « Յօրժամ  
 „ասաց Ք.ս , ասէ նր վարդապետն ՚ի Յովէ .  
 „Ճառ 10. հմք 3.) \* նո Երանէ այնոցին է , ո՞՛  
 „ընէն զբանն Այ , և տանէն || , կամեցաւ ասել .  
 „ինքն իսկ մայրն իմ , որում դու երանի տաս ,  
 „վս այսորիկ երանելի է , զի առնէ զբանն Այ .  
 „ոչ միայն զի բանն այն էառ ՚ի նմա զմարմին ,  
 „և բնակեաց ՚ի մեղ , այլև զի արար նա , այս է՝  
 „հաւատաց , ՚ի գործ եղ , և սիրեաց հաւատար .  
 „մուբ զբանս զայս Ք.անզի , (ասէ այլուր նոյն  
 „նր վարդապետն , ՚ի վը սրբ . կուս . գլ . 3.)  
 „որպիսութին մայրութե ոչինչ օգտեր Անրի .  
 „ամու , եթէ չեր նր վիճակեալ առաւել ևս  
 „երջանիկ վիճակի կրելց ԸԲ.ս ՚ի սրտի , այս է՝  
 „ընդգրկելով զհաւատս նր , և բերելով յան -  
 „ձին զվարս՝ ըստ բոլորին համաձայն սկզբանց այնր  
 „հաւատոյ “ : Ապա երանի և մեղ , եթէ ոչ  
 կարելով լինել ՚ի վիճակին , զոր վայելէ ամե-  
 նանր կոյսն Անրիամ , ՚ի գոյն ընտրեալ առ ՚ի  
 ծնանիլ ՚ի ժամանակի զմարդացեալ Բանն յա-  
 ւիտենական , որով և արդիւնաւորեցաւ կոչիլ  
 երանելի ընդ ամ դարս . փոյթ յանձին կալցուք  
 որչափ ինչ հար է մեղ նմանիլ հաւատոց նր .  
 ամենակատար հնազանդութե նր , խորին խոնար-  
 հութե նր , և հաստատուն և եռանդադին սիրով  
 նր որ առ Անդորդին իւր :

Ամենահին կոյսն էայ տու սպա ևառչեն ՚ի Վասդանուս:

ՅՇ: Ամեներանեալ Կոյսն, զորմէ՝ ըստ վերադոյն  
նշանակելոցս՝ չիք ինչ զրեալ յաւետարանին,  
Եթէ երթայր ղջետ Ածորդոյն իւրոյ, յոր-  
ժամ մեծահրաշ սքանչելագործութեք իւրովք  
ձգէր զկնի զբազմութի, զհիացումն, և զգովուի  
ժողովրդեանն. ահա գտանի առաջիկայ, յորժամ  
նոյն ինքն որդին իւր եղեալ առակ նշաւակի  
մարդկան, արհամարհութի ժողովրդեան, լի  
կասլուտակութե հարուածոց և վիրաց, բոլորու-  
մին ծածկեալ արեամիւ յոտից մինչև ցգլուխ,  
փշովք պսակեալ, նախատանօք լցեալ, մերկ և  
զուրկ ՚ի հանդերձից, կախի իբրև զչարագործ ոք  
՚ի մէջ երկուց աւաղակաց զվատահամբաւ փայ-  
տէն խաչի: \* Կայր տու ևառչեն ՀՅՇի Տայրն նորու,,  
ասէ նբն ՀՅՇաննէս աւետարանիչ. (ԺՂ. 25:)  
Հյորժամ ամ աշակերտքն իւր՝ բաց ՚ի ՀՅՇան-  
նէ՝ թողին զնա, յորժամ զլուխն առաքելոց իւ-  
րոց նբն Պետրոս ուրացաւ զնա, Անրիամ կայր  
առ ոտս խաչին, և կայր քաջասրտութե և հա-  
ւատով, և հայէր յայն տեսարան, ոչ ըստ որում  
երեւէրն աշխարհի՝ խայտառակ, և զարհուրա-  
տեսիլ. այլ ըստ որում երն յաչս Ա.Յ, իբրև  
յամենամեծ գործ արդարութե, միանդամայն և  
ողորմութենն Ա.Յ: „ Կայր, ասէ նբն Ամրրոսիոս,

“ (՚ի

„ (՚ի ՚Վուկ . գիրք 10 . հմբ 132 . և ՚ի վլր սահ-  
 „ մա . կուս . դլ . 7 . հմբ 49 .) ամենանը կոյսն  
 „ Անրիամ առաջի խաչին այնունիկ հաստատութեա-  
 „ որ անկ էր մօրն ՚Քնի . և աչօք գթութե հայէր  
 „ ՚ի վէրս որդւոյն իւրոյ , սպասելով ոչ արդեօք  
 „ մահուան այնը գրաւոյ սիրոյն իւրոյ , այլ փըր-  
 „ կութե աշխարհի , և աղատութե ազգի մարդ-  
 „ կան , զոր քաջ գիտէր նա , եթէ պարտ էր  
 „ կատարիլ մահուամբն այնունիկ : Կախեալ էր  
 „ որդին զխաչէն , և մայրն կայր յանդիման հա-  
 „ լածացն . տուեալ և յայսմ առ համօրէն մարս  
 „ զօրինակ պարտուց մայրական սիրոյ առ որդիս ,  
 „ այս է՝ յանդիման լինել , և դնել ղանձինս իւ-  
 „ րեանց ՚ի վտանգս նց “ :

ՅԷ : ԵԱԼ այս անյաղթելի հաստատութի  
 սիյ կուսին , և այս կենդանի հաւատք նր ոչինչ  
 արգելոյր զնա առնուլ զփորձ զառնակսկիծ ցաւոց  
 վա մահուան ամենասիրելի որդւոյն իւրոյ . մինչեւ  
 ՚ի ժամանակի անդ զլսաւորաբար կատարեցաւ  
 մարդարէութին , զոր մարդարէացաւ վա նր սրն  
 Ախմէովն , թէ \* և ընդ ու իսկ անյն անցյակ սուր ||  
 „ ՚Քանզի թէպէտ և ճշմարիտ է , ասէ սրն  
 „ Շեռնարդոս (բան ՚ի կիր . յութօր . վերափ . )  
 „ թէ ամենանը կոյսն Անրիամ գիտէր անտարա-  
 „ կոյս , եթէ պարտ էր որդւոյն իւրոյ մեռանիլ .  
 „ և ամենեին հաստատապէս յուսայր , եթէ վաշ-

„վաղակի յարիցէ. այլ 'ի վը այնր ամի անհնար  
 „եր նմա ոչ զգալ վս խաչելութե՞ն նր զբաղմակու-  
 „կիծ ցաւ սրտի. զի եթէ Քս վս իւրոյ ան-  
 „սահման սիրոյն, որոյ ոչ եղեւ, և ոչ կարէ եր-  
 „բէք լինել սէր նման, մեռաւ մարմնով. Ո՞ւ-  
 „րիամ, որոյ սէրն յետ սիրոյ Ածորդւոյն իւրոյ  
 „եղեւ մեծաղոյն քան զամ սէր, մեռաւ ընդ նմա-  
 „սրտին և հոգւով վս սաստկութե՞ն ցաւոցն՝ զոր  
 „զգաց : Քանդի և չէր իսկ հնար հարուածոցն  
 „և խոցուածոց վիրաւորել զմարմին որդւոյն,  
 „Եթէ չէին նախ անցեալ ընդ անձն Արիամու-  
 „Եւ զիարդ հնար եր սիրապատար սրտին Ո՞ւ-  
 „րիամու չխոցիլ իբր սայրասուր իմն սըով, տե-  
 „սեալ զանագորուն չարչարանսն, զոր յաւետ  
 „դժնէատեսակ տանջանօք, յաւետ անարժան և  
 „քստմնելի հայհոյութէք, յաւետ վատահամ-  
 „բաւ և թշնամոնաղիր արհամարհանօք հասու-  
 „ցանէր բազմութի ամբարշտացն՝ ամենեին ան-  
 „մեղ որդւոյ իւրում” : Ո՞հ արդարեւ արժան էր  
 նմա ասել լը սըյն Պաւթի . (Ապղ. կը. 12.)  
 \* “Ետիսունինս նուսուդուց ուց անիտն 'ի գլուխ ի՞ւ :  
 „Ա նյ մարթ է մեղ, (ասէ կնքելով զբանս իւր  
 „նրն Բեռնարդոս, ) իրաւամբ կուել զոր կոյսն  
 „առաւել քան զմարտիրոս, քանդի սէրն, որով  
 „վշտակից եղեւ նա տանջանաց և մահու Ածորդ-  
 ւոյն իւրոյ, պատմառեաց 'ի նմա զառաւելա-

„գոյն ցաւս, զոր ոչ պատճառէին արդեօք տան-  
,,ջանքն, եթէ տանջէր նոքօք ՚ի մարմնի իւ-  
,,բում“:

Պ: Իսկ Յօի տեսեալ ՚ի խաչէն զմայրն  
իւր, և զաշակերտն սիրելի, ֆր զօքն Յովհան-  
նէս, ասէ ցմայրն իւր. \* Ակն դու՝ ահա որո՞ւ  
քո ||. այս է՛ նա, որ յայսմշետէ արասցէ քեզ  
փոխանակ իմ, սպասաւորելով քեզ, և պատ-  
ուելով զքեզ իրու որդի: Ապա ասէ ցաշա-  
կերտն. \* Ահա մայլ քո ||. այս է՛ նա, որում  
պարտիս դու զսէր, զխնամն, և զպատիւ, զոր  
պարտի որդի ոք առ մայրն: Այս եղեւ, ասէ նըն  
Ամբրոսիոս, կտակն, զոր արար Յօ կախեալ  
զխաչէն՝ յառաջ քան զաւանդելն զչոգին առ  
այր: Յանձն արար զմայր իւր աշակերտին այն-  
միկ, որ գոլով կոյս՝ արժանի էր առաւել քան  
զայլս լինել պահապան մօրն կուսի: „Եւ յայտ  
,,դիպուած եցոյց միանգամայն (ասէ վերոյիշեալ  
,,նըն Ամբրոսիոս) վարդապետն մեծ համօրէն  
,,առաքինութեց, եթէ զորավիսի խնամն պարտին  
,,տանել որդիք՝ յինչ վիճակի և գտցին՝ ծնողաց  
,,իւրեանց. քանզի նա ՚ի ժամու մահուանն եցոյց  
,,զիսյթ իւր՝ որ զմօրէն. և կամեցաւ հոգալ նմա  
,,զոք, որ խնամակալ և պահապան լիցի անձին  
,,նո՞ւ:

„Նորա (1) : Բայց արդ, ասէ նրն Բեռնարդոս  
 „(բան ՚ի կիւր, յութօր, վերափ.) զիա՞րդ ովլ  
 „Լոյսդ մեծ, չեղեն բանքն այն որդւոյ քո նման  
 „սրոյ, որ եանց ընդ սիրտ քո, և եհաս մինչև  
 „ցորոշումն ոգւոյ և շնչոյ : \* Այն դու, ասէ Յան,  
 „ահա ո՞չո՞չ ժո || : Ո՞վ որպիսի փոխանակութիւն է  
 „այս : Տուեալ լինի Յովհաննէս փոխանակ Յանի,  
 „ծառայն փոխանակ ան, աշակերտն փոխանակ  
 „վարդապետին, որդին Օերեթեայ կարդի փո-  
 „խանակ Որդւոյն Այ, և սոսկ մարդ ոք փոխա-  
 „նակ ճշմարտին Այ : Օիա՞րդ ՚ի լսել քո զբանս  
 „զայս՝ ոչ կարէր անցանել իբրև զսուր ընդ գո-  
 „րովագութ սիրտ քո, որովհետեւ սոսկ յիշա-  
 „տակութիւնը պատառէ զսիրտս մեր, որք խիստ  
 „և կարծր են իբրև զերկաթ և իբրև զերկանա-  
 „քար “ : Եւ ոչ խակ յաւանդելն Յանի զհոգի իւր  
 „՚ի խաչին՝ կատարեցաւ մարտիրոսութիւնն ամե-  
 „նանք մօրն իւրոյ : Ետես նա զցասումն չարա-  
 „զգած դահճացն, որք և ոչ խակ մահուամբ նը  
 „յագեցան. նմին իրի մի ոմն ՚ի նոցանէ խոցեաց

տիւ

(1) Ասուի իմաստանիրէն աբ հայս, Ելլե առն  
 Յովհետ արդէն իսկ ժոխեալ եր յաշխարհէն.  
 առնալ Ելլե իւնուանէ եր նո, ոչ արդէօք Յան  
 յանյն առնելը աբյո Յովհետինու պամինոնը  
 իրան Անրիամ :

տիդաւ զկողս նր, յորմէ ել վաղվաղակի արիւն  
 և ջուր: „Եւ ըստ այսմ օրինակի, (յաւելու  
 „ասել սբն Ինոնարդոս,) յետ որոյ Հան քո,  
 „(քո մասնաւորաբար, թէպէտ և ամենեցուն  
 „իցէ,) աւանդեաց զողին, տէգն այն անագո-  
 „րուն (որ ոչ խնայեաց 'ի նա՝ ևս և զկնի մա-  
 „հուն, թէպէտ և ոչ ևս կարէր վեասել նմա, )  
 „ոչ խոցեաց արդարե զողի նր, բանալով  
 „զկողսն, այլ էանց այս՝ ընդ անձն, կամ ընդ  
 „հողի քո: Վանզի հողի նր ոչ ևս էր միաւո-  
 „րեալ ընդ մարմնոյ իւրում, մահուամբ գոլով  
 „անջատեալ. այլ հողի քո ոչինչ իւկը կարէր  
 „անջատիլ 'ի նմանէ“:

Պատմութեան վեցերուն այսոցի պատմութեան վեցերուն կատարի յեկեղեցիս ինչ, և մասնաւորապէս յեկեղեցւոն ռուվմայ, և յեկեղեցիս որ 'ի նահանգս տէրութեն եկեղեցւոյ, ըս վճռոյ բարեյիշատակ պապին Իննեղիկտոսի երեքտասաներորդի, յամին 1725. մասնաւոր տօն յուրաթուն՝ որ 'ի չարչարանաց եօթնեկին, (դ 'ի վեցերորդ ուրբաթուն քառամնորդաց պահոց:) Արդ՝ պարտ է ամ քրիստոնէի ոչ միայն յայսմ տօնի, այլև յամ ժամանակս անդադար աղաւել զամենանք կոյսն, առ 'ի ընդունել զմասնակցուի այնր հաւատոյ, սիրոյ, և երախտագիտութեն առ չարչարանս և առ մահն Հանի Վանի, որք եղեն 'ի  
 L 2  
 Կոյն

Նոյն ինքն սբ Առյուն, յորժամ գտաւ առաջիկայ, և ետես աչօք իւրովք զկատարումն մեծի փրկա-  
գործութեն ազգի մարդկան։ Եւ ոչ վա այսր  
միայն, այլև վա այլ զինչ և իցէ շնորհաց ղի-  
մեսցէ ամ ոք վստահութեք բազմաւ առ ամենասր  
Այսն։ Վազի յանձն սիրելի աշակերտին ետ Հա-  
Յամ զամ հաւատացեալս որդիս Անրիամու։  
Ապա ամ ոք 'ի պէտս իւր՝ 'ի հոգեորս, և 'ի  
մարմնաւորս, սիրով և որդիական համարձակու-  
թեամբ մատիցէ առ նա, և ասասցէ, ուղ կարօղ  
էր ասել նմա սբն Հովհաննէս։ Անյը՝ ահա  
"բո՞լի՞ ժո՞"

Ամենասր իոյնն Անրիամ 'ի վերհագանե ընդունէ  
պահէն ոճ յաւուր Պիեհովէլուովէն։

ԴՅ: Ետ կալոյ ամենասր Կուսին առ ոտս  
խաչին 'ի Գրողգոթա, ոչ այլ ինչ գտանեմք  
գրեալ զնմանէ յաւետարանին. թէպէտ և թուի,  
թէ չէ արժան արկանել ընդ տարակուսանօք  
զայն, թէ Համ Կամ յարութեն իւրոյ երկե-  
ցաւ բազում անգամ, և գուցէ յառաջ քան  
զամենեսեան, ամենասիրելի մօրն իւրում։ ոչ  
արդեօք առ 'ի ապահովացուցանել զնա 'ի վերայ  
հրաշափառ յարութեն իւրոյ, զորմէ չէր նր եր-  
բէք յերկբայս անկեալ. այլ առ 'ի միսիթարել  
զնա,

զնա, և ներկայութեք փառաւորեալ մարմնոյ իւրոյ լնուլ զսիրտ նոր անբաւ խնդութեք համեմատեալ դառնակսկիծ ցաւոցն, զորոյ առեալ էր զփորձ 'ի տեսանելն զնա մեռանիլ կախեալ զփայտէ խաչին։ Օյս ևեթ ունիմք 'ի գործս առաքելոց, զի իբրև դարձան աշակերտքն 'ի լեռնէն ձիթենեաց, ուր տեսին զհրաշափառ համբարձումն Քնի յերկինս, իբրև դարձան՝ ասեմ՝ յերուսաղեմ, սպասել անդէն զալստեան Հոգւոյն սից, ըստ խոստմանն Քնի Հնի զոր խոստացաւ նց, \* Ելն 'ի վերնադունն՝ ուր զանոն իսկ ելն, (ց 'ի սենեակ մի մեծ 'ի վերնագոյն կողմն տանն,) ուր էին Պետքոս, և Հովհաննէս, և այլքն ամենեքեան, որը անդը յիշատակին. առա ամենեւ ժետն ելն հանապապրետետը միաբան յաղօնա հանու էլլյ կանամբ, և Անդրեմաս բարդն Հնի, և Եղի բարդն հորդ ։ (Գործ. ա. 13. 14.) այս է ընդ ազգականաց, և ընդ մերձաւորաց նոր։ Աբդ կայր ամենօրհնեալ կոյսն 'ի վերնատան անդ, աղօթելով ընդ այլոց. և յիշատակի աստանօր, ուղ նկատէ նբն Շեռնարդոս, 'ի յետին տեղւոջ, իբրև խոնարհագոյն քան զամենեսեան, և նմին իրի յիրաւի շնորհօք և սրբութեք առաջին. որ և 'ի բացակայութեք անդ փեսային, ց 'ի Հնի Քնի, և 'ի սպասել զալստեան Հոգւոյն սից միսիթարչի, էր զլսաւոր միսիթարութի, և իբր հաստատագոյն

զօրաւիգն ապաւինութեն առաքելոց , և այլոց  
աշակերտացն : \* Եւ 'ի հագուստեւ առաջարկոցն աղեն-  
տէկոստէկոյ , այս է առուրցն յիսնից զկնի յա-  
րութեն քնի , եխն ամենշաքան մասնան 'ի մասնին :  
Եւ եղեւ յանիաբակին հնչեան յերինից ելեաւ իշտ-  
ասադին հողմոյ , և ելքո պահ գուտնն , յոբում նապինին :  
Եւ երեւցան նց բաժանեաւ լվառու իշտն 'ի հրոյ ,  
և նագաւ իւրաքանչեւր 'ի վերոյ նց . և ըստն ամե-  
նեւեան Հոգուն սիլ || . (Գործ . թ . 1 : ) Արդ՝  
եկն 'ի վը ամենասը կուսին Անրիամու , ող և 'ի վը  
այլոց ամենեցուն անդ եղելոց , Հոգին սը . հան-  
գեաւ 'ի վը նր , և նալցաւ Հոգւով սը վ : Այլ ո՞ւ է ,  
որ կարօղ իցէ հասուլինել մտօք , թող թէ պատ-  
մել բանիւ բերանոյ , թէ որպիսի ինչ էր լիուն սը  
կուսին , որպիսի էին պարգեքն , և որպիսի չնորհքն ,  
զորս եհեղ 'ի նա Հոգին սը : Եթէ առաքեալքն  
այնչափ չնորհս լնկալան յայսմ պահու , մինչեւ  
փոխիլ նց յայլ մարդ՝ քան զոր մինչեւ ցայն վայր  
էին . եթէ յերկչոտաց եղեն քաջասիրտք , մինչեւ  
յայնմհետէ ոչես երկեան՝ ոչ 'ի տանջանաց ինչ ,  
և ոչ 'ի մահուանէ . եթէ այնպէս բորբոքեցան  
սը հրով սիրոյ , մինչեւ իբրև դջահ վառեալ կա-  
րօղ եղեն այրել , ող ասէ ոմն 'ի սրբոց հարց ,  
զանտառ կոապաշտութեն , և բիւրազգի ախտից  
արմատացելոց ընդ ամ երկիր , և օրբստօրէ  
առաւել ևս բազմանային . եթէ 'ի վը նց տեսան

կուտակեալ ամ՝ պարգևք Հռգւոյն սըյ, Երկիւղ  
 Այ, զօրութի, ածպաշտութի, Խորհուրդ, գի-  
 տութի, հանձար, և խմատութի, այնպիսի մաս-  
 նաւոր իմն եղանակաւ, մինչեւ կարօղ Եղեն նոքա  
 ասել Ճշմարտապէս, թէ ընկալան զպարգևացս  
 այսոցիկ զերեխայրիս, այս է՝ զառաւել մեծահա-  
 րուստ և զառաւել գերազանց բաժինն. զի՞նչ  
 ապա Եղեւ յամենածը կոյսն Անրիամ: 'Ի Ան-  
 րիամ, որ ոչ ունէր զանկատարութի ինչ մաք-  
 րելի հրովս այսուիկ Երկնաւորաւ: 'Ի Անրիամ,  
 որ պատրաստեաց զանձն իւր առ 'ի ընդունել  
 զնողին նր՝ առաւել իմն գերազանց և առաւել  
 կատարելագոյն պատրաստութը քան զառա-  
 քեալսն: 'Ի Անրիամ, որ գտաւ լի շնորհօք,  
 յորժամ հրեշտակն երեր նմա զաւետիս. յորոյ  
 վերայ Եկն Հողին նր, և ծածկեաց զնա ընդ  
 հովանեաւ զօրութեն իւրոյ. և որ յամ բանից,  
 'ի դործոց, և 'ի խորհրդոց Քնի Պնի ընկալաւ  
 հանապաղ զնորանոր յաւելմունս շնորհաց, և  
 սրբութէ: Ես սա մի 'ի խորոց անդնդոց անտի,  
 յորս հարկ է ամ մարդկեղէն մտաց կորնչիլ:  
 Ապա փոխանակ մատչելց 'ի քննութի խորունս,  
 աղաչեսցուք խոնարհաբար զնը Կոյսն, որ լի է  
 Հողւով սրբվ և պարգևօք նր՝ արտաքոյ կարգի  
 իմն և անհասանելի եղանակաւ, զի ընկալցի վն  
 մեր ողորմելեացս զչափին, որ կարեւոր է մեղ՝ առ  
 'ի

՚ի ժամանել յանպատմելի փառսն յայն, յոր ողոր-  
մութքն Ա.Յ կոչեցաք, և զօրոյ կանխաւ իսկ ըն-  
կալաք զառհաւատչեայն ՚ի բազմապատիկ շնորհս,  
որոց հաղորդս արար զմեզ ձրիական առատա-  
ձեռնութին Տ.:

Ա.Բ-նանը կոյսն իայ առ սԵյն Յնվլաննու, և վայ-  
նորին՝ զոր վարէ անդանօք:

Դ. Արք Յովհաննէս, որում յանձն արար  
Յն Վաս զպահպանութի և զինամս ամենօրհ-  
նեալ կուսին՝ բանիւն այնուիկ, \*Ահա Տայր ժող ։ ։ ։  
Էառ զնա յայնմհետէ առ իւր. ըստ այնմ. \*Եւ-  
յայնմ ժամանակին առ աշակերդն զնա առ էւր ։ ։  
Ամ ոք կարօղ է զմտաւ ածել, եթէ քանի՞ յար-  
գանօք, և քանի՞ խորին և բարեկրօն մեծարանօք  
պահեաց նա զայս անդին աւանդ. և քանի՞ փու-  
թով օգուտս շահեցաւ յընտանի օրինակէ աստի-  
առաքընութին, որ այնչափ դժուարագիւտն է,  
և այնպէս սքանչելահրաշ: ՚Եա միայն, եթէ  
հաճոյ թուէր իմաստութին Ա.Յ, կարօղ եր ծա-  
նուցանել մեզ, թէ որպիսի ինչ եղեն վարքն,  
զոր կոյսս այս անհամեմատ յանձին երեր ընդ  
այն ամ ժամանակս, զորս եկաց կենդանի զկնի  
մահուան Ա.Ճորդեոյն իւրոյ: Ա.Յ ոնց յուշ առնե-  
նքն Եպիփան, (Հերետ, 58, գլ. 11.) առա-

քինութիւնը եր էր յօյժ զարմանապահնչ առ ՚ի  
 հասու լինել և ճանաչել զայն մարդկան, որք  
 ոչ են կարօղ առնել ինչ, բայց եթէ մեծապէս  
 սրանչացեալ չե այն՝ խոկալ զայն, առանց բնաւ  
 իսկ ճգնելոյ բացատրել զայն բանիք: Մեզ չէ  
 տունեալ, բայց եթէ առաջի գնել զնա, ըստ վե-  
 րաբերելոցն առ արտաքին ընթացս ՚ի, պարա-  
 պեալ ՚ի նոյն խոնարհութիւն, յորս ըստ ասա-  
 ցելոցս անցուցանէր զկեանս իւր ՚ի Կաղաքէթ.  
 քանզի ՚ի յաւերժական լոռուէն՝ որ պահի զնմա-  
 նէ ՚ի դործս առաքելոց և ՚ի թուղթս կանոնա-  
 կանս, ըստ բաւականին քաջայստ մակարերի,  
 եթէ կամեցաւ Տը պահել զնա միշտ ՚ի նմին վե-  
 ճակի նունաստութիւն յաչս մարդկան, ողղվել եղիցի  
 հանապազ առաւել ևս մեծ առաջի իւր, և եղի-  
 ցի ընդ ամ դարս ամենապայծառ հրահանդիչ,  
 եթէ սեփական բերումն յօժարութիւն հոգւոց  
 սրց է անշքութիւն, սէրն խոնարհութիւն, և ար-  
 համարհութիւն համօրէն մարդկային մեծութեց:  
 Այսպիս ամ դուզնապես դործողութիւն ՚ի առա-  
 ւել արդիւնաւոր էր տուաջի Ա.Յ քան զամ համ-  
 բաւաւոր դործս այլոց սրց, և նոցին իսկ առա-  
 քելոց: Վանդիչ չափ արդեանց մարդկային դոր-  
 ծողութեց դոլով ածային սէրն, յորմէ յառաջ  
 դան նորին, և սէրն դոլով յամենանը Կոյսն  
 անհամեմատաբար առաւել առատ, և առաւել

մեծեռանդն, քան յայլ նըս, զչետ դայ, եթէ  
և յաւէտ դուզնաքեսյ գործողութիք նր գերա-  
զանցէին արդեամբք քան զամ մեծամեծ գոր-  
ծողութիս համօրէն այլոց սըց :

ՊԵ: | Խակ ըստ վերաբերելոցն առ ներքին  
վարս նր, ով համարձակեսցի խօսել: || Պան-  
ծասցի խելամուտ լինել ևս և դուզնաքեայ մասին  
սիրաբորբոք ըսցոյ նորին, որ ծախէր զնա իբրև  
զողջակէզ անուշահոտ 'ի պատիւ Ա.Յ իւրոյ. ով  
ներքին զուարձութեց նորին գլխովին երկնայնոց,  
որք յուղէին 'ի սիրտ նր. ով նորին հաւատոց,  
յուսոյ, և երախտագիտութե՛, և զի 'ի մի բան  
ասացից՝ համօրէն գերամբարձ առաքինութեց,  
որք քաշալերէին զնա, և անձուկ կապանօք  
յօդէին զնա ընդ արարչին իւրում: || Արթ է  
մեղ միայն, զնալով զչետ առաջնորդութե՛ նր  
եկեղեցւոյ, խոկալ զնա իրր գլխովին գրաւեալ  
'ի գերազանց և 'ի գերագոյն մտածութիս և 'ի  
աեսութիս ածային ստորօգելեաց, և մեծամեծ  
խորհրդոց կրօնի: | Եթէ խորհուրդք մանկութե՛  
Ածորդուցն իւրոյ եղեն նմա արօտք զուարձայի,  
մինչև պահել զամ բանս, և խելամուտ լինել 'ի  
սրտի իւրում. ապա քանի՛ առաւել ամենա-  
զուարձ աեսութիս ոչ գտանէր 'ի չարչարանս և 'ի  
մահու նր, 'ի հրաշավատ յարութե՛ նր, 'ի սքան-  
չելի համլարձման նր, յառաքման առդւոյն պէյ,

և յայն ամ, զոր շնորհք Տի գործէր հանապազօք  
յօդուտ մարդկան։ Առ այս՝ ասացի՝ առաջնորդէ  
եկեղեցի Լատինացւոց, որ ՚ի տօնի վերախոժա-  
ման ամենասր Կուսին ընթեռնու զաւետարանն  
զայն, յորում պատմի Վարիամ քոյր Դաջարու-  
բազմեալ առ ոտս Հայի՝ ՚ի լսել զածային բանս  
նոր, որում և նա ինքն փրկիչն երկնաւոր վկայէ,  
Եթէ նա \* մասն բարի ընտրեաց, որ ոչ բալիչի ՚է  
հմանէ։ (Պուկ. Ժ. 39.) և այս Վարիամ, ը-  
առհասարակ իմացուածոյ նրց հարց, էր կեր-  
պարան և օրինակ տեսական կենաց։ Վալա շատ  
լիցի մեզ նկատել զնը Կոյմն՝ պարապեալ յայս  
խոնարհ և ՚ի կատարեալ տեսութիւն։ և սրան-  
չացուք ընդ լուսութիւն նր գրոց՝ որ զտիրամօրէն,  
իբրև ընդ մեծագոյն և ընդ յաճախապատում  
գրութիւն քան զզինչ և իցէ բանս, զոր հնար  
իցէ առ ՚ի գովեստ նոր յօրինել։

Ուահ ամենանը իսուսին Վարիամու, և հրաշակա-  
վերականումն նորո յերինս։

**Դ.** Ռանդագին սէրն, որով ըստ անհասա-  
նելի իմն եղանակի բորբոքեալ էր սիրո ամենասր  
կուսին Վարիամու, հալէր և մաշէր զնա, ուզ  
բանիցս կարող է ասել, ՚ի խանդակաթ բաղձանս  
որաթոիչ լինելոյ, ՚ի տեսանել դէմյանդիման  
Պ. Ճն

զԵ՞ն իւր , և միաւորիլ ամենակատար միաւու  
 բութմբ ընդ Ա՛ծորդւոյն իւրոյ : «Քանզի եթէ հա-  
 մօրէն նըք՝ ի ժամանակի պանդխտութեն իւրեանց  
 'ի վէ երկրի , ըստ չափու սիրոյն՝ որով բորբոքէր  
 սիրտ նց , ցամկային անձկանօք հանգստեան երկա-  
 նաւոր հայրեննեացն . եթէ նը առաքեալն Պողոս  
 վառէր փափագմամբ՝ ըուծանիլ ՚ի կապանաց  
 մահկանացու մարմնոյն իւրոյ , և լինել ը «Քահի-  
 ցինչ ապա եղեն ըստ այսմ մասին բաղձանք և  
 փափագք Անըրիամու , որոյ սիրոյն որ առ Ա՛ծ  
 ոչոք այլ եղեւ , և ոչոք լիցի երբէք որ նմանեսցի :  
 Արդ՝ զկնի կալց նր՝ ի վը աշխարհիս ընդ այն ամ  
 ժամանակս , որչափ հաճոյ թունեցաւ անսահման  
 իմաստութեն Ա՛յ թողուլ զնա մարդկան օրինակ  
 համօրէն դիւցազնագոյն առաքինութեց , ՚ի միսի-  
 թարութիւ առաքելոց և աշակերտացն «Քահի , ՚ի  
 շինութիւ և ՚ի նողաստ նորածին եկեղեցւոյ , և առ  
 ՚ի ժամանել նմա յայն անսահման բովանդա-  
 կութիւ արդեանց համեմատեալ փառացն , որ ՚ի  
 յաւիտենից պատրաստեալ էր նմա ՚ի յերկինս .  
 բաժանեցաւ պատուական մահուամբ ամենամը  
 հողի նր՝ ՚ի մարմնոյն , հատուցանելով ըստ այսմ  
 զպարտոն , որում ներքոյ անկեալ է մարդկայինս  
 վիճակ , և որում նաև Ա՛ծորդին իւր կամեցաւ  
 ներքոյ անկանիլ . առանց զիտելոյ մեր , եթէ  
 յորում ամի հասակի իւրոյ դեպ եղեւ այդ , և թէ

արդեօք յԵրուսաղէմ, թէ յԵփիեսոս (1) : « Եցն  
պէս անծանօթ են մեզ մասնաւոր պարագայքն ,  
որք զուգընթաց եղեն այսմ ամեներջանիկ ելից ,  
կամեցեալ ԱՅ, զի ոչ միայն անծանօթ վաղբն  
ամենանը կուսին Անրիամու , այլև մահն նր լիցի  
մեզ օրինակ խոնարհութե և կրթութե , առ ՚ի  
ճանաչել յայտնապէս , եթէ զիարդ դուզնաքեայ  
իմն , նա թէ՝ ոչինչ պարտիմք համարել զլինելն  
ծանուցեալ և մեծարեալ ՚ի մարդկանէ :

ՊԵ : Այլ թէպէտ և ծածկեալ են ՚ի մէնջ  
պարագայք մահուան ամենանը կուսին Անրիա-  
մու , սակայն գիտեմք ըս բարեպաշտ և ըս վաղեմի  
հաւատոց եկեղեցւոյ , եթէ մարմին նր ոչ ետես  
զապականութի , այլ վաղվաղակի միաւորեցաւ ըս  
հոգւոյն , և պաշտամամք հրեշտակաց վերափո-  
խեցաւ յերկինս : Հայն սակս զայսր հրաշափառ  
վերափոխան ամենանը կուսին Անրիամու կա-  
տարեաց նոյն ինքն որ եկեղեցի ՚ի վաղ ժամա-  
նակաց հետէ , և ցարդ ևս կատարէ զտօն մեծա-  
հանդէս ՚ի 15 . (Օգոստոսի : Եւ քաջ իսկ պատ-  
շաճ էր առանձնաշնորհ արտօնութիւն այս մարմա-

նոյն

(1) ՏԵ՛ս զնանօվեութիւն բարեյլշաբանի պատղին  
ԲՆԵՆԵՐԵԿԻՊՈԽ չորեսպատանելուրդի՝ ՚ի վեց ուսի՞ն  
վերաբերեմոն տեհութեն իուսուկն Անոքիոմու :

նոյն այսմիկ, յորմէ էառ Յան Քան զմարմին իւր,  
 յորում եկաց նա զամիսս ինն, և յորոյ գոյա-  
 ցութեն էառ զնունդ: Եւ ոչ իսկ պարտ էր  
 նմա ներքոյ անկանիլ հասարակաց վիճակի այլոց  
 սրց, որ ճոխացեալ էր յիշ շնորհօք ինչ և  
 սրբութիւն որ գերազանցէ քան զշնորհս, և քան  
 զարբութիւն ամ մարդկան, և ամ հրեշտակաց: որ  
 ամբարձեալ էր յանհամեմատ արժանապատու-  
 թիւն ածամայրութեն, որ և վս այսորիկ բոլորո-  
 վին միաւորեալ էր ընդ Յանի Քանի, և 'ի նմանէ  
 մասնաւորապէս իմն սիրեցեալ: Արդ՝ Արիամ  
 մտանէ մարմնով և հոգւով 'ի սրբութիւն սրբու-  
 թեանցն յերկինս, և ժառանգէ զլիուլի և զկա-  
 տարեալ ժառանգուի անձառելի փառացն, որ վս  
 նոցին պատճառաց վայել էր նմա: Ովկ իցէ կա-  
 րօղ խելամուտ լինել հանդիսի այսր յաղթանա-  
 կի: ո՞ կարօղ է հասու լինել անչափութեն փա-  
 ռացն, յոր վերացաւ Արիամ: „ Ի՞նդ առաջ  
 „ ելանեն նմա, ասէ որն Ինընարդոս, (բան 1.  
 „ և 4. 'ի վերափի. կուս.) ամ հրեշտակացն  
 „ դասք, և զմուտ ածեալ զպանչելահրաշ տե-  
 „ սիլն զոր տեսանեն, զարհուրեալք աշաղակեն  
 „ ասելով. \* Ովկ է սո՞ ո՞ ելոնի յանապատի՞-  
 „ իլլուս պարեղն ինիոյ ձիւեալ. (ը լատ. ովկ է  
 „ սո՞ ո՞ ելոնի յանապատի՞ տուութացնու պատր-  
 „ ճուլիկ, ) ||: Ովկ եթէ քաջայայտ ևս ասէին

„նոքա . ով զիա՞րդ մեծ է սա . և ուստի՝ իցե  
 „սմա , որ գայ յանապատէ աշխարհի , այդշափ  
 „առատութի զուարձութեց : «Բանզի ոչ գտանի  
 „՚ի մեզ հաւասար սորա . ՚ի մեզ՝ որք եմք ՚ի քա-  
 „ղաքի Տն ՚ի յորդահոսան գետոյ լցեալ զեղեսլ  
 „ուրախութի , և ՚ի հրաշափառ տեսութեն Ա.Յ  
 „իրեւ ՚ի հոսանս հաճռութեց՝ արբենամք : Ով  
 „է սա , որ ՚ի ստորին կողմանէ արեգական , ուր  
 „չիք այլ ինչ , բայց տաղտկութի , ցաւ , և վիշտ  
 „հոգւոյ , գայ ՚ի վերին յայս կողմն՝ մեծահա-  
 „րուստ ճոխացեալ հոգեոր զուարձութիք : «Ամին  
 „իրի և այն անբաւ բաղմութի անմարմնական  
 „հոգեղինացն՝ առանձին իմն ջերմեռանդութեն  
 „ըղձիւ մատցին առաջի նր , և օրհնութիք և  
 „երգովք ցնծութեն ուղեկից լինին ՚նմա ՚ի պատ-  
 „րաստեալ ՚նմա աթոռ փառաց : Ա.Յ ով թէ  
 „զիա՞րդ զուարթադէմ , (ասէ նր արբայն , )  
 „զիա՞րդ խնդագին , և քանի՝ ուրախալից ողջա-  
 „գուրմամբ ընդունի զնա որդին իւր : Երջանիկ  
 „եղեն արդարեւ համրոյրն այնոքիկ , զորս ըն-  
 „կալար ով կոյսդ մեծ ՚ի կաթնասուն Արդոյդ :  
 „յորժամ ՚ի գիրկս քո բարձեալ գգունէիր զնաւ  
 „մայրական գթով . այլ քանի՝ առաւել երջա-  
 „նիկ են համրոյրն , զորս յերանելի ողջունին  
 ու ընդունիս այսօր ՚ի բերանոյ ՚նորին , մինչդեռ  
 ո՞նստի ՚նա լը աշմէ Հօրն իւրոյ յառիտենականի :

ո Եւ ով ոք խօսեսցի արժանապէս (ասէ սըն  
ո կնքելով զբանս իւր,) զծննդենէ ՚Քնի, և  
ո զվերափոխմանէ Անրիամու “ . քանզի եթէ  
մին, և եթէ միւսն են անձառելի և անհասա-  
նելի :

Դ : Երդ՝ Յն ՚Քն, ասէ սըն Ռեռնարդոս,  
դասեաց զամենասը մայրն իւր ոչ միայն 'ի վեր  
քան դամ դասս նահապետաց, մարդարէից, և  
այլ ամ սըց, որք թագաւորեն յերկինս, այլէ  
'ի վեր քան զշրեշտակս, 'ի վեր քան զշրեշտա-  
կապետս, և 'ի վեր քան զաւաւել գերագոյն  
հոգեղինաց դասս, որք են սերովըէքն . և այն-  
պէս կացոյց զնա թագուհի երկնի և երկրի : Ուղ  
և Հայաստանեայցս եկեղեցի 'ի վերափոխման  
Առւսին երգէ . (շարակ. ճշկ.) ո ԱԵՀագոյն սե-  
ո րովըէից, և բարձրագոյն քերովըէից՝ վերամ-  
ո բարձար 'ի բարձունս յեղականաց անհպելին,  
ո փառաւորեալ ընդ միածնին հրճուղական ճայ-  
ո նիւ երգոց “ : Եւ ահա ճշմարտեցաւ այն, զոր  
ստուճերագրեաց Առղոմոն, յորժամ նստոյց 'ի  
փառաւոր աթոռ զմայր իւր Ռերսաբէէ, վարե-  
լով ընդ նմա զայսօրինակ՝ իբրև լը թագուհւոյ :  
Առղոմոն էր օրինակ Յնի ՚Քնի, և Ռերսաբէէ  
կերպարանէր զամենասը մայրն իւր՝ զոր կացոյց  
նա թագուհի երկնի և երկրի : Ահա սքանչելիքն  
այն մեծ, զոր ետես յերկինս սըն Յովհաննէս 'ի

յայտնութեն իւրում . (Յայտ . ԺՌ . 1 .) այս է .  
 \* Այն մի առիւտը զեւրեաւ պարեժակն , և լուսնի ՚է  
 նէլքոյ սովոր նորո , և ՚է ՁԵՐՈՅ ԳԼՈՒՅ նորո պատէ  
 տառեղջոյ յԵՐԻԿՊԱՍՏՈՒՆԻՅ || : „ Այս ամենասր կցյն  
 „ Արիամ , ասէ վերոդրեալ ոքն Շեռնարգոս  
 „ (բան ՚ի կիւր . յութօր . վերափոխ . ) է կինն  
 „ այն արկեալ զիւրե զարեգակն , այս է՝ բոլու  
 „ բովին լուսափայլ վա փառացն , դորս հաղորդէ  
 „ նմա ԱՇԾՈՐԴԻՆ իւր : Գլուխ նորին է պսակեալ  
 „ երկոտասան աստեղօք , որք ըստ իրաց ինչ առ  
 „ նուն յաւետ , քան թէ տան զզարդ զլիսոյ նու  
 „ րին . քանզի առաւել ճառագայթարձակ և լու  
 „ սաւոր է նա քան զզինչ և իցէ աստեղս : Եւ  
 „ ո՞ կարէ երբէք հատանել զզին զոհարացն , և  
 „ ո՞ կարէ անունանել զսստեղմն , յորոց կաղմեալ  
 „ է արքունական պսակն Արիամու : Օանցանէ  
 „ զկարողութք մարդկան՝ նկարագրել զբովան .  
 „ դակութի նիւթոցն , և զյօրինուած թաղիս այ .  
 „ սորիկ “ : ’ Ե սոյն տեսութի բանի յայտնութեն  
 Յովշաննու երգէ և եկեղեցի Հայաստանեայց առ  
 ամենասր Այսն . (Հարակ . ը .) „ Ար ՚ի բարձ  
 „ բութիս երկնից բարձր բանիւք բարեբանիս  
 „ սրբուհի , ՚ի Լիբանանէ դիմեալ հարսն զգե .  
 „ ցեալ այսօր՝ զարեգակն արկեալ զքէ , և ընդ  
 „ ոտիւք զլուսինն ստուերատեսակ “ : Լակ եթէ  
 կամբցիմք որչափ ինչ հնար է չափաւորեալ մտաց

մերոց՝ խելամուտ լինել վսեմութե փառացն, զոր  
 ընկալաւ ամենասբ Այս ՚ի վերափոխին յեր-  
 կինս. յուշ ածցուք, եթէ այն եղե համեմատ  
 հաւատոց, սիրոյ, խոնարհութեան, և այլոց  
 առաքինութեց, զորս ՚ի դործ եդ նա՝ մինչդեռ  
 իեանս վարեր յերկրի աստ, և ՚ի մի քան ասա-  
 ցից, առատութեն, լիութեն, և զեղման շնոր-  
 հացն, զորս ընկալաւ նա յընթացս մահկանացու  
 կենաց իւրոց: Այս ասէ սբն Տեռնարդոս, (բան  
 1. ՚ի վերափոխ, կուս.) ու Արդ՝ որչափ առաւել  
 „մեծագոյն քան զայլոց սրց, և քան զամ արա-  
 „րածոց՝ եղե շնորհքն, զոր ընկալաւ նա յերկ-  
 „րի, այնչափ առաւել դեր ՚ի վերոյ քան զամե-  
 ռնեցուն՝ է փառքն, զոր վայելէ նա յերկինս:  
 „Օ ի եթէ (ասէ սբն) ակն ոչ ետես, և  
 „ունկն ոչ լուսաւ, և ՚ի սիրտ մարդոյ ոչ անկաւ,  
 „զոր պատրաստեաց Ած սիրելեաց իւրոց. ապա  
 „ով արդեօք կարասցէ պատմել զայնոսիկ, զորս  
 „պատրաստեաց նա Անրիամու, զոր արդարե-  
 „առաւել քան զամենեսեան սիրեաց: Պարտ էր  
 „և ևս փառացն Անրիամու, (ասէ նոյնպէս նոյն  
 „ինքն սբն,) լինել համեմատեալ արժանա-  
 „պատութեն ածամայրութե իւրոց: Արդ՝ զոր-  
 „օրինակ ոչ եղե, և ոչ իսկ կարեր լինել արժա-  
 „նապատութի մեծագոյն քան զսոյն, և ոչ իսկ  
 „Արդին Այս եղիտ յերկրի տեղի ինչ արժանա-

„ւոր ինքեան , բայց եթէ զկուսական արգանտն  
 „Անրիամու , սապէս և ոչ իսկ յերկինս կայ  
 „աթոռ բարձրագոյն քան զայն , յորոյ վը բաղ-  
 „մեցոյց զԱնրիամ որդին իւր “ : Հօր միտ և  
 Հայաստանեայցս եկեղեցի երգէ . (շարակ . ձղ.)  
 „Այսօր զբնակարան Հոգւոյն սըյ վերնական  
 „հրաբուն սեռիցն փոխաղբեալ յերկինս , մտա-  
 „նելով ’ի վերինն Երուսաղէմ , ’ի յառագաստն  
 „անապական , յանմտանելին եղականացս , ընդ  
 „Երրորդութեն , և (առաքելոցն) համաձայ-  
 „նեալք ընդ անմարմնոցն՝ օրհնէին զամէնօրհ-  
 „նեալ սրբուհին “ :

ԴՅ : „Ա այսորիկ վերափոխումն սըյ Կու-  
 „սին , (ասէ նր արբայն Ծնեռնարդոս , ) յաւել  
 „անտարակոյս զցնծութի երկնաքաղաքացեացն :  
 „Քանզի եթէ առ ձայն նր , մինչզեռ տակաւին  
 „յաշխաղհի աստ էր , խաղաց ցնծալով ևս և  
 „նա՝ որ յարգանդի մօրն փակեալ էր , այս է՝  
 „նբն Հովհաննէս միլտիչ . որպիսի ինչ պար-  
 „տիմք համարել զցնծութի երանելեացն ընա-  
 „կելոց յերկինս , յորժամ լուսն զձայն նորա ,  
 „տեսին զդէմն նր , և վայելեցին ’ի տեսութե նր՝  
 „վերամբարձեալ յանզուգական փառս : Եւ մէք  
 „քանի՝ արդեօք պատճառս ոչ ունիցիմք ուրա-  
 „խութե և ցնծութե , խորհնեալ զվերափոխումն  
 „Անրիամու : Պայծառացաւ աշխաղհ ամ ՚ի

„Ներկայութէ մեծափառ դշխայիս, մինչև երկնաւ,  
 „ևոր հայրենիքն իսկ պայծառագոյնս լուսափայլեն,  
 „լուսազարդեալ ’ի շքեղ նշուլից կուսական լապ-  
 „տերիս : “Ամին իրի և ’ի գերագոյն բարձունս  
 „երկնից հնչեն ձայնք գոհաբանութեց, և երգք  
 „օրհնութեց : Այլ ըստ վերաբերելցյն առ մեզ,  
 „(ասէ սբն Ինեռնարդոս,) թունի արդեօք, եթէ  
 „պարտիմք յաւետ լալ, քան ուրախանալ :  
 „Քանիզի որչափ ցնծան երկինք վա առաջնկայ-  
 „ութմեն նր, ոչ ապարէն զհետ գայ, եթէ նոյն-  
 „չափ պարտ է ստորին այսմ աշխարհի ’ի տըրտ-  
 „մութի մասնել վա բացակայութեն նր : Այլ  
 „դադարեսցեն և մեր գանդարտանք, զի և մէք  
 „իսկ չունիմք աստ քաղաք մնացական, այլ ’ի  
 „խնդիր եմք նորին քաղաքի, ուրանօր կանխաւ  
 „իսկ եհաս հրաշափառագոյն սբ Աղյուն : Օի եթէ  
 „և մէք զրեցաք այնմ քաղաքի քաղաքացիք,  
 „ոչ արդեօք արժան է, զի և յաքսորանս աստ,  
 „ևս և առ գետս Ինաբելացւոց, յիշատակեսցուք  
 „զնա, հաղորդ լիցուք նմա ’ի ցնծութիւնն, մաս-  
 „նակից լիցուք ուրախութեն նր, և այնմ ուրա-  
 „խութեն մասնաւորապէս, որ վա վերափոխման  
 „սրբ Առուսին՝ իբր յորդահոսան գետոց ծաւալ-  
 „մամբ լնու ցնծութիւն զքաղաքն Այ, ոնզի և մէք  
 „մասնակից լիցուք լնզունիւ զկաթիլս ինչ, որք  
 „’ի վերուստ անտի ցողին ’ի վր երկրիս : “Աս-

„Խաժաման Եղեւ քան զմեղ թագուհին մեր, և  
 „ընկալեալ եղեւ յայնչափ փառս, ուղղի և մեր  
 „զհետ նր ընթասցուք, իբրեւ զծառայս զհետ  
 „տիկնոջ իւրեանց, աղաղակելով վստահութեւ.  
 „\* Ձեւա պէտ պէտ քո, ’ի հոգոս իւղոց քոց ըն-  
 „լուսցուք || . (Երգ. ա. 3:) Աւրախ լիցուք ը-  
 „նմա, Եթէ սիրեմք զնա, զի գնաց առ որդին  
 „իւր, ցնծացուք ընդ փառս նր, Եթէ ոչ կա-  
 „միսք լինել (զոր Տը մի' արասցէ) ապերախտք  
 „առ նա, որ եղիտ զշնորհս առաջի Տն“ :

ԴԵՒՅ: Լինի և ևս պատճառ ուրախութես  
 մերց ’ի վերափոխման ամէներանեալ Առուին,  
 յուշ ածելն, թէ նա է յերկինս լցեալ անբաւ  
 արդեամիք, և գերագոյն փառօք, զի եղիցի բա-  
 րեխօս, և պաշտպան մեր, „Պնաց յառաջ քան  
 „զմեղ, (ասէ վերոյիշեալ սըն Բեռնարդոս, )  
 „’ի պանդխառութէ աստի մերմէ յերկինաւոր հայ-  
 „ըննիսն՝ ամենասը կոյսն Ապրիամ իբրեւ բարե-  
 „խօս մեր : “Աա ինքն իբրեւ մայր դատաւորին  
 „մերոյ, և միանդամայն իբրեւ մայր ողորմութեւ,  
 „բարեխօս լինի պաղատանօք և գործունեութեւ  
 „վո գերագոյն գործոյ յաւիտենական փրկութեւ  
 „մերոյ : “Աա ինքն է զրաւական մեծագին, զոր  
 „յերկիրս մեր առաքեաց յերկինս, ուղղի երջանիկ  
 „իմն ուխտիւ բարեկամութեւ, մարդկային իբրս  
 „միաւորեսցին ընդ ածոյնոցն, երկրաւորքս ընդ  
 „երկ-

„Երկնայնոցն, ստորինքս ընդ վերնոցն: ՚Քանզի  
 „աղնուական պտուղս այս երկրի ՚ի վեր անդր  
 „սլացաւ, ուստի դան առ մեզ ամ շնորհք գե~  
 „բազանց, և ամ պարզեք կատարեալ: Արդ՝  
 „համբարձեալ ՚ի բարձունս երանեալ սոյն Կու~  
 „սին, տայ և նա ինքն պարզես մարդկան“, այս  
 է՝ ընդունելով զնոսին ամենազօր միշնորդութքն  
 իւրով ՚ի պարզեատուէն ամ բարութե: Եւ  
 արդ՝ առ ՚ի կնքել զբանս ընդ նմին սոյն Շեռ~  
 նարդոսի: „Առ այս աղբիւր դիմեսցէ հողիս մեր  
 „պասքեալ. և յայս յորդանս ողորմութե: Ճե~  
 „պեսցէ ամ փութով թշուառութիս մեր: Ահա  
 „մէք ուխտիւք մերովք, (ասասցուք ընդ նմին  
 „սոյն Շեռոնարդոսի,) որչափ ինչ ներէր տկա~  
 „րութիս մեր, ուղեկից քեզ եղաք ամէնօրհնեալ  
 „որ Կոյս մինչեւ ցաթոռն Որդւոյդ քո, և գեթ  
 „՚ի հեռուստ ընթացաք զհետ քո ՚ի հրաշափառ  
 „վերափոխմանդ քում: Աղէ յայսմհետէ արա  
 „գթութեդ քով, զի ճաշակեսցէ աշխարհ  
 „զպտուղ շնորհացդ, զորս գտեր առ Ած:  
 „Անկալ աղօթիցդ խնդրուածովք՝ յանցուցելոց  
 „զթողութի, հիւանդաց զդեղ ըժշկութե, վհա~  
 „տելոց զքաջալերութի, վշտացելոց զմիսիթա~  
 „րութի, և վտանգելոց զօգնութի և զաղատութի.  
 „այս ասեմ, քոց ծառայից, որք օրհնութի  
 „կարդան զամենաքաղցր անունդ քո՝ ով Անրի~  
 „ամ,

„ամ՝, շնորհեսցէ միջնորդութիւն քով զպարգևա  
„շնորհաց իւրոց համար որդին քո և տէր մեր,  
„որ է լուծ օրհնեալ 'ի վեր քան զամ ընդ ամ  
„յաւիտեանս“։ Ամէն։

Պատմուածուանը ամառ ամենաառ կայսեր, և գույն  
ծուանեաւը բարձրեաւը նը։

Տ։ Արդ՝ համօրէն հաւատացելոց է պատառ  
ճառ միսիթարութիւն, և խնդութիւն, ունելն յարա  
քայութիւն երկնից զայսպիսի զօրաւոր բարեխօս։  
և պարտ է նց, կամեցեալ յառաջ բերել զբանս  
սրբյն Շնունարդոսի (բան 'ի ծննդ։ կուս։) „Եր  
,,խորոց սրտէ, և համօրէն ուխտիւք յարգել և  
,,պատուել զնա“։ Եւ յիրաւի քաջ տեսանեմք,  
եթէ զիարդ փութայ եկեղեցի տպաւորել 'ի միտու  
որդւոց իւրոց զջերմեռանդութիւն առ մեծապատիւ  
Այս լու, առ 'ի շահել նց զամենազօր պաշտա  
պանութիւնը։ Վնայսորիկ բազում են տօնք, զորա  
յընթացս տարւոյն կատարէ նա 'ի պատիւ սըյ  
կուսին։ վնայսորիկ եկեղեցին Լատինացւոց 'ի  
բազում դարուց հետէ նուիրեաց 'ի պատիւ նը  
զամ աւուրս շաբաթուց, յորս՝ եթէ չիցէ զրա-  
ւեալ յայլ ժամերդութիւն, կամ 'ի տօնս, կա-  
տարէ զժամերդութիւն և զպատարագ ամենաառ  
կուսին։ վնայսորիկ և բազում անդամ կարդայ  
դնաւ

զնա՞ի սր պատարագ ամասուցին . վնայսորիկ հրա~  
 մայէ՝ 'ի սկզբան ամ կանոնական ժամերգութեց  
 առ նա դիմել ասելով զըրեշտակային ողջյնն,  
 և 'ի վախճանի ժամերգութեցն բաց 'ի հրեշտա~  
 կային ողջունէ անտի ասել 'ի պատիւ նորա և  
 զկցուրդ ինչ զանազան ըստ զանազան ժամանա~  
 կաց . ոնդ և Հայաստանեացցս եկեղեցի յամ կա~  
 նոնական ժամերգութիւն իւր զօրհանապազ բա~  
 զում անդամ առնէ զյիշտակ ամենանը Առուին՝  
 մաղթանօք , և երգովք . և սկիզբն առնէ պատա~  
 րագին մաղթանօք նորին , բազում անդամ ևս  
 միշտակեալ 'ի պատարագին . բաց 'ի մասնաւոր  
 տօնախմբութեց անտի նր , մասնաւոր ժամեր~  
 գութիւք հանդերձ , յորոց զվերափոխումն իննօ~  
 րէիւք ևս կատարէ : Վնայսորիկ երիցս յաւուրն  
 տայ մեզ դիմել առ նա՝ 'ի հնչման զանդակի ող~  
 ջունին , ոնդ և նշանակեցաք այլուր , (տես 'ի վե~  
 րոյ՝ հմք , խլ .) և վնայսորիկ հրամայէ ժողովր~  
 դապետաց , և որոց ունին դպաշտօն կրթելց  
 զմանկունս 'ի հաւատոյս , ուսուցանել նց անդս~  
 տին 'ի մանկական տիոց անտի զնախասացեալ  
 ողջյնն հրեշտակային . բաց յայլոց բազմաց ջերմ~  
 եռանդն կրթութեանց , զորս մուծին բարեպաշտ  
 անձինք , և զոր հասարակաց բարեպաշտութին  
 հաւատացելոց ընկալու , առ յայտարարուի ջերմ~  
 եռանդութե իւրեանց առ սր կոյսն Արիամ :

Եւ արդարն ամ՝ իրաւամբք ցուցանէ եկեղեցի  
զայս փոյթ իւր յօդուտ որդւոց իւրոց։ ՚Քանզի  
եթէ բարի և օգտակար է նց կարդալ պաղա-  
տանօք զբս, (ժող. Տրիտենդ. զում. 25. ՚ի  
վր կարդա. զբս, ևն.) որք թագաւորեն ընդ  
՚Քնի, և հայցել զմաղթանս նց, զօգնութի նց,  
և զնպաստ նց առ ՚ի ընդունել զբարիս յլ. ՚միջ  
նորդութի Հնի ՚Քնի որդւոյ նր ան մերոյ, որ է  
մի միայն փրկիչ և կեցուցիչ մեր. քանի՛ առա-  
ւել լաւ, և քանի՛ առաւել շահեկան է նց պատ-  
ուել, և կարդալ զամենանք կոյսն Անրիամ, և  
զիմել ՚ի բարեխօսութի նր, որ ամենեին անտա-  
րակոյս առաւել զօրաւոր և առաւել դործունեաց  
է քան զբարեխօսութի այլոց համօրէն սրց.  
իրզինա է, առէ նրն Շեռնարդոս, (բան 1. ՚ի  
վերափ. կուս.) Եռակունի Երինէց, նո վա մը ւը  
է սպառմուլք, նո է հայր Թագնէ Արքույն լ. յ.:

Ճ՛: ՚Ի պատճառս յայսոսիկ, զորս առ ՚ի  
սկյն Շեռնարդոսէ յառաջ բերաք, կարօղ եմք  
ասել, թէ զլխաւորաբար հաստատի դործու-  
նէութի բարեխօսութեն Անրիամու, և ապաի-  
նութին՝ զոր պարտիմք ունիլ առ նա։ ՚Ամբար-  
ձաւ նա յերկինս վա վաեմադոյն արդեանց իւրոց,  
ոնդ ասացաք, ՚ի վեր քան զամ դասս հրեշտա-  
կաց. և փառքն, զոր վայելէ նա, որ և վերա-  
դոյն է քան զիաւոս համօրէն սրց, և համօրէն  
երա-

Երանեալ հոգեղբնայն, ցուցանէ զնա իրմւ թա-  
գուհի հրեշտակաց, թագուհի երկնից, և թա-  
գուհի աշխարհի. 'ի սոյն սակս կարդայ զնա եկե-  
ղեցի 'ի պէտպէս աղօթս իւր. սմին իրի և պատ-  
ուէ զնա վերադոյն իմն պաշտամամբ քան զպաշ-  
տամունս այլոց սրց, որ կոչի յածաբանից պաշ-  
տօն գնեսառապատճեն: Արդ՝ եթէ ո՛ ոք և իցէ 'ի  
սրց, որ թագաւորէ յերկնս, զոլով բարեկամ  
Այ, նուիրէ Տն զաղօթս իւր վ՛ մարդկան, և  
ընդունի վ՛ նց զընորհո՛ զորս խնդրէ. զի՞նչ ոչ  
կարացէ ընդունել վ՛ մեր ամենանը կոյսն Վա-  
րիամ, որոյ արդիւնքն առաջի Այ են անբաղ-  
դատ մեծադոյն քան զարդիւնս այլոց սրց. որոյ  
առաքինութիւնն գերազանցեն անչափապէս քան  
զառաքինութիւն նահապետաց, մարգարէից, ա-  
ռաքելոց, մարտիրոսաց, և ամ սրց. որոյ փառքն  
յարքայութեն է անհամեմատ գերազանց և լուսա-  
փայլ առաւել քան զփառս սերովքէից, և հա-  
մօրէն հրեշտակական դասուցն:

Ճ՛: Այլ որչափ առաւել սր և փառաւո-  
քեալ է Կոյսն, այնչափ առաւել սիրէ զմեզ, և  
է առ մեզ ողբքած: Քանզի սրբութեն և փա-  
ռաց նորին համեմատի՝ իրը անսահման սէր նր  
առ մեզ ողորմելի մահկանացուս, որոյ վ՛ և խնա-  
մակալու լինի մեզ յամ պէտս մեր: Արդ՝ հրա-  
շափառ սր Կոյսն յերկնից անտի հայի 'ի մեզ  
ամե-

ամենադժան ազօք, և տեսանէ դժշուառութիս, ընդ որով հեծեմք տարաբաղդ որդիքս Աղամայ. և տեսանէ զմակարդս, և զորոգայթս, զորս լարէ մեզ նախանձարեկ չարութի բանսարկունն. տեսանէ դիսաւար մթութե, որ շուրջ պատեալ պաշարեալ է զմեօք. տեսանէ զզօրութի ապստամիք կրից մերոց, յոյր սակս և եմք 'ի հանաւալազրդ վտանգի յաւիտենական կորստեան: Ապա քանից ցաւակից լինի նա եղելի վիճակիս մերում, և ըստեւորդի քանից դորովագութի խնամով ոչ լինի միջնորդ առ Ած ընդունել վամեր զկարեօր նպաստս: Այնպէս վստահ է եկեղեցի ընդ այս բարեգութ կարեկցութի ամենանը կուսին Վարիամու առ ողորմելիքս, մինչև ոչինչ երկրայի կոչել զնա հայր ողորմութե. իրրդի նա 'ի վեր քան զամ արարածս հաղորդ լինի անսահման և անձառելի սիրոյն, զոր Ածորդին իւր ունէր, և ունի առ աղօս մարդկան, որ է աղբիւր սիրոյն, որ է յամէներաննեալ Կոյսն, 'ի հրեշտակս, 'ի նրս, և յայլ ամ բանական արարածս: «Արդ՝ ընդէ՛ր երկնչխս դու, ասէ նրն Տեռնարդ՝ դոս, (բան 'ի կիւր. յութօր. վերափ. ) ովլ՝ մարդ տկար և ողորմելին մերձենալ առ Վարիամ: Զիք 'ի նմա խիստ ինչ, չիք ահարկու ինչ. մանաւանդ բոլորովին քաղցր է նա, ամեննեին հեղ: Անթերցիք մի առ մի զըովանդակ ակարդ

,, կարդ աւետարանական պատմութեն . և եթէ  
 ,, դիպուածովլ իմն գտցես ինչ ինչ խիստ , կամ  
 ,, անախորժ , և կամ զդոյն ինչ նշան տհաճութեն  
 ,, 'ի Անրիամ , լեռ արդեօք 'ի կասկածի , և եր-  
 ,, կիր մերձենալ առ նա : Խոկ եթէ ընդ հակա-  
 ,, ռակս գտանես , զի ամ ինչ 'ի նմա լի է գթու-  
 ,, թեամբ , և շնորհօք , հեղութեն , և ողորմութեն .  
 ,, շնորհս մատո աղբերն ամ բարութեն , և ամ  
 ,, գթութեն , այս է Այ , որ շնորհեաց քեզ  
 ,, զայսպիսի ողորմած միջնորդ : Գիտասցի՛ր , զի  
 ,, եղե նա ամ վս ամի , և ամենառատ իմն սիրով  
 ,, եղե պարտապան իմաստնոց , և անիմաստից :  
 ,, Բանայ ամենեցուն զծոց գթութեն իւրոյ , ոնզի  
 ,, ամ ոք լիցի հաղորդ . ընկալցի միջնորդութենը  
 ,, գերին զազատութի , հիշանդն զբժշկութի ,  
 ,, վշտացեալն զմիսիթարութի , մեղաւորն զթո-  
 ,, դութի , արդարն զնորհս . ևն ։ :

Ճ՛ : Եւ առաւել ևս ծանիցուք , թէ քանի՞  
 ողորմած է ամենանը կոյսն Անրիամ , եթէ յուշ  
 ածցուք , թէ է նա ամենասիրելի մայր մեր , և  
 հայի 'ի մեղ յամենեսեան իբրև յորդիս իւր :  
 « Ամա , ոնզ 'ի վեր անդր տեսաք , յանձն արար  
 զմեղ Յա-Քա իբրև զորդիս , յորժամ կախեալ  
 գոլով զեսաչեն՝ ետ նմա իբրև զորդի զսիրելի  
 աշակերտն զնըն Յովհաննես , որ առաջի առներ  
 զմարմին համօրէն հաւատացելոց , բանիւրն այ-  
 նորիւք .

նորիւք . \* կէ՞ն դու՝ ահա ոլով առ ։ Ես եղե  
 մայր մեր , յորժամ եղե մայր Յօհաննէ , որ է  
 զլուխ խորհրդական մարմնըն , որոյ համօրէն հա-  
 ւատացեալք են անդամք . վայ ասէ նրն (Օգոս-  
 տինոս , (՚ի վե սրբ . կուս . զլ . 6.) „թէ զորօրի-  
 „նակ ամենանը կոյսն Անդրիամ է կօյս մարմնով ,  
 „և հոգւով . ըստ նմին օրինակի է ևս մայր ըստ  
 „մարմնոյ , և ըստ հոգւոյ . ըստ մարմնոյ է միայն մայր  
 „զլխոյն մերոյ , որ է ՚Պա . իսկ ըստ հոգւոյ՝ է ևս  
 „մայր անդամոց նր , որը եմք մէք . քանդի սիրով  
 „իւրով եղե նա դործակից ծննդեան հաւատա-  
 „ցելոց յեկեղեցւոց“ : Արդ՝ զորպիսի սէր և զո-  
 զրմութի չունիցի առ մեղ ամենազթած մայրս  
 այս : Վայ ուրածս լիցուք , զի ունիմք զայսափիսէ  
 մայր ողօրմած , որ ոչ դադարի միջնորդել վա մեր  
 'ի կարիս մեր , և 'ի թիկունս հասանել մեզ : „Ո՞չ ,  
 „լոեսց զողօրմութէդ քումմէ , ով նը Կոյսդ  
 „ամէներանեալ , ասէ սուրբն Շեոնարդոս (բան  
 „4. 'ի վերափ . կուս .) որ դիմեալ առ քեզ 'ի  
 „կարիս իւր , յիշեսցէ՝ թէ ոչ ընկալաւ 'ի քեն  
 „զնապաստս : Անք ծառաքս քո ուրախակից եմք  
 „քեզ վա այլոց առաքինութեց քոց . այլ վա  
 „ողօրմութեց քո ուրախակից եմք մեզ : Կավելիք  
 „զկուսութի քո , սքանչանամք ընդ խօնարհութի  
 „քո . այլ ողօրմելեաց առաւել քաղցր երկի  
 „ողօրմութին . զսովաւ զիրկս արկանեմք անձ-  
 „կաւ

„կապէս, զսոյն զայս յաճախ յուշ ածեմք, զսոյն  
» կարդամք ստէալ ստէալ « :

ՃՌ : Եւ արդ՝ 'ի վախճանի առ 'ի ճանաւել  
զգործունէութի միջնորդուն ամեներանեալ կու-  
սին՝ նպաստէ յուշ ածել, եթէ նա է հոյք օրոծ-  
նէ Որդւոյն Այ : Առվին անհամեմատ արժանա-  
պատութիւնը, որ եղև 'ի նմա աշխիւր այն ամ  
վսեմական շնորհաց, որովք ճոխացաւ յլսու-  
ծուստ, և բարձրացաւ յերկինս 'ի վեր քան զամ  
դասս հրեշտակաց, և 'ի վեր քան զամ սրս . սո-  
վին անհամեմատ արժանապատութիւնը, ասեմ,  
առաւել անձուկ կապանօք քան զայլ ամ արա-  
քածս միաւորեալ է ընդ Հնահ Վահ, այս է ընդ  
արարչապետին և ընդ պարգևատունին ամ բա-  
րութիւն . վեյ ունի նա զմանաւոր առիթ նմա մի-  
այն սեփական, առ լսելի լինելոյ 'ի նմանէ :  
» Ո՞չ, այո՝ (կրկնեսցուք վերատին զբանս սըյն  
» Բեռնարդոսի, ) լսէ Որդին մօրն : Եւ զի նչ  
» ինչ ոչ ընկալցի յայսպիսի որդւոյ այսպիսի  
» մայր « : » Կ վախճանի ամենասը կոյսն Վարիամ ը-  
որում մայր Հնահ Վահ, կամեցեալ 'ի գործ ածել  
զոհ քանից սըյն Բեռնարդոսի, է ճանապարհ,  
ընդ որ կարեմք երթալ առ նոյն ինքն Հնահ  
այս է ընդունել 'ի նմանէ զնորհս, և զողոր-  
մութիւն . զի զորօրինակ ամեներանեալ սր կոյսն  
է միջնորդ, որով Վահ եկն առ մել, և ընդ նմա

ամ օրհնութիւն, նոյնպէս է նա և ըստ այսմ մասին՝ ամենակատար և յաւէտ սեփական միջնորդ գնալոյ առ նա: Այս և բանք սրբ վարդապետին. (բան 2. 'ի գալստ. § 5.) „Այս ոք կարէ „տեսանել, թէ ոք Կոյսն է ճանապարհ, ընդ „որ եկն առ մեզ փրկիչն, ելեալ յարգանդէ նր, „ոնդ հարսն ՚ի հարսնական առագաստէ իւրմէ: „Ապա ուսցուք երթալ առ նա միջնորդութիւնորին խոկ, (այս է Արքիամու,) որոյ միջնորդութիւն եկն առ մեզ, և ժամանել նովաւ առ „շնորհս նր, որ նովաւ եկն ՚ի թշունառութիւն մեր: „Հապա ունիմք (ասէ սրբն) միջնորդութիւն քով „ով օրհնեալդ ՚ի կանայս, ծնողդ կենաց, մայրդ „փրկութեն. Հապա ասեմ ունիմք զմուտ առ „Ածորդիդ քո. այո՛ միջնորդութիւն քով ընկալցի „զմեզ նա, որ միջնորդութիւն քով տուաւ մեզ: „Քոյին կատարեալ կուսական ամբողջութիւն անբարակար արասցէ առ նմա զյանցանս ապակաւ նութեն մերոյ. և խոնարհութիւն քո՞ որ այնչափ սիրելի է առ Ած ընկալցի զթողութիւն ունայ նութենս մերոյ: Քոյին առատ սէրդ ծածկեսցէ զբազմութիւն մեղաց մերոց. և հրաշափառ արդ գասաւորութիւն քո ընկալցի վո՞ մեր զարդասաւ ւորութիւն դործոց բարեաց և արդիւնականաց: Ավ տիրուհի մեր, ով միջնորդ մեր, ով բարեխօս մեր, զի՞ր զմեզ ՚ի շնորհս որդւոյդ քո՞

„ յանձն արա զմեղ Ածորդւոյդ քում, մատո  
 „ զմեղ առաջի որդւոյդ քո : Արա ով օրհնեալդ,  
 „ վս չնորհացն՝ զոր գտեր առ Ած, վս արտօ  
 „ նութե՛ կուսութե՛դ և մայրութե՛դ որում ար  
 „ ժանի եղեր, վս ողորմութե՞ն՝ զոր ծնար. արա  
 „ ասեմ, զի նա՝ որ միջնորդութիւնը քով հաճեւ  
 „ ցաւ հաղորդ լինել տկարութե՞ն և թշուառութե՞ս  
 „ մերում, բարեխօսութիւնը քով արասցէ զմեղ հաւ  
 „ զորդս փառաց իւրոց, և երանութե՞ն իւրոյ“ :

ՃԵ՛ : Եւ արդ՝ կնքեսցուք զբանս ասելով,  
 եթէ գոլով ամենասր կուսին Վարիամաւ վս զեւ  
 բապանծ արդեանց իւրոց՝ թագուհի երկնից. գու  
 լով նր առ մեղ լի ողորմութիւնը, եթէ վս ամենաս  
 կատար սիրոյ ընկերին՝ որով շքեղաղարդեալ է,  
 և եթէ վս լինելոյ նր մայր մեր. և գոլով նր  
 մայր միածնի Որդւոյն ԱՅ, որ 'ի վեր քան զայլ  
 ամ անուանս յայտ առնէ զմեծութիւն գիտութե՞ն  
 նր, և զզօրութիւն միջնորդութե՞ն նր. չէ հնար լի-  
 նել 'ի նմա պակասութիւնը ոչ զօրութե՞ն, և ոչ  
 կամաց նպաստելոյ մեղ. ըս բանի սիյն Շեռնար-  
 դոսի. (Բան 1. 'ի վերափր. կուս.) Ու զօրութիւն  
 կորէ պակասութիւն, և ու կորէ : « Եմին իրի դիւ-  
 մեսցէ ամ ոք վստահութիւնը մեծաւ առ ամենազօր  
 բարեխօսս այս, առ ՚ի ընդունել յԱՅ զշնորհս՝  
 որոց պէտս ունի. և 'ի վեր քան զամ խնդրեսցէ  
 զհոգեոր շնորհս՝ ոքք վերաբերին 'ի յաւիտենաւ-

կան փրկութիւն իւր : „Կոյսս այս իմաստուն, ասէ  
 „նրն Ռեռնարդոս (բան ՚ի ծննդ. կուս .) ոչ  
 „խնդրեաց զշարստութիւն, ոչ խնդրեաց զպատիւն,  
 „ոչ խնդրեաց զկարողութիւն, այլ խնդրեաց միայն  
 „զշնորհս առ Ա. ՝ (զայն՝ որ առնէ զմեզ հա-  
 „ճոյս Ա. ՝ և նրս .) զայն՝ որ միայն կարեսը է  
 „մեզ վս փրկութիւն մերոյ : Ա. պա զի՞նչ այլ ինչ  
 „ըղձամիք և մեք (ասէ նրն) : Խնդրեսցուք և  
 „մեք զայս շնորհս . և խնդրեսցուք միջնորդու-  
 „թեամբն Անդրիամու “ : Ա. յո՛ խնդրեսցուք Ա. յ  
 միջնորդութիւն հրաշափառ կուսին նաև զժամա-  
 նակաւոր շնորհս, զորս և նա ընկալցի վս մեր,  
 զրօրինակ և վս հարսին և փեսային ՚ի կանա  
 Կալիկեացւոց ընկալաւ Ա. ծորդւոյն իւրմէ զհրա-  
 շական փոխարկութիւն զրցյն ՚ի գինի . այլ յուշ  
 լիցի մեզ, զի շնորհքս այսոքիկ ոչ են միշտ շա-  
 հաւէտ վս յաւիտենական փրկութիւն մերոյ . վս  
 եթէ երբեմն ոչ ընկալցի վս մեր զնոսին, պարտ  
 է մեզ յուսալ եթէ այն լինի յառաւելագոյն  
 օգուտ հոգւոց մերոց . քանզի փոխանակ ընդու-  
 նելոյ վս մեր Ա. յ, զրօրինակ զազատութիւն ՚ի  
 վշտաց, ՚ի թշուառութիւն, ՚ի հիւանդութիւն, և  
 յորոց սոցին նման, ընդունի վս մեր զշամբե-  
 րութիւն առ ՚ի տանել զնոսին արդեամիք, զյանձն-  
 արարութիւն ՚ի կամ Ա. յ, զշոգի ապաշխարու-  
 թեան՝ առ ՚ի հատուցանել նովաւ արդարութեան

Ա.Յ. և լու այսմ փոխանակ ժամանակաւոր և անշաւոր ինչ միսիթարութեն, որպիսի է ազատութիւն ՚ի վշտաց, ստանամք զբարի ինչ, որոյ արդասիքն տեւէ ՚ի յափտեան, ուղ դէսլ եղեւ երանուհւոյն Անրդարիտայ սավօյացւոյ, որ գոլով մեծապէս վշտացեալ ՚ի սաստիկ և ՚ի խիստ ցաւոց ոտնաշաւութեն, այն է՝ պատագրոսութեն, աղաչեաց թախանձանօք զամենանք Կոյսն, զի ընկալցի զնորհս ազատելոյ: Իսյց փոխանակ այսր շնորհի ընկալաւ նա զմեծագոյնն, քանզի երեւեցաւ նմա նա ինքն ամենանք Կոյսն, և միսիթարեալ զնա օգոստափառ տեսութիւն իւրով, քաջալերեաց զնա տանել համբերութիւն ցաւոց իւրոց մինչև ՚ի մահ, ուղզի նմանող եղեալ չարչարանաց փրկչին իւրոյ խաչեցելոյ, մաքրեսի հողի նր, և լցցի արդեամբք վա երկնից արքայութեն, վայ ՚ի ժամէ անտի առյապայ երանելի իշխանուհին կատարեալ յանձնարարութիւն ՚ի կամն Ա.Յ տարաւ ցաւոց իւրոց, մինչև յաղցաւոր կենաց աստի էանց ՚ի յափտենական երջանկութիւն արքայութեն, ուղ մարթէ ընդարձակագոյնս տեսանել ՚ի վարս նորա՝ որ պատմի ՚ի 6. Դեկտեմբերի, առ Լատինս:

Ճ՛: Ահա այս է վիճակ նր, որ դիմէ պարտաւուպատշաճ եղանակաւ յամենազօր միշնորդութիւն Անրիամու: Ամին իրի առ շնորհակալ լինելոյ զամենանք Կուսէն վա համօրէն մեծանշան բարերաւ:

րերարութեց, այս է՝ հոգեորաց, և մարմնաւու-  
րաց, զորս ոչ դադարիեցաւ, և ոչ դադարի եր-  
բէք ընդունել յօդուտ հաւատացելոց, և համօ-  
րէն եկեղեցւոյ, և առ ՚ի առաւելուլ զփոյթ նո-  
ցին հաւատացելոց, առ ՚ի զիմել ՚ի բարեխօ-  
սութի նր, կատարի ՚ի բազում եկեղեցիս, և ը-  
վճռոյ բարեյիշատակ պապին Շենեղիկտոսի երեք-  
տասաներորդի՝ յամին 1725. նաև յեկեղեցին  
Ճռովմայ, և յայլ եկեղեցիս նահանգաց տէ-  
րութեն եկեղեցւոյ, տօն պաշտպանութեն ամէն-  
երանեալ կուսին, որոյ վա նշանակեալ կարգե-  
ցաւ երրորդ կիւրակէն յամսեանն Կոյեմլերի:

ՃՌ : Եյլ առ ստանալոյ ջերմեռանդից ամե-  
նանը կուսին Անրիամու զբարերար արգասիս ա-  
մենազօր միջնորդութենորա, չէ պարտ զնել զամ  
ջերմեռանդութի ՚ի կրթութիս ինչ սոսկապէս  
արտաքինս և յառերեռյթս. որք թէպէտ և ը-  
ինքեան են գովելի, այլ ոչ տպաւորեն զկնիք  
Ճշմարիտ ջերմեռանդութեն, և չեն բաւական առ  
՚ի ընդունել մեզ զշնորհ՝ զորս խնդրեմք, ևս  
առաւել զշնորհ յաւիտենական փրկութեն մերոյ,  
յորժամ չեն յարակցեալ ընդ ներքին ներգոր-  
ծութեց Ճշմարիտ ածպաշտութեն, և կրօնի : Եւ  
յիրաւի լինէր համարօւմն ինչ յոյժ վնասակար՝  
հաստատել ՚ի վերայ հիման այսպիսի առերեցյթ  
ջերմեռանդութեն զստուդութի փրկութեն անձանց

մերոց, և վստահիլ եթէ ոչ կորնչիմք յաւիտեան, մշ այսր պատճառի ևեթ, իբրզի ասեմք յամ աւուր դաղօթս ինչ, կամ զի այց առնեմք եկեղեցւոյ, և կամ պատկերի ինչ սկը կուսին, և կամ զի առնեմք դայլ ինչ արտաքին գործ ՚ի պատիւնիր: Անզի եթէ Յա Քա Հաստատէ յաւետարանին, (Անտթ. Է. 21.) թէ \* Ու այս, որ տակ շիս Տեր Տեր, հացե յաշայութիւն երինեց //, ապա և ոչ խոկ նոքա ժամանեն ՚ի ժառանգութիւն երանելի ազգայութեն, որք շրթամրք միայն կարդան զամենանք կոյսն Անրիամ, առանց \* փութալոյ, զի բորբաջն գործով (զորս պարտ է առնել) հոսքապոտն զեւրեանց իուսուն և զընդութիւն պահեցին //, ուզ ուսուցանէ նր առաքեալն Պետրոս (Պետր. ա. 10:) «Երոյ ՚ի հաստատութիւն ունիմք յեկեղեցական պատմութիւն, եթէ Պետրոս թափիչն ելուզակ պատրիարքն Անտիոքայ, որ եղե ՚ի հինգերորդ դարուն, եցոյց ունել զերմեռանդութիւն ինչ առ ամենանք Կոյսն, իբրզի ՚ի բաղում սովորութիւն, զորս յետ այնորիկ իբրեւ բարիս և նրս ընկալաւ եկեղեցին, եմոյծնա զամենագովելին զայն սովորութիւն, զի յամ մաղթանս եղիցի յիշատակ նր Ածամօլն: Այլ դու տեսս զի՞նչ ասէ արդի մեծանուն մատենագիր ոմն. (Կարդին. Օռսի. պատմ. եկեղ. Հատոր 16, զիբք 36, յօդ. 53.) » Կա ինքն եղեւ

„ օրինակ , եթէ զիա՞րդ կրթութիք ինչ ածպաշ-  
 „ տութեն , որ կարեն կալ 'ի միասին ընդ համօ-  
 „ րէն կատաղութեն կրից , ատելութեն , ագահուեն ,  
 „ պատուասիրուեն , և ցանկուեն տիրելոյ , (զնոյն  
 „ է ասել և զայլ զինչ և իցէ ախտաւոր կրից , )  
 „ սակաւ ինչ օգտեն հոգւոցն այնոցիկ , եթէ ոչ  
 „ կարգեն զայնս 'ի չափաւորել և 'ի բարեկար-  
 „ դել զարաշար սովորութիս իւրեանց : «Բանզի  
 „ նա , ոչինչ խափան եղեալ առ պաշտամանցն  
 « յիւրմէ կարգելոց 'ի պատիւ կուսին , (և մաս-  
 „ նաւորապէս որ յաղագս կարդալոյ զնա յամ  
 „ մաղթանս , ) եղե ճշմարիտ ժանտակստ , և  
 „ հրդեհ , և ուժգին մրրիկ արեելեսցյ , և եկաց  
 „ ընդ երկար ժամանակս , և մեռաւ ընդ նզովիւք  
 „ և եկեղեցւոյ “ ,

ՃՌ : Չիք տարակոյս , եթէ ամենասր կոյսն  
 է ապաստան Առաջարկոց : Առվին անուամբ կար-  
 դամք զնա 'ի պաղատանսն՝ որք երգին 'ի պատիւ  
 նր , (այն է՝ 'ի Անտառիոյս .) և այս է նմա պատ-  
 ուանուն ինչ մեծ . զի ցուցանէ զառատութիւ սի-  
 րոյ նր , և զզօրութիւ և զզօրծունէութիւ բարե-  
 խօսութեն նր : Եւ բարե՝ քանի՛ և քանի՛ մար-  
 դիկ ընկալան , և զօր ամ ընդունին միջնորդութիւն  
 նր զՃշմարիտ զդումն վւ մեղաց իւրեսնց , և  
 զնորհս անկեղծ և հաստատուն դարձի : Այլ  
 եթէ նա ապաստան է մեղաւորաց , ըս նմին օրիւ-  
 նակի՞ւ

Նակի անտարակոյս է, թէ է նա ապաստան մեղաւրացն այնոցիկ, որոց ծանուցեալ զանհնարին բեռն մեղաց իւրեանց, ցանկան թեթևանալ՝ ի բեռանց անտի . մեղաւրացն այնոցիկ, որք կամին խորտակել զշղթայսն՝ որով գերեալ են՝ ի բանսարկուէն, և 'ի չարաշար և 'ի հնացեալ ախտից իւրեանց. և մեղաւորացն այնոցիկ, որք ցանկան զդալ ՚ի սրտէ, և դառնալ առ ԱՃ: Արդ՝ դիմեսցեն սոքա վստահութը մեծաւ ՚ի բարեխօսութի ամենասր կուսին Անրիամու՝ յինչ վիճակի և գտցին . և որչափ առաւել մեծ են թշուառութիք նց, այնչափ առաւել բարձրաձայն աղաղակեսցեն անձանձրոյթ, և մի վհատեսցին ՚ի մօրէ աստի ողորմութեն . և դփորձ առեալ ծանիցեն, և թէ քանի՛ իրաւամբ կոչի նա տպասպան Թղթառապաց: Այլ ՚ի գործ դնել զարտաքին և զառերեսոյթ գործս ինչ չերմեռանդուն առ նր Կյոյն, տակաւին սրտիէ յարեալ ՚ի մեղս, առանց ինչ բաղձանաց տղատելց անտի, համարեալ թէ առերեսոյթ ջերմեռանդութին այն առ ամենասր կոյսն Անրիամ պաշտպանէ յամ պատժոց, և օդտէ իրըն զմուրհակ ինչ ապահովութեն առ ՚ի հանապազորդել ՚ի վշտացուցանել անպատիժ զԱՃ. ոչ ապաքէն լինէր այն գրգռել մեծապէս զմայրն ԱՃ ՚ի բարկութի. ոչ ապաքէն լինէր այն առնել զնա ըստ իրաց ինչ հաղորդ

անօրէնութեց : Եւ ով ոք առաւել քան զյա-  
րիամ ատեայ զմեղս : Ո՞ւմ ումեք առաւել քան  
Անրիամու՝ անհաճոյ է արհամարհութին՝ ոք  
մեղօք լինի Ածորդոյ իւրում : Օխարդ ապա  
հնար է նմա հաճիլ ընդ աղօթս ինչ, որ մա-  
սուցեալ վերոգրեալ չարաչար գործովք լինէք  
ատելի յաչս Ա.Յ: Ոչինչ յայնցանէ՝ որք ան-  
հաճոյ են Ա.Յ, կարէ հաճոյ լինել Անրիամու-  
Արդ՝ Հոգին ոք ստուգէ մեղ, (Եկղես. Լ. 31.)  
եթէ ոչ լսէ Ած զաղօթս նր՝ ոք հանապաղորդէ  
'ի մեղս իւր՝ առանց բաղձանաց ուղղութե՛ . ասէ .  
\* Անըն՝ որ պահո պահէ 'ի մեղս իւր, և վերաբին  
պեղյն առանէ, (և կամ հանապաղորդէ 'ի մեղսն-  
չել,) պէջն շահեացէ 'ի նոռնառհեցուցանիլոյ անոտէ  
պահյն իւր . առընկոյ նորս ո՞ւ լուսիցէ || : Անց ասէ  
սուրբն Գրիգոր մեծ . ('ի թուղթս . գիրք 9 .  
թուղթ 45.) „Անօգուտ լինի աղօթքն, յոր-  
,,ժամ չար են գործողութիքն“ :

Այսուհետից առաջնութեանց ամենահայտն է Անըն:

Ճ.՝ Եւ արդ՝ 'ի բաց եղեալ 'ի մտաց, և 'ի  
սրտից համօրէն քրիստոնէից զայնպիսի համա-  
րումն թիւր և զթշնամանաղիր մեծի Ածամօրն,  
քաջ խելամուտ լիցին և 'ի գործ ածցեն զայն ամ  
լրթու-

կրթութիւն, որք կարդին 'ի պատուել զթագուշ  
 հին երկնի և երկրի : Կալցուք զլիակատար և  
 զորդիական վստահութիւն յամենազօր բարեխօս  
 սութիւն նը, բայց միշտ սևեռեալ ունիցիմք 'ի  
 խորս մտաց մերոց, եթէ ջերմեռանդութիւնն առ  
 ամենազօր բարեխօսս այս մեր պարտ է ունիլ  
 սկզբնական նպատակ զպահպանութիւն պատուիրա-  
 նացն Ա.Յ., առնել (ող և ասաց իսկ նա կանխաւ  
 'ի հարսանիսն՝ որ 'ի կանա Պալլիեացւոց՝) զայն  
 ամ, զոր ասէ մեղ Ա.Ծորդին իւր յաւետարանին.  
 բերել զնմանութիւն սքանչելի և գերապանծ առա-  
 քինութեց նորին, և զհետ երթալ լուսապայ-  
 ծառ օրինակացն, զորս ետ մեղ յընթացս կենաց  
 իւրոց յաշխարհի աստ : Այս է ստուգագոյն ճա-  
 նապարհ՝ արժանի լինելոյ մեծազօր պաշտպանուե-  
 նորին, զորօրինակ ուսուցանէ նրն Շեռնարդոս  
 մեծ ջերմեռանդն սկզ կուսին . (Ճառ 2. 'ի վը  
 բանին Ա. առաջնորդու .) Եւնէ իտիս ընդունել պն-  
 դուագուա առօլից նորս, մէ իտիս նմանէլ օրինակաց  
 ձլըսուց նորս : Եւ թէպէտ, ող տեսաք 'ի պատ-  
 մագրութիւն յայս, սակաւ ինչ են մասնաւոր  
 դործողութիւնն ամենասը կուսին Անդրիամու, որոց  
 եհաս առ մեղ ծանօթութիւն . 'ի վը այսր ամի են  
 այնպէս մեծամեծ, այնպէս չնաշխարհիկ, և այն-  
 պէս բազմօրինակ 'ի հրահանդութիւն, մինչև  
 մարթ է ամենեցուն ուսաննել 'ի նոցունց զազ-  
 նուա-

նուաղոյն և զկատարելագոյն տարադս զինչ և իցէ  
 վսեմագոյն առաքինութեն : Որ թէպէտ և ամ  
 տեսալի մարդկան պատշաճի, այլ մասնաւոր իմն  
 եղանակաւ կանանց, յինչ վիճակի և իցեն :  
 Քանովի նախախնամութին Ա.Յ կարգեաց, զի  
 ամենանը Այսոն կարօղ իցէ լինել միանգամայն  
 օրինակ, եթէ մեծազգի տիկնանց, դոլով և  
 ինքն յարքունի զարմէ և յարենէ . և եթէ աղշ  
 քատ կանանց, իրրզի վարեաց նա զկեանս իւր  
 'ի կրպակի աղքատ հիւսան ուրումն, շահելով  
 զապրուստ իւր դործովք ձեռաց իւրոց : Եւ ևս  
 պայծառացոյց նա օրինակօք իւրովք, և սրբեաց  
 զամ վիճակս, եթէ կուսանաց, եթէ արամիեաց,  
 (պահելով միշտ զամենամքուր կուսութի իւր,)  
 և եթէ այրեաց. և այնպիսի այրեաց՝ ող նկա  
 րագրէ սըն Պիողոս՝ ասելով, (ա. Տիմ. Ն. 5.)  
 \* Հետացետը ||, ըստ որում ոչինչ ուներ նա իւր  
 սեփական . և զինի մահուան Ա.ծորդւոյն իւրոյ  
 ընկալաւ զնա՝ ող ասացաք 'ի յարկս իւր սըն  
 Ծովչաննէս, որում յանձնեաց զնա Ծա Քա :  
 'Ի վախճանի ասէ սըն Ամբրոսիոս . ('ի վը կու  
 սան . զիրք 2. զլ. 2.) Այնողէսէ եղեւ Անըլամ,  
 զէ ժլրք նը մասնայ շատ է լինել ամենեցուան հրա  
 հանգիւ համօքնեա առաջինութենց : Խսկ մեք առաջի  
 դնելով ջերմեռանդից սկյ կուսին Անդիամու  
 լնմանակցութի գերազանց առաքինութեց նր :

չունիմք 'ի մտի խօսել զնոցանե՛ խւրաքանչիւր  
առանձինն, եթէ վնդի կարի իմն ընդերկարէր,  
և եթէ զի 'ի ճառելն զգործոց նր ցուցաք ապա-  
քէն, զի՞նչ ինչ օրինակս առաքինութեց ունիմք  
քաղել 'ի նոցանե՛ : Ըատ լիցի մեղ արդ՝ համա-  
ռօտիւ խօսել 'ի վր ինչ ինչ գլխաւորացն ևեթ :

'Ի վէրայ ածային ակրոյ ամենառն Առասին, և լու-  
զանու արարունք նմանիւ այն :

Ճ՛ : **Ե**ւնախ առաջին օգուտ է յուշ ածել,  
եթէ զամ որ ինչ ասացաւն զանհասանելի սըր-  
բութէ Առասին, և զամենառատ և զարտաքոյ  
կարդի լիութէն շնորհաց, զոր ընկալաւ 'ի Տնէ,  
պարտ է իմանալ զսիրոյ նր՝ որ առ Ա՛ծ, որում  
կից է միշտ և սէրն ընկերին, զի սէրն ածային է  
հողի համօրէն առաքինութեց, և է ճշգրիտ չափ  
սրբութե՛ . մինչեւ այնչափ առաւել ոք է ոք,  
որչափ առաւել սէր ունի՛ : „Արդ՝ 'ի Արքիամ,  
„ասէ ոքն Շառունարդոս, (բան 29. յերգս երգ.)  
„սէրն Ա՛յ եղեւ իբրև զնետ ընտիր, որ ոչ միայն  
„խոցեաց զնա, այլեւ թափանցանց էանց ընդ  
„նա ծագէ՝ 'ի ծագ, մինչեւ չմնալ և ոչ փոք-  
„րիկ ինչ մասին 'ի կուսական սրտէ նորա թա-  
„փուր գտեալ 'ի սիրոյ աստի . այլ 'ի բոլոր  
ոսրտէ, յամ մնաց, և յամ զօրութէ հոգւոյ  
„իւ-

„իւրոյ սիրեաց : . . . . Ա այնորիկ յանձն իւր բո՞ւ  
 „վանդակ ընկալաւ նա զկարեվէր և զքաղցը  
 „խոցուած սիրոյ : Եւ երանի էր ինձ, ասէ նբն,  
 „եթէ երբէք զգայի և ես իբր խայթեալ յանձին  
 „սայրասուր ծայրին նետիս այսորիկ “ : Արդ՝  
 ահա գլխաւոր առաքինութին ամենանը կուսին  
 Անրիամու, զօրոյ պարտիմք փոյթ յանձինս ու  
 նել՝ որչափ ինչ հնար է բերել զնմանութի :  
 Այս է մեծ քան զամ առաքինութիս, ոնդ ասէ  
 Առաքեալն, (ա , Կորնթ . ժկ . 13 .) սա է  
 առաքինութին այն, առանց որոյ՝ ասէ նոյն ինքն  
 Առաքեալն՝ (անդ . ժկ . 1 .) խօսելն զլեզուա  
 մարդկան՝ և զշրեշտակաց, մարդարէանալն, զիւ  
 տելն զխորհուրդս զամ և զամ զիտութի, ունելու  
 զամ հաւասա՞մինչև զլերինս փոփոխելոյ, ջամ  
 բելն զամ ինչս աղքատաց, և մատնելն զմարմին  
 յայրումն, ոչինչ օգտէ : Եւ այս ամ մեծամեծ և  
 սքանչելի գործովք, ոչ այլ ինչ կարեմք լինել  
 առանց սիրոյ, բայց եթէ իբրև զպղինձ որ հնչէ,  
 կամ իբրև զծնծղայս՝ որ զօղանցն . և ոչ այլ  
 ինչ լինիմք, բայց եթէ զլխուլին ոչինչ : Հայս  
 ’ի սոյն սէր ԱՇ ընդ սիրոյ ընկերին՝ կայանաց  
 լրումն ամ օրինաց . քանզի սիրելն զԼՇ է առա  
 ջին և մեծ պատուիրան . որում նման է և պատ  
 ուիրանն սիրելոյ զընկերն իբրև զանձն . (Անտթ.  
 իր . 38 : ) “ Ամին իրի որ միանդամ համարի  
 զանձն ”

զանձն իւր ճշմարիտ. ջերմեռանդն Անդիամու,  
 ամ ճգամը փոյթ տարցէ ունել յանձին իւրում  
 զոկոս զայս, որ հեղեալ, կամ սիուեալ է 'ի  
 սիրտս մեր 'ի Հոգւոյն սի՞յ : Օզրութք սորա  
 հրաժարեսցի ոչ միայն յինչ և իցէ մահուչափ  
 մեղաց, որ կորուսանէ զայն իսկ և իսկ, այլև (ը  
 ներելոյ Եղելի հանգամանաց մարդկութեանս )  
 փախիցէ 'ի ներելի մեղաց, որք գալջացուցանեն,  
 և ցրտացուցանեն զնա : Առվաւ գործեսցէ զամ  
 զգործս իւր, զամն կարգեալ 'ի աղատիւ և 'ի  
 փառս Ա.Յ : 'Ի սմին փոյթ կալցի հանապազորդ  
 յառաջաղեմ լինել, բառնալով ոնկ ասէ նրն  
 (Կոստինոս) միշտ տակաւ ինչ 'ի ծանրութէ  
 ցանկութեն, առ 'ի յաւելուլ զայն 'ի ծանրութի  
 ածային սիրոյ, մինչեւ նա անհետ երիցի, և սա  
 կատարելագործեսցի. որ ոչ կարէ լինել կատա-  
 րելապէս, բայց Եթէ յերկնաւոր հայրենիսն  
 «Այնպէս ըստ օրինակի սի՞յ կուսին, որ Եղեւ այն-  
 չափ գթածասիրտ, գորովագութ, և բարերար  
 առ ընկերս, բարիս արասցէ ամենեցուն, օժան-  
 դակեսցէ աղքատաց ողորմութքը իւրովք ըստ  
 չափու ընչեց իւրոց, ներեսցէ անիրաւութեց,  
 սիրեսցէ զբարեկամն յԱ.Ծ, և զթշնամին վա Ա.Յ .  
 և 'ի մի բան ասացից՝ կատարեսցէ զամ գործս  
 հոգեւոր, և մարմնաւոր ողորմութեն, որոց վասն

պատրաստեալ պահէ Տէր յերկինս զառատ և  
զանգատում վորսարէնն :

՚Ի Հերայ հաւատոց, ՚ո յուսոյ ամենառն Առաջն,  
՚ո Եկ պէտք ուսուրէմ նմանիւ նոցին :

Ճշկ : Յեռանդաղին սիրոյ անտի Անրիամու<sup>9</sup>  
պարտ է առնուլ զգաղափար այլ ամ առաքի-  
նութեց նր, և զլիաւորաբար զհաւատոց, և  
զյուսոյ նորա, որոց նոյնօրինակ պարտ է լինել  
նազատակ փութաջան նմանակցութես մերոյ : Եւ  
արդարեւ մեծ եղեւ յոյժ հաւատքն սիյ Կուսին,  
ուղ և սրն Շեռնարդոս կոչե զնա՝ Նշանհոգիութեն  
հաւատոց : „Քանզի, ասէ նոյն ինքն սրն, (բան  
„՚ի կիւր + յութօր + վերափ +) յիրաւի ու վրիւ  
„պեցաւ սրբուհին Եղիսաբեթ, որ ՚ի խօսելն  
„աղղեցութիւ Հոգւոյն սիյ՝ ասաց ցԱնրիամ +  
„\* Եւ Երանիւ ժեղ որ հաւատոցելո՞ : Այս  
„երանելի եղեւ նա, (ասէ սրն, ) ու միայն զի  
„Ած հայեցաւ ՚ի նա բարեշնորհ աչօք, այլեւ զի  
„և նա ինքն իսկ հաւատաց, որ եղեւ մեծ ար-  
ոդիւնք հայելոյ բարութեն Այ ՚ի վը նորա “:  
Եւ արդարեւ Անրիամ եղեւ առաջնն, որ հա-  
ւատաց յանձառելի և յանհասանելի խորհուրդ  
մարդեղութե Շանին՝ որ կատարեցաւն յարդան-  
դի իւրում, հաւատաց յղանալ զնա դօրութիւ

Հոգւոյն սից, և թէ ոչ յղուն, և ոչ ծնունդն  
 բերեր վեաս ինչ կուսութիւն իւրում։ Պահեաց  
 Վարիամ զայս հաւատս իւր, մանաւանդ թէ  
 յառել զայն, թէպէտ և զգայութիւն, և բանն  
 և թ մարդկային բազում ինչ կարօղ էին ցու-  
 ցանել նմա ընդ հակառակս. տեսանելով զլու-  
 որդին իւր, զի այն ինչ գոլով ծնեալ յամենող  
 ջախոհ արդանդէ իւրմէ՝ խոյս ետ փախուցեալ ՚ի  
 ցասմանէն Ներովդի, և տեսանելով զնա կեալ  
 մթին և աշխատալից կենօք զամն երեսուն ՚ի  
 կրպակի հիւսան ուրումն, և տեսանելով զնա ՚ի  
 վախճանի մեռանիլ իբրև զչարագործ ոք ՚ի վերայ  
 խաչի։ Եւ ոչ միայն հաւատաց ամենապ Կոյսն  
 նախ քան զամենեսեան հաստատուն և անշարժ  
 հաւատով զայն զայս, և զայլ խորհրդս կրօնի.  
 այլև յամ կեանս իւր, և յամ գործս իւր՝ չու-  
 նէր զոյլ ինչ կանոն, բայց եթէ զսկզբունս և  
 զջմարտութիւն հաւատոյ։ Ըստ լիցի ՚ի հաս-  
 տատութիւն ասացելոց՝ յօժարակամ արհամար-  
 հելն նը զամ մեծութիւն աշխարհի, և նորուն  
 սէրն աղքատութիւն։ Այրեաց նա հանապազ, ուղ  
 և տեսաք, յընթացս կենաց իւրոց կեալ ՚ի ծա-  
 ծուկ, և վարել զկեանս յիւրումն աղքատութիւն,  
 ՚ի մթութիւն, և ՚ի նուռաստութիւն առաջի մարդ-  
 կան. թէպէտ և գոլով մայր Որդւոյն Ա.Յ՝ կա-  
 րօղ էր առաւել մեծաշուք երեիլ քան զամ

թագաւորս, և ընդունել յլուժորդւոյն իւրմէ զամ գանձս, և զամ հարստութիւն երկրի, որոց էր նա բացարձակ և մի միայն ճշմարիտ ար: Այլ նա առաջնորդեալ կենդանարար լուսով հաւատոյ իւրոյ, քաջ ճանաչէր, եթէ քանի՞ լաւ իցէ քան զյարդութիւն և քան զպատիւ աշխարհի արհամարհութիւնն, և նուաստութիւնն, և թէ քանի՞ առաւել օգտակար իցէ աղքատութիւն քան զյարստութիւն: Արդ՝ որչափ առաւել յայտնագոյնս տեսանէր ամենասր կոյսն լուսով հաւատոյ զոնչութիւն ամ իրաց ժամանակաւորաց, և այնր ամի՞ որ յաշխարհի աստ է նպատակ ցան կութե՛ մարդկան, այնչափ առաւել զուարձանայր սիրտ նը հաստատուն յուսով յաւիտենական բարեացն՝ որ յերկինս, և հայէր 'ի նոսին՝ ուղ թէ էին առաջիկայ, և ուղ թէ ինքն արդէն իսկ էր 'ի ժառանգութե՛: Վանդի եթէ որս Պօղոս կարօղ եղեւ ասել, թէ կենցաղալարութիւն իւր էր յերկինս, նկատելով զանձն իրը երկնաքաղաքացի: Որչափ ևս առաւել ամենասր կոյսն Անրիամ եկաց յերկրի աստ, ուղ եթէ արդէն իսկ բնակէր յերկինս:

Ճ՛Ռ: Եւ արդ՝ նմանող լիցուք կենդանի և մեծի հաւատոցս Անրիամու: Կերեսցուք կատարեալ հպատակութիւն և սիրով զմիտս մեր ամ ճշմարտութեց յայտնելոց յլոյ, և առաջարկելոց  
մեղ

մեղ յեկեղեցւց՝ ՚ի հաւատավէ՞ր որ ոչ կարէ սխալիլ։  
 ’Երաց հերքեսցուք ահին զանոտի և զամբար-  
 տաւան տրամաբանութիւն անհաւատից, և զիսո-  
 տորնակ և զմոլար կարծիս մարմնապաշտից, որը  
 հակաւակին կանոնաց բարուց՝ զորս ուսաք յա-  
 ւետարանէն։ Եւ կարգեսցուք զվայրս մեր լստ  
 ճշմարտութեց հաւատոյ։ Քանզի ուղ ասէ սըն  
 Պօղոս, (Երրայ. Ժ. 38.) \* Արդարն ՚ի հա-  
 ւատոց իւղին։ Այս է՝ ՚ի յարդի կալցուք զայն,  
 զոր հաւատքն ուսուցանէ մեղ եթէ պարտ է ՚ի  
 յարդի ունել, որք են շնորհքն Այ, բարիքն  
 յաւիտենականիք, և կրթութին քրիստոնէական  
 առաքինութեց, որ առաջնորդէ մեղ ՚ի ստացումն  
 եղին. և արհամարհեսցուք զայն՝ որ ը հաւատոյ  
 արժանի է արհամարհութեն, այս է՝ զայն ամ,  
 որ սրբնթաց շտապաւ անցանէ ընդ ժամանակի,  
 և մեղ ոչինչ օգտէ վայ յաւիտենականին. որպիսի  
 են պատինք, հարատութիք, և հեշտութիք, զորս  
 առհամարտակ ոչ կամեցաւ ունել Յա Վա՞ ոչ վա-  
 խր, և ոչ վա ամենանը Աօրն իւրոյ, առ ՚ի ու-  
 սուցանել մեղ, ասէ սըն (Օգոստինոս, եթէ  
 պարտ է արհամարհել զնոսին. Ու իւնիսա-  
 նել, վէ ցուցցի՝ Ահ ողորու է արհամարհնել։ Ամ-  
 բարձյուք և մէք զսիրտս մեր յերկրէ յերկինս,  
 և հայեսցուք յանբաւ բարիսն, որ ՚ի վեր անդք  
 պատրաստեալ են մեղ, իբրև ՚ի ժառանգութիւն

սոտցնալ վեր 'ի հյուէ Վանէ արեամբն իւլով.  
 յոր կոչեցաք, և զոր խոստացաւ մեղ Ած, որ  
 հաւատարիմ է 'ի կատարել զբանս իւր, և ամե-  
 նակարօղ է՝ առ 'ի տալ մեղ յաշթել ամենայն  
 դժուարութենց, որոց հնար է խափանել զմեղ 'ի  
 ժառանգուէ նր. վեյ նա ինքն տայ մեղ զշնորհս  
 առ 'ի գործել զգործս բարութեն, որոց լինիցի  
 փոխարէն՝ փառքն այն յաւիտենական : Աւեմք  
 մէք հեռի անտի, բայց եթէ սակաւ, և անստոյգ,  
 և սրընթաց վայրկենօք մահկանացու կենացս այ-  
 սոցիկ : Ապա ուրախ լիցուք, և խնդասցուք յու-  
 սով վաղվաղակի երթալոյ 'ի ժառանգել . ուզ  
 ասէ Առաքեալն . (Հռովմ. Ժը. 12.) \* Յա-  
 սով էնորոցիք || : 'Ի միրկածուի ծովու կենցա-  
 ղցս, յորում հողմունք փորձութենց, և ալիք  
 վշտաց ալէկոծեն զհողիս մեր, ապաւինեցուք  
 յանշարժ և 'ի հաստատուն խորիս յուսոյ, զոր-  
 օրինակ կոչէ զայն նոյն ինքն Առաքեալն . (Եր-  
 րայ. Ղ. 19.) \* պը (ֆր զյոյս) էբրե պէտրիս  
 հասուագուուն և անշուժ ունիցիք անյոնց մէրոց || .  
 և նա փրկեսցէ զմեղ : 'Ի իցուք զամ երջանկուի  
 մեր 'ի յոյս յաւիտենական բարեացն . զի առանց  
 այսր յուսոյ լինէին քրիստոնեայք յաշխարհի  
 աստ առաւել ողորմելի քան զամ մարդիկ . զի  
 ոչ վայելէին՝ ոչ յառաջիկայ բարութիս, և ոչ 'ի  
 հանգերծեալմն . \* Եթէ ոյսու էնոյս մոյն, ասէ

Առաքեալն (ա. Աղջինթ. ժԷ. 19.) յուստոցիտալ  
էմ, ՚ի ՚ի ՚ի, աղոյմելը էմ, ան պահ հարդիկի ։

Դ ՀՀՐԱՅ ՀԱԿԱԿՈՒՄԵՆ ամենառն է Աստված, և լին  
պատրի պարզուին, նմանիլ այս :

**ՃՃ:** Հետ երից առաքինութեցս այսողիկ, այս  
է՝ հաւատոյ, յուսոյ, և սիրոյ, յորս՝ ոնց ասէ  
նրն (Օգոստինոս՝ (յընձեռ. գլ. 1.) կայանաց  
զվասւորաբար պաշտօնն՝ որ ընծայի ԱՇ, պար-  
տիմք զնել առաջի մեր առ ՚ի նմանիլ զիսոնար-  
հութին ամենասր կուսին, որ իբրև զշիմն այլոց  
համօրէն առաքինութեց՝ այնպէս գերազոյն իմն  
սեփականութիւ, և գերազանց եղանակաւ պայ-  
ծառացաւ ՚ի նմա, մինչեւ զորօրինակ բովանդակ  
վարքն Յանի ՚Վանի, ոնց յուշ առնե նրն Բար-  
սեղ, (ճառ ՚ի վը խոնարհ.,) եղեւ զաս և հրա-  
հանգութի խոնարհութե, ԱՇ Գործու ՏԻ զմէկ ՚է  
խոնարհութի իրենեն . նոյնպէս մարթ է ասել,  
եթէ ամ գործք ամէներանեալ կուսին, որ  
առաւել կատարելազոյնս քան զայլ ամ ոք կեր-  
պարանակից եղեւ ԱՇորդւոյ իւրում, բարձեալ  
քերեն զայն կնիք առաւել անկեղծ և խորին խո-  
նարհութե. ցուցանելով նը զանձն իւր ամեն-  
ուստիք լինել ՚ի ներքուստ ընդմտեալ ՚ի ծա-  
նօթութի ոչնչութե և նոհաստութե իւրոյ. և  
երկեա

Երևելով միշտ յաչս մարդկան իբրև զմի 'ի հասաւ-  
 րակ և 'ի ստորին կանանց, առանց երևեցուցաւ-  
 նելոյ երբէք զանգուգական ձիրսն, որք ամրառ-  
 նային զնա 'ի վեր քան զամ կանայս: Եւ ար-  
 դարե եթէ հոգեոր շինուածն սրբութեն նր եհաս  
 յայնչափ զարմանահրաշ բարձրութի, մինչև դեւ-  
 րաղանցեալ քան զբարձրութի համօրէն սրբ՝ որք  
 թաղաւորեն յերկինս, մերձեցաւ առաւել քան  
 զամենեսեան առ նոյն ինքն աղբիւրն ամ սրբութե,  
 որ է Ած. պարտ է ևս առել, եթէ խոնարհութի  
 նր, որ էր հիմն այսր բարձրաբերձ շինուածոյս,  
 ունէր զանհամեմատ իմն խորութի. քանզի ուղ  
 ասէ նրն (Օգոստինոս՝ ըստ բանիս առաջադրութեն,  
 (բան 69. 'ի վեր բան. աւետ. Անաթթ.) որչափ  
 առաւել բարձր է շինուածն; այնչափ առաւել  
 խորին է հիմն: Եւ ևս որ մեծապէս սքանչելա-  
 հրաշ առնէ զխոնարհութին սրբ Կուսին, այն է ։  
 զի ոչ երբէք եղեն 'ի նմա մեղք ինչ, և ոչ ան-  
 կատարութի ինչ, որոյ տեսուեն լինէր նմա խո-  
 նարհիլ, ուղ պարտին խոնարհիլ համօրէն մարդիկ  
 ևս և որ առաւել սրբն են. այլ մանաւանդլցեալ  
 էր նա ամ առաքինութիք, և ամ շնորհօք: Անց  
 աղաղակէ նրն Բեռնարդոս: (բան 4. 'ի վերափ:  
 կուս.) «ՎՎ զիարդ մեծ, և զիարդ մեծազին  
 ։ է առաքինութին խոնարհութեն, զուգակցեալ  
 ։ լնդ այսպիսի մեծի մաքրութե, լնդ այսպիսի

„անհամեմատ անմեղութե՛, և ընդ խղճի մնաց՝  
որ բոլորովին մաքուր յամ մեղաց : Եւ ուստի՝  
ծագի ՚ի քեզ, ով Կշուդ երանեալ, (ասէ  
„սրն, ) խոնարհութի, և խոնարհութիւն այս-  
չափ խորին : Չեն ինչ զարմանկք, եթէ խոնար-  
հեսցի նա՝ որ մեղաւն, այլ սքանչելի է յոյժ  
ո խոնարհութին ՚ի նմա՝ որ պահեաց զանմե-  
ղութիւն “ :

Ճշկդ : Եւ սյլուր ասէ նոյն ինքն նբն . (բան  
՚ի կիւր, յութօր, վերապի.) „ Ապա նմանօղ  
լեր այսմ առաքինութե՛, եթէ սիրես ղլյարի-  
ամ, և եթէ փափաղիս լինիլ նմա սիրելի, նա-  
ո խանձաւոր լեր խոնարհութե՛ նր . քանզի ոչինչ  
առաւել քան զսոյն պատշաճի մարդոյ, և ոչ  
ինչ առաւել քան զսոյն սեփական է քրիս-  
տոնէի “ : Եւ արդարե (բաց ՚ի պատճառաց  
անտի, զորս ունի մարդն ՚ի խոնարհիլ, խոկալով  
զանձն իւր, և զթշուառութիս, և զտկարութիս  
իւր, ) զի՞նչ այլ ինչ առաքինութի առաւել  
պատշաճ, և առաւել հարկաւոր է քրիստոնէի  
ումեք՝ քան զխոնարհութիւն : Անդամ է նա  
մարմնոյ, որոյ գլուխն, որ է ՚ի՞ն, գոլով Ած,  
\* զտեյն ունոյնայոյոյ, զի՞ւղաբանն ծոտոյի տ-  
առեալ, ՚ի նմանութի հարդիսն եղլու, և իւղաբ-  
անոս գտեալ իւղեալ զմուրդ . խոնորհեցոյց զտեյն,  
լւու հնողանդ մահուշանք և մահու խոցէ || . (Փի-

լիու .

լիպ. թ. 7:.) Ապա զիա՞րդ չիցէ պարտ քրիստոնէին խոնարհիլ, եթէ այնչափ խոնարհեցաւ Ք. ։ „Անտանելի իմն լրբութի լինէր, ասէ նրն ։ Բնոնարդոս (քան 1.՝ի ծննդ. Տն.) զի գու „լով նուաստացեալ այսպիսի մեծվայելըութիւն ։ Վառաց, ողորմելի և անարդ որդն ինչ կբասցի ։ և հպարտասցի ։ Եւ ևս՝ զի՞նչ այլ ինչ առաքինութի առաւել քան զիսոնարհութի յանձն արար, ուսոյց, և հրամայեաց վարդապետն երկնաւոր յիւրում աւետարանին ։ \* Ալեք ոչ պարզ ջէր, ասէ, և եղջըն լինեն պանիպէ, ոչ բառնիցն յարացաւունելի երկնից ։ (Անտթ. Ժ. 3:.) Որ իտմից ՚է յէնը աստաղն լինել, եղջըն յեր ծառաց առ սրբի մարդոյ ոչ են պաշտօն առնուլ, այլ պաշտել ։ (Անտթ. Ժ. 27:.) Որ բարյացաւցանե պանյն խոնարհեացի, և որ խոնարհեցանե պանյն բարյացաւցի ։ (Անտթ. իդ. 12:.) Բառդեզ ջէր ՚է յետին աւեղուն ։ (Առկ. Ժ. 10:.) Օսոյն զայս առաքինութի կամեցաւ նա, զի զլսաւորաբար ուսցին ՚ի նմանէ աշակերտքն իւր ։ \* Ուսուցնեալուն, ասէ, զի հեղ եմ, և խոնարհ սրբին ։ (Անտթ. Ժ. 29:.) ՚Ի վախճանի խոնարհաց խոստացաւ Ած զշնորհս, ող ստուգէ մեզ նր առաքեալն Յակովոս ։ (Ղ. 7:.) \* Տեր ամբարդաւունից հայտառուն իայ, առայ շնորհս խոնարհաց ։ Ապա զի՞նչ կայ, կրկնեսցուք ընդ սիյն Բնու-

Նարդոսի, առաւել սեփական ինչ քրիստոնէի  
ումբը, որ է աշակերտ ՀՅՇԻ ՎՐԱՒ, և ջեռմե-  
ռանդն առ Անրիամ, քան զխոնարհութիւն: Այլ  
ոնդզի խոնարհութիւն այս նմանեսցի խոնարհունն,  
զոր ուսոյց ՎՐԱ, և 'ի գործ եղ ամէներանեալ սր-  
Ավոյն, պարտ է սմա յառաջ գալ 'ի սրտէ, և  
'ի ներքին ծանօթութէ անտի, որով մարդն երեկ  
անարդ յաչս իւր: Պարտ է նմա ճանաչել իրեւ  
ձրիական պարդես ողորմութիւն Ա.Յ զամ բարի  
զոր ունի. և մի երբէք պարծեսցի զիմեքէ իրեւ  
զիւրմէ, այլ միայն 'ի Տէր պարծեսցի. լու այնմ  
բանի Առաքելոյն. (ա. Աղմանթ. դ. 7.) \*

\* Ո՞չ անիս՝ զար ոչ եցէ առեւալ. և եւե առեր, զա-  
րարծէս եւրես զբարծեալ: Եւ. (անգ. ա. 31.)

\* Ո՞ր պարծէն՝ 'ի Տէր պարծեսցի: Պարտ է ևս,  
զի ցուցցէ նաև արտաքուստ զխոնարհութիւն  
հոգւոյն, խորշելով յամէ որ ցուցանէ զշուր  
փառաց, և զունոյնութիւն, և փախչելով միան-  
դամայն յինչ և իցէ սնախառութէ, որով ցուցցէ,  
թէ ախորժէ համարիլ խոնարհ, և ոնդ խոնարհ դո-  
վել. վազի լու սքանչելի բանից սէցին Բեռնարդոսի,  
(յերգս երգ. բան 16. Հմբ. 10.) „Ճշմարիտ  
„խոնարհն կամի համարիլ անարդ, և ոչ քարո-  
„զիլ խոնարհ. իսկ ցանկալի զովեստից 'ի իսու-  
„նարհութէ անտի, չէ առաքինութիւն խոնար-  
„հութիւն, այլ եղծումն նորին“:

՚Ի վերայ համբեկութեն ամենասբ կուսին, և ՚ի վե  
հապարբետ հապարախութեն նորո իտմացն ԱՇ. և  
Եկ զետք պարա է Բաղ նմանիլ նմա:

ՃՇ: Ո՞ն ՚ի գլխաւոր պտղոց խոնարհութեն,  
ասէ նբն Բարսեղ, (Ճառ ՚ի Աաղմ. կա.) և  
լինելն համբերօղ և հպատակ յամ ձախորդութիս  
վերնախնամ տեսչութեց կամացն ԱՇ: Այս է  
համբերութին, և հպատակութին այն, որ սքան-  
չելապէս լուսափայլեաց յամենանք կոյսն, և սմին  
նմանիլ պարտ է ամենեցուն փափաղիլ: Հպա-  
տակեցաւ նբ կոյսն Աարիամ ամենակատար իմն  
հպատակութը և համաձայնութիւն կարգաց նա-  
խախնամութեն ԱՇ, յաղքատութեն անդ՝ որ ան-  
անջատ ուղեկից եղե նմա ընդ ամ ժամանակո  
կենաց իւրոց, և զորոյ զտառապսնացն միշտ էառ  
զփորձ, որբ և զնա ևս տանջեն յոյժ, որ ՚ի  
բարձր վիճակէ անկանի ՚ի ստորին վիճակ՝ ոնդ  
զԱարիամ: Հպատակեցաւ նա ամենակատար հա-  
մաձայնութիւն կարգաց նախախնամութեն ԱՇ ՚ի  
բազում, և յերկար, և ՚ի վշտալից ճանապար-  
հորդութիս, զորս հարկ եղե նմա ճանապարհոր-  
դել. և մասնաւորապէս յորժամ վս հնազան-  
դելոյ հրամանաց հեթանոս կայսերն՝ հարկ եղե  
նմա ՚ի խոր ձմեռան՝ գնալ ՚ի Աաղարեթէ ՚ի  
Տեթղեհէմ. և յորժամ չգտեալ անդ տեղի՝

և ոչ իսկ 'ի հասարակաց օթևանս , հարկադրեցաւ մտանել ընդ յարկաւ 'ի գոմն ինչ անասնոց , ուր ծնաւ զԱ՛նորդին իւր . և յորժամ 'ի Ծեթշեհեմէ 'ի նմին սառնամանեաց ժամանակի հարկեցաւ փախչել յԱղիպտոս , տանելով զմանուկն նորածին ընդ հեռաւոր աշխարհ , և մնալ անդ զժամանակ ինչ 'ի մեջ աղքի՝ որ անծանօթ , օտար , և ընկղմեալ 'ի խաւարի կռապաշտութիւն , և յամ յետսաւիտ սնոտիապաշտութիւն : 'ի գործ եդ Վարիամ զպանչելի համբերութիւն իւր և յորժամ կորոյս զԱ՛նորդին իւր , և յամ հակառակութիւն , և յամ չարաչար կենցաղավարութիւն , զորս վարէին ընդ Քնի չարաբարոյ և դաժանադութ Արէայքն , որոց նա ինքն իրբե մայր նորին հաղորդ եղեւ մասնաւոր իմն եղանակաւ , և 'ի վեր քան զամ 'ի ժամանակի դառն չարչարանաց , և նախատալից մահուան նր : Արդ՝ ահա այս է դաղափար համբերութիւն , որում սլարտին նմանիլ Ճշմարիտ ջերմեռանոքն Վարիամու : Օայնալիսի առաքինութիւն խօսիմք , որ բացարձակապէս հարկաւոր է առ 'ի ժամանել բարեացն յաւիւտենականաց , զորս խօստացաւ մեզ Ա՛ն , ողջ ծանուցանէ մեզ ոք առաքեալն Պօղոս . (Եղբայ . Ժ . 36.) \* Պիտոյ է յեկ համբերութիւն , զէ զիտիւ Ա՛ն արտընեալ հասըն աւետեացն || : Օայնալիսի առաքինութիւն խօսիմք , որ՝ ըստ բանից սրբն Վիպրիաւ

բիանոսի՝ (՚ի վր բար, համբեր.) զուղընթաց  
 եղև ամ գործողութեցն զնի ՚ի սկզբանէ  
 անտի գալստեան ՚նր յաշխարհս. Այդ ժողով ՚ին  
 ՚է աչքանէ անոնի գուստեան նորու նոյնակեպարտ  
 պատճեննեաց համբելութե նշանավին. (զնոյն մարիժ  
 է ասել ըս համեմատութե և զամենանք Աօրեն  
 իւրմէ:) „Վայ” (ասէ նոյն ինքն նրն,) եթէ  
 „եմք մեք ’ի ՚ին, եթէ զգեցեալ եմք զնա, եթէ  
 „նա է ձանապարհ փրկութե մերոյ, սպարտիմք  
 ”զհետ երթալ օրինակաց համբերութե. ՚նր: ...  
 ”Այս է ձանապարհն, (ասէ նր վարդապետն,)  
 ”ընդ որ զնացին նաև արդարքն հնոյ կտակին,  
 ”որք էին օրինակ ՚ինի. այս է՝ Աբել, Աբրամ  
 ”համ, Խաչակ, Յակոբ, Յովսէփ, Վավես,  
 ”Դաւիթ, և որ ’ի կարգին: Դավականի (ասէ,)  
 ”բազում մարգարեք սպանեալք, և բազում  
 ”մարտիրոսք պատուեալք փառաւոր մահուամի,  
 ”ոչ ստացան զպսակս, բայց եթէ գովելի իմն և  
 ”նր համբերութիք: Անզի չէ հնար ընդունել  
 ”զպսակն ցաւոց և վշտաց, եթէ ոչ յառաջա-  
 ”գոյն տարցին սորա համբերութիւն: Եւ վայ-  
 սորիկ զն ՚ին ասէ յաւետարանին. (՚ի ուկ-  
 իա. 19.) \* Համբելութե յեւով ապասնչեց պատին  
 յեր: այս է՝ ղիշիք յապահովի, և ժառանդես-  
 ջիք յաւիտեան: Եւ ըս այսմ համբերութին է՝  
 որ կատարէ զգործն. քանզի որ ունի զկատա-  
 րեալ

բեալ համբերութի, յամի է կատարեալ, և ոչ  
ինչ պակասէ նմա, ուղ ուսուցանէ նը առաքեալն  
է ակովըս. (ա. 4.) \* Հայբերութին գործ իա-  
տարկեալ ա-նեցէ, զէ իցեւ ողջանդամ, և իապա-  
քեալ, և աչնչ էմիս նուշապեալը || : Ապա զինես-  
ցուք զանձինս մեր, զհետ երթեալ գերտզանց  
օրինակաց ամենասր կուսին, և սրց, սովին օդ-  
տակար և կարեւոր առաքինութիւն, առ ՚ի տանել  
սրդեամբք թշուառութեցն, որոց ներքոյ ան-  
կեալ եմք ՚ի կարճօրեայ ժամանակի աստի կե-  
նացս, առ ՚ի առկալ վշտաց, զորս ամենարդար  
և խմաստունն Էծ բաշխէ իւրաքանչիւր զբաժին  
իւր, առ ՚ի չվհատիլ ՚ի հանապազորդ փորձուիս,  
որովք թշամին դժոխային ոչ դադարէ երրէք  
պատերազմիլ ընդ մեղ. առ ՚ի պահել ընդ ընկե-  
րաց մերոց զմիաբանութի և զխաղաղութի, համ-  
բերելով ամ զրկանաց, և անիրաւութեց, զորս  
տոնեն մեղ : Եւ ըստ այսմ նմանելով Յոհ Ք. սի  
զլինցն մերոյ, և տմենասր կուսին Վարիամու,  
ժամանեմք ՚ի պսակն յաւիտենական փառաց, որ  
խոստացեալ է նց, որոց անկորուստ պահեալ  
զհամբերութին՝ պատերազմին օրինապէս մինչեւ  
՚ի վախճան :

՚ Ե մըրաց անապատ յառաջութե՞ւ ամենառէ կուսակն, Կուսակն, Կուսակն զետրով ողբրդիչ նմանիւ այնք :

Ճշգ: ՚ Ե վախճանի նմանօղ լիցուք 'ի մէջ այս լոց առաքինութեց պմենանը կուսին՝ անարատ մաքրուն նորին, որ է՛ ուզ բանիցս կարգ է ասել՝ իրրե զծաղիկ ինչ, որ բուրէ զանուշահոտութիւնի վեր քան զայլ ամ առաքինութիւն նյի, և վզ որոյ որ ունի զայն՝ լինի առանձին իմն եղանակաւ հաճոյ այսմ ամենանը կուսի և Ո՞ր մաքրութե: Յիրաւի է ասել, թէ զորօրինակ այլ ամ առաքինութիւնի եղե 'ի Արքամբ ամենենին սեփական. „քանզի ո՞րպիսի հրեշտակական մաքրութիւն, ասէ որն „ինեղարդոս (բան 4. 'ի վերափ. կուս.) կա ՚ըող է համեմատիլ ընդ այնմ կուսութե, որ ՚եղեւ արժանի լինելոյ տաճար Հոգւոյն սոյ, և ՚ընակարան Որդւոյն Ա.Յ: Եթէ 'ի համարի ու ՚նիմք մէք զիրս՝ վն դժուարագիւտ և սակաւա, զիւտ լինելոյ նց, արդարե զնտ, որ ՚եղեւ առա ՚ջինն 'ի վարել զվարս հրեշտակաց յերերի, մե ՚ծապատիւ համարել պարտ է քան զամենեւ, սեան «: ՚ Ե վն այսր ամի այս անհամեմատ մաքրութիւն Արքամբու է ամենապոյծ առ ինչ հայելի, ընդ որ պարտին հայել մասնաւորապիս նոքս, որը ընկալան 'ի Տիկէ զշնորհու նուիրելոյ նիմա զկու-

զկուսութիւն իւրեանց : „Առքա Են, ոնց ասէ ՛՛ըն  
 ։, Ավագիանոս (՚ի վը կարդ . և սովոր . կուս .)՝  
 ։, գեղեցկադյն ծաղիկն, որ ծաղկի ՚ի պարտիղի  
 ։, եկեղեցւոյ, սքանչելապայծառ և չքնաղագեղ  
 ։, զարդ շնորհաց, յաւէտ կենդանագիր պատկեր  
 ։, սրբութեն ԱՅ, և առաւել աղնիճ բաժին հօ~  
 ։, տին ՚Պահի“ : Այսելեն նոքա զպատիճ զինուու~  
 թելոյ յուխտին իւրեանց լնդ պաշտպանութիւն  
 ամենանը Արուսին, ունելոյ դնա գլուխ իւրեանց,  
 առաջնորդ իւրեանց, և զօրաւիգն իւրեանց . և  
 վնայնորիկ առանձին իմն եղանակաւ պարաւան~  
 դին նմանիլ մաքրութեն նր, և լինել ըստ նմա~  
 նութեն նր նբս մարմնով և հոգւով : ԱՅԼ թէ~  
 պէտ և այս մասնաւորաբար իմն պատշաճի կու~  
 սանաց, ՚ի վը այսր ամի պատշաճի նոյնպէս և  
 ում և իցէ քրիստոնէի, ըստ վիճակին՝ յորում  
 գտանի : ՚Պանզի ամենեքեան, ասէ ՛՛ըն (Օգոս~  
 տինոս (՚ի վը սրբ . կուս . գլ . 6.) Են անդամք  
 եկեղեցւոյ, որ է կոյմն այն ողջախոչ և մաքուր  
 հարսնացեալ ՚Պահի. վայթէպէտև ամենեքեան ոչեն  
 միօրինակ կոյս և մաքուր մարմնով, սակայն պար~  
 տին ամենեքեան միօրինակ լինել մաքուր հոգւով,  
 այս է՝ սրբութիւն վարուց իւրեանց, մաքրութիւն  
 իսղճի մտաց, պահպանութիւն պատուիրանացն ԱՅ,  
 և մասնաւորապէս փախչելով յամ արգելեալ  
 զգայական հեշտութեց : Անայսորիկ և ամուս~

նացեսլքն իսկ, ասէ նր վարդապետն, (անդ՝ զԼ. 12.) պարտին մշակել, և պահպանել զառաքինութիւն զայս. հոմեոպաթոլոգիա, օբյեկտուն, և աղոլինչափութեած ծնանելով՝ ի միասին զզաւակս, և 'ի միասին կրթելով զնա մտադիւրութիւն և խնամով. պահելով առ միմւանս փոփոխակի զամուսնական հաւատարմութիւն, առանց բռնարարելց երբէք զիսորհուրդ ամուսնութեած իւրեանց:

**ՃՇՆ :** Ես քանզի զգանձս զայս մաքրութեած իրեմք յանօթս բեկանելիս խեցեղենս, չէ հնար պահել զայն, եթէ ոչ 'ի գործ դիցուք զամ զգուշութիւն առ 'ի պահպանել զայն: «Մին իրի նախ առաջին պարտ և պատշաճ է, և յուետ իմն կուսանաց, սիրել զառանձնութիւն, խորշելով որշափ ինչ հնար է՝ երեւել 'ի հրապարակս, փախչելով 'ի կարի իմն բազմութեած ժողովրդոց, և հրաժարելով ամենելին յինչ և իցէ աշխարհային ունայն տեսարանաց. զըրօրինակ տեսաք ամենելին առանձնացեալ հոնապաղ զամբներանեալ նր կոյսն, պարտ և պատշաճ է հսկել արթնութ 'ի վը զգայարանաց անձին, և մանաւանդ 'ի վը տեսանելեաց, 'ի բաց դարձուցեալ զաւս յամ վտանգաւոր առարկայից. զի իրեւ զգուշնս են նոքա, ընդ որ մտանեն 'ի սիրտ խորհուրդը, և բաղձանք, և զազիր պատկերը, և ապականեն զնա, ոնդ և խրատէ հոգին նր՝ ասելով, (Եկ-

ղեւ.

զես. [թ. 5.] \*Այս հայելո յօքնորդ, զե մը գեղ  
 նորտ յիշեցնէ զշեղ՝ ՚ի կործանուան: .... Պատվան  
 պաշտ ու ՚ի ինունէ զարդարեց: Խ մը հայելո հետաքա-  
 նութե՛ ՚ի գեղ օպարնեն ինու: Օք Շառպաւաք զշ գե-  
 ղա այլոց իսրեան: Խ ՚ի ամանէ վաստի յանիութե՛  
 իբրև զհոր: Եւ ըստ այսմ օրինակի երանելին  
 հօպք ասէք, եթէ եղեալ էք ՚ի մտի հաստա-  
 տութե՛ ոչ տալ աչաց իւրաց զազատութե՛ հայե-  
 լոյ և ոչ ՚ի մի ոք կոյս, առ ՚ի մերժել յանձնե-  
 իւրմէ զամ խորհուրդս. (Հօպք. լա. 1.) \*Ունա-  
 երէ ընդ աչս իմ, Խ ոչ հացեցայ ՚ի իոյս. (Ը լատ.  
 ունա երէ ընդ աչս իմ, զե մը իսուսոցն զիոնսէ) :  
 Անյ որ կամի պահել զմաքրութե՛ սրտի, ուղ և  
 պարտաւորեալ իսկ է ամ ոք պահել, տայ նմա  
 նքն (Օգոստինոս (Թուղթ 211.) զկանոնս զայս  
 պահպանութե՛ աչաց: „Եթէ աչք քո ձգին ՚ի  
 ովն ումեք, (ասէք առ կուսանս,) սակայն մի  
 սկեռնեք յոք: ... Եւ մի իսկ համարիք ունել  
 յ, զսիրտ պարկեշտ, յորժամ աչքն են անպար-  
 ու, կեշտ քանդի աչքն անպարկեշտ ցուցանէ վաղ-  
 և վաղակի զսիրտ անպարկեշտ“: Պարձեալ պարտ  
 և պատշաճ է խորշիլ և գարշիլ ծայրագոյն զգու-  
 շութե՛ յընթերցմանէ լկտի երգոց, թատրոնա-  
 կան զրութե՛ց, և յայլ սոցին նման մահաբեր  
 դրեանց, զորս ՚ի զործ ածէ բանսարկուն իբր  
 զգործիս՝ առ ՚ի պղծել նոքօք զհոգիս քրիստո-  
 նէից տ

նէից, և մանաւենդ զհողիս անզգոյշ երիտա-  
սարդաց : Եւ ևս՝ պարտ և պատշաճ է քաջ  
պահպանել զլեզուն, և զականջս, ոչ երբէք  
խօսել, և ոչ երբէք լսել յօժարակամ զբանս  
անվայելուս և զանհամեստս . և զգուշանալ  
յերկդիմի բանից անտի, որք որչափ առաւել  
ծածկեն զընական գարշութի մոլութեն, այնչափ  
առաւել նրբագոյնս մուծանեն ՚ի սիրտ զթոյնն .  
քանզի ճշմարիտ է միշտ, ոնց ասէ Առաքեալն,  
(ա . Կորեթ . ժե . 33 .) թէ \* Առաքեալն պատրա-  
ժառանձնան բանս չորս || : Պարտ է խորշիլ ՚ի կեն-  
ցաղավարութէ, և առաւել ևս յլնտանութէ  
այլասեռից, ըստ խրատուն, զոր ստեպ ստեպ  
կրկնէ շողին նք ՚ի նք գիրս, և մասնաւորապէս  
յէկղեսիաստիկէսն . (Եկղես . թ . 5 . և որ զկնի : )  
՚ի վախճանի կարեոր է մահացուցանել զմարմինս,  
զլանալով նմա զգրգանսն, և զաւելորդ փառի-  
կութիսն, որոց նա յաւէտ իմն ցանկայ հանա-  
պաղ . պատժելով, և ծառայեցուցանելով զնա-  
՚ի վարս խիստս, ՚ի զբաղմունս, և յաշխատութիս,  
և յայլ ապաշխարութիս ըստ համեմատութեն պի-  
տոյից և կարողութեն իւրաքանչիւրոց, ևս առա-  
ւել ՚ի պահս . զիրք 1 . դլ . 8 .) չոհառարութին իւ-  
րակաց, և ժողժիալութին ըմուլեաց բառնութե-  
զարդարմատ, և զբուշին ուսորչն, ոչ լոռուն մէկ

առանուած պահով չորսաշուրջ հետեւըդայն : Օսյս  
ամ, ուղ տեսաք, սքանչելապէս 'ի գործ եղ ա-  
մենանը կոյսն Անրիամ . թէպէտ և վա առանձին  
արտօնութեն շնորհաց իւրոց չուներ ինչ պէտս :

**ՃՃՇ :** Եւ արդ՝ մէք առ 'ի լինել հաւատա-  
բիմ առ 'ի գործ դնել զմիջնորդս զայսոսիկ, որք  
որչափ կարեոր են առ 'ի պահել զմաքըութի,  
նոյնչափ և դժուարին են մերումն ապականեալ  
և 'ի չարիս հաստատեալ բնութե, դիմեսցուք  
վստահութիւն առ ամենանը Կոյսն, ուղղի ընկալցի  
վա մեր զզօրութի, և զքաշարտութի, որոց  
պէտս ունիմք : « Ի իմելն 'ի միջնորդութի անարատ  
մօրն մաքրութե՝ է ամենաշօր վա ողօրմելի մեղա-  
ւորացն այնոցիկ, որոց գոլով ընկղմեալ 'ի զգայ-  
ական դարշութիս, կամին ելանել անտի, և  
մաքրել դչողիս իւրեանց, զորօրինակ յանհամար  
անձանց, որք առին զիորձ սորա, էառ զիորձ և  
սրբուհին Անրիամ եզիպատացի, որոյ լնկճեալ 'ի  
ծանրութե գարշուեց իւրոց, և ընկրկեալ յանե-  
րեսյթ դօրութե, որ արգելոյր զնա մօանել 'ի  
տաճարն Երուսաղեմի, ուր պաշտէին զփայտ սըյ  
խաչին, դիմեաց պաղատանօք առ ամենանը կոյսն  
Անրիամ, և վաշվաղակի ընկալաւ զկարողութի  
մօանելոյ ընդ այլոց 'ի տաճարն, ուր հրաժարե-  
ցաւ զըջմամբ 'ի մեղաց իւրոց, և էարկ զչիմունս  
սքանչելի սրբութեն, յոր յետ այնորիկ Եհաս

Երջանկաբար՝ պաշտպանութեամբ նորին ամենասք  
կուսին։ «Եպաստէ դիմելն առ Անրիամ առ ՚ի  
նանրացուցանել, և ընդունայն առնել զամ զըրու-  
նութիւ մարդկան, և դիւաց, որք գուն գործեն  
արատաւորել զպայծառութիւ մաքրութեն մերոյ։  
զորօրինակ բաց յայլոց նպաստեաց սբյ կուսին  
Յուստիանեայ, որոյ փորձեալ ՚ի հրապուրանաց  
անպարկեցտ պատանւոյ ուրումն, և յարձակեալ  
՚ի բռնութեց դիւաց, զորս յօգնութիւ կոչէր ընդ-  
դէմ նր մողն Ախլրիանոս, դիմեաց առ նը կոյսն  
Անրիամ, ուղ վկայէ նբն Գրիգոր Կաղիանզացի  
(Ճառ 28.) և յաղթեաց համօրէն թշնամեաց  
իւրոց։ ՚Ի վախճանի՝ ջերմեռանդութիւն առ նը  
կոյսն Անրիամ է վս նց, որք ողորմութիւն Ա. Շ  
կեան մաքրութիւն և ողջախոհութիւն, է ասեմ  
սբանչելահրաշ դեղ յառաջապահեստ առ ՚ի պա-  
հել անարատ մինչև ՚ի մահ զշքեղափայլ, զմե-  
ծագին, և զաղնուամիան ծաղիկ մաքրութեն։ ուղ  
՚ի մէջ բազում արանց, և կանանց, զորս չէ  
հնար ՚ի թիւ արկանել, պահեաց փառաւորեալ  
և սբանչելի սրն Փիլիպոս Կերեան, որ գոլով  
յոյժ ջերմեռանդն առ Անրիամ, և ՚ի գործ դնե-  
լով զվերոյիշատակեալ միջնորդս, և կաց մնաց  
հանապաղ նը և մաքրուր, մինչև նուանեցաւ յա-  
էտ հրեշտակի, (եթէ արժան ինչ իցէ ասել,)

քան մարդոյ : Ա չ իսրատէր նա զամենեսեան 'ի ջերմեռանդութի Ա ծամօրն մեծի , և ասէր , Եթէ այս է միջնորդ ամենազօր առ 'ի ընդունել Ա Ե Ղղինչ և իցէ շնորհս , և առանձին իմն զշնորհս մաքրութե . և յորդորէր դիմել առ նա ստեպ , (զորօրինակ և ինքն իսկ սովոր եր դիմել ,) սովոն ազդողական աղօթիւք . Ա Ե Էրյա Անրիամ հայր Ա յ , աղաւնու պէտ պըրտին ու վը իմ մէղաւորին . կամ համառօտագոյնս . Ա Ե Էրյա Անրիամ հայր Ա յ , աղաւնու պէտ վը իմ : Ապա ամ ոք փոյթ կալցի շահիլ 'ի իսրատուց աստի , և 'ի լուսափայլ օրինակաց սրց . ամ ոք դիցէ զանձն իւր ընդ ամենազօր պաշտպանութեն ամենանը կուսին Անրիամու , ասելով ճշմարիտ , առ 'ի սրտէ , և անկեղծ ջերմեռանդութե զալօթսն զայն , զոր եկեղեցին 'ի բազում հրապարակական աղօթս իւր մատուցանէ . այս է . „Անդ հովանեաւ պաշտպանութե „քո առպաւինիմք նը Ա ծածին . մի անտես առներ „զաղացնս մեր , զոր մատուցանեմք քեզ 'ի „կարիս մեր , որք նեղեն զմեզ յամ կողմանէ . „այլ փրկեա զմեզ միշտ՝ ով փառաւորեալ և „օրհնեալ նը կոյս՝ յամ վտանգից հոգւոյ , և „մարմնոյ . ամեն “ : Եւ զայն՝ զօր Հայաստանեայցս եկեղեցի երգէ . (շար + դ + ) „Ան „կանիմք առաջի քո Ա ստուծածածին , և աղա-

չեմք

„չեմք զանարատ զլոյսդ . բարեխօսեա վասն  
 „անձանց մերոց , և աղաւեա զմիածին Որդին ,  
 „փրկել զմել ՚ի փորձութե , և յամ վտան~  
 „գից մերոց“ :



# Յ Ա Շ Խ


Գլխակարգութեց Պատմութես :


<p><b>Ե</b>անելիքնան . . . . .</p> <p><b>Ե</b>մենան կոյսութայեալ 'է սկզբանէ անդի աշխարհէ : . . . . .</p> <p><b>Օ</b>րինակ, որովհ օրինակեցաւ ամենասուրբ կոյսն 'է հետ գերս : . . . . .</p> <p><b>Ե</b>րեւել և գերազանց իտայց հետ կուսիա- բանաց' և օրինակ ամենան կուսին Ան- ընամուս : . . . . .</p> <p><b>Ե</b>մենան կոյսն Անընամ նախագուշակիւալ 'է մարդաբերելու հետ կուսիաբանաց : . . . . .</p> <p><b>Օ</b>ճողով ամենան կուսին Անընամուս և յառաջեւեն նույս : . . . . .</p> <p><b>Օ</b>ճողով ամենան կուսին Անընամուս : . . . . .</p> <p><b>Ե</b>պաւ անուն ամենան կուսին Անընամ : . . . . .</p> <p><b>Շ</b>նչայութն ամենան կուսին 'է պատճեն : . . . . .</p> <p><b>Հ</b>արսնականութեալ ամենան կուսին Անըն- ամուս ընդ սեյն հյութեալոյց : . . . . .</p> <p><b>Ե</b>ւեղութն ամենան կուսին Անընամուս : . . . . .</p>	<p>1</p> <p>3</p> <p>8</p> <p>18</p> <p>27</p> <p>41</p> <p>50</p> <p>56</p> <p>62</p> <p>67</p> <p>78</p>
---	--

Երանեալ

- Այս ամենը իւսէն Սարկածու առ  
արքաւհին Եղիսաբէթ: . . . . Ել. 91
- Ամենագույն Սարկած պատճեայ 'ի պատճեան իւր  
'ի 'Եպուրէլ: Եւ սպասէ ծննդէան: . . . 103
- Ամենօրհնեաւ կոյսն երլայ 'ի 'Եպուրէլ-է  
'ի Բելղլէհեմ, և ձեռնէ զլութին իւր: . 111
- Քառաւլին ամենագույն Սարկածու, և  
ընթայուն չ'ընէ 'ի պաճախն, այս և  
Տեսանընդաստը: . . . . 119
- Փախուսագ ամենագույն կոյսն յլուիպոս ընդ  
Ամուրդասյուն իւրոյ: . . . . 128
- Ամենագույն կոյսն պատճեայ 'ի Գալուշկա, և  
հասպատիկ զբնական-է իւր 'ի 'Եպուրէլ: . 133
- Ամենագույն կոյսն Սարկած կորուստանէ զլու-  
արքին իւր, և գրասնէ զնա յէս երկց  
առաջ: . . . . . 135
- Ապր ամենագույն 'ի 'Եպուրէլ մինչև  
'ի ժամանախն, յուրում սիստ չ'ըն Քա-  
ռալուպէլ: . . . . . 139
- Ամենագույն կոյսն երլայ ընդ Ամուրդասյուն իւրոյ  
'ի հարսանիսն՝ որ 'ի կանո, և ընդունեն 'ի  
նմանէ զբնասրիւլ-է ըսոյն 'ի գինի: . . . 145
- Ամենագույն կոյսն հասպատիկ զբնական-է իւր  
'ի քառուսն կորուստանում, 'ի ժամանախի  
քառալուպէլ-է չ'ըն 'Քա: . . . . 153

- Ամենատէն Ասյան իսոյ առա արա լուսչն է ։  
Գաղցութան : . . . . Եր . 158
- Ամենատէն իսյան Անընամ է զիշտագաւանուն պա-  
տանի պահին առաջարկ Պիտիակիսամալին : 164
- Ամենատէն Ասյան իսոյ առա սբյու չափանատ,  
և վարս հարին՝ պար վարի անդանօք : . . . 168
- Անհ ամենատէն իսյան Անընամա- ; և հրա-  
շական զիշտագաւանուն հարս ցերպինս : . . . 171
- Պ գլուխանդանութէ առ ամենատէն Ասյան, և  
գործադանութէ բարեկաստութէ նք : . . . 183
- Ա լուսականութէ առաջարկաւութէ ամենատէն.  
իսյան Անընամա- : . . . . 199
- Ի պ զիշտագաւանուն սիրոյ ամենատէն Ասյան,  
և լեռ զիշտագաւանուն ամանին այնք : . . . 202
- Ի զ հաւապաց, և յուտաց ամենատէն Աս-  
յան, և լեռ զիշտագաւանուն ամանին նոյնիք : . . . 205
- Ի զ լուսականութէ ամենատէն Ասյան, և  
լեռ զիշտագաւանուն ամանին ամանին այնք : . . . 210
- Ի զ հայմանաւութէ ամենատէն Ասյան, և զ ։  
զ ի աստաղաւ հայմանաւութէ նք համացն  
Այ. և լեռ զիշտագաւանուն մեզ ամանին ամանին այնք : . . . 215
- Ի զ անապատութէ մասքաւութէ ամենատէն Աս-  
յան, և լեռ զիշտագաւանուն ամանին այնք : . . . 219





F-41

